ՄԱՐԳԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՄԵՐ ԳՅՈՒՂՈՒՄ

ԱԶԵՐՆԵՇՐ—1948

891.99 25995
Դ-23 Դավթյան, Ս.
Սեր գյուղում:
9 կ.

ՄԱՐԳԱՐ ԴԱՎԹՅԱՆ

891.99
Դ-23

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

ՄԵՐ ԳՅՈՒՂՈՒՄ

(ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ, ՎԻՊԱԿՆԵՐ)

ԱԶԵՐՆԵՇՐ

ԲԱՔՈՒ—1948 Թ.

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Սույն ժողովածուի մեջ ամփոփված են Հայրենական Մեծ պատերազմի տարիներին հայ գյուղի և նրա մարդկանց մասին գրած իմ միայն յոթ պատմվածքն ու «Վերադարձ» վիպակը:

«Վարդ Մելիքի գաղտնիքը» նովելը և «Ուռենու տակ» վիպակը գրված են պատերազմից հետո:

Ժողովածուին «ՄԵՐ ԳՅՈՒՂՈՒՄ» ընդհանուր վերնագիրը տալով՝ ցանկացել եմ ասել այն, ինչ զգացել ու տեսել եմ անձամբ մեր կոլխոզային գյուղում։

Իսկ թե որքան է ինձ հաջողվել տալու անձամբ տեսածս ու զգացածս և ինչ չափով է դա ներկայացնում մեր կոլխոզային գյուղն առհասարակ, այդ թողնում եմ ընթերցողին դատելու:

Մ. Դ.

6/VI 1948 թ.

Բաքու

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ՅԱՓՆՋԻ

Գյուղում երկու անունով էին կոչում նրան։ Ոմանք ասում էին Ստեփան։ Դա նրա իսկական անունն էր։ Ոմանք էլ ասում էին Յափնջի։ Այդ էլ մականունն էր։ Երկու անվանն էլ նա ընտելացել էր հավասարապես։ Երբ մեկն ու մեկը հեռվից կանչում էր.

— Ընկեր Յափնջի, այ ընկեր Յափնջի,—նա ետ էր նայում, ամենայն լրջությամբ լսում կանչողին, պատասխանում նրա հարցին այնպես, ինչպես հարկն է, և բնավ չէր վիրավորվում, որ մարդիկ չեն տալիս իրա իսկական անունը։

Դա առաջին իմպերիալիստական պատերազմից շատ առաջ էր։ Նախրչունց Ստեփանը, ինչպես ասում էին գյուղում տասնութ տարեկան, գեղեցիկ, թիկնեղ, սևաչյա պատանուն, գյուղում ապրելու ոչ մի հնարավորություն չունենալով, եկավ Բաքու և քաղաքի գործարաններից մեկում մտավ բանվորության։

Նա շուտով կապերն ամբողջովին խզեց գյուղի հետ, որովհետև այնտեղ չուներ մի մերձավոր, որի հետ նամակագրություն ունենար։ Շատ չանցած, գյուղում սկսեցին մոռանալ նրան։

Առաջին իմպերիալիստական պատերազմի օրերին Ստեփան Սարգսյանը ևս զորակոչվեց ցարական բանակ, բայց սպաների անլուր հալածանքներին ու մուշտրաններին չկարողացավ երկար դիմանալ։ Վեց ամիս ծառայելուց հետո նա մի օր թողեց զորանոցը, դասալքեց և ոչ ոք չիմացավ, թե ուր գնաց։ Միայն մի քանի տարի

անց, 1918 թվականին, նա կրկին հագավ զինվորական շորեր, բայց այս անգամ արդեն Կարմիր Բանակի շարքերում։

Կապիտալիստների գործարաններում տեսած շահագործումը, ցարական սպաների կողմից ստացած մուշտրաները Ստեփանին հարկադրեցին ազատագրման ելք որոնելու։ Այդ ելքը նա գտավ Կարմիր Բանակի շարքերը կամավոր գնալով։ Առաջին Կարմիր Հեծելազորային բանակում գտավ նա իր ցանկալի տեղը։ Այնտեղ անձամբ տեսավ նա Սեմյոն Բուդյոննուն, լսեց նրա կրակոտ խոսքերը, տեսավ նրա խիզախ մարդկանց, որոնք մահն արհամարհելով, կատաղի ցասումով լի, հարձակվում էին թշնամու վրա և ամենուրեք խուճապի մատնելով՝ ջախջախում նրան գունդ առ գունդ։

Բուդյոննու զորքերի հետ ինքը, Ստեփանը ևս, գրոհի գնաց թշնամու վրա։ Եղավ բազմաթիվ ճակատամարտերում, անցավ բազմաթիվ ավան ու քաղաք, կրեց անհաշիվ զրկանքներ, բայց ոչ մի անգամ նրա կամքը չերերաց, սիրտը չահագնեց, միտքը չմթագնեց։

Անցան տարիներ, երկիրը ռևոլյուցիոն փոթորիկներից անցավ խաղաղ, շինարար աշխատանքի, և այդ ժամանակ Ստեփանը բանակից զորացրվելով, վերադարձավ իր մայրենի գյուղը։

Երկար տարիներ բացակայելուց հետո գյուղում նրան ոչ ոք չէր ճանաչում։ Ինքը ևս շատերին մոռացել էր, շատերի անունն էր միայն հիշում, բայց հոգով ուրախ էր, որ կրկին գտնվում է այնտեղ, ուր անցել էին իր մանկության տարիները և գիտեր, որ գյուղացիք վերստին կհիշեն իրեն, նրանց մեջ ինքն անծանոթ ու խորթ չի լինի։

Բանակից զորացրվելուց հետո, գյուղ գալիս, Ստեփանն իր հետ մի յափնջուց զատ ուրիշ ոչինչ չէր բերել։ Այդ ամբողջովին նոր, փայլուն ծոպերով յափնջին տիրոջը ծառայում էր և՛ վերմակի, և՛ վերարկուի տեղ։

Ստեփանի յափնջին գյուղում շատերի հետաքրքրության առարկան էր դառել։ Այդտեղ, տափաստանային այդ յուղում, մինչ այդ էլ, իհարկե, շատ անգամ էին տեսել յափնջի,

բայց ուրիշ, անցվոր մարդկանց հագին։ Իսկ բնիկներից ոչ ոք դեռ յափնջի չէր հագել։ Առաջինն Ստեփանն էր և դրա պատճառով էլ նա շատերի ուշադրությանն էր արժանանում։ Գյուղացիները հաճախ փողոցում կանգնեցնում էին Ստեփանին, խնդրում նրա յափնջին, փորձում, թե արդյոք իրե՞նց էլ է այնպես սազում, ինչպես Ստեփանին։

Իսկ Ստեփանին դա անչափ շատ էր սազում։ Նա յափընջին ուսերին գցած, գլուխը վեր, կուրծքն առաջ տված, երբ անցնում էր գյուղամիջով, բոլորի հիացմունքին էր արժանանում։ Գյուղացիները հեռվից նրան տեսնելիս ասում էին.

— Ահա, Յափնջին գալիս է...

Գյուղում նրան Յափնջի անվանողների թիվն այնքան շատ էր, որ շուտով տարածվեց ամբողջովին և մոռացնել տվեց մարդու իսկական անունը։

Անցան տարիներ։ Գյուղում բոլորն էլ իրենց հինգ մատի պես ճանաչեցին Ստեփանին, բայց Յափնջի անունը նրանից չբաժանվեց։ Նա դառավ գյուղսովետի նախագահ, դառավ կոլխոզի նախագահ, հաճախ լինում էր բազմամարդ ժողովներում, շրջանային խորհրդակցություններում, և ամենուրեք նրան կոչում էին այդ մականվամբ։

Իսկ որտեղի՞ց էր այդ յափնջին ձեռք բերել նա։ Այդ մասին հաճախ էին հարցնում գյուղացիները։

— Ընկեր Օրջոնիկիձեի տված նվերն է,—հպարտությամբ ասում էր Ստեփանը հարցնողներին։

1920 թվականի սեպտեմբերի 4-ին Առաջին Հեծյալ Բանակի Ռազմա-Ռևոլյուցիոն Խորհրդի ընկերներ Վորոշիլովի և Բուդյոննու ստորագրությամբ մի նամակով դիմել էր Սերգո Օրջոնիկիձեին՝ բանակի մարտիկների համար տաք հագուստ ուղարկելու։ Այդ նամակում ի միջի այլոց ասվում էր.

«Մեծարգո ընկեր և բարեկամ Գրիգորի Կոնստանտինովիչ, իմանալով Ձեր բարեկամական և հոգատար վերաբերմունքը դեպի Առաջին Հեծյալ Բանակը—որպես ամբողջ

Կարմիր Բանակի ամենամարտական ավանգարդներից մեկը, և որպես Հարավ—Արևելքի և Կովկասի զավակ, բանակի Ռազմա-ռևոլյուցիոն Խորհուրդը խնդրում է Ձեզ՝ օգնություն ցույց տալ, որը Դուք միանգամայն ի վիճակի եք։

Եթե ամառը Բանակը շարունակ կարիք էր զգում հագուստի, որն ահավոր արագությամբ մաշվում է ու այրվում մարտիկների վրա՝ ձիով կատարած հարատև արշավների և մարտերի ժամանակ, ապա առաջիկա ցուրտ աշնանային, հատկապես ձմեռային ամիսներին, տաք հագուստի պակասությունը կարող է առանձնապես խիստ զգացվել և այդ պակասությունը կարող է հսկայական չափերով իջեցնել մարտիկների տրամադրությունն ու զցել բանակի մարտունակությունը։ Ահա թե ինչու Կենտրոնից խնդրելով սովորական հագուստ, մենք, հիշելով Ձեր բարեկամական խոստումը, խնդրում ենք Ձեզ՝ Բանակի համար ձեռք բերել և մեր ներկայացուցչի միջոցով ուղարկել 20 հազար կովկասյան յափնջի։ Այդ օգնությունը Ձեզնից, Կարմիր Բանակի համար հարազատ անձից, մեծ չափով կբարձրացնի հեծյալ բանակայինների տրամադրությունն ու մարտական ոգին, նրանցից շատերին կպաշտպանի հիվանդությունից և ավելորդ կորուստներից ու հզոր խթան կհանդիսանա աշխատավորների ռեսպուբլիկայի լկտի թշնամուն ջախջախելու։

Մենք հուսով ենք, որ մեր խնդիրը արձագանք կգտնի Ձեր սրտում և չի մնա անկատար։

Կոմունիստական բարևներով Բանակի

Հրամանատար՝ ԲՈՒԴՅՈՆՆԻ

Ռազմա—Ռևոլյուցիոն Խորհրդի անդամ՝

ՎՈՐՈՇԻԼՈՎ»։

Կարճ ժամանակից հետո բոցաշունչ բոլշևիկ Սերգո Օրջոնիկիձեն կատարեց Առաջին Հեծյալ Բանակի հեծելազորայինների խնդիրը։ Նրա ուղարկած յափնջիներից մեկն էլ բաժին ընկավ Ստեփան Սարգսյանին։

Ստեփանն այդ յափնջին տարիներ շարունակ պահում էր որպես սրբազան նվեր։ Հագնում էր շատ բացառիկ դեպքերում, տոնական օրերին, և ամեն անգամ հագնելիս խորագին կարոտով հիշում էր այն կրակոտ օրերը, որ անց է կացրել Հեծյալ Բանակում, գրոհել թշնամու վրա, ջախջախել նրան։

Ժամանակն անցնում էր, բայց պատերազմի տարիներից մնացած այդ նվերը շարունակ բորբոքում էր պատերազմի հետ կապված հուշերի կրակը Ստեփանի սրտում։

Երբ 1941 թվականին գերմանական գազազած ֆաշիստները ուխտադրժությամբ հարձակվեցին մեր երկրի վրա, սկսվեց Հայրենական ահեղ պատերազմը, Ստեփանի տարիքը 55-ից անց էր։ Հայրենիքի վրա կախված վտանգը նրան էլ խորագին հուզեց, դեպի թշնամին եղած ցասումը բորբոքեց սիրտը և պատերազմի առաջին իսկ օրը դիմեց զինվորական կոմիսարիատին, որ իրեն, որպես կամավոր, ռազմաճակատ ուղարկեն, բայց մերժեցին։ Նրան ասացին, որ մեզ թիկունքում էլ են մարդիկ հարկավոր։ Ինքը բամբակացան կոլխոզի նախագահ է, եթե արժանի կերպով կազմակերպի կոլխոզային աշխատանքները, դա ևս մեծ օգնություն կլինի ռազմաճակատին։

Եվ Ստեփանը մնաց կոլխոզում։

Մեկ օր, երբ կոլխոզում կոլխոզնիկների առաջարկությամբ տաք շորեր էին հավաքում Կարմիր Բանակի մարտիկների համար, նա հիշեց իր յափնջին... Հիշեց, որ այդ յափնջին եղել է շատ ռազմաճակատներում, բայց դեռ ամբողջովին նոր է մնացել։ Հիշեց, որ դա ամենանվիրական, ամենաթանկագին բանն է, որ ինքն ունի։ Ավելի մեծ նվեր նա իր կյանքում դեռ չէր ստացել։ Եվ դրա համար էլ նա վճռեց.

— Այն, ինչ թանկ է ու նվիրական, պետք է գնա Հայրենիքի պաշտպանությանը, որովհետև ավելի թանկագին ու նվիրական բան, քան Հայրենիքն է, աշխարհում չկա։ Իսկ այժմ մեր սրբազան Հայրենիքի վրա սև ամպեր են

կուտակվել։ Պետք է ցրվեն այդ ամպերը ինչ գնով էլ ուզում է լինի։

Եվ Ստեփանը մոտենալով սենյակի վերին անկյունում դրած սնդուկին, ուր խնամքով ծալված պահվում էր յափնջին, վերցրեց այն ու երիտասարդական ավյունով լի, քաղաքացիական կռիվների անմար հուրը սրտում, գնաց դեպի ընդունման կետը։

Հաջորդ օրը հին յափնջին գնաց նոր պատերազմի ռազմաճակատը։

1911 թ.

ԱՐՋԱԳԱՆՔԸ

Եթե երբևէ աշխարհ են եկել երկու մարդ իրար անչափ նման, այդ Կարապետն ու Հայրապետն են։ Ճիշտ է, նրանք եղբայրներ են, ծնված միևնույն հորից ու միևնույն մորից, նույնիսկ միևնույն օրն ու միևնույն ժամին, բայց չէ՞ որ հարազատ եղբայրներն էլ տարբերվում են իրարից և՛ արտաքուստ, և՛ բնավորությամբ։ Իսկ Հայրապետն ու Կարապետն իրենց անուններից բացի էլ ոչ մի բանով իրարից չէին տարբերվում։

— Մի խնձոր է միջից երկու կես արած,— նրանց մասին ասում էին գյուղում։

Իսկ դա որքա՜ն թյուրիմացությունների տեղիք է տվել։

Պատահում էր, որ գյուղացիներից մեկն ու մեկը դիմելով եղբայրներից մեկին, ասում էր.

— Կարապետ, եթե ժամանակ ունես, էգուց եկ միասին մի քիչ փայտ սղոցենք, մենակ եմ, օգնող չունեմ...

Կարապետը խոստանում էր, բայց որևէ պատճառով եթե հնարավորություն չէր ունենում իր խոստումը կատարելու, հաջորդ օրը գյուղացին բռնում էր մյուս եղբորը—Հայրապետին, կանգնեցնում հենց փողոցի կենտրոնում և ասում.

— Բա ամոթ չի՞, քո պատճառով ամբողջ օրս կորավ. ինչու չեկար փայտ սղոցելու։

— Ի՞նչ փայտ սղոցելու;—զարմացած հարցնում էր Հայրապետը։

— Բա երեկ չէիր խոստացե՞լ...

— Այդ երևի Կարապետն է եղել։

— Ախ, դու Հայրապետն ես, ներողություն, չիմացա, ամաչելով ասում էր գյուղացին և հեռանում։

Իսկ նման դեպքեր հաճախ էին լինում։

Նրանք որբ տղաներ էին։ Մայրը մեռել էր նրանց ծնվելուց չորս տարի հետո, իսկ հայրը — առաջին իմպերիալիստական պատերազմին, որ գնացել էր 1914 թվականին և այնտեղից այլևս չէր վերադարձել։ Թե երբ և որտեղ էր սպանվել, այդ ոչ ոք չէր իմանում։

Չորս-հինգ տարեկան որբ Կարապետին ու Հայրապետին նույնքան էլ պահեցին բարեկամներն ու հարևանները։ Իսկ երբ նրանք քիչ մեծացան, դեռ տասը տարեկան էլ չդառած, սկսեցին ինքնուրույն աշխատել։ Սկզբում, ինչպես ասում են, հացափորի արածացնում էին սրա-նրա հորթերը, հետո դառնարած դառան, իսկ ավելի հասունանալուց հետո, երբ արդեն 11—15 տարեկան տղաներ էին, նրանց վստահեցին գյուղի ոչխարի հոտը։

Թեկուզ կիսաքաղց ու կիսամերկ կյանք էին վարում նրանք, բայց, ինչպես ասվում է հեքիաթներում, եթե ուրիշները մեծանում էին տարիներով, նրանք մեծանում էին օրերով ու ժամերով — բնության գրկում։

Գեղեցիկ էին ու բարձրահասակ՝ Կարապետն ու Հայրապետը։ Համեստ էին ու աշխատասեր։ Ուրիշների հետ հաշտ էին, իսկ իրար հետ, եղբայրներով, անչափ սիրով։ Շարունակ միասին էին լինում, և դժվար էր պատկերացնել, թե նրանք գեթ մեկ օրով կարող են իրարից բաժանվել։

Նրանք իրենց վիճակից արդեն գոհ էին և թվում էր, թե նաև երջանիկ են... Բայց ո՞ր երջանիկ մարդը կարող է ասել, թե ինքը երբեք չի հանդիպել դժբախտության։

Դժբախտություն պատահեց նաև Կարապետին։ Մեկ օր նա սաստիկ հիվանդ ացավ և պառկեց մի ամբողջ ամիս։ Հայրապետն այդ ժամանակ զգաց, թե ինչ ասել է մենակություն։ Նա մենակ էր ոչխարը տանում սար, մենակ արածացնում և սրտատրոփ սպասում, թե երբ պետք է մթնի, որ նա տուն գնա, տեսնի եղբորը։ Իսկ տուն գալուց հետո ամ-

բողջ գիշերը նստում էր եղբոր բարձի մոտ, ձեռքը դնում նրա ճակատին, արցունքներ քամում աչքերից…

Մոտ մի ամիս պառկեց Կարապետը, իսկ հետո, երբ վեր կացավ անկողնից, նա կորցրել էր լսողությունը։ Ամբողջովին խլացել էր մի ականջը, իսկ մյուսով լսում էր կիսով չափ։

Ասում են ժամանակն ամեն վշտի ամոքիչն է։ Անցավ ժամանակը, ժամանակի հետ թեթևացավ նաև եղբայրների վիշտը։ Այնուհետև այլ կերպ դասավորվեց եղբայրների կյանքը։ Հաստատվեցին սովետական կարգերը, աշխատանքի և ուսման բոլոր դռները լայնորեն բացվեցին եղբայրների առաջ։ Հայրապետը թողեց հովվությունը, սկսեց հաճախել դպրոց, իսկ Կարապետը նույն սիրով շարունակեց իր նախկին աշխատանքը։ Թեկուզ եղբայրներն ընտրեցին աշխատանքի տարբեր ասպարեզ, բայց դրանից նրանց սերը չթուլացավ, այլ, ընդհակառակը, ավելի ամրացավ։ Կարապետը հոտը դաշտ տանելիս շատ հաճախ երկար մտածում էր այն մասին, որ եղբայրը կսովորի, գրագետ, խելոք մարդ կդառնա, գուցե դառնա կոլխոզի նախագահ, ով գիտե, գուցե և ուսուցիչ կամ բժիշկ…

Այս մտորումների ընթացքում նրա սիրտը ուրախությունից թպրտում էր, և որովհետև մոտը ուրիշ մարդ չկար, որ նրա հետ բաժաներ իր ուրախությունը, բռնում էր ոչխարներից մեկին, գուրգուրում, նրա ականջին փսփսում իր ուրախությունը, կամ էլ դուրս բերում շվին, նվագում մի աշխույժ եղանակ և հանգիստ արածող ոչխարներն անգամ զարմանում էին, թե ինչից հանկարծ ուրախացավ իրենց տերը։

Բայց դրությունը մի քիչ փոխվեց, երբ Հայրապետը գյուղական դպրոցն ավարտելուց հետո գնաց քաղաք՝ ուսումը շարունակելու։ Դա եղբորը շատ մտահոգության տեղիք տվեց։

— Չորս տարի մեն-մենակ ես ինչպե՞ս պետք է դիմա-

նամ,—եղբորը քաղաք ճանապարհելիս լացկումած ասաց Կարապետը։

— Ոչինչ, արձակուրդներին շարունակ գալու եմ քեզ մոտ, երբեմն էլ դու կգաս ինձ մոտ, չես տխրի, մի վախեցիր,—ոգեվորեց Հայրապետը, գրկեց եղբորը, համբուրվեցին և ավտոմեքենան բաժանեց նրանց...

Իհարկե, սկզբի օրերում շատ էր դժվար։ Կարապետին թվում էր, թե չի դիմանա, կարոտից սիրտը կպայթի։ Բայց միայն մարդը կարող է ամեն ինչի ընտելանալ։ Կարապետն էլ հետզհետե ընտելացավ դրան։ Նախ ձմեռային և ամառային արձակուրդներին Հայրապետը շարունակ գալիս էր գյուղ, մնում եղբոր մոտ։ Իսկ հետո ինքը, Կարապետն էլ երբեմն գնում էր քաղաք, տեսնում եղբորը, մի քանի օր մնում մոտը և վերադառնում։ Դրանից զատ, անպակաս էին լինում նամակները։ Եղբոր նամակներն ստանում էր Կարապետը, սրտատրոփ բաց անում, թեկուզ անվարժ, բայց մի քանի անգամ կարդում ինքը, հետո կարդալ տալիս ուրիշներին և խնամքով դնում սնդուկում, պահում՝ որպես անչափ թանկարժեք մի բան։

Այսպես անցավ չորս տարի։ Հայրապետն ավարտեց համալսարանը և անասնաբուժի վկայականով վերադարձավ իրենց գյուղը։ Դա եղբայրների կյանքում ամենաերջանիկ օրն էր։ Այդ օրը կատարվել էր նրանց տարիներ շարունակ փայփայած իղձը։ Եղբայրների ուրախությունը բաժանում էին ամբողջ գյուղում։ Իրենց գյուղացիները գալիս էին, բռնում Կարապետի ձեռքը, շնորհավորում նրան, որ եղբայրն ավարտել է համալսարանը, անասնաբուժի կոչում ստացել։

Կարապետն իր համագյուղացիների ասած խոսքերից շատերը թեև չէր լսում, բայց հասկանում էր, գիտեր, որ նրանք իրենց սրտի անկեղծ ուրախությունն են արտահայտում նախկին անտուն ու անտեր այն որբերին, որոնք այժմ իրենց համար տուն ու տեղ են դրել, դառել առաջավոր մարդկանց շարքում։

Այդ ամբողջ գիշերը եղբայրները չքնեցին։ Նրանք մինչև լուսաբաց խոսեցին բազմաթիվ հարցերի մասին, հիշեցին բազմաթիվ դեպքեր և միայն լուսաբացին Կարապետը համարձակվեց եղբորն ասել այն, ինչի մասին մտածում էր մի քանի տարի շարունակ։

— Հարկավոր է տուն դնել... Թռչունը որ թռչուն է, էլի տուն է դնում, ձագեր հանում...

Հայրապետը հասկացավ եղբորը։ Նա մի պահ կարմրեց, լռեց, հետո ասաց.

— Ճիշտ ես ասում, բայց առաջ դու պետք է ամուսնանաս... Ես դեռ նոր եմ ավարտել, հարկավոր է մի քիչ աշխատել, հետո էլ դեռ աչքատակ արած չունեմ։ Իսկ դու երևի...

— Աչքատակ անելը դժվար չէ,— արդեն ոգևորված Հայրապետն խոսքն ընդհատեց եղբորը,— լավ աղջիկ՝ ինչքան ասես... Աշխատանքն էլ հո միասին կաշխատենք։ Ամուսնության հարցում ամեն մի ուշացած օր մի նոր հանցանք է։ Համ էլ Ծահկադեն արդեն կատաղել է, էլ պահել չի լինում։

Ծահկադեն այն խոյն էր, որ երեք տարի հատուկ խնամքով պահում ու մեծացնում էր Կարապետը՝ եղբոր հարսանիքին մորթելու համար։ Դա կատաղի աչքերով, կեռ եղջյուրներով, հաղթամարմին մի խոյ էր, որը ոչխարի հոտի մեջ կանգնած ժամանակ թվում էր, թե մի հսկա ցուլ է։

— Հենց էգուցվանից պետք է սկսել գործի մասին մտածել,— եզրափակեց եղբայրը, հարցը վերջնականապես վճռված համարելով։

Բայց ինչպե՜ս սկսված գործեր կիսատ մնացին, ինչպես վիթխարի գործեր հետաձգվեցին...

Սկսվեց Հայրենական ահեղ պատերազմը և բազմահազար երիտասարդների հետ Հայրապետն էլ գնաց Հայրենիքի պաշտպանության դիրքերը։

Կարապետը դարձյալ մենակ մնաց... Այս անգամ եղբոր բացակայությունն ավելի էր զգում, նա ավելի անհամբե-

բությամբ ու սրտատրոփ կերպով էր սպասում եղբոր նամակներին, նրանից մի լուր ստանալու: Նա սարսափով էր պատկերացնում, որ Հայրապետն այս անգամ արդեն դպրոցական նստարանին նստած, ուսուցչի պատմությունները չի լսում, այլ գտնվում է ռազմաճակատում, թշնամու մահաբեր գնդակների տարափի տակ...

Զարհուրելի մտքերից կծկվում էր Կարապետի սիրտը, և որքան ուշանում էր եղբոր նամակը, այնքան ավելանում էր նրա անհանգստությունը:

— Ո՞րտեղից եկավ էս դժբախտությունը մեր գլխին, ինչի՞ց սկսվեց,—հաճախ ինքն իրեն հարցնում էր Կարապետը և անիծում նրան, ով սկսեց այս կոտորածը:

Պետք է պատկերացնել, թե Կարապետն իր խոկ մտորումների ընթացքում ինչպես էր բորբոքվում, լցվում անհագ ցասումով դեպի թշնամին, որն այդքան դժբախտությունների տեղիք տվեց:

— Յարաբ, ե՞րբ պետք է ամբողջովին շանսատակ լինեն էդ ավազակները, ի՞նչ պետք է անել, որ ավելի շուտ կորչի դրանց ոտը մեր երկրից,—երբեմն ինքն իրեն հարց էր տալիս Կարապետը և մեկ օր ստացավ իր այդ հարցի պատասխանը:

Օրը պայծառ էր, զով, և արևի հուրհրայող շողերի տակ ամբողջ սարալանջի վրա փռված մեղմօրոր արածում էր ոչխարի հոտը: Կարապետը նստել էր մի քարի վրա, թերթը ձեռքն առել և աշխատում էր հասկանալ այնտեղ տպագրված ամեն մի բառը:

«Գերմանական զավթիչները լարում են վերջին ուժերը: Կասկած չկա, որ Գերմանիան չի կարող երկար դիմանալ լարվածությանը... Հիտլերյան Գերմանիան պետք է պայթի իր հանցագործությունների ծանրության տակ»:

Իսկ դրա համար անհրաժեշտ է,—այնուհետև շարունակեց կարդալ Կարապետը,—«որպեսզի մեր բանակն ու նավատորմը ունենան գործնական և ակտիվ օժանդակություն մեր ողջ երկրի կողմից, որպեսզի մեր բանվորներն ու

ծառայողները, տղամարդիկ ու կանայք աշխատեն հիմնարկություններում ձեռքերն առանց ծալելու և ֆրոնտին տան ավելի ու ավելի շատ տանկ, հակատանկային զենքեր, սավառնակներ, Թնդանոթներ, ականանետներ, գնդացիրներ. հրացաններ, զինանյութեր, որպեսզի մեր կոլխոզնիկները, տղամարդիկ ու կանայք, աշխատեն իրենց դաշտերում ձեռքներն առանց ծալելու և ֆրոնտին ու երկրին տան ավելի ու ավելի շատ հացահատիկ, միս, արդյունաբերության համար հումք, որպեսզի մեր ողջ երկիրն ու ՍՍՌՄ բոլոր ժողովուրդները համախմբվեն մեկ մարտական լագերում, որը մեր բանակի ու նավատորմի հետ մղում է մեծ և ազատագրական պատերազմ հանուն մեր երկրի պատվի ու ազատության, հանուն գերմանական բանակների ջախջախման»։

Մի քանի անգամ կարդաց Կարապետն այս տողերը, մի քանի անգամ խորհեց նա այդ մասին, զգաց, որ ամեն մարդ էլ անելիք ունի այս պատերազմում՝ ատելի թշնամուն ջախջախելու համար։

Շահզադեն մոտեցել էր, եղջյուրները քսում էր նրա ոտներին։ Կարապետը բարձրացրեց գլուխը, նայեց խոյին, բռնեց նրա կեռ եղջյուրներից, քաշեց իրեն, դուրգուրեց ծնոտը, համբուրեց աչքերը...

— Շահզադե, երեք տարի ես քեզ պահում էի Հայրապետի հարսանիքին մորթելու համար։ Հիմա Հայրապետը կռիվ է գնացել, հասկանո՞ւմ ես, Շահզադե... Պետք է օգնել Հայրապետին, պետք է օգնել բոլորին, որոնք կռվում են թշնամու դեմ, որ նրանք ջարդեն թշնամու գլուխը, սաղսալամաթ հետ գան կռվից ու մեր ազատ երկրում էլի սկըսենք ուրախ կյանք և ուրախ հարսանիք, հասկանո՞ւմ ես, Շահզադե...

Նա վերստին դեպի իրեն ձգեց խոյի գլուխը, համբուրեց նրա աչքերը, զգաց՝ որ վերջին անգամն է տեսնում իր սիրած խոյին...

Նա որոշել էր վաղը և հա իր Շահզադեին ուղարկել երկրի պաշտպանության ֆոնդին։

Կարապետը դարձյալ թերթն իր ձեռքն առավ, աչքի անցկացրեց նույն տողերը և խորազին հուզվածությամբ բացականչեց.

— Կտանք, ընկեր Ստալին, ամեն ինչ կտանք, ոչինչ չենք խնայի մեր հողի, մեր ջրի համար, ոչինչ չենք խնայի այդ ավազակ Հիտլերի գլուխը ջախջախելու համար։

Դա մեծ առաջնորդի կոչի արձագանքն էր ժողովրդի սրտում...

1942 թ.

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ

Ծառը ծաղկել էր մի գիշերում...

Վարդազարենց Եփրեմն իր կյանքն անց էր կացրել գյուղում, շարունակ գործ էր ունեցել ծառի հետ, բայց մինչև այդ նա չէր տեսել, որ ծառը կծաղկի մի գիշերում։

Երեկ, դեռ կեսօրից սկսած անընդհատ տեղացող անձրևը ստիպել էր նրան ժամանակից շուտ անկողին մտնելու, իսկ աչքերին քուն չէր գալիս։

Անձրևի կաթիլները ծեծում էին տան կտուրը, մառանում պատուհանի ապակիները, ապա կուտակվելով վտակներ կազմում, կարկաչելով հոսում և իրենց հետ տանում նրա մտքերը, ցրում հեռուները։ Ծերունին ճիգ էր անում կենտրոնանալ, խորհել գեթ մի հարցի շուրջը, սակայն մտքերը հողմացրիվ փոշու նման մանրանում էին ու անհետանում...

Այդպես տևեց մինչև լուսաբաց։ Լուսաբացին միայն ինքնաբերաբար փակվեցին նրա աչքերը։ Իսկ երբ արթնացավ, արևի շողերն արդեն խաղում էին նրա անկողնու վրա։ Այդ ժամանակ նա ոտքի կանգնեց, հագավ շորերը, դուրս եկավ բակ։

Գարնանային ջինջ առավոտ էր։ Բակը լցված էր ծաղիկների անուշ բուրմունքով։ Նա զարմացած նայեց շուրջը, ուզեց իմանալ, թե որտեղից է գալիս այդ արտասովոր բուրմունքը։

— Ի՞նչ ես գող աղվեսի պես հոտոտում,— բակը մտնելով ասաց կինը — Աննա մորաքույրը, որ կովը տարել էր խառնելու նախիրին և նոր էր վերադառնում։

— Աննա խաթուն, եկեք, ախր ասում եմ, թե որտեղից է գալիս էս լավ հոտը,— առանց հետ նայելու պատասխանեց ամուսինը, հենց այն է ուզեց շրջվել, նայել կնոջը, աչքն ընկավ ծիրանի ծառին, որի ծաղիկները ծիածանի բոլոր գույներով փայլփլում էին արևի շողերի տակ։

Դեռ երեկ ծառի վրա ոչ մի ծաղիկ չկար։ Իսկ այժմ ծառը ամբողջովին ծածկվել էր ճերմակ ծաղկաթերթիկներով, որոնք սկսում էին մուգ մանուշակագույն փայլով, հետո բացվելով ավելի վարդագույն դառնում, իսկ վերջում ճերմակին էին տալիս և թվում էր, թե ինչ որ անսովոր մի ուրախությունից նրանք ծափահարում են ու ծիծաղում աշխույժ։

Ծերունին մտորումների մեջ բնազդաբար նստեց մի քարի վրա և հայացքը հառեց ծառին։

— Այ մարդ, ինչ ես շշմել, բա գործի չես գնալու,— հարցրեց կինը, բայց մնաց անպատասխան։

Ամուսինը կարծես չլսեց նրա հարցը, շարունակեց լուռ սուզված մնալ մտքերի մեջ և քիչ անց հանկարծ հարցրեց.

— Աննա, մի՞տդ է թե երբ ենք տնկել էս ծառը։

— Կարծեմ Վազգենի ծնված տարին էր, չէ՞։

— Հենց Վազգենի ծնված օրը...

Դա քսաներկու տարի առաջ էր։ Նա բակում կանգնած լսում էր կնոջ երկունքի տնքոցները։ Այդ տնքոցները չլսելու համար հեռացավ բակից, գնաց պարտեզ և այնտեղ աչքին ընկավ պատի քարերի արանքից դուրս եկած ծիրանի մի փոքրիկ տունկ։ Նա զգուշությամբ հանեց տունկը, տարավ, հորեց պարտեզի բաց ու արևոտ անկյունում, տակը փափուկ ու պարարտ հող ածեց, ջրեց, չորս կողմը փշապատեց։ Իսկ երբ ուզում էր գնալ, սենյակից ժպիտը դեմքին դուրս եկավ տատմայրն ու աչքալուսանք ավեց նրան՝ անդրանիկ որդու ծնվելու համար...

— Էհ, ինչ է մարդու կյանքը,— ծանր լռությունը խախտեց Աննա մայրաքույրը,— մի ծառի չափ էլ հաստատ չի... Հրես քսաներկու տարի է էս ծառն ինչպես եղել է, էնպես

էլ կանգնած է իր տեղում, իսկ սրան հասակակից իմ որդուց հիմա մի լուր էլ չկա…

Աննա մորաքույրն սպասում էր, որ ամուսինը կպատասխանի իրեն։ Իսկ ամուսինը լուռ էր ու անսովոր կերպով մռայլ։ Այդպես մռայլվում էր նա միայն այն ժամանակ, երբ մարդիկ անզգուշությամբ հիշեցնում էին նրան 1914 թվականի պատերազմի օրերին աջ թևը կորցնելու պատմությունը։ Այդ պատմությունը լսելիս նա ցնցվում էր և հիշում այն ծաղրանքներն ու հալածանքները, որոնց ենթարկվել էր ցարական բանակում երկու տարի ծառայելիս։

Այն ժամանակ ինքը սայլապան էր։ Երբ սկսվեց պատերազմը, նա էլ ամբողջ գնդի հետ մեկնեց ռազմաճակատ։ Բայց ռազմաճակատի առաջավոր գծին դեռ չհասած, մեկ օր գնդի համար սայլով հաց տանելիս, որտեղից-որտեղ պատահական մի գնդակ եկավ, կպավ թևին։ Նրան անտառում գտնելով ուշագնաց ընկած, վերցրին, տարան գոսպիտալ, թևը հատեցին ու շարքից դուրս եկավ առանց պատերազմ տեսնելու։ Եփրեմ Վարդազարովը, ինչպես ասում էին նրան այն ժամանակ, իր կյանքում դրանից մեծ դժբախտություն չէր հիշում։ Նրան շարունակ տանջում էր ոչ թե թևը կորցնելու միտքը, այլ այն, որ անտեղի է կորցրել։

— Ես մարդ էլ կռիվ գնա, առանց տեղ հասնելու, թշնամու դեմ առանց ճակատ-ճակատի դուրս գալու, կես ճանապարհից ետ գա հաշմանդամ դառած,— հաճախ խորը կսկիծով ինքն իրեն ասում էր նա։

Գյուղում ոչ ոք չէր կարծում, թե նա դրա համար կարող է այդքան վշտանալ։ Ոչ ոք չէր ենթադրում, թե այդ կայտառ մարդը կարող է որևէ վիշտ թաքցնել իր սրտում։ Բայց մի տարի առաջ, երբ նա իր որդուն, Վազգենին, բանակ էր ճամփում, խոսեց այդ մասին։ Խոսեց զգուշությամբ, շշուկով, երբ կինը մյուս սենյակում որդու ճամբի պաշարն էր պատրաստում։

— Գիտե՞ս ինչ,— ասաց նա որդուն,— անիմաստ մահն աշխարհում ամենամեծ խայտառակությունն է։ Ի՞նչ իմաստ

ունեցավ իմ թևը կորցնելը։ Ոչ մի։ Ո՞ւմ օգուտ տվեց այդ կորուստը։ Ոչ ոքի։ Մարդ, հեռու իրենից, եթե մեռնելու էլ լինի, պիտի պատվով մեռնի, քաջի անունով... Ով վախկոտի անուն է կրում, նա հենց ինքը մեռած է, հա, մեռած, այն էլ խայտառակ մահով...

Այդ օրը ծերունին որդու հետ երկար խոսեց։ Խոսեց մշուշապատ լեզվով, ավելի շատ առակներով, քան ուղղակի, և որդին չկարողացավ լավ հասկանալ, թե հայրը դրանով ինչ էր կամենում ակնարկել, այն, որ ինքը—Վազգենը քաջ լինի, մահից չվախենա, թե՞ այն, որ հայրը տանջվում է իր թևն անտեղի կորցնելու մտքից...

Վազգենը բանակ գնալուց հետո շատ էր փոխվել Եփրեմ քեռին։ Նա լռակյաց էր դառել, քիչ էր խոսում, քիչ կատակում։ Գյուղացիք կարծում էին, թե նա որդու մասին է միտք անում, նրա կյանքի մասին է անհանգստանում, բայց նրան միանգամայն այլ հարց էր տանջում։ Այդ մասին նա մի անգամ խոսեց կնոջ հետ։

— Գիտե՞ս ինչ, կնիկ,—ասաց նա,—Վազգենը գյուղում եղած ժամանակ էլ էր փոստի վարիչ, բանակում էլ է նույն աշխատանքը կատարում։

— Դրանից ի՞նչ վնաս,—զարմացած հարցրեց կինը։

— Վնաս լինելը՝ վնաս չի, բայց կռիվ գնացողը կռիվ պետք է անի։ Իսկ փոստը... Դուրս է գալիս որ...

— Ոչինչ, փոստում նրա համար ավելի ապահով կլինի,—ընդհատեց կինը։

— Կռվում ապահով կամ անապահով տեղ չկա, կնիկ, բոլորը մեկ է։ Քեզ օրինակ իմ թևը։ Սայլապան էի, կռվի չմասնակցեցի, բայց ինչպե՞ս եկա տուն...

Ապա տեսնելով, որ կինը միանգամայն այլ կարծիքի է, ծերունին լռեց, ամփոփվեց ինքն իր մեջ և որոշեց այդ մասին այլևս չխոսել նրա հետ։

Բայց այդ օրը, ծիրանի ծառի մոտ, նա ակամայից անդրադարձավ նույն հուզող հարցին։

— Կնիկ, գիտե՞ս ինչի մասին եմ մտածում։

— Հը։

— Ասում եմ աշխարհում էսքան արհեստ կար, աշխատելու հազար ու մի տեղ կար, մեր էդ Վազգենն ախր ինչու գնաց կպավ էդ փոստին...

— Էհ, դու էլի սկսեցիր քո հին հեքյաթը,— անմիջապես հասկանալով ամուսնու միտքը՝ ասաց Աննա մորաքույրն ու ոտքի կանգնեց։

— Կնիկ, ախր դու բան չես հասկանում։

— Դու հասկանում ես՝ հերիք է,— լացկումած պատասխանեց կինն ու հեռացավ։

Ծերունին զղջաց կնոջը վշտացնելու համար։ Ի՞նչ կարիք կար այժմ այդպիսի խոսակցություն սկսելու, մանավանդ, որ նման դեպքերում կինը շարունակ տխրում էր ու արցունքներ քամում աչքերից։

Նա մտքում կշտամբեց իրեն, վճռեց կնոջ հետ այլևս չխոսել այդ մասին և ուզում էր գնալ աշխատանքի, հանկարծ վազեվազ բակը մտան գյուղի խրճիթվար Արուսյակն ու այգեգործական բրիգադայի բրիգադիր Հայկազը։

— Աչքդ լույս, Եփրեմ քեռի, աչքդ լույս,— շնչահեղձ բացականչեց Հայկազը և ձեռքի թերթը մեկնեց նրան։

Եփրեմ քեռին շփոթված վերցրեց թերթը, նայեց Հայկազի մատնացույց արած նկարին, որի տակ գրված էր.

«Վազգեն Եփրեմի Վարդազարյանը Ռազմական կարևորագույն փաստաթղթեր փրկելու և ցուցաբերած խիզախության համար պարգևատրվել է «Կարմիր Աստղ» շքանշանով»։

Այդ ժամանակ նրանց աղմուկի վրա տնից դուրս եկավ Աննա մորաքույրը, ամուսնու ձեռքից խլեց թերթը, նայեց նկարին և ցնծագին բացականչեց.

— Էս հո իմ Վազգենի նկարն է, մեռնեմ բոյին...

Մայրը թերթը մոտեցրեց շրթունքներին, կարոտագին համբուրեց որդու նկարը։

Եփրեմ քեռին, որ մինչ այդ լուռ ու շփոթված կանգնել էր, հանկարծ բացականչեց.

— Չէ, մարդն ավելի հաստատ է, քան թե ծառը…

Հայկազն ու Արուսյակը չհասկացան նրա ասածը, իսկ Աննա մորաքույրն աչքերը հառեց ծիրանի ծառին, որի ծաղիկները մեղմիկ ծփում էին ու շռայլ փայլում արևի տակ։

1943 թ.

ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ

Հնում, փիլիսոփաներից մեկը այն հարցին, թե նրա կարծիքով կյանքում ինչն է ամենից շուտ տարածվում, պատասխանել է.

— Ժանտախտն ու բամբասանքը...

Վարսենիկի մասին հորինած բամբասանքն էլ տարածվեց ժանտախտի արագությամբ։

Այդ օրը, առավոտյան, նա սար էր գնացել՝ վրանները խփելու տեղը որոշելու։ Կեսօրից հետո, երբ արևն արդեն կանգնել էր Այու սարի գլխին, նա տուն էր վերադառնում։

Շրջապատում տիրում էր խոր լռություն։ Միայն անտառի միջով հոսող գարնանային վճիտ վտակների խոխոջն էր լսվում, մեկ էլ թփից-թուփ ոստոստող թռչունների ծլվլոցը։

Ծաղկափթիթ անտառներում տիրող անդորրը դուր էր գալիս Վարսենիկին։ Նա ամփոփվել էր իր բազմազան մտքերի մեջ և չէր էլ ուզի, որ կողմնակի մի ձայն դուրս բերի իրեն այդ հոգեվիճակից։ Բայց հենց այդ ժամանակ նրա ականջին հասավ մեկի հանգիստ երգի ձայնը։

Վարսենիկը մի պահ կանգ առավ, ունկնդրեց, բայց որովհետև ձայնը թույլ էր գալիս, չճանաչեց երգողին։ Նրա հետաքրքրությունը շարժվեց։ Քայլերն արագացրեց, անցավ առաջին ոլորտը, տեսավ երգողին։ Դա, ինչպես գյուղում էին ասում, շռաչքը Հայկազն էր, որ ձեռքերը մեջքին դըրած, դանդաղ քայլում էր ճանապարհով և որսի դուրս եկած շան նման կարծես հոտառությամբ իսկույն զգաց, որ իր

հետևից եկող կա։ Նա դեռ քայլի ձայնը չլսած ետ շրջվեց և տեսավ Վարսենիկին։

Վարսենիկին այդ հանդիպումը բնավ չուրախացրեց։ Նա մենակ իրեն ավելի լավ էր զգում։ Նախ մտածում էր ամառային աշխատանքների մասին, ամռան ոչխարը սար տանելու մասին, ապա ամուսնու — Արշակի մասին, որից վաղուց նամակ չուներ։

— Եթե էս րոպեիս մի մեծ քսակ ոսկի գտնեի, էլի էնքան չէի ուրախանա, որքան ուրախացա քեզ տեսնելուց, — երբ Վարսենիկը հավասարվել էր նրան, ասաց Հայկազը, — մենակ ճանապարհ գնալն ավելի վատ է, քան դժողքում քար տաշելը…

— Իսկ որտեղի՞ց ես գալիս, — առանց ուշադրություն դարձնելու նրա ասածին, հարցրեց Վարսենիկը։

— Հովիվների մոտ էի գնացել։ Էս տարի ոչխարը լավ պիտի պահենք, որ համ կաթն առատ լինի, համ էլ միսը։ Մեծ պարտավորություններ ենք վերցրել Կարմիր Բանակին օգ՝նելու համար։ Եթե պարտավորություններս չկատարենք, սևերես կմնանք։

Այնուհետև նա էլի պատմեց իրենց պարտավորությունների, հետո, հովիվների մասին, ասաց, որ օրերն անսպասելի կերպով շուտ սկսեցին տաքանալ, պետք է ամեն ինչ պատրաստել շուտով սար դուրս գալու համար։ Բայց Վարսենիկը լուռ էր և կարծես թե նրան չէր լսում։ Նրա անտարբերությունը Հայկազն էլ նկատեց և հարցրեց.

— Տխուր ես երևում, ինչ է պատահել։

— Առանձին ոչինչ, մեկ խոսքը գոնե մեկ լավ պիտի ունենա չէ՞։

— Մի խոսք էլ դու ասա, որ ես լսեմ, էդ տեսակ հո ընկերություն չի լինի, որ մեկը խոսի, իսկ մյուսը միայն լսի։

Վարսենիկը նրա այդ խոսքերին էլ չպատասխանեց և Հայկազն զգաց, որ ավելորդ է ջանք թափելը, նա տրամադրություն չուներ խոսելու, այլապես այդքան չէր լռի,

ինքը կսկսեր խոսել, հարցեր տալ, որովհետև նա ինքն էլ կենսուրախ կին էր։

— Գիտե՞ս ինչ, աշխարհում տխրելով կամ սուգ պահելով եթե մարդու հոգսը վերանա, կարելի է փակվել մի մութ տնում, գիշեր-ցերեկ ոչ խոսել, ոչ ուտել, միայն տխուր մտածել,—Վարսենիկի լռությունը ի՛նչ որ բանի վերագրելով ասաց Հայկազը, ավելի մոտեցավ նրան, ձեռքը քնքշությամբ դրեց ուսին և ավելացրեց,—մարդ ծնվում է ուրախ ապրելու համար։ Եթե ուրախ ապրելը չի հաջողվում, տխրությունից գոնե պիտի խուսափի։

— Մարդու կյանքում տխրությունն ու ուրախությունը քայլում են միասին, իրարից անբաժան։ Ով դրանից միայն մեկին է տեսնում, նա կյանքի քաղցրությունը չի զգա,— հանգիստ պատասխանեց Վարսենիկը, Հայկազի ձեռքն իր ուսից վերցրեց, հանկարծ ետ շրջվեց, խիստ նայեց նրան և ապա վերստին գլուխը կախեց ու շարունակեց ճանապարհը։

Վարսենիկի խստությունը շփոթեցրեց Հայկազին։ Նա զղջաց և՛ ասած խոսքերի համար, և՛ նրա համար, որ ձեռքը դրեց նրա ուսին։ Նա ինքն էլ լռեց և այդպես լուռ շարունակեցին իրենց ճանապարհը։ Այդ ժամանակ ճանապարհից քիչ վերև հանկարծ լսվեց մեկի փռշտոցը։ Նրանք երկուսով էլ ետ նայեցին, բայց ոչ ոքի չտեսան այնտեղ։ Դա չիլ Սրբեն էր, որ եկել էր անտառում խաղող քաղելու և տեսնելով Հայկազին Վարսենիկի հետ միասին խոսելով գնալիս, սկսել էր հետևել նրանց, կարծելով, թե անտառում նրանց միասին լինելը պատահական չէ, և ուզում էր իմանալ, թե ինչով կվերջանա այդ ամենը։

Արևն արդեն թեքվում էր սարի մյուս կողմը։ Հայկազն ու Վարսենիկը դուրս էին եկել անտառից և մտնում էին գյուղին։ Չիլ Սրբեն տեսնելով, որ իր կանխազգացումները չհաստատվեցին, թողեց նրանց ու մի այլ ճանապարհով գնաց դեպի տուն։ Բայց հաջորդ օրը գյուղում տարածվեց Վարսենիկի և Հայկազի հանդիպման լուրը։

— Աղջի, բա չե՞ս տես էսպես-ֆսպես բաներ,— խորհրդավոր տոնով ասաց Աբելի կինը իր հարևանուհուն։

— Բա դու որտեղից գիտես, այ Մանուշակ։

— Ինքը Աբելն է տեսել իր ջուխտ աչքով։

Ուշիմ մարդը Մանուշակի հենց այդ խոսքերից ելնելով պետք է կասկածի տակ առներ նրա ասածը։ Աբելի ջուխտ աչքով տեսածը դեռ չպետք է ստույգ համարվեր, որովհետև նրա ջուխտ աչքերից մեկը կույր է, մյուսը՝ շիլ... Իսկ նրանց հարևանուհին առանց ուշադրություն դարձնելու այդ կարևոր փաստի վրա, գնաց ու ինքն էլ իր հերթին մի քանի մանրամասնություններ կցելով լրածին, տարածեց շիլ Աբելի ասածը...

Այդ օրը գյուղում էլ չկար մեկը, որ չխոսեր այդ մասին։ Ոմանք ճշմարտության տեղ ընդունելով շիլ Աբելի ասածը, խիստ դատապարտում էին Վարսենիկին։

— Էդպես կնոջը պետք է կապել մի վարգուն ձիու, հեծնել ձին, քշել, որ նա իր հետևից քարշ տա կնոջը, երեսը քարին խփի, արյունոտի, մատները ջարդի, աչքերը հանի, հրեշի օր գցի, որ դրա պատկերից մարդ զզվանք զգա,— ասում էր նալբանդ Ազարբեկը, որ վտիտ, ոսկրացած, բայց սատանի տաքարյուն ու դյուրաբորբոք մի մարդ էր և դրա համար էլ գյուղացիք ասում էին—Ազարբեկի հերսից ու քուրայից միշտ կրակ է թափվում...

Իսկ որսկան Ավոն այլ կերպ էր արտահայտվում դրա մասին։

— Այ մարդ, ախր ինչո՞ւ եք էդպես խոսում. նա էլ մարդ է, չէ՞, հո երկաթից չի ծնվել։ Գարուն է, բնությունը ծաղկել է, ամեն ինչ եռ է գալիս։ Գուցե նա էլ է մի պահ ենթարկվել բնության օրենքին...

— Էդ տեսակ օրենք չկա,— Ավոյին խոսքն ընդհատեց մեկը, որին սուրբ Սարգիս էին ասում,— էդ տեսակի օրենք չկա։ Քո ասածը թռչունների, անասունների օրենքն է։ Մարդու օրենքը ջոկ է։ Մարդու օրենքը սերը և հավատարմության օրենքն է։ Ինչ խոսք, որ նա շռաչք Հայկազին

չի սիրում, մեր գյուղում նրան սկի ոչ մի կին էլ չի սիրում, իսկ Վարսենիկը ևս առավել...

Բայց նա խախտում է սիրո և հավատարմության օրենքը... Լավ չի անում, չէ, լավ չի անում, խղճի դեմ է նրա բռնած գործը։ Արշակը նրա համար լավ ամուսին է եղել, ազնիվ, աշխատասեր, աչքաբաց, սիրող։ Նրա պատվի հետ խաղալը լավ չի, անազնվություն է։ Նրա ձայնը չենք լսում, բայց անունը տալիս ենք։ Ով գիտի, գուցե դեռ սաղ է, կվերադառնա, կտեսնի, որ մեր գյուղում լավ չենք պահել պատիվը... Ի՞նչ ասեցիր, հը, Թյունգի Ղազար...

Դա կճուճի նման կլոր, կարճահասակ մի մարդ էր, որի համար էլ «թյունգի» մականուն էր ստացել։ Նա նստել էր սուրբ Սարգսից մի քանի քայլ հեռու, կլոր մի քարի վրա, գլուխը կախ, մտախոհ, սուրբ Սարգսի հարցին հազիվ լսելի ձայնով պատասխանեց.

— Ճիշտ բան ասացիր, քավոր սուրբ Սարգիս...

Եվ նա իրեն կարծես թե հանցավոր զգալով, գլուխը կախեց ու սկսեց մտածել բնության օրենքների մասին, մարդկային սովորությունների մասին, սիրո ու հավատարմության մասին։

Գյուղում առաջինը Նավասարդենց Ծաղիկն էր, որ կասկածի տակ առավ Վարսենիկի մասին տարածված լուրը։ Նա չուզեց հավատալ դրան, որովհետև գիտեր, որ Վարսենիկը զուսպ է, իրեն պահել գիտե, սիրում է ամուսնուն և ոտնատակ չի տա նրա անունը, այն էլ մի մարդու հետ, որի լկտի հայացքից ամեն մի կին զարշանք է զգում։

Երեկոյան, երբ տանը վերջացրել էր աշխատանքները, գնաց Վարսենիկի մոտ։

— Այ աղջիկ, եդ ի՞նչ էս անում, երկու օր է ձենդ դուրս չի գալիս,—խորամանկորեն աչքերը այս ու այն կողմ խաղացնելով ասաց Ծաղիկը, մի աթոռ քաշեց, նստեց վրան, դրանով իսկ հասկացնելով, որ եկել է ոչ իսկույն գնալու նպատակով,—ի՞նչ ես քեզ էդքան տանջում, մարդ պիտի ամեն ինչի մի աչքով նայի։ Աշխարհը հո չպիտի բռնենք

ու մինչև վերջը գնանք։ Մեզ բոլորովին մոռհոն ենք արել։

Վարսենիկը ձեռքի գործը կիսատ թողեց, ինչ որ կասկածամտորեն նայեց Ծաղիկին։

— Դրանով ի՞նչ ես ուզում ասել։

— Ուզում եմ ասել, որ աշխատելիս պիտի աշխատել, ուրախանալիս էլ՝ ուրախանալ։ Ինչ է, մենք աշխարհի խորթ զավակնե՞րն ենք. մեր բաժին չկա՞։ Հրեն ուրիշներն ինչ ուզում են՝ անում են. համ իրենց ամուսիններին են պահում, համ էլ տեղն ընկնելիս սրա-նրա բաժնից են գողանում։ Իսկ մենք... ոչ մերն ունենք, ոչ էլ ձեռքներիցս գողություն է գալիս...

Վարսենիկին դուր չեկան Ծաղիկի այդ անսպասելի խոսքերը։ Նրա մինչ այդ զարմացական հայացքը հանկարծ փոխվեց, խստացավ և նա նույն խստությամբ ասաց.

— Ուրիշի բաժնից գողացողի ոչ փորը կուշտ կլինի, ոչ էլ բերանում համ կլինի... Սխալ միտք ես անում, Ծաղիկ։ Մենք մեր հալալ բաժինն ունեցել ենք։ Եթե նրանք ողջ են, կվերադառնան, կարժանանան մեզ, մենք էլ պարզ երեսով դուրս կգանք նրանց առաջ։

— Իսկ եթե չվերադառնա՞ն...

— Երևի մեր ճակատին էլ այդ է գրված։ Կաշխատենք, աշխատանքի մեջ կմոռանանք մեր վիշտը։ Աշխատանքը ամեն ժանգի մաքրողն է, Ծաղիկ, մեր սրտից էլ կմաքրի այդ ժանգը։ Դու վերջերս քեզ առանձնապես լավ չես պահում, քիչ ես դուրս գալիս աշխատանքի։ Գարնան եռուն աշխատանքների ժամանակ այդ լավ չի, հենց դրանից է, որ սրտիդ էդ տեսակ ժանգ է նստում։

Ծաղիկը զղջաց իր ասած խոսակցության համար։ Նա ուզում էր զարտուղի ճանապարհով իմանալ Վարսենիկի միտքը, նրա մասին տարածված լուրերի ստույգ լինելը, բայց այդ չեղավ, ինքն անհարմար դրության մեջ ընկավ և ամաչելուց կարմրեց։

— Լավ, որ էդպես խոսում ես, իսկ ինչու չես ինքդ էդպես անում,— իր ուժերը հավաքելով հանկարծ հարցրեց Ծաղիկը։

— Ես ի՞նչ եմ անում որ։

— Ի՞նչ ես անում...

Եվ Ծաղիկն սկսեց մանրամասնորեն պատմել գյուղում տարածված լուրը։

Երբ նա պատմում էր, Վարսենիկի աչքերը զարմանքից չռվել էին, այտերը կարմրել էին, իսկ ձեռքերը, ոտները, ամբողջ մարմինը վրդովմունքից դողում էին։

— Բամբասանք է, Ծաղիկ, դու մի հավատա,—հուզմունքը հաղիվ զսպելով ասաց Վարսենիկը։

— Ես ակի չեմ էլ հավատում և դրա համար էլ եկել եմ քեզ մոտ, հայտնում եմ, որ դեմ առնես։

— Շունը կհաչի, քարվանը կանցնի։ Թող ինչ ուզում են տարածեն,—պատասխանեց Վարսենիկը,—խիղճս մաքուր է, այդ էլ ինձ բավական է։ Իսկ բամբասանքը քամու պես բան է, մարդու վրա չի նստի։

Նրանք երկար խոսեցին։ Կես գիշերից անց էր։ Ծաղիկը գնաց, իսկ Վարսենիկը նրա գնալուց հետո միայն զգաց, թե որքան խոր է խոցված սիրտը։ Մտավ անկողին, բայց չկարողացավ քնել, սկսեց տապակվել, գալարվել տեղում և մղկտալ դառնագին, վիրավոր սրտով, հոգու խորքից...

Նա մտաբերեց իր ամուսնուն, Արշակին, մտաբերեց նրա հետ անցկացրած երջանիկ ժամերը, և առաջին անգամ այդքան խորությամբ զգաց նրա բացակայությունը, իր մենակությունը, առաջին անգամ այդքան խորությամբ զգաց նրա հետ գեթ մի բառ փոխանակելու անհրաժեշտությունը։ Նա կցանկանար գեթ մի անգամ էլ տեսնել իր ամուսնուն, ուղիղ, պարզ հայացքով նայել նրան և ասել.

— Տեսնում ես, Արշակ, ես անմեղ եմ, ես հավատարիմ եմ քեզ, իսկ իմ մասին բամբասանքներ են տարածում։

Իսկ Արշակը չկար։ Նրա մասին լուր էլ չկար։ Կինը վաղուց էր կտրել հույսը, իսկ այդ րոպեին նա կուզեր գոնե նրա հասցեն ունենալ, նամակ գրել նրան և եթե տեղ էլ չհասներ այդ նամակը, գոնե այնտեղ արտահայտվեր կնոջ

սիրտը, կնոջ հավատարմությունը։ Իսկ Վարսենիկը ամուսնու հասցեն էլ չուներ…

Մինչև լուսաբաց նա մղկտաց անկողնում, առանց ձայնի, լուռ, ճիշտ այնպես, ինչպես միսն է խորովվում կրակի վրա միայն ծուխ արձակելով։ Լուսադեմին նա վեր կացավ անկողնից, մոտեցավ հայելուն, որ մազերը սանրի, դուրս գա, և տեսավ, որ աչքերի տակերը կապտել են, դեմքը ուռել է…

Ու էլ ոչ մի տեղ չգնաց։ Կրկին հետ եկավ, մտավ անկողին, բայց առանց լացի սկսեց լուռ խորհել։ Եվ հենց այդ ժամանակ էր, որ դուռը բացվեց, աղմուկ-աղաղակով մտավ Ծաղիկը՝ մի նամակ ձեռքին։

Վարսենիկի սիրտը սկսեց թպրտալ։ Հանկարծակի մըտքերից կարող էր նա ուշագնաց լինել, եթե Ծաղիկն այդ իսկույն չնկատեր ու չնախազգուշացներ։

— Մի հուզվիր, վատ բան չկա, առ կարդա։

Բայց դրանից, իհարկե, Վարսենիկի հուզմունքը չանցավ։ Նա դողդողալով վերցրեց նամակը, նայեց ձեռագրին և իսկույն ինչ որ մի սառնություն եկավ վրան։ Դա անծանոթ մարդու նամակ էր, Արշակը չէր գրել։ Արշակի ձեռագիրը նա իսկույն կճանաչեր։

— Ի՞նչ կապ ունի այս նամակն ինձ հետ,—հիասթափված հարցրեց Վարսենիկը։

— Կարդա, կիմանաս,—անտարբերությամբ պատասխանեց Ծաղիկը։

Վարսենիկը սկսեց մի քանի տող կարդալ, բայց այնտեղ իրեն հետաքրքրող ոչինչ չկար։ Դա հարևան գյուղացի Լևոն անունով մի տղա էր գրում իր կնոջը։ Ի՞նչ կարիք կար կարդալու ուրիշի նամակը։ Նա ուզեց նամակը հետ ծալել, տալ Ծաղիկին, բայց վերջինս չվերցրեց և ստիպեց նրան կարդալ մինչև վերջ։

Եվ ահա այդտեղ պարզվեց ամեն ինչ։ Լևոնը գրում էր, թե իրենց վաշտը երկար ժամանակ շրջապատված է եղել և մի քանի օր առաջ միայն ճեղքել էր թշնամու շղթան ու

բարեհաջող դուրս եկել շրջապատումից։ Եվ, ի միջի այլոց, ավելացնում էր. «Իսկ այժմ հանգիստ նստած ենք անտառում, ընկերներս վիճում են ընտանիքի, սիրո և հավատարմության մասին, իսկ ես և լսում եմ նրանց, և միաժամանակ գրում քեզ այս նամակը։ Այ, մեկն ասում է.

— Կնոջ հավատարմությանը ես չեմ հավատում։ Կինը մի հավք է, որ սիրում է թփից-թուփ թռչել և որտեղ շատ կուտ տեսնի, այնտեղ ավելի հաճույքով կմնա։ Իմ անձնական փորձը ինձ դրանում համոզել է խորապես։

Իսկ մյուսը պատասխանում է.

— Ախպար, դու մինչև հիմա կին չես տեսել, դու քո փորձը հավքերի վրա ես կատարել։ Իսկ կինը հավք չէ, կի՛նը մարդ է և նա իր սուր զգայարաններով մարդու մեջ իսկույն տեսնում է կենդանուն։ Եթե կինը քո մեջ կենդանու հատկություն է գտել, իզուր ես նրանից հավատարմություն պահանջում, իսկ եթե դու եղել ես մարդ, հավատարմության ձեռք ես մեկնել կնոջդ, վստա՛հ եղիր, անխախտ կլինի այդ հավատարմությունը, ինչքան էլ որ անջատման ժամանակամիջոցը երկարատև լինի, ինչպիսի հողմերի էլ որ նա ենթարկվի։ Ես հավատում եմ կնոջ հավատարմությանը, իմ անձնական փորձը դրանում համոզե՛լ է ինձ խորապես։

Ես նախանձում եմ այդ խոսողին։ Դա ինքը շատ հավատարիմ տղա է, կաքավաձորցի, Արշակ Վարդանյան ազգանունով...»։

— Օ՜յ,— հանկարծ ճչաց Վարսենիկն ու նամակը ձեռքից վայր ընկավ։

Ծաղիկն իսկույն գրկեց նրան, նստեցրեց աթոռին, և ասաց.

— Տեսնո՞ւմ ես, թող ով ինչ ուզում է քո մասին բամբասի, քո ամուսինը քեզ վստահում է։

— Իսկ սիրող կինը պետք է արդարացնի ամուսնու վստահությունը և զգուշանա անտեղի բամբասանքի ենթարկվելուց,— պատասխանեց Վարսենիկը սրտի ուրախագին թրթիռներով։

Այդ պահին նրա դեմքին փայլում էր երջանիկ սիրո խոր զգացումը։

1943

ԿԱՆԱՆՑ ԱՂԲՅՈՒՐԸ

Սիրանի սիրտը լցվել էր բնության հույզերով։ Եվ ինչը կարող է, առհասարակ, մարդու սրտի պես արագ հաղորդակից լինել բնությանը...

Օրը մթնել էր, իսկ հորթը դեռ չկար։ Սիրանը գնում էր հորթը փնտրելու։ Նորելուկ աստղերն արդեն պսպղում էին երկնքում։ Հեռու-հեռավոր դաշտավայրերից եկող զեփյուռն իրար էր տալիս նոր տերևակալած ծառերի կանաչ սաղարթները, բարձրանում, հասնում գյուղավերի լանջին, մրմնջում դուրալի մի երգի նման։ Մեղմիկ զեփյուռից ծփում էին արտերը, վավաում էր խոտը, և Սիրանին թվում էր, թե նրանք միալար ասում են.

— Այդ ուր ես գնում, ուր ես գնում...

Սիրանը մերթ ընդ մերթ տալիս էր հորթի անունը, կանչում, բայց չէր լսում ձայնի արձագանքը։ Ուրիշ մտքեր էին պատել նրան, ինքնամփոփ էր նա ու այդպես մտախոհ քայլելիս ինքն էլ չիմացավ, թե երբ հասավ «Սիրո աղբյուրին»։

Դա գյուղից քիչ բարձր, հինավուրց մի ավերակ էր։ Նրանից մնացել էին կամարաձև դռան իրար կպցած երկու պատի պռունգ միայն ու մի քանի քարե ավազան, որոնք լցվել էին հողով, ու չորս բոլորը պատել էր փարթամորեն աճած վայրի խոտը։

Գյուղում ոչ ոք չէր հիշում, թե երբ է կառուցվել այդ աղբյուրը և երբ է ավերվել այն։ Հայտնի է միայն նրա հետ կապված արտասովոր սիրո պատմությունը։

...Հնում Ջաղացպան Նավասարդը մի աղջիկ ուներ, անունը

Սալբի։ Գեղեցիկ էր Սալբին, ինչպես այգաբացին վճիտ ջրերի ակունքից դուրս եկած հավերժահարս։ Հասակը բարձր էր սոճու նման, դեմքը՝ ճերմակ, որպես գիշերային անհուն եթերի մեջ լողացող լիալուսին։ Շատերին էր խելքամաղ արել Սալբին իր գեղեցկությամբ։ Նրա ձեռքը խնդրելու համար գալիս էին հեռու տեղերից անվանի մարդիկ, գեղեցիկ երիտասարդներ, բայց մերժված վերադառնում։ Հարսնախոսները դիմում էին Ջաղացպանի միջնորդությանը, նրան մեծամեծ հարստություններ խոստանում, իսկ նա բոլորին միևնույն պատասխանն էր տալիս.

— Սերը հարստությամբ չես առնի։ Սալբին ինքը կասի, թե ում է սիրում։

Իսկ Սալբին սիրում էր մի հովվի՝ Բարսակ անունով։ Այնքան գեղեցիկ չէր Բարսակը, որքան Սալբու ձեռքը խնդրողներից շատերը։ Նա փոքր էր մարմնով, բայց ջլապինդ։ Թուխ էր նրա դեմքը՝ կաղնու կեղևի նման, իսկ աչքերը վառ էին, որպես անշեջ հրի կայծեր։

Սերը փայլ չի սիրում։ Սիրո ճառագայթները թափանցում են մարդու սիրտը և այնտեղ են որոնում իսկական գեղեցկությունը։ Սալբու սիրտը Բարսակին էր կպել։

Մեկ օր, ոչխարակթի ժամանակ, Սալբին տեսավ Բարսակին սևագանգուր մի գառան դունչը համբուրելիս և ուզեց կատակել։

— Տղամարդը բա գառան կհամ...

Նա չվերջացրեց խոսքը, զղջաց, հանկարծ լրջացավ, նայեց Բարսակի աչքերին։ Բարսակը շփոթվեց, բաց թողեց գառը, նայեց Սալբուն։ Աղջիկը հեռացավ... Բայց մի՞թե փոքր կայծն անգամ բավական չէ արևից խանձված հսկա անտառը հրկիզելու համար...

Այնուհետև նրանք հանդիպում էին ամեն երեկո։ Բարսակը ոչխարի հոտը փարախ բերելուց հետո պահ էր տալիս ընկերոջը, ինքը գնում պայմանավորված տեղը, ուր նրան սրտատրոփ սպասում էր Սալբին։

— Մենք հավիտյան, հավիտյան իրար կսիրենք,— Բարսակի գրկի մեջ ասում էր Սալբին։

— Միայն իրար,— շրթունքներն աղջկա շրթունքներին հպած, համբույրի միջից շշնջում էր Բարսակը։

Բայց կյանքում երկար է տևում մարդու երջանկությունը... Աղջկա հանդիպումները հայտնի դառան ամենքին ու Սալբու ձեռքը խնդրողները վճռեցին վրեժխնդիր լինել։

Մի անգամ, երբ ամեն օրվա պես Սալբին սպասում էր իր մշտական տեղում, Բարսակը չեկավ։ Շատ սպասեց աղջիկը։ Նա մտքում նախ կշտամբեց հովվին, կարծելով, թե նա անուշադիր է դեպի սիրած աղջիկը, ապա անհանգստացավ նրա մասին, հետո սկսեց մղկտալ դառնագին և արցունքըն աչքերին տուն վերադարձավ։ Նա այլևս չտեսավ իր սիրածին...

Հինգ տարի անց միայն, մի ժայռի տակ ցույց տվին մարդկային մի գանգ, որը մի քանի տեղից ճաքճքել էր, երևի բարձր ժայռից ցած գլորվելիս սեպաձև քարերին դիպչելուց...

Այնուհետև Սալբու սրտին էլ հանգստություն չեկավ, ոչ էլ դեմքին՝ ժպիտ։ Աչքերը խամրել էին, մազերը ճերմակել։ Սակայն նա դեռ շարունակում էր ամեն օր գնալ այն տեղ, ուր հանդիպում էր Բարսակի հետ, այնտեղից վերադառնում էր ուշ երեկոյան, երբ բոլորն արդեն քնած էին լինում։

Մեկ օր էլ նրանց ժամադրավայրում մարդիկ երևացին բահերով ու քլունգներով։ Շուտով այնտեղ քարե ջրավազաններով, քանդակերտ որմերով մի աղբյուր կառուցվեց։ Ջուրը եկավ, լցրեց ավազանները և կարկաչուն հոսանքով հեռացավ։

Այդ աղբյուրը կառուցել էր տվել Սալբին՝ հոր խնայած միջոցներով։

— Սերը հավիտենական է մշտահոս ջրի նման։ Թող հավիտյան հոսի այս աղբյուրի ջուրը և վկայի մեր անհատնում սիրո մասին,— ասել էր նա աղբյուրն ավարտելուց

հետ։ Իսկ մի քանի օր անց նրա դիակը ևս գտնվեց նույն ժայռի տակ, Բարսակի ճաքճքած գանգի մոտ...

Անցել են տարիներ, հուշ է դառել Սալբու և Բարսակի սիրո պատմությունը, աղբյուրը ցամաքել է, բայց նրա անունը մնացել է անփոփոխ—«Սիրո աղբյուր»։

* * *

... Հորթը նստել էր «Սիրո աղբյուրի» մոտ, մեջքը հենել կիսավեր պատին և հանգիստ որոճում էր։ Նա լսելով ծանոթ քայլերի ձայն, ծուլորեն ոտքի կանգնեց, շարժեց ականջները, կամաց բառաչեց։ Սիրանը մթության մեջ տեսավ հորթի պսպղուն աչքերը, մոտեցավ նրան, փաղաքշեց ուսը։ Սիրանը հոգնած էր։ Նստեց մի քարի վրա քիչ հանգստանալու և ակամայից հիշեց աղբյուրի հետ կապված սիրո լեգենդը։ Այդ ժամանակ նա ինքն իրեն լսելի ձայնով ասաց.

— Չէ, աշխարհում հավիտենական ոչինչ չկա. ամեն ինչ էլ ժամանակավոր է, կարճատև՝ մարդու կյանքի նման...

Նա հիշեց և իր ամուսնու խոսքերը, որ այդ նույն տեղում ասաց. «Մեզ ոչ ոք չի կարող անջատել իրարից։ Մենք հավիտյան միասին կլինենք, հավիտյան կսիրենք իրար»։

Դա ութ տարի առաջ էր։ Ծնողները չէին ուզում, որ Սիրանն ամուսնանա Բաղրատի հետ։ Հայրն ասում էր.

— Ճյուղը ծառից պիտի կտրել։ Դիլանենց ծառը փթած է. նրա ճղները չեն կարող լավ պտուղ տալ,—ապա բացատրում էր միտքը,—աչք եմ բաց արել, չեմ տեսել, որ Դիլանենց մեծ ընտանիքից խելքը գլխին մարդ դուրս գա։ Ամբողջ գյուղը չի իմացել, թե հացի հոգսը ինչ է, իսկ Դիլանենց տանը ձմեռվա կեսից հաց չի եղել։ Չէ, Դիլանենց Բաղրատը չի կարող իմ փեսան լինել։

Սիրանը ծնողների միակ զավակն էր։ Նա էր ծեր Զաքարի ու պառավ Աննայի հույսն ու ապավենը։ Ինքն էլ անչափ սիրում էր ծնողներին և ոչ մի անգամ դեռ

դիմադիր չէր եղել Նրանց կամքին։ Եվ ահա, հանկարծ, ընկել էր անելանելի դրության մեջ։ Չէր ուզում դրժել հոր խոսքը, չէր ուզում վշտացնել ծերունուն։ Գիտեր, որ ամեն մի բառը սուր նիզակի պես կցցվի նրա սրտում, եթե ասի, թե ինքը կամ Բագրատի հետ պիտի ամուսնանա, կամ էլ ոչ ոքի, ինչպես արդեն վճռել էր։ Եվ ահա, ուղիղ ութ տարի առաջ, գարնանային աստղազարդ մի գիշեր, երբ այդ մասին խոսում էր Բագրատի հետ, նա ասաց.

— Սիրան ջան, մեզ ոչ ոք, ոչ ոք չի կարող անջատել իրարից, մենք հավիտյան միասին կլինենք, հավիտյան կսիրենք իրար։

— Իսկ հայրս, հայրս, ես ինչ ասեմ նրան, ինչպե՞ս պատասխանեմ,—արցունքի միջից մրմնջաց Սիրանը։ Բագրատն առանց խոսքի, լուռ, Նրան սփոփելու համար սեղմեց կրծքին և առաջին անգամ շրթունքները մոտեցրեց նրա մազերին։

Հետո սերը հաղթեց ամոթխածության ու որդիական զգացումներին։ Նրանք ամուսնացան իրար հետ։ Հայրն սկզբում շատ դժգոհեց աղջկանից, նույնիսկ մի գիշեր փորձեց կախվել ծառից, վերջ տալ կյանքին, բայց հետո հաշտվեց կատարված փաստի հետ, ապա ընտելացավ Բագրատին, այնուհետև սիրեց ու մի օր էլ բացեիբաց հայտարարեց.

— Ես մինչև հիմա տղա չեմ ունեցել, Բագրատը դառավ իմ տղան։ Մինչև հիմա մի երեխա եմ ունեցել, հիմա երկուսն ունեմ։

Չորս տարի նրանք ապրեցին միասին—սիրալիր, երջանիկ։ Բայց սկսվեց պատերազմը։ Բագրատը գնաց ռազմաճակատ և էն գնալն էր, որ գնաց...

Սիրանը վերստին հիշեց ամուսնու խոսքերը, հիշեց նրա հետ անցկացրած երջանիկ օրերը ու սիրտը փուլ եկավ։ Արցունքներն ինքնաբերաբար գլորվեցին նրա աչքերից։ Նա երկար այդպես լուռ մղկտաց, մոռացավ, թե ինչու էր ինքն այդ ժամին եկել այդտեղ, մոռացավ տունը, իրեն, և հան-

կարծ, կարծես միանգամից սթափվեց, վճռականորեն բացականչեց.

— Չէ, սերը հավիտենական է... Աղբյուրի ջուրը պիտի հոսի...

Ու ոտքի ելավ։ Ինքը գնում էր, հորթը նրա ետևից։ Իսկ ճանապարհին նա արդեն ուրիշ բանի մասին էր մտածում։ Նա մտածում էր հավիտենական սիրո մասին, աղբյուրի մասին։

Հասավ տուն, տանը և նրան նոր մտքերը հանգստություն չտվին։ Հորթը կապեց բակում, սալորի ծառից, ինքը գնաց հարևանուհու մոտ։ Վերջինս բահը ձեռքին բակի ծառերն էր ջրում։

— Արեգ, բահդ մի րոպե ցած դիր, դեսը եկ։

Արեգը տեսնելով նրա դեմքի լրջությունը, բահը ձեռքին մոտեցավ նրան։

— Ի՞նչ է պատահել,—հարցրեց նա։

— «Սիրո աղբյուրից» պետք է ջուր գա, Արեգ։

Արեգը չհասկացավ նրան։ Նա կարծեց, թե Սիրանը երազ է տեսել, այդ մասին է ուզում պատմել։ Սիրանն էլ զգաց, որ Արեգը չհասկացավ իրեն և բացատրեց միտքը.

— Գյուղը մինչև ե՞րբ պետք է գետի ջուրը գործածի։ Միթե՞ մենք արժանի չենք աղբյուրի ջուր խմելու։

— Իսկ որտե՞ղ սարքենք այդ աղբյուրը։

— Թեկուզ հենց «Սիրո աղբյուրի» տեղը։ Եթե մի ժամանակ այնտեղ ջուր է եղել, ինչու՞ չի կարող հիմա էլ լինել։

Արեգը հենվեց բահին, սկսեց մտածել։

— Սերը, Արեգ, հավիտենական է անվերջ հոսող կարկաչուն ջրի պես։ Ասում են եթե հատվում է մեկի սերը, սկսում է մյուսինը։ Եթե ցամաքում է մեկի սարքած աղբյուրը, մի ուրիշն է բաց անում նրա ակունքը։ Եկեք մենք էլ բաց անենք Սալբու ցամաքած աղբյուրի ակունքը...

— Որպեսզի պատերազմից հետո մեր ամուսինները տուն վերադառնան, տեսնեն, որ իրենց կանայք Սալբու պես հավատարիմ սիրով իրենց են սպասել...

— Ճիշտ է,— ուրախացած և ոգևորված բացականչեց Սիրանը, տեսնելով, որ Արեգն ասում է այն, ինչի մասին մտածում էր ինքը,— ճիշտ է, ես էլ հենց դրա համար եմ ասում նորոգենք «Սիրո աղբյուրը»։ Ում ամուսինը որ կենդանի է, թող վերադառնա, խմի իր կնոջ սարքած աղբյուրի ջուրը, սիրտը զովանա, իսկ ով էլ չի վերադառնա...

— Իսկ ով էլ չի վերադառնա, նրա սերը կապրի կնոջ սրտում հավիտյան հոսող աղբյուրի կարկաչուն ջրերի պես,— անմիջապես վրա բերեց Արեգը և հարցը վճռվեց։

Հաջորդ օրը կանանց վճիռն արդեն հայտնի էր ամբողջ գյուղում։

— Հրաշալի միտք է,— ասաց կոլխոզի նախագահը,— դժվար տեղերում կաշխատեն տղամարդիկ, ավելի հեշտ տեղերում՝ դուք, կանայքդ։

— Չէ, աղբյուրը պետք է սարքենք մենք, կանայքս,— միաձայն ասացին նրանք։

— Դժվար կլինի,— հակաճառեց նախագահը։

— Հաճելի է այն, ինչ դժվարությամբ է ձեռք բերվում,— հայտարարեցին կանայք։

— Կուշանա,— ավելացրեց նախագահը։

— Եթե մենք չհայտնեինք այդ միտքը, գուցե ավելի ուշանար։ Իսկ քանի որ վճռել ենք, չենք ուշացնի,— պատասխանեցին կանայք։

Ու կիրակի օրվանից նրանք գործի անցան։

Ամեն օր, աշխատանքից հետո, որոշ ժամերին, գյուղի բոլոր կանայք, բահ ու քլունգով զինված, գործի էին դուրս գալիս։ Իրիկնամուտի քամին ծածանում էր նրանց գլխաշորերը, ծծում ճակատների քրտինքը։ Դուրս էին գալիս ժպտուն աստղերը, վերևից հիանում նրանց եռանդուն աշխատանքով և ոգևորված մի տեղից մյուսը վազում, որ չուշանան, տեսնեն նրանց աշխատանքի թափը։

Կանայք շատ հեռվից էին սկսել իրենց աշխատանքը։ Աղբյուրի ակունքը փորել էին անտառապատ սարի ստորոտում, կավե խողովակներ բերել քաղաքից, և մի հավաքել

բոլոր ջրերը, բաց թողել խողովակների մեջ։ Մաքրել ու նորոգել էին ավազանները, կամարակապ պատեր էին բարձրացրել, ծաղիկներ ցանել չորս բոլորը։

Եվ ահա ավարտվել էին բոլոր աշխատանքները։ Եկել էր ջուրը վերջնականապես բաց թողնելու օրը։ Հավաքվել էին բոլոր գյուղացիները։ Միայն մի կին էր այդտեղ բացակայում. նա էլ կանգնել էր սարի գագաթին, սպասում էր, որ ներքևից ազդանշան տան, ինքն այնտեղից ջուրը բաց թողնի խողովակների մեջ։ Ոչ ոք դեռ չէր խոսում։ Բոլորն էլ խորհրդավոր լռության մեջ էին։ Ծերունիներից մեկը միայն համարձակվեց խախտել լռությունը, դիմելով Սիրանին.

— Լավ, դուք մեզ թույլ չտվիք մասնակցել աղբյուրի աշխատանքներին, իսկ խմելը ինչպես, թողնելու եք, որ գոնե ջուր խմենք։

— Աշխատանքը կանայք են կատարել, իսկ ջուրը կխմեն բոլորը,— պատասխանեց Սիրանը։

Կոլխոզի նախագահն առաջ եկավ։

— Դե որ աշխատանքը կանայք են կատարել, աղբյուրն էլ կկոչենք կանանց անունով։

Կանայք համեստաբար լռեցին։

— Բա առաջվա անունը,— դարձյալ մեջ ընկավ անհանգիստ ծերունին։

— «Սիրո աղբյուրը»,— հարցրեց նախագահը,— կարիք չկա։ Որտեղ կա կին, այնտեղ էլ կա սեր։ Այսուհետև մենք կասենք «Կանանց աղբյուր»...

Կանանցից մեկը բարձրացավ աղբյուրի կամարի վրա, ձեռքի փոքրիկ դրոշը վեր պարզեց։ Դա ջուրը բաց թողնելու ազդանշանն էր։ Քիչ հետո խողովակների մեջ լսվեց գլգլոցը և ապա հանկարծ աղբյուրի ակունքից դուրս ժայթքեց ջուրը, որն սկզբում պղտոր էր, ավազախառն, ավազոտ, իսկ հետո աստիճանաբար պարզեց, վճիտացավ։ Ավազաններ մեջ արտացոլվեցին նրանց շուրջը խմբված մարդկանց դեմքերը։

Այդ ժամանակ առաջինը կավե կուլան ձեռքին աղբյուրի ակունքին մոտեցավ Արեգը։

— Թողեք աղբյուրից առաջին անգամ ջուր վերցնեն նրանք, ովքեր նրա հիմքում դրել են առաջին քարը,—ասաց նա։

— Հավիտենական սիրո հիմնաքարը,—կամաց, կարծես միայն իր համար ասաց Սիրանը, բայց սուր ականջներն իսկույն լսեցին այդ բառերը։ Ոմանք հետ շրջվեցին, նայեցին Սիրանին։ Նրա երազկոտ հայացքը հառած էր դեպի հեռուները, իսկ միտքը որոնում էր կռիվներում կորած իր ամուսնուն։

1944 թ.

ՉԱՎԱԿԸ

Կյանքում զարմանալի զուգադիպություններ են լինում։ Հրանտ Բարսեղյանը հրանոթի վրա նստած այդ մասին էր մտածում։

Ուղիղ տասներեք տարի առաջ նա դարձյալ բանակում էր։ Այն ժամանակ շարքային Բարսեղյանը փորձնական հրաձգությունից վերադառնալով, մաքրել էր հրանոթը, նստել նրա անիվին և մտածում էր իր կնոջ՝ Սաթենիկի մասին, որի հետ ամուսնացել էր մի տարի առաջ և զորակոչվել բանակ։ Սաթենիկը տանը մենակ էր մնացել։ Բարսեղյանը ոչ ոք չուներ, որ կինը մնար նրանց մոտ։ Դա ամուսնուն շատ մտահոգություններ էր պատճառում։

— Լավ է, իհարկե, հարազատներ ունենալը,— մտածում էր Հրանտը,— խեղճ աղջիկն ինչ պետք է անի տանը մեն-մենակ։ Եթե ծնողներ ունենայի, նրանց մոտ կլիներ, երեկոները կխոսեին, կզվարճանային...

Իսկ հիմա... Բարսեղյանը պատկերացնում էր, թե ինչպես երիտասարդ կինը մութն ընկնելուն պես փակում է տան դռները, վաղաժամ մտնում անկողին, բայց քունը չի տանում, մտածում է, ով գիտե, գուցե և մտաբերում իրեն՝ Հրանտին և հնարավորություն չունենալով գեթ մի բառ անգամ փոխանակելու որևէ մեկի հետ, սիրտը լցվում է և արցունքները գլորվում են աչքերից...

Այս մտորումներով էր տարվել շարքային Բարսեղյանն ուղիղ տասներեք տարի առաջ, հրանոթի անիվին նստած։ Եվ ահա, այդ ժամանակ նա տեսավ, թե ինչպես իր ընկերներից մեկը մի նամակ ձեռքին, ժպտալով մոտենում է իրեն։

Բարսեղյանը վեր ցատկեց, ընկերոջ ձեռքից խլեց նամակը, շտապ աչքի անցկացրեց և հանկարծ ցնծագին բացականչեց.

—Տղա՛, տղա՛...

—Ի՞նչ է պատահել,— զարմացած հարցրեց ընկերը։

— Տղա է պատահել, տղա...

Եվ նամակը ձեռքին բարձր բռնած նա մի քանի ուրախ պտույտներ կատարեց, իսկ հետո ընկերոջը բացատրեց, որ կինը տղա է բերել...

Դա հայրական առաջին երջանկությունն էր Բարսեղյանի համար։ Նա մի քանի օր շարունակ ապրում էր այդ երջանիկ զգացման տպավորության տակ։ Ընկերներն էլ էին ուրախացել, շնորհավորում էին նրան, կատակում հետը, բայց նա ոչինչ չէր լսում, մտքով ամբողջովին տեղափոխվել էր իրենց գյուղը, կնոջ մոտ։ Նա նույնիսկ փորձում էր պատկերացնել իր տղային խանձարուրների մեջ փաթաթված, հետո մեծացած, քայլելիս, գրքերի պայուսակն ուսը գցած դպրոց գնալիս...

Սաթենիկն այդ նամակում մանրամասն նկարագրել էր մանկան, գրել էր, թե նա ում է նման։

Հայրը կարդում էր այդ տողերը և սիրտը լցվում էր անհուն հրճվանքով...

Կինն իր այդ նամակում խնդրել էր նաև, որ նա գրի, թե ինչ դնեն տղայի անունը։ Իսկ ամուսինը, երբ պատասխանում էր նամակին, մոռացել էր կնոջ խնդիրը և միայն մի բառ էր գրել. «Ջավակիս լավ կնայեք»։

Երբ նամակը տեղ հասավ, կինը կարդաց և կարծեց, թե ամուսինը Ջավակ է ուզում դնել իրենց որդու անունը։ Իր կարդացածին չհավատալով, նա իրենց գյուղի ուսուցիչներից մեկին ևս կարդալ տվեց նամակը։ Ուսուցիչն էլ հաստատեց Սաթենիկի ենթադրությունը։

— Չե՞ս տեսնում, «Ջավակս» բառը մեծատառ է գրված, ուրեմն նա այդպես է ուզում կոչել իր որդուն,—վստահորեն ասաց ուսուցիչը։

Երեխային գրանցման տարան, անունը դրին Ջավակ ու տուն բերին։

Մի տարի հետո, երբ Բարսեղյանը բանակից զորացրվեց, եկավ գյուղ, երեխան արդեն մեծացել էր, քայլում էր և նույնիսկ առանձին բառեր էր թոթովում։ Հայրը երկու ձեռքով բարձրացրեց նրան, նայեց աչքերին, համբուրեց։ Այդ ժամանակ Սաթենիկը դիմելով երեխային ասաց.

— Ջավակ, ասա հայրիկ։

—Հայ-րիկ,—ասաց երեխան։

— Բալիկ,—ցնծագին բացականչեց հայրը և երեխային գրովանքով սեղմեց կրծքին։

Այդ օրվանից Բարսեղյանին թվում էր, թե աշխարհն իր Ջավակի շուրջն է պտտվում, թե առանց նրան ինքը կյանք չունի, առանց նրան մի վայրկյան անգամ չի կարող ապրել։

Բայց մարդ ամեն դժվարություն էլ կարող է հաղթահարել, անհնարը՝ հնարավոր դարձնել, աներևակայելին՝ իրական։ Հրանտ Բարսեղյանի համար եւս աներևակայելին իրական դարձավ։

Դրանից տասներեք տարի հետո սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, նա թողեց տունը, թողեց կնոջը, թողեց իր միակ որդուն՝ իր Ջավակին, մեկնեց Հայրենիքի պաշտպանության դիրքերը։

Արդեն երրորդ տարին էր, որ նա գտնվում էր ռազմաճակատում, երրորդ տարին էր, որ չէր տեսել կնոջը, չէր տեսել իր ղավակին։ Եվ մեկ օր, երկար հրաձգությունից հետո, իրիկնադեմին, հոգնած նստել էր նա իր հրանոթի մոտ և ճիշտ այնպես, ինչպես ուղիղ տասներեք տարի առաջ, միտք էր անում, մտաբերում գյուղը, մտաբերում կնոջը և իր Ջավակին, որին կարոտել էր անսահմանորեն, հոգու խորքից։

Կարոտի զգացումներից լցվել էր սիրտը՝ երկնքում կախված մութ ու անձրևաբեր ամպերի պես։ Բայց ամպի տակից կրկին դուրս է գալիս արևը և իր պայծառ շողերը

սփռում ամենուր, կյանքի ու հավատի ուժ ներշնչում մարդուն, ողջ բնությանը։

Արևի մի այդպիսի շող ժպտաց հանկարծ Բարսեղյանին։ Նրան մոտեցավ իր ընկերներից մեկը և ծիծաղելով միանգամից երեք նամակ մեկնեց նրան։ Բարսեղյանը բաց արեց նամակներից մեկը, ծրարից դուրս բերեց լրագրի մի կտոր, որի վերևից մեծ-մեծ տառերով գրված էր — Ռեսպուբլիկայի գյուղատնտեսության առաջավորները։ Դրա տակ տպագրված էր մի լուսանկար։ Լուսանկարը մութ էր, տեղ տեղ ամբողջովին սևացած, դիմագծերը՝ խառնված։ Բարսեղյանը մի պահ ուշադրությամբ նայեց նկարին, բայց ոչինչ չկարողացավ ջոկել։ Նա այնտեղ միայն մի քանի ծանոթ գծեր ջոկեց, սակայն չկարողացավ ամբողջացնել գծերը։ Հետո կարդաց մակագրությունը — Զ. Հ. Բարսեղյան. պարգևատրվել է...

Նկարը լրագրից մկրատով կտրելիս կտրվել էր նաև մակագրության կեսն ու չկար, թե ինչով է պարգևատրվել։ Բարսեղյանը շվարած նայում էր նկարին ու չէր կարողանում բացատրել հանելուկը։ Ո՞վ էր ռեսպուբլիկայի գյուղատնտեսության այդ առաջավորը, որն իր՝ Հրանտ Բարսեղյանի ազգանունն է կրում և նրա նկարն էլ ուղարկվել է իրեն։ Ի՞նչ կապ ունի այդ նկարն իր հետ։ Բարսեղյանը մտածում էր ու չէր կարողանում հասկանալ։ Նրա շփոթմունքն ավելացրեց նաև մի այլ հանգամանք. մեկը նկարի տակ սև մատիտով մի բառ էր ավելացրել — Ճանաչում ես...

Այդ նամակում էլ ուրիշ ոչինչ չկար։ Սև մատիտով գրած բառի տառերը ևս ծանոթ էին Բարսեղյանին, բայց որովհետև նրանք ևս իրար հետ շփվելուց ձևափոխվել էին բազմածալ նամակում, դրա համար էլ նա չէր կարողանում որոշել, թե ում ձեռագիրն է այդ։ Եվ այդպես, երկար ժամանակ լուռ ու ինքնամփոփ մտածում էր հրետանավոր Բարսեղյանն ու չէր կարողանում մեկնաբանել հանելուկը։ Նկարին նայելիս նրա մտքով մի պահ անցավ իր որդին՝ Ջավակը։ Բայց նա իսկույն մտքից հանեց այդ անունը։ Իր

տասներեք տարեկան տղան ինչ կապ կարող է ունենալ ռեսպուբլիկայի գյուղատնտեսության առաջավորների հետ...

Բարսեղյանն այդպես էլ մտամոլոր բաց արեց երկրորդ նամակը և այդտեղ փարատվեցին նրա կասկածները։ Նամակը գրում էր իրենց կոլխոզի նախագահը և շնորհավորում էր նրան որդու պարգևատրման առթիվ։

«Սիրելի Հրանտ, քո Ջավակն այս տարի բարձրացրեց ամբողջ գյուղի անունը։ Տեսնելով, որ գյուղում աշխատող ուժերի պակասություն կա, նա աշխատանքի անցավ և մեզ բոլորիս զարմացրեց իր ընդունակություններով։ Մի քանի օր գութան գնալուց հետո, մի երեկո եկավ ինձ մոտ, ասաց, թե ինքը միայն մի գութանավորի հետ կարող է վար անել։ Մի քանի հոգի ծիծաղեցին նրա այդ խոսքերի վրա։ Ճիշտն ասած, ինձ էլ ծիծաղելի թվաց նրա ասածը։ Բայց դաշտավարական բրիգադայի բրիգադիրն իսկույն լռեցրեց մեզ, ասաց, որ մաճկալ Ջավակը մի գութանավորի հետ արդեն կատարել է այդ աշխատանքը։ Մենք փորձի համար մեկ օր էլ թույլ տվինք նրան մենակ աշխատելու։ Մի քանի հոգով հեռու կանգնած նայում էինք, իսկ ինքը գութանի մաճը բռնած վարպետորեն շուռ էր տալիս գութանը, իսկ գութանավորը քշում էր վեց զույգ եզները։ Այդ րոպեին, եթե դու տեսնեիր, չէիր ճանաչի քո Ջավակին։ Նա իր փոքր մարմնով հազիվ էր երևում գութանի ետևում, սև ցելերի մեջ։ Այդ օրը նա մենակ կատարել էր չորս հոգու նորմա։ Այնուհետև նա ամբողջ գարնանացանի ժամանակ աշխատեց բոլորից լավ և վաստակեց 620 աշխօր։ Ջավակի հրաշալի աշխատանքի շնորհիվ մեր գյուղի անունն այս տարի բարձրացավ ամբողջ շրջանում և ռեսպուբլիկայում։ Նա մեր գյուղում առաջին մարդն է, որ արժանացավ շքանշանի։ Մի քանի օր առաջ մեր կառավարությունը պարգևատրեց նրան Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով։ Շնորհավորում եմ քեզ, սիրելի Հրանտ։ Հեռվից-հեռու գրկում եմ քեզ և ասում — թող մեր գյուղը շատ ունենա Ջավակի պես տղաներ ու քեզ նման հայրեր»։

Հրանտն աչքերին չէր հավատում։ Թվում էր, թե երազի մեջ է։ Վերստին բացեց նամակը, սկսեց կարդալ։ Տողերն անցնում էին աչքերի առջևից, իսկ միտքն ուրիշ տեղ էր, ուրիշ բանով էր զբաղվում։

Բարսեղյանը հիշեց հայրական իր առաջին զգացումը, երբ տարիներ առաջ բանակում լուր ստացավ իր որդու ծնվելու մասին։

Այն ժամանակ ինքը հազիվ 22 տարեկան էր, երիտասարդ, առույգ։ Նամակն ստանալուն պես ոգևորվեց և ուրախությունից սկսեց վեր-վեր ցատկել ու պարել։ Իսկ այժմ նա փոխվել էր, մազերի արանքում արդեն երևում են ճերմակության հետքեր։ Եվ այժմ նա առաջվա պես չպարեց. միայն լուռ, կամաց, նամակը մոտեցրեց կրծքին, սեղմեց և նրան թվաց, թե հենց Զավակին է գրկել ջերմ ու գորովանքով։

Իրենց կոլխոզի նախագահի նամակը կարդալուց հետո Բարսեղյանը մոռացել էր երրորդ նամակի գոյությունը։ Բայց ավելի ուշ, երեկոյան, երբ Բարսեղյանի բոլոր ընկերներն էլ արդեն գիտեին նրա որդու պարգևատրման մասին, նա հանկարծ հիշեց երրորդ նամակը, ձեռքը տարավ գրպանը, դուրս բերեց, սկսեց կարդալ։ Այդ նամակն գրում էր տղան։ «Հայրիկ ջան, սիրելի հայրիկ, տան մասին չմըտածես,—գրում էր նա,—դու շեշտակի խփիր թշնամուն, իսկ ես կաշխատեմ ետ չմնալ։ Քո Զավակ»։

Բարսեղյանի մարմնով ինչ որ մի սարսուռ անցավ և հետո ինքնաբերաբար արցունքի կաթիլներ գլորվեցին աչքերից։

Դա հայրական հպարտության երջանիկ զգացումի արցունքներ էին...

Սկսվեց հրաձգությունը։ Բարսեղյանը շտապ անցավ իր հրանոթի ետևը, և արկերը ճեղքելով գիշերվա խավարը, կայծակի պես փայլ տալով ահավոր մթության մեջ, մեկը մյուսի ետևից սլացան դեպի արևմուտք։

1943 թ.

ԽՈՍՏՈՒՄ

Անձրևն սկսել էր կեսօրվանից և մինչև ուշ երեկո դեռ չէր դադարել։ Մայիսը սենյակում նստած լսում էր, թե ինչպես ջրհորդաններից կչկչալով թափվում են ջրերը, վտակներ կազմում, հոսում փողոցներով։

— Լավ է շուտ բերեցի այծերը, թե չէ հիմա անհնար կլիներ գնալ նրանց ետևից,— ինքն իրեն ասաց նա, ծալեց, մի կողմ դրեց գիրքը, տեսնելով, որ այդ պահին միտքն այլ հարցով է զբաղված, չի կարողանում կենտրոնանալ գրքի վրա։

Հետո նա վեր կացավ, մի քսակ վերցրեց, վեղարի պես գցեց գլխին, գնաց գոմը՝ ուլիկներին ու այծերին ակը տալու։

Գոմում ուլիկները փայտե վանդակի ետևում թռչկոտում էին ու ոգահարում իրար, գնչերը դուրս հանում վանդակի ձողերից, լիզում փայտերը։ Իսկ վանդակի այս կողմում, փափուկ հարդի վրա նստել էին նրանց մայրերը։ Նրանք նայում էին իրենց ուլիկների չարաճճիություններին և ներքին գոհունակությամբ հանգիստ որոճում։

Երբ Մայիսը ներս մտավ, այծերը տեղներից անգամ չշարժվեցին։ Միայն ուլիկները, տեսնելով իրենց բարերարին, սկսեցին միաձայն մկկալ, կարծելով, թե նա եկել է իրենց դուրս բերելու վանդակից, կերակրելու կամ ջուր տալու։

— Հը, Ջանգլո—Պանգլո, էլի չարություննե՞ր եք անում,— վանդակին մոտենալով ասաց Մայիսը։

— Մըկըկ՜,— եղավ պատասխանը։

— Հա, հասկացա, վիզներդ քոր է գալիս,— ասաց Մայիսն ու ձեռքը մեկնելով փաղաքշեց նրանց պարանոցները, մեջքերը, փոխեց տակների խոտը, հետո ոտքի կանգնեցրեց այծերին, նրանց էլ մի քիչ փաղաքշեց, գուրգուրեց դունչերը ու համոզվելով, որ ամեն ինչ կարգին է, ետ շրջվեց դեպի դուռը։ Այդտեղ ուլիկները մի անգամ էլ մըկըկացին, իսկ այծերը ծանրորեն ոտքի կանգնելով հետևեցին նրան։

— Չէ, չէ, Խանում Խաթուն, նստեցեք,— շրջվելով դեպի այծերը ասաց Մայիսը,— ուղեկցելու կարիք չկա, ես ինքս կգնամ։ Դուք մնացեք Զանգլո—Մանգլոյի մոտ, որ չախրենց լավ նայեցեք, տեսեք, հանկարծ չհիվանդանան հա, թե չէ Մոխրագույն սանահոր մոտ կուղարկեմ ձեզ…

Այծերը սուսիկ-փուսիկ ետ դարձան, նստեցին տեղները։ Մայիսն իր ետևից փակելով գոմի դուռը՝ վերադարձավ տուն։

Այդպես էր անում ամեն օր։ Իրենց երկու այծի և ուլիկների խնամքն ամբողջովին իր վրա էր վերցրել։ Կերակրում էր, ջրում, շատ ժամանակ նաև կթում այծերը, երբ տատը տանը չէր լինում, կամ զբաղված էր լինում այլ գործերով։

Այծերն այնպես էին ընտելացել Մայիսին, որ կթելիս լուռ հնազանդվում էին, ոտների արանքում կաթնամանի համար տեղ բաց անում։ Զանգլո-Մանգլոն այդ ժամանակ, երբ մոտենում էին իրենց մայրերին, ուզում էին ծծել, այծերն իրենց գլխով հրում էին, հեռացնում նրանց, որ չխանգարեն Մայիսին։

— Սպասեցեք, սպասեցեք, Զանգլո—Մանգլո, մի խանգարեք, ես ձեր բաժինը կպահեմ,— ասում էր Մայիսը,— գիտեք, որ ես ձեզ չեմ մոռանա, սիրունիկներս…

Ուլիկները կարծես հասկանում էին, մի կողմ էին քաշվում, ուրախ-ուրախ թռչկոտում, մինչև որ Մայիսը վերջացնում էր իր գործը։

Մայիսի հատուկ խնամքի շնորհիվ Զանգլը-Պանգլըն օրեցօրե ավելի էին կայտառանում, մեծանում։ Իսկ որքան շատ էին մեծանում նրանք, Մայիսն այնքան ավելի էր տարվում նրանցով, ավելի շատ ժամանակ հատկացնում նրանց։ Ցերեկները, երբ որևէ տեղ էր գնում, ուլիկները շան ձագերի նման ընկնում էին նրա ետևից, աղիողորմ մլկլում, կարծես թե ասելիս լինեին.

— Մեզ էլ տար քեզ հետ, մենք առանց քեզ չենք կարող մնալ...

Ընդամենը երկու տարի էր, որ Մայիսի հայրը քաղաքից անցել էր շրջանային աշխատանքի։ Իր հետ նա ընտանիքն էլ էր բերել շրջան։ Այստեղ գալուն պես Մայիսը խնդրեց հորը, որ իր համար երկու ուլիկ գնի։ Իսկ հայրը ուլիկներ գնելու փոխարեն գնեց երկու այծ և ասաց.

— Երկու այծն այս տարի կբերե՞ն երկու ուլ և եկող տարի մենք կունենանք երկու այծ ու երկու ուլ։

— Էն մյուս տարին էլ երկուսը կդառնա չորս ու չորսը՝ ութ,—իսկույն վրա բերեց Մայիսը։

— Այո, եթե այդպես շարունակվի, մի քանի տարի հետո մենք այծերի մի ամբողջ հոտ կունենանք, քեզ հովիվ կնշանակենք և դու միայն դրանով կզբաղվես,—կատակեց հայրը։

— Ինչ է, կարծում ես չե՞մ կարող,—վստահորեն ասաց Մայիսը,—հովիվ կդառնամ, կուսումնասիրեմ անասունների կյանքը, հետո համալսարանում ավելի հեշտ կսովորեմ...

Նրանք հաճախ էին խոսում այդպես, քանի դեռ հայրը տանն էր, չէր գնացել բանակ։ Բայց երբ սկսվեց պատերազմը, մեկ օր հայրը երեկոյան տուն եկավ, հավաքեց ընտանիքի անդամներին և ասաց.

— Դե, սիրելիներս, վաղը ես էլ եմ գնում կռիվ։ Տանը մնում եք դուք,—և այնուհետև բացատրեց, թե ով ինչ պետք է անի, ով ինչով պետք է զբաղվի։ Մայիսն այդտեղ հորից թույլտվություն խնդրեց և ասաց.

— Ես խոստանում եմ այծերի խնամքն ամբողջովին ինձ վրա վերցնել։ Բացի դրանից, մայրիկին, պապիկին ու տատիկին էլ կօգնեմ բանջարանոցի աշխատանքներում...

Հայրը մի պահ լուռ նայեց Մայիսին և ոչ մի խոսք չգտավ նրան պատասխանելու։ Այսպես լուռ նայելիս հանկարծ նրա աչքից գլորվեցին արցունքի երկու կաթիլ և ընկան գետնին։ Այդ արցունքները տեսավ Մայիսը, փաթաթվեց հորը, սկսեց ջերմ ջերմ համբուրել նրան։ Հայրը երկու ձեռքով բարձրացրեց որդուն, արցունքից թրջված այտը հպեց նրա երեսին և գորովալից սեղմեց կրծքին...

Հոր գնալուց հետո Մայիսը կարծես թե էլ էն տասը տարեկան երեխան չէր, մեծացել, հասունացել էր։ Նա համարում էր, որ պապն արդեն ծեր է, տան միակ տղամարդն ինքն է։ Դրա համար էլ խառնվում էր ամեն մի աշխատանքի, ասում էր, թե ինչ պետք է անել։ Խրատում էր փոքրիկ քրոջը՝ Սոնիկին, թույլ չէր տալիս, որ նա լաց լինի, խանգարի մայրիկին և, որ ամենագլխավորն է, չէր մոռանում հորը տված խոստումը։

Այդ օրն էլ, երբ գոմից դուրս եկավ, հորդ անձրևը դեռ շարունակում էր տեղալ։ Անձրևի ձայնին միացել էր նաև գետի ուժգին վշշոցը։ Դա նշանակում էր, որ գետը հորդացել է, դուրս եկել իր ափերից։ Ուրեմն կարող է գետի ջուրը գալ առուներով, լցվել բանջարանոցները։ Հարկավոր է ստուգել առուները, փակել նրանց հունը, որ ջուրը գալիս չլցվի ածուները, չհեղեղի...

Եվ Մայիսն էլ չգնաց տուն։ Հենց մթության մեջ, պոպոզ արած քսակը գլխին, գնաց դեպի բանջարանոցը, ստուգեց առուները, վերցրեց պապի բահը, որ շարունակ այնտեղ էր լինում, փակեց ջրերի ընթացքն ու նոր միայն վերադարձավ տուն։

— Այ տղա, էս անձրևի թունդ ժամանակ որտեղ ես կորել,— նրան տեսնելուն պես բարկացած ասաց պապը։

— Որտեղ պիտի լինեմ. գնացի գոմը, հետո բանջարա-

նոցը։ Ջրերը շատացել են, անձրևն էլ դեռ չի դադարել, կա ող է…

— Հը՞, հա՛,— բեխերի արանքից ասաց պապը, թույլ չտալով, որ Մայիսը վերջացնի խոսքը և ավելացրեց,— հորիդ նամակ է եկել, առ կարդա, մի տեսնենք ինչ է գրում։

Մայիսն իսկույն պապի ձեռքից խլեց նամակը, բարձրաձայն կարդաց։ Հայրը գրում էր, որ ինքը շատ լավ է, պարգևատրվել է շքանշանով, գործերն էլ հաջող են գնում, միայն տնից է անհանգստանում, ուշ-ուշ է նամակ ստանում։ Հետո նա հարցնում էր, թե ինչպես են ապրում, ինչպես են երեխաները, ինչպես է Մայիսը կատարում իր խոստումը։

Նամակը կարդալուց հետո Մայիսը նստեց սեղանի մոտ՝ հոր նամակի պատասխանը գրելու։

«Խոստումս ես չեմ մոռացել, սիրելի հայրիկ,— գրում էր նա իր նամակում,— մայրիկին էլ եմ օգնում, պապին էլ, տատին էլ։ Խանումն ու Խաթունը ծնել են, երկու սիրուն ու են բերել։ Ուլերից մեկի անունը դրել ենք Ջանգլո, մյուսինը՝ Պանգլո։ Ճիշտ է, Ջանգլո-Պանգլոն դեռ չարություն են անում, ախր փոքր են, արածները չեն հասկանում։ Մեկ օր տատիկը հաց էր թխում, բայց թոնրի բերանը չէր ծածկել։ Ջանգլոն թոնրի մոտից վազելիս քիչ մնաց ընկներ մեջը։ Այդ ժամանակ պապիկն ասաց.

— Այ խելքի մազ, ինչո՞ւ ես վազում, սպասիր, Մայիսի հայրիկը կռվից կվերադառնա, էն ժամանակ ինքներս քեզ կխորովենք էլի։

Բայց Ջանգլոն ոչինչ չհասկացավ և հիմարի պես թռչկոտելով փախավ-գնաց։ Ես պապին ասացի.

— Մեղքը չի՞, ինչո՞ւ ես էդպես ասում, պապիկ։ Որ հայրիկը վերադառնա, միթե՞ մեր տանը մի ուրիշ լավ բան չի ճարվի նրան հյուրասիրելու համար, հենց խեղճ Ջանգլոյի՞ն պիտի մորթենք։

Ճիշտ եմ ասում չէ՞, սիրելի հայրիկ։ Ջանգլոն ու Պանգլոն դեռ փոքր են, թույլ չտաս, որ պապիկը նրանց մորթի

Մենք քեզ լավ պանիր կտանք, կարագ յուղ, ձվաձեղ։ Տատիկը մի պուլիկ լիքը մեղր է պահել։ Նա ոչ ոքի այդ մեղրից չի տալիս։ Պահում է քեզ համար։ Դու էլ շուտ արա եկ, որ տատիկը լաց չլինի, ախր նա էլ է մեղք, ամեն օր դուրս է գալիս պատշգամբ, մտիկ տալիս և երբ տեսնում է, որ չես գալիս, լաց է լինում...

Դե, վերջացնում եմ նամակս։ Մեկն էլ կգրեմ էգուց։ Բարեւում են քեզ տատիկն ու պապիկը, մայրիկն ու Սոնիկը, Խանումն ու Խաթունը, Զանգլոն ու Պանգլոն և քո՝ Մայրը»։

1944 թ.

ՎԱՐԴ ՄԵԼԻՔԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Վարդ Մելիքը հանգիստ ու պարզոլյուն մարդ էր։ Ամեն խոսակցության չէր խառնվի և ամեն առիթով չէր արտահայտի իր կարծիքը։ Նա ասում է — Թե կարծիք հայտնելը որսկանի արձակած գնդակի պես բան է, եթե անժամանակ է ու անտեղի, կարող է միայն խրտնեցնել ու ամեն ինչ փչացնել։ Ուստի չիմացած բանի մասին չէր խոսի, անտեղի խոսողներին էլ չէր լսի։

Գյուղում հաճախ լինում էին ժողովներ, վիճաբանություններ։ Վարդ Մելիքը գնում էր ժողովներին, լուռ լսում վիճաբանությունները և մեկ էլ տեսնում էիր հանկարծ ոտքի կանգնեց ու դուրս գնաց։ Դա նշանակում էր, թե կամ ավելորդ են ու անիմաստ այդ վիճաբանությունները, կամ էլ ձգձգվում են չափից ավելի։ Նվ ծերունու հեռանալը վիճողների համար դառնում էր ազդանշանի պես մի բան. կրճատում էին խոսքերը և հարցին վերջ տալիս։

Բայց դա չի նշանակում, թե ինքը՝ Վարդ Մելիքը չէր խոսում։ Բնավ ոչ։ Նա էլ էր խոսում և նույնիսկ լուրջ վիճաբանությունների բռնվում։ Իսկ դա լինում էր այնպիսի հազվագյուտ դեպքերում, երբ տեսնում էր, որ ինքը խորապես հասկանում է արծարծվող հարցը և իր միջամտությամբ կարող է վերջնական լուծում տալ նրան։ Այդպիսի դեպքերում էլ անպայման պետք է նրա ասածը լիներ։ Չէր կարող պատահել, որ նա մի բան ասեր և ասածը չանցներ։ Այնքան կխոսեր, օրինակներ կբերեր, կբացատրեր միտքը, մինչև որ համոզեր լսողներին։

Նրա դեմքի մշտապես վառ, կարմիր գույնի համար

«Վարդ» մականվան հետ «Ոսկանն» մականունն էլ էին տվել։ Բայց նրան ոչ ոք չէր տեսել որսով տուն վերադառնալիս։ Ասում էին, թե երիտասարդ ժամանակ որսի գնալու անվան տակ, ձմռան սաստիկ ցրտերին, երբ ամենուրեք պատում էր ճերմակ ձյունն ու կաքավները խռովում, թաղվում էին ձյան մեջ, նա գրպանները հացահատիկով լցրած, տնից դուրս էր գալիս, գնում դաշտերը, հացահատիկը ցրում ձյան վրա, որ կաքավներն ուտեն, սովամահ չդառնան... Այդպիսի բարի և առաքինի մարդու համբավ ուներ Ծերունին և նրա այդ համբավը տարածվել էր ոչ միայն իրենց գյուղում, այլև ամբողջ շրջանում։

Եվ մեկ օր, ուղիղ երեք տարի առաջ, գյուղի պարտկազմակերպության քարտուղարը եկավ, հայտնեց բան, թե պարտիայի շրջկոմի քարտուղարը նրան կանչել է իր մոտ։

—Ի՞նչ,—զարմացավ Ծերունին,—շրջկոմի քարտուղարն ի՞նչ գործ ունի ինձ հետ։ Ես հո կոմունիստ չեմ, նա ինչու՞ պետք է ինձ իր մոտ կանչի։

— Կգնաս և կիմանաս,—կարճ պատասխանեց քարտուղարն ու հեռացավ։

Վարդ Մելիքն ամբողջ գիշերը մտածեց ու չիմացավ, թե շրջկոմի քարտուղարն ինչ առիթով կարող է իրեն կանչած լինել։ Բայց և այնպես պատրաստվեց գնալու։

Առավոտյան, երբ Ծերունին փայտն առել էր ձեռքը և պատրաստվում էր տնից դուրս գալ, շրջկոմի մեքենան կանգնեց դարպասի մոտ։ Դա ավելի զարմացրեց նրան։

— Տեսնես ինչ անհրաժեշտ գործ կա, որ ետևիցս հապա մեքենա էլ են ուղարկել,—տարակուսած ասաց նա և նստեց մեքենան։

Կես ժամից հետո նա արդեն շրջկոմի քարտուղարի առանձնասենյակում էր։

— Գիտե՞ս ինչու եմ կանչել քեզ, Մելիք քեռի։

— Եթե իմանայի, ամբողջ գիշերը չէի մտածի,—իսկույն ասաց Ծերունին և հայացքը հառեց քարտուղարին,—չլինի՞ թե վատ բան ասես։

— Վատ լինելը՝ վատ չի, բայց այնքան էլ լավ չի…

Այստեղ քարտուղարը լռեց, գլուխը կախեց, սկսեց մտածել։

Վարդ Մելիքն առաջին անգամ կյանքում անհանգստության նշաններ ցույց տվեց։

Տագնապալից օրեր էին։ Թշնամին հասել էր Կովկասի լեռներին։ Ե կիրը վտանգի մեջ էր։ Լավատես մարդիկ անգամ մտածում էին, որ թշնամուն կարող է հաջողվել ավելի առաջանալ, ավերել այն բոլորը, ինչ ձեռք է բերվել քրտնաջան աշխատանքով։

— Բանն այն է, Մելիք քեռի, որ թշնամին մոտենում է…

— Իմացանք,—իսկույն ընդհատեց նա քարտուղարին։

— Եվ կարող է հասնել…

— Աստված ոչ անի…

Քարտուղարը կրկին լռեց։ Ծերունին ավելի անհամբերությամբ նայեց նրան։ Այդ նկատեց քարտուղարը և ասաց.

— Ես տեսնում եմ, որ դու ուզում ես ավելի շատ իմանալ, թե քեզ ինչու եմ կանչել էստեղ։

— Տեսնում ես, բայց չես ասում։

Քարտուղարը, որ ուզում էր ավելի հանգամանորեն պատմել իր միտքը, հարկադրված եղավ միայն մի քանի խոսքով ասել, թե կարող է պատահել, որ թշնամու մոտենալու դեպքում իրենք էլ թողնեն շրջանը, գյուղերը, գնան անտառները, լեռները, պարտիզանություն անեն։

— Միտքդ ասա։

— Ես բավականաչափ ճանաչում եմ քեզ և վստահում եմ, ինչպես ինքս ինձ…

— Հասկանալի է։

— Դրա համար էլ որոշել եմ պահ տալ քեզ մի գանձ, որը պետք է պահես աչքիդ լույսի պես։

— Հըմ,—վերջապես խոր շունչ քաշեց ծերունին, մեջքը ետ տարավ և ավելի ամուր նստեց աթոռին։

Քարտուղարը տեսնելով, որ նա մի քիչ հանգստացավ, ավելի պարզ բացատրեց միտքը.

— Թշնամին եթե մտնելու է լինի մեր շրջանը, միևնույն է, էլի դուրս է քշվելու, մենք վերադառնալու ենք, մեր երկրի տերը էլի մենք ենք լինելու։ Դրա համար էլ պետք է այնպես անենք, որ մեր հարստությունը չնկնի նրա ձեռքը, չփչանա։ Պետք է փրկել, ինչ հարկավոր է։ Ճիշտ չէ՞։

— Պարզ չէ՞...

— Ուրեմն քեզ եմ հանձնարարում այդ գանձը։ Գիտեմ, ինչ էլ որ լինի, դու տնից դուրս չես գալու։ Այն սնդուկը, որ հիմա պիտի տամ քեզ, կթաքցնես, կպահես, մինչև խաղաղություն ընկնելը։ Խաղաղու յունից հետո, եթե ես կենդանի լինեմ, սնդուկն էլի կբերես, կտաս ինձ, կենդանի չեղա, կհանձնես այն մարդուն, ով նստած լինի իմ տեղը, ով լինի պարտիայի մեր շրջկոմի քարտուղարը։ Հասկացա՞ր։

— Թող մտածեմ։

— Մտածելու բան չկա, ասածս պարզ է։ Բայց այդ մասին ոչ ոք չպետք է իմանա,— զգուշացրեց քարտուղարը,— դա թող լինի քո գաղտնիքը։ Ասա, կարո՞ղ ես գաղտնիք պահել։

— Գաղտնիք պահելը հեշտ բան չի,— քիչ լռելուց հետո ասաց Վարդ Մելիքը և ավելացրեց,— բայց ես կպահեմ։

— Հավատում եմ,— ասաց քարտուղարը, վեր կացավ, բաց արեց իր առանձնասենյակից դեպի մի այլ փոքրիկ սենյակ տանող դուռը, գնաց այնտեղից բերեց երկաթե փոքրիկ, բայց բավականին ծանր մի սնդուկ, դրեց ծերունու մոտ,— ահա, այստեղ է ամեն ինչ։ Վերցրու, նստիր մեքենան, գնա, առանց գյուղը մտնելու, գիշերով, թաքցրու մի տեղ, որ ոչ ոք չտեսնի։

— Իսկ մեքենա քշո՞ղը։

— Նրանից կարող ես չվախենալ. նա վստահելի մարդ է...

— Էդ չեղավ, եթե նա էլ իմանա գանձի տեղը, գործերս կխառնվեն։

— Ասացի նրա մասին դու մի անհանգստանա։ Ես իմ շոֆերին լավ եմ ճանաչում։

Ծերունին թեև լրիվ չբավարարվեց քարտուղարի վստահեցումից, բայց և այնպես չհակաճառեց, մտածելով, որ եթե մեքենավարը, իրոք, վստահելի մարդ չլինի, քարտուղարը չի թողնի, որ նա էլ իմանա գանձի տեղը։ Դրա համար էլ նա լռեց և սպասեց քարտուղարի կարգադրությանը։ Այդ ժամանակ քարտուղարը զանգ տվեց, մտավ շոֆերը, վերցրեց երկաթե սնդուկը, տարավ դրեց մեքենայի մեջ, ծերունին էլ նստեց մեքենան ու ճամփա ընկան։

* * *

Մութն արդեն ընկել էր։ Կես ճանապարհին շոֆերը կանգնեցրեց մեքենան ու հարցրեց.

— Հենց էսպես գնանք գյո՞ւղ։

— Քշիր,—կտրուկ ասաց ծերունին և լռեց։

Բավականին գնալուց հետո, երբ մտել էին մի խոր ձոր և որն անցնելուց հետո պետք է երևար գյուղը, Վարդ Մելիքն ասաց.

— Մոտդ բահից-բանից կա՞։

— Հա, հետս մի փոքրիկ բահ եմ վերցրել։

— Դե մեքենան կանգնեցրու։

Շոֆերը մեքենան դուրս բերեց ճանապարհից, թեքեց տերևախիտ մի ընկուզենու տակ, նրանք մեքենայից դուրս եկան։

Ծերունին վերցրեց բահը և առաջ ընկավ, սնդուկն ուսին դրած շոֆերն էլ՝ նրա ետևից։

Ճանապարհից քիչ բարձր, անտառի եզրին, կար հնավուրց, ավերված մի մատուռ։ Դեռ մատուռին չհասած, ծերունին կանգ առավ, շոֆերին ասաց, որ ուսից ցած դնի արկղը։ Շոֆերը լուռ կատարեց նրա ասածը։ Մատուռից մի քանի քայլ դենը, աննշան մի տեղ, Վարդ Մելիքն սկսեց փորել հողը։

— Ավելի լա՞վ չի լինի տանենք անտառը,—ասաց շոֆերը։

— Չէ, անտառում շարունակ մարդ է լինում։ Փայտ կտրելիս կամ պտուղ քաղելիս կդիպչեն, տեղը կբացվի։ Էստեղ մարդ չի գալիս։

Երբ փոսը պատրաստ էր, ծերունին սնդուկը դրեց մեջը, հողը լցրեց վրան, մի քանի քարով նշան արեց և կես գիշերից անց վերադարձան միքենայի մոտ։ Շոֆերն ուզեց ծերունուն միքենայով տանել մինչև տուն, բայց նա հրաժարվեց։

— Մենակ գնալն ավելի լավ է, դու էստեղից վերադարձիր քո բանին,— ասաց նա և ինքը մենակ գնաց գյուղ։

Հաջորդ օրը գյուղի պարտկազմակերպության քարտուղարը տեսնելով ծերունուն հարցրեց.

— Վարդ Մելիք, շրջկոմի քարտուղարն ինչու էր քեզ կանչել իր մոտ։

— Գաղտնիք է,— անտարբերությամբ ասաց նա ու հեռացավ։ Բայց այդտեղ, հանկարծ սիրտը մի կասկած ընկավ. «Չլինի՞ թե սա ամեն ինչ գիտե։ Գուցե քարտուղարը նրան էլ է ասել։ Գուցե այդ բոլորն արեցին ինձ փորձելու համար»։

Եվ Վարդ Մելիքն այդ օրվանից մի տեսակ փոխվեց։ Նա ավելի լռակյաց դարձավ, ավելի մտազբաղ։ Քիչ էր գնում ժողովներին, խուսափում էր մարդկանցից, վախենալով, որ անզգուշաբար կարող է բերնից մի խոսք թռցնել, կասկած հարուցել, փչացնել ամեն ինչ։ Նա քնելիս էլ էր աշխատում զգույշ լինել, երազում բարձրաձայն չխոսել, որ կինը չլսի, չիմանա գաղտնիքը, չասի ուրիշներին, չհայտնվի ամեն ինչ։

Ծերունուն վախեցնողը իրեն պահ տված գանձը կորցնելը չէր միայն։ Նրան ավելի շատ վախեցնում էր անունն արատավորելու միտքը։ Եթե գողացվեր գանձը, ով կհավատար, թե ինքը՝ Վարդ Մելիքը չի գողացել, ով կհավատար, թե նա չի հայտնել գանձը թաքցրած տեղը։ Այդ մտքերը ահաբեկում էին նրան, հանգիստ չէին տալիս։ Դրա համար էլ ամեն օր գնում էր Վերին հանդերը, մատուռի մոտ, հեռ-

վից նայում արկղը թաղած տեղին, իր նշաններին, հավատալով, որ ամեն ինչ անփոփոխ է, և նոր միայն հանգըստանում էր, հանգիստ սրտով անկողին մտնում։

Մեկ անգամ, կեսօրվա դեմ, ծերունին դարձյալ տնից դուրս եկավ, բռնեց Վերին հանդերի ճանապարհը։

Զարից բարձրանալիս նա հանդիպեց դարբին Մեխակին, որին գյուղացիք Ուստա էին ասում։ Ուստան Վարդ Մելիքի մանկութ ընկերն էր և հարևանը։ Նա բահն ուսին դրած, գլխահակ, դեպի գյուղն էր գնում։

— Ուստա, էդ որտեղից,— հարցրեց Վարդ Մելիքը։

— Հեչ, ջուր ջրելու էի գնացել,— մի տեսակ տխուր և անտարբերությամբ պատասխանեց նա և հեռացավ։

Երբեք այդպես չէր եղել։ Ամեն անգամ հանդիպելիս նրանք մինչև բավականին չխոսեին, հարց ու փորձ չանեին, իրարից չէին անջատվի։ Այդ անգամ հարևանի անտարբերությունը շատ էլ չզարմացրեց ծերունուն։ Ուստայի միակ որդին զոհվել էր կռվում, նրա մահվան բոթը նոր էր գյուղ հասել։ Հայրը շարունակ լաց ու սուգի մեջ էր։ Վարդ Մելիքը հենց դրան էլ վերագրեց Ուստայի անտարբերությունը և շարունակեց ճանապարհը։

Տերևախիտ ընկուզենու մոտից անցնելիս ծերունու աչքովն ընկավ ծխախոտի մի փոքրիկ նախշավոր քսակ և բազմածալ թղթի մի կտոր։ Նա կռացավ, վերցրեց քսակն ու թուղթը։

— Մեխակի քսակն է,— ինքն իրեն ասաց նա,— տես է, խեղճը վշտից մոլորվել է։ Երևի հանել է, որ ծխախոտ ծխի և մոռացել է, թողել էստեղ։ Վերցնեմ, իրիկունը կտամ իրեն։

Հետո նա աչք ածեց քրքրված թուղթը։ Այնտեղ բազմաթիվ ծալքերից խառնված, ջնջված էին տառերը։ Շատ այս ու այն կողմ շրջելուց հետո Վարդ Մելիքը կարողացավ վեց բառ միայն ջոկել. «Թաղված... աղբյուրից քսան քայլ... պատի տակ...»։

Այդ բառերից ոչինչ չհասկանալով, Վարդ Մելիքը թուղթը դրեց քսակի մեջ, քսակը՝ գրպանում և շարունակեց ճանապարհը։ Բայց մի քանի քայլ դեռ չարած, մատուռի մոտից նայելիս նկատեց, որ իր դրած քարը տեղահան է արված, հողը ետ է տված, հորած սնդուկի տեղը դատարկ է...

Ծերունու սիրտը թփրտաց, ոտները դողդողացին, նա երերաց տեղում և վայր ընկավ...

Արևը եկավ, անցավ նրա վրայից, թեքվեց Գյուլում սարի ետևը։ Հեռու դաշտավայրից փչող զովը սրբեց, ցամաքեցրեց ծերունու ճակատի քրտինքը։ Իրիկնադեմի հովից, արդյոք, թե՞ հոտը դեպի գյուղ քշող հովվի կանչից, վերջապես, արթնացավ Վարդ Մելիքը։ Արթնացավ նա, բայց չկարողացավ իսկույն ոտքի կանգնել։ Մի պահ կիսաթմբիր վիճակում նստեց տեղը, ապա վեր կացավ, դանդաղ մոտեցավ արկղը թաղած տեղին, տխուր, մտամոլոր սգվորի պես նայեց դատարկ փոսին և լուռ շրջվեց դեպի գյուղ։

Նա բակը մտնելիս կինն ուշադրություն չդարձրեց վրան, հավերին էր կուտ տալիս։ Կարմրակատար աքաղաղը, որին Մանուշակ քեռակինը չգիտես ինչու Գիժ Կարո անունն էր տվել, այդ օրը չափազանց անհանգիստ էր, շարունակ կախում էր մեկ թևը, կուտը հողին քսելով մոտենում հավերին, հալածում, թույլ չէր տալիս, որ կուտ ուտեն։

— Այ սատկես դու, էլի կատաղեցի՞ր,— ասում էր Մանուշակ քեռակինը, քշում աքաղաղին, բայց նա մի կողմից փախչում էր, մի այլ կողմից մոտենում հավերին, կտցահարում նրանց։

Այդպես տևեց բավականին ժամանակ, մինչև որ հավերը վերջացրին կուտը, մոտեցան արդեն տերևաթափ թթենուն, թռան նրա ճղներին։

Գիժ Կարոն մի քիչ էլ պտույտ եկավ ծառի տակ, ապա ինքն էլ թռավ, բարձրացավ ամենաբարձր ճյուղը, իր համար հարմար տեղ ընտրեց մի վառեկի մոտ, սրտի վերջին մաղձը թափելու համար մի անգամ էլ հարվածեց արդեն

նիրհող վառեկին, հետո շրջվեց նրանից, ամփոփվեց իր մտքերի ներաշխարհում...

Այդ ժամանակ միայն Մանուշակ քեռակինը հիշեց, որ ամուսինը եկավ, լուռ անցավ, բարձրացավ սանդուղքներով, մտավ սենյակ։

Կինը գնաց նրա մոտ։

Ծերունին պառկել էր թախտին, երեսը շրջել դեպի պատը, աչքերը փակել։ Մանուշակ քեռակինը կռացավ, ուզեց նայել ամուսնուն, բայց նա հանկարծ բաց արեց աչքերը, շրջվեց, ակնապիշ նայեց կնոջը։ Կինը զարմացավ։ Նա երբեք այդպես չէր տեսել ամուսնուն։ Նրա դեմքի վարդանըման կարմիր գույնը սևացել էր, մի տեսակ կապտել, աչքերը չռվել էին, այլայլվել։

— Հիվանդ ես,—վախեցած հարցրեց կինը։

—Հա։

— Գլուխդ է ցավում։

— Հա։

— Երևի քաղցած ես, դրանից է։

— Հա։

— Էլ ի՞նչ ես «հա, հա» անում. մի կարգին բան ասա, տեսնեմ ինչ է պատահել,— սրտնեղած ասաց Մանուշակ քեռակինը և մեխվածի պես մնաց տեղում կանգնած։

— Մանուշակ, ինձ մի խոսեցնի, գնա տեղերդ բաց արա, մտիր մեջը,—շտապ, իրար վրա ասաց ծերունին և դարձյալ երեսը շրջեց դեպի պատը։

Կինն այլևս ոչ մի բառ չլսեց նրանից. ինչքան խնդրեց, թախանձեց, ամուսինն էլ ոչինչ չասաց։ Այդպես տևեց ամբողջ գիշերը, մինչև արևածագ։ Կինը վեր էր կացել, շրջում էր թախտի չորս բոլորը, ուզում էր խոսել նրա հետ, հարցնել առողջությունը, բայց վախենում էր։ Գիտեր ծերունու բնավորությունը, եթե նա տրամադրված չէր խոսելու, ուրեմն չէր խոսի։ Խոսեցնելիս՝ կվրդովվեր, ավելի կբորբոքվեր։

Բավականին անց միայն, երբ արևն ահագին բարձրա-

ցել էր, նա վեր կացավ, հագավ շորերը, գնաց բակի փոքրիկ բանջարանոցը, այնտեղից մի բան վերցրեց և բակից դուրս եկավ այնպես, որ կինը չնկատեց։

Գյուղից քիչ բարձր, ձորաբերանում, դարձյալ հանդիպեց Ուստա Մխակին, որ գլխահակ, մեն-մենակ գալիս էր վերևից։ Վարդ Մելիքը հասավ նրան, լուռ կանգ առավ, զննողաբար նայեց ընկերոջը։

— Բան ունե՞ս ասելու,—հետաքրքրվեց Ուստան։

— Որտեղի՞ց ես գալիս։

— Վերի հանդերից։

— Ինչո՞ւ էիր գնացել։

— Երեկ բան էի մոռացել էնտեղ։

— Ի՞նչ բան։

— Լևոնի ուղարկած ծխախոտի ամանը։

«Սուտ է ասում, իսկույն անցավ Վարդ Մելիքի մտքով,— բանը սարով-քոլով է գցում, էստեղ ծխախոտի ամանի հարց չկա»։

Վարդ Մելիքը գիտեր, թե ինչ «ծխախոտի ամանի» մասին է խոսքը։ Դա ոսկեզօծ, գեղեցիկ մի ծխախոտատուփ էր, որ դեռ պատերազմից առաջ, զինվորական ակադեմիայում սովորելիս, Լևոնն ուղարկել էր հորը։

Ուստա Մխակն այդ ծխախոտատուփը երբեք գրպանից չէր հանում, ցույց չէր տալիս ամեն մարդու։ Որդու մահվան լուրն առնելուց հետո նրա փոքրիկ լուսանկարը դրել էր մեջը, ամրացրել, և երբ հարկ էր լինում, հանում էր ծոցագրպանից, բաց անում, կարոտանքով նայում նկարին և ապա էլի ծածկում, դնում գրպանում, կոճկում մի քանի կոճակով։

«Չէ, դու ծխախոտի աման կորցնողը չես,—մտքում ասաց Վարդ Մելիքը,—դու ինձ ես ուզում խաբել, բայց ես էլ խաբվողը չեմ, երբ գործերդ բաց կանեմ, էն ժամանակ կխոսեմ քեզ հետ»։

— Լավ, գտա՞ր,—այդպես ահագին լուռ մնալուց հետո հարցրեց նա։

— Չէ. չգտա,— ասաց Ուստան։

— Ափսոս... Ուրիշ բան էլ չգտա՞ր...

— Էլ ի՞նչ պետք է գտնեի որ։

— Եսիմ. ասում են որանցը կգտնեի։ Գուցե մի որևէ բան գտած լինես։

— Շաշ-շաշ բաներ ես ասում։

«Մինչև հիմա եմ շաշ եղել, որ ամբողջ կյանքումս հետդ ընկերություն եմ արել, բայց քեզ լավ չեմ ճանաչել», — մտքում ասաց ծերունին և լուռ շարունակեց ճանապարհը։

— Դա էլ ոչինչ չե՞ս ասում,— նրա ետևից կանչեց Ուստան։

— Ես ի՞նչ ասեմ, դու պետք է ասեիր, իսկ դու էլ լռում ես,— առանց ետ շրջվելու պատասխանեց նա ու հեռացավ։

Օրը տաք էր և հեղձուցիչ։ Ծերունու ոտքերը թուլացել էին։ Յոթանասուն տարեկան էր նա, բայց մինչև այդ տակավին չէր իմացել, թե ինչ բան է հոգնածություն, սրտի թուլություն։ Քանի՜-քանի՜ անգամ էր այդ ճանապարհով գնացել, բարձրացել սարը, շրջել ամենուրեք։ Այդ կողմերում չկար մի տեղ, ուր նա եղած չլիներ, չկար մի թուփ, մի քար, որ նա տեսած չլիներ։ Գյուղում ասում էին, որ Վարդ Մելիքը ճանաչում է ոչ միայն գետնի երեսը, այլև նրա տակը։ Մի քանի տարի առաջ, երբ կենտրոնից գիտնականներ էին եկել և ուսումնասիրում էին շրջանի բնական հարստությունները, Վարդ Մելիքն էր առաջնորդում նրանց, ցույց տալիս, թե որտեղ ինչպիսի ջրեր կան, որտեղ ինչպիսի քարեր։ Ե. խասարդ գիտնականները չէին հասնում նրա ետևից, խնդրում էին որ դանդաղ գնա, չշտապի։

Իսկ այժմ նա հազիվ էր քայլում, շունչը կտրվում էր, սիրտը թրթռում...

Երբ հասավ մատուռին, աչք ածեց նրա շրջապատը, չորս ուղղությամբ չափեց քսան քայլ, փորփրեց, ստուգեց ամեն մի թուփ, ամեն քարի տակ, բայց ոչինչ չգտավ։ Բահով ակոսներ փորեց պատի մոտ, շրջեց քարերը, նայեց նրանց տակը սակայն իզուր...

Վերջնական հուսահատությունը պատեց Ծերունուն։

— Հիմա ես ի՞նչ անեմ,— բարձրաձայն ասաց նա ու հուսաբեկ նստեց կիսավեր մատուռի պատի տակ։

Օրը մթնում էր։ Արևը նստել էր Գյուլլում սարի ուսին և նրա վերջին շողերն էին միայն բեկվել լայնանիստ լանջի, անտառի դեղնատերև ծառերի վրա։

Ամենուրեք տիրում էր անսովոր լռություն։ Միայն ծառերի կատարներից անցնող մեղմ զեփյուռի քնքուշ սվսվոցն էր լսվում և մեկ էլ մի կաչաղակի անժամանակ կչկչոցը, որ չգիտես թե որտեղից այդ պահին եկել, թառել էր ընկուզենու չոր ճղան վրա և բարձրաձայն դասը սերտող աշակերտի նման ի լուր աշխարհին հայտնում էր սրտի թրթիռները։

— Չգիտեմ բարի՞ լուր ես ուզում հայտնել, թե չար, այ կաչաղակ, բայց ես հիմա սիրտ չունեմ քեզ լսելու, թըռիր, գնա, թող ինձ մենակ,— տխուր ասաց Վարդ Մելիքը, նորից խորասուզվեց մտքերի մեջ, մնաց այդպես, մինչև լրիվ մութն ընկնելը։ Իսկ երբ մութն արդեն ընկել էր, ոտքի կանգնեց, հետը տարած բահն էլ մոռացավ, թողեց նստած տեղը և ձեռնունայն վերադարձավ տուն։

Տանը Ուստա Մեխակն սպասում էր նրան։ Ծերունուն տեսնելուն պես նա ասաց.

— Այ մարդ, էդ ի՞նչ է պատահել քեզ. ուրտե՞ղ մնացիր. էնքան սպասեցի, որ աչքերիս ջուրը ցամաքեց։

— Ինչո՞ւ ես սպասում,— հետաքրքրությամբ հարցրեց Վարդ Մելիքը։

— Եկել եմ մեղքերս քավելու։

Ծերունու աչքերը զարմանքից չռվեցին։ Նա և՛ ապշեց, և՛ ուրախացավ, կարծելով, թե նա իրեն հետաքրքրող խընդրի մասին պետք է խոսի։

— Ինչո՞ւ ես զարմանում,— տեսնելով ընկերոջ ակնապիշ հայացքը, հարցրեց Ուստան,— մարդ չի՞ կարող մեղքերը քավել։

— Մեղք, առհասարակ, չպիտի գործել։ Մարդ ստեղծվում է ազնվության համար, ոչ թե մեղք գործելու։

— Իսկ եթե...

— Խոսքդ ասիր,— սուր ընդհատեց Վարդ Մելիքը։

Ուստան բռնեց ընկերոջ թևը, տարավ ներս, նստեցրեց թախտին և ասաց, որ կասկածում էր, թե նա է գտել որդու ուղարկած ծխախոտատուփը և չի ուզում տալ։

— Հետո՞։

— Հետո պարզվեց, որ հողուս մեղք էի անում,— շարունակեց Ուստան,— բանից դուրս է գալիս, որ էն օրը կաղնակերենց Մուրադն է գտել ընկուզենու մոտ և էսօր բերեց տվեց ինձ։

— Հետո՞,— հարցրեց Վարդ Մելիքը։

— Էլ ի՞նչ հետո։

— Իսկ ինչո՞ւ էիր կարծում, թե ես պետք է գտած լինեմ։

— Ախր էն օրը ինձնից հետո դու էիր գնում Վերի հանդերը։ Ես գիտեի, որ ընկուզենու տակ պիտի թողած լինեի։ Էնտեղ հանել էի, մուրկ տվել Լևոնի նկարին։ Ասում էի ընկուզենու մոտից անցնելիս երևի...

— Էլ ուրիշ ոչինչ չէի՞ր թողել էնտեղ,— Ուստային ընդհատեց ծերունին։

— Թողել էի։ Մեկ էլ թութունի քսակս էր մնացել։ Բայց դա ջահանդամը։ Նրա մեջ մի նամակ կար, էդ է ափսոս։

— Ի՞նչ նամակ էր։

— Լևոնի ընկերների նամակը։ Գրել էին, թե որտեղ է թաղված...

— Չես հիշո՞ւմ տեղը։

— Գյուղի անունը մոռացել եմ։ Միայն հիշում եմ՝ աղբյուրից քսան քայլ դենը, մի պատի տակ...

Սառը քրտինքը պատեց Վարդ Մելիքի ճակատը։ Կարծես թե ծանր մի հարված իջավ նրա գլխին, շշմեցրեց, գցեց թախտին։

— Ի՞նչ պատահեց քեզ, մարդ աստծո,— տեսնելով ծերունու այլայլվածությունը, հարցրեց Ուստան։

— Նոր չի պատահում,— հազիվ ասաց ծերունին,— վեր կաց գնա Սուլուկ Սիմոնի տղային կանչիր էստեղ։

Սուլուկ Սիմոնի տղան՝ Աշոտը, գյուղի պարտկազմակերպության քարտուղարն էր։ Ուստա Մեխակը թեև չիմացավ, թե Վարդ Մելիքն ինչու էր կանչում նրան, բայց լուռ վեր կացավ, գնաց նրա ետևից, վախենալով, որ չգնալու դեպքում կարող է բորբոքել ծերունու ջղերը, դուրս բերել հոգեկան հավասարակշռությունից։

Ուստա Մեխակը գիտեր, որ Աշոտին երեկոները միայն ակումբում կարելի է գտնել։ Այնտեղ եթե նա ժողով կամ պարապմունք չունենար, կնստեր, գրքեր կկարդար մինչև ուշ գիշեր։ Դրա համար էլ նա ուղիղ գնաց այնտեղ։

Պարտկազմակերպության քարտուղարն այնտեղ, իրոք, ինչ որ գիրք էր կարդում։ Ուստային լսելուն պես ոտքի կանգնեց, գնաց ծերունու մոտ։ Երբ նրանք ներս մտան, Վարդ Մելիքն ինքն իրեն ասում էր.

— Էս խայտառակությունից ես էլ դուրս չեմ գա։ Մարդ պատիվ պահի, անուն հանի և հանկարծ ամեն ինչ կործանվի-գնա...

— Ի՞նչ է, հիվանդացե՞լ ես, Վարդ Մելիք,— նրա մտքի թելն ընդհատեց Աշոտը։

— Չէ, հիվանդացել չեմ։

— Բա ինչի՞ ես ինձ կանչել։

— Կանչել եմ, որ մարդ ուղարկես, շրջկոմի քարտուղարին կանչես ինձ մոտ։

— Շրջկոմի քարտուղարի՞ն։ Ի՞նչ գործ ունես նրա հետ։

— Էդ քո գործը չի։ Դու միայն հայտնիր նրան, որ Վարդ Մելիքն ուզում է շտապ տեսնել քեզ։ Զգաս, կմեռնի, դարդը կմնա սրտումը։

— Էդ տեսակ բանի համար շրջկոմի քարտուղարը չի գա էստեղ։ Աշխատանքի մարդ է, հազար ու մի գործ ունի։

— Ասացի կանչիր, ուրեմն կանչիր,—սրտնեղած ասաց ծերունին,—քո գործը չի, կգա, թե չէ՝ էդ ես գիտեմ։

Աշոտը գիտեր, որ Վարդ Մելիքը լուրջ մարդ է, իզուր տեղից չի կարող այդպիսի բան պահանջել։ Նա խոստացավ կատարել ծերունու ցանկությունը և առավոտյան, իրենց գյուղից շրջանի առաջավոր բրիգադիրների խորհրդակցությանը գնացող մի կնոջ հետ նամակով այդ մասին հայտնեց քարտուղարին։

Երեկոյան դեմ շրջկոմի քարտուղարը եկավ իր մեքենայով, վերցրեց Աշոտին և նրա հետ միասին գնացին ծերունու մոտ։

Վարդ Մելիքը տաքության մեջ պառկել էր իր ամենօրյա թախտին, երեսը շրջել դեպի պատը, գլուխը ծածկել, շունչը գցել փորը, ոչ խոսում էր, ոչ պատասխանում կնոջ հարցերին։ Իսկ երբ կինը հայտնեց նրան, թե շրջկոմի քարտուղարը եկել է, նա իսկույն բարձրացրեց գլուխը, նստեց տեղը։

— Հը, հիվանդացել ես, Մելիք քեռի,—նրա ձեռքն իր ափերի մեջ առնելով հարցրեց քարտուղարը։

— Կարծեմ էդպես է...

— Ոչինչ, մի վախենա, կլավանաս։

— Հիվանդությունից մարդ չի վախենա։ Լինում են ավելի սարսափելի բաներ։

— Ինչի՞ց ես սարսափում որ։

Վարդ Մելիքը մի պահ լռեց, հետո նայեց Աշոտին, ապա աղերսալից ձայնով ասաց.

— Աշոտ, ախպոր տղա, ես քարտուղարի հետ գաղտնիք ունեմ խոսելու, լավ կանես, որ մի քիչ մեզ մենակ թողնես։ Դու էլ, Մանուշակ,—դարձավ դեպի կինը,—դու էլ գնա հավերիդ տեղավորիր։

— Ինչո՞ւ ես դուրս անում, Մելիք քեռի, սրանք մեզ չեն խանգարում,—ասաց շրջկոմի քարտուղարը։

— Չէ, ասելիքս քեզ է վերաբերում. մեկի բաժինը եթե

մի քանիսի հետ բաժանես, վերջում դժգոհություն կլինի։ Հա, դու ինձ ներիր, ես հագնված չեմ...

— Ոչինչ, ոչինչ, խոսքդ ասիր,— խկույն կանխեց նրան քարտուղարը, որի հետաքրքրությունն ավելի էր շարժվել և ուզում էր իմանալ, թե այդ ինչ անհրաժեշտ խնդիր է, որի մասին ուզում է նա իր հետ առանձին խոսել։

— Գիտե՞ս ինչ, ախպոր տղա,— երկուսով մնալուց հետո խկույն սկսեց Վարդ Մելիքը,— հրես յոթանասուն տարեկան եմ և յոթանասուն տարի շարունակ վախեցել եմ մի բանից—անունս խայտառակելու մտքից։ Բաղաքում էլ եմ ապրել, գյուղում էլ։ Լավ օրեր էլ եմ տեսել, վատ օրեր էլ։ Լավ ընկերներ էլ եմ ունեցել, վատ ընկերներ էլ։ Բայց նրանցից ոչ մեկը չի ասի, թե ես կյանքումս մեկին խաբել եմ, մի անգամ սուտ եմ խոսել։ Ձեն ասի, էդպես բան չի եղել։ Հալա յոթ տարեկան չկայի, ողորմածիկ պապս մի անգամ ասաց, թե մարդ մորից ազնիվ է ծնվում, ազնիվ էլ պետք է մեռնի։ Չեմ մոռանում էդ խոսքերը։ Միշտ մտածել եմ էդ մասին և աշխատել եմ ազնիվ ապրել, ազնիվ էլ մեռնել։

— Իսկ կա՞ մեկը, որ ուզում է քեզ մեղադրել անազնվության մեջ,— չհամբերելով հարցրեց քարտուղարը։

— Մինչև հիմա չի եղել, հիմա կլինի։

— Ո՞վ է դա։

— Էդ դու պետք է լինես։

Քարտուղարը զարմացած նայեց ծերունուն։

— Չեմ հասկանում,— մի պահ լուռ մտածելուց հետո ասաց նա։

— Չե՞ս հասկանում, հիմա կհասկանաս,— և մի պահ մտածելուց հետո միանգամից ասաց,— էն գանձը, որ պահ էիր տվել ինձ, հիմա չկա...

— Ո՞նց թե չկա,— զարմացավ քարտուղարը։

— Շատ պարզ, չկա,— կրկնեց ծերունին,— ուզում ես հավատա, ուզում ես մի հավատա, չկա։

Վարդ Մելիքն այդ ասաց, ոտները մեկնեց թախտի վրա, պառկեց։

Մինչ այդ նա անընդհատ մտածում էր այն մասին, թե ինչպես պետք է խոսի քարտուղարի հետ, ինչպես պետք է բացատրի միտքը։ Նրան թվում էր, թե սկի չի էլ կարողանալու խոսել. երևի բերանը կփակվի, լեզուն չի շարժվի, որ ասի, թե գանձը կորել է, չկա։ Կամ ասելուց հետո երևի շունչը կփչի, կմեռնի տեղն ու տեղը։

Բայց ահա ասաց բոլորը և ոչինչ չպատահեց նրան։ Ընդհակառակը, կարծես թե մի ծանրություն իջավ ուսերից, թեթևացավ, որպես թե ոչինչ պատահած չլիներ նրան։ Նրան թվաց, թե տաքությունն էլ անցավ, հանգստացավ։

— Մելիք քեռի, բան չհասկացա,—երկար լռությունից հետո ասաց քարտուղարը,—ախր ինչպե՞ս թե չկա։

— Ասացի, վերջացավ,—հանգիստ կրկնեց ծերունին և քիչ հետո ավելացրեց,—երեկ չէ մյուս օրը գնացի, տեսա սնդուկն էլ տեղումը չի...

— Պարզ չես խոսում։ Երեկ չէ մյուս օրը շոֆերը արկղը բերեց, հանձնեց ինձ։

— Ինչպե՞ս թե բերեց,—տեղից վեր ցատկելով բացականչեց Վարդ Մելիքը։

— Հապա ինչ. ես ուղարկեցի, ասացի, որ գա, քեզ հետ միասին գնաք, հանեք սնդուկը և բերեք։ Նա էլ եկավ, վերցրեց սնդուկը և վերադարձավ։ Չես իմանում։

— Չեմ իմանում,— թույլ, հազիվ լսելի ձայնով ասաց նա և կանչեց,—Մանուշակ, Մանուշակ, մի բաժակ ջուր, սիրտս...

Մինչև կինը կգար, քարտուղարը վեր կացավ, սեղանի վրայից վերցրեց կավե փարչը, կժից ջուր լցրեց, մեկնեց ծերունուն։ Բայց ծերունու ձեռքերը դողդողում էին, փարչը հազիվ էր կարողանում ձեռքում պահել։

— Ուրեմն այդպես, շոֆերը քեզ չի՞ ասել, որ սնդուկը տանում է,—քիչ հետո հարցրեց քարտուղարը։

— Անիծվի շոֆերը,—հազիվ արտասանեց ծերունին։

— Իսկ դու երբեք չես էլ իմացել, թե ինչ կար այնտեղ։

— Չեմ էլ ուզում իմանալ։ Մարդու համար ամենամեծ գանձը՝ նրա մաքուր անունն է։ Ես անունս արատավորելուց էի վախենում։

Տրջկոմի քարտուղարը քնքշությամբ վերցրեց ծերունու ձեռքը, գոհունակությամբ նայեց նրա աչքերին և ասաց.

— Ճիշտ է, Մելիք քեռի, շատ ճիշտ։ Ռուսական իմաստուն առածն ասում է. Береги свою честь смолоду. Իսկ ինչ վերաբերում է սնդուկին, նրա համար դու այդքան էլ չպետք է անհանգստանայիր։ Այնտեղ երկրաբանական քարտեզներ էին պահված։ Հիշո՞ւմ ես, պատերազմից առաջ երկրաբաններ էին եկել մեր շրջանը։ Նրանց դու էիր առաջնորդում սարերում։ Նրանք նկարահանել ու նկարագրել էին, թե ինչպիսի գանձեր կան մեր սարերի ընդերքում։ Մենք պատրաստվում էինք գետնի տակից դուրս բերել այդ գանձերը, բայց պատերազմը խանգարեց։ Հիմա պատերազմը վերջացել է և մենք շուտով պետք է վերսկսենք աշխատանքները։

— Հա՛,—զարմացած բացականչեց ծերունին, մի պահ ինչ-որ մտածեց, ապա ավելացրեց,—դե սկսեք, որ էդպես է շուտ սկսեք աշխատանքները, որ ես էլ տեսնեմ իմ աչքով, քանի դեռ կենդանի եմ...

1946 թ.

ՎԻՊԱԿՆԵՐ

ՎԵՐԱԴԱՐՁ

Ի՞նչը կարող է հայրենի տան նման քաղցր լինել։

Գուրգեն Սաթինյանն այդ մասին էր մտածում։ Առաջ նա աշխատում էր գյուղում՝ հանգիստ ու անվրդով, և գոհ էր կյանքից։ Երբ սկսվեց պատերազմը, նա թողեց տունը, ընտանիքը, թողեց կոլխոզի խաղաղ աշխատանքը և պատերազմի դաշտ գնաց։ Եղավ կռվի դաժան ոլորտներում, վիրավորվեց, թևը հատեցին և այժմ դարձյալ գյուղ էր վերադառնում՝ սիրտը հայրենի տան կարոտով լի։

Մութ էր։ Լուսինը նոր էր դուրս եկել բարձր սարի ուսից և նրա շողերը դեռ չէին հասել ձորամիջով անցնող ճանապարհին։ Սաթինյանը քայլում էր լուռ, հարափոփոխ մտքերի ծովում խորասուզված։

Ճանապարհից մի քանի քայլ ներքև հոսում էր գետը՝ բարձր վշշալով։ Այնտեղ, ուր ջուրն անցնում էր սառցի տակով, վշշոցը թուլանում էր, մեղմանում, այնտեղ, ուր այն դուրս էր գալիս սառցի տակից, կոհակներն ավելի ուժգին էին խփվում սալաքարերին, վշշոցն ուժեղանում էր, դառնում համատարած, լցնում ձորը։

Կարծես գետի աղմուկն էր ներգործում Սաթինյանի մտքերի վրա։ Նա չէր կարողանում կենտրոնանալ. մտքերը ցրվում էին, մշուշապատվում, աղոտանում, և նա մոռանում էր, թե մի պահ առաջ ինչի մասին էր մտածում։

Նախօրյակին եկած ձյունը անհամաչափ ճռճռում էր ոտների տակ. նա օրորվում էր, տեղ-տեղ կորցնում հավա-

սարակշռությունը, երբեմն ընկնում, բայց խելույն էլի ոտքի էր կանգնում, շարունակում ճանապարհը՝ առանց դադարի, թեև հոգնած էր սաստիկ ու քրտնաթոր։ Նա շտապում էր շուտ տուն հասնել, շուտ մտնել հայրենի տան շեմքից, շուտ տեսնել իր մորը, կնոջը, իր փոքրիկ դստերը՝ Նվային, որին կարոտել էր հոգու խորքում և սիրտը թպրտում էր շուտափույթ հանդիպման երջանիկ զգացումից։

Սակայն գյուղը դեռ չէր երևում…

Սարալանջով անցնող քաղցած մի գայլ իր անվերջ ոռնոցով հետևում էր մենակ ճանապարհորդին։ Գետի միալար վշշոցը միանում էր գայլի ձայնին, ավելի ահաճ դարձնում այն։

Գայլին լռեցնելու համար նա մի քանի անգամ ուժգին բացականչեց, հայհոյեց, բայց նա ձայնը չկտրեց, նույն միալար ոռնոցով շարունակեց քայլել ձորաբերանով, մերթ ընդ մերթ կանգ առնելով բլուրների վրա, նայելով գետի այս ափով գնացող մարդուն ու շարունակելով ոռնալ, կարծես թե օգնության կանչելով իր ցեղակիցներին։

Այդպես շարունակվեց բավականին երկար, մինչև որ գյուղի առաջին խրճիթից երևաց խավարը կիսող աղոտ լույսի պռունգը։

Սաթինյանն զգաց, որ գայլը գիրթ կանգ առավ ու սըսկվեց։

— Վախեցա՞ր, հա՞։ Դե հիմա ետ դառ քո եկած ճանապարհով,— խեղդ ձայնով ասաց Սաթինյանը, մի պահ կանգ առավ խորը շունչ քաշելու, քրտինքը սրբելու համար։

Արդեն հասել էր գյուղի այգիներին և նրան թվում էր, թե հիմա ձայն կտան Կաթնաձորի ծանոթ ծառերը, ծանոթ թփերը, ցանկապատերը, որոնց վրա իր պատանեկության տարիներին բազմաթիվ անգամ ցատկել է, մտել այգիները՝ միրգ քաղել։

Սակայն ոչ մի ձայն նա չէր լսում։ Մեռել էր գյուղը, իսկ այն կարծես խոր քնի մեջ էր։ Շներն անգամ չէին հաչում։

Ջաղացների մոտից անցնելիս նա մեկ ուզեց գնալ կոլխոզի վարչության գրասենյակը, կարծելով, թե այնտեղ կարող է մարդ լինել, բայց մեկել մտափոխվեց և ուղիղ գնաց իրենց տուն։

Գյուղամիջում ձյունը հալած էր։ Ամեն անգամ ոտը փոխելիս ձնաջուրը չփչփում էր, լցվում կոշիկների մեջ։ Սաթինյանը դրա վրա ևս ուշադրություն չէր դարձնում, նա ամբողջովին տարվել էր գեթ մի րոպե, մի վայրկյան շուտ հասնելու մտքով։ Երբ հասել էր իրենց տան, գոմի դռան մոտից հանկարծ դուրս ցատկեց մի շուն, կատաղի հաչոցով հարձակվեց վրան։

— Սևլիկ, Սևլիկ, մոռացե՞լ ես, — շանը հաչոցից ճանաչելով ասաց Գուրգենը։ Շունն իսկույն լռեց, մոտեցավ նրան, փաթաթվեց ոտներին։ Սաթինյանը ձեռքը տարավ շան պարանոցով, բանից փաղաքշեց մազերը։

Շան քնքշալիր գալարումներն ու մռմռոցը հուզեցին Գուրգենին։ Եթե լույս լիներ, կերևային նրա աչքերի պրսպղուն արցունքները։ Հույզերի խլրտումից դողդողում էին ոտները։ Նա մեխվել էր տեղում և չէր ուզում էլ առաջ գնալ։ Մի պահ այդպես լուռ, անորոշ վիճակում կանգնելուց հետո խիզախեց, մոտեցավ տանը, հրեց դուռը։ Այն ներսից փակված էր։

Նա շունչը պահած մի քիչ կանգ առավ դռան մոտ, հետո, կամաց, երկու անգամ ոտով խփեց տախտակներին։ Ներսից ոչ մի ձայն չլսվեց։ Այդ ժամանակ նրա սրտով անհանգիստ մի բան անցավ։ Էլ չհամբերեց և ուժով դարձյալ մի քանի անգամ իրար վրա խփեց դռան տախտակներին։

— Ո՞վ է, — քիչ հետո լսվեց ներսից։

Մայրն էր։ Գուրգենն իսկույն ճանաչեց ձայնից, բայց չարձագանքեց, կարծես կապվել էր լեզուն, բերանը փակվել։ Սիրտն սկսեց ավելի անհանգստորեն զարկել, շունչը կտրվում էր։

— Ո՞վ է, — կրկնվեց ձայնը։

— Բաց արա,—կամաց շշնջաց որդին և նրան թվաց, թե սրտից ծանր մի բան ընկավ։ Նա ուղղվեց, խորը շունչ քաշեց։

Դուռը ճռռաց, կիսաբացվեց և երրորդ անգամ լսվեց մոր ձայնը.

— Ո՞վ է։

— Ես եմ։

Մայրը ներսից ակնապիշ նայեց որդուն, թևերն առաջ տվեց, անաբեկված ճչաց.

— Գուրգե՜ն...

Գուրգենը միայն աղաղակը լսեց։ Մեկ էլ այն տեսավ, որ մայրը կանգնած տեղը օրորվեց, հայացքը հառեց մի անորոշ կետի և հանկարծ, արմատից կտրած ծառի պես փըռվեց գետնին...

— Վա՜յ, մայրի՞կ, ի՞նչ պատահեց քեզ։

Բայց մայրն էլ ձայն չհանեց։ Նա լուռ մեկնվել էր գետնին, ձեռքերը փռել, կարծես թե շունչը փչած լիներ։ Այդ ժամանակ որդին մի շարժումով ուսից հանեց զինվորական պայուսակը, գեն շպրտեց, բարձրացրեց մոր գլուխը, դրեց ծնկան։

— Մայրիկ, ախր ի՞նչ պատահեց քեզ։

Սակայն մայրը լուռ էր և ուշքի գալու ոչ մի նշան չէր ցույց տալիս։ Գուրգենն անհանգստացավ։ Նրան թվաց, թե հանկարծակի ուրախությունից մայրը կարող է կաթվածահար լինել։ Նա մոր գլուխը զգուշությամբ իջեցնելով գետնին՝ բարձրաձայն կանչեց.

— Անթի՜կ, Եվա, բա էլ մարդ չկա՞ էս տանը։

Տնից ոչ մի ձայն չլսվեց։ Գուրգենի ձայնից մայրը դանդաղորեն բացեց աչքերը, շարժվեց։

— Մայրիկ, արթնացիր, արթնացիր, բա էդպե՞ս կդիմավորեն որդուն, արթնացիր։

— Դո՞ւ ես,—կարծես թե քնի մեջ բացականչեց մայրը։

— Ես եմ, մայրիկ, ես եմ, ի՞նչու ես քեզ կորցնում, ես եմ։

— Ախր ասում էին, թե դու...

— Շատ բան կարող են ասել,— մոր միտքը իսկույն կռահելով ընդհատեց որդին,— տեսնում ես, ողջ ու առողջ կանգնած եմ էստեղ, ուշքի եկ։

Մայրը հայացքը որդուց չհեռացնելով, դանդաղորեն նստեց, մի քիչ շտկեց իրեն, բայց չկարողացավ խոսել։ Գուրգենն օգնեց նրան, ոտքի կանգնեցրեց, ներս տարավ, դրեց թախտի վրա։

— Ախր մի ասիր տեսնեմ...

— Հետո, մայրիկ, հետո բոլորը կիմանաս։ Դու հալա ուշքի եկ, ասա, բա ո՞ւր են Անթիկը, Եվան։

— Եվան,— թախծալի բացականչեց պառավը, ուզեց ինչ որ ասել, հանկարծ աչքն ընկավ որդու թևին։

— Վայ, քոռանամ, կուռդ...

— Ոչինչ, դատարկ բան է։

— Դատա՞րկ բան է...

Ու մայրն սկսեց ջուխտ ձեռքով զարկել ծնկներին, լաց լինել։

— Եթե իմանայի, որ ինձ էսպես պիտի դիմավորեք, սկի չէի գա։ Ինչո՞ւ չես հարցիս պատասխանում. ո՞ւր է Անթիկը, ո՞ւր է Եվան։

— Եվա՜ն.— ծոր տվեց մայրը։

— Հա, դե խոսելո՞ւ ես, թե չէ,— արդեն ակնհայտ բարկությամբ բացականչեց որդին։

— Ախր ի՞նչ խոսեմ, բալա ջան, ես ի՞նչ ասեմ քեզ...

Գուրգենի վրա սառը քրտինք իջավ։ Նա զգաց վրա հասած դժբախտությունը։ Ոտքի կանգնեց, մոտեցավ պատուհանին, նայեց դուրս։ Դուրսը խավար էր, ոչինչ չէր երևում։ Նա հանկարծ ետ շրջվեց, հայացքը հառեց մորը։ Մայրը լուռ էր. դատապարտյալի նման գլուխը կախ։

— Մեռե՞լ է,— տխուր, ավելի շուտ ժխտական պատասխան ստանալու, քան թե իսկությունն իմանալու համար հարցեց Գուրգենը։

— Քո գնալուց մի քանի ամիս հետո, մի երեկո եկավ,

թե նանի, գլուխս ցավում է։ Պառկեցրինք, տաքությունը բարձրացավ։ Առավոտյան էլ ուշը գլխին չէր։ Բժիշկը եկավ, մտիկ տվեց, ասաց մենինգիտ է։ Դե ես ի՞նչ իմանայի, թե դա ինչ ցավ է։ Երեք օր մնաց...

Որդին Թուլարեն նստեց պատուհանի տակ դրած նախշավոր սնդուկի վրա, կիսով չափ շրջվեց դեպի մայրը, հայացքը անորոշ մի կետի հառած, երազկոտ ու վշտաբեկ ասաց.

— Հետո՞։

— Մեկ օր եկավ, թե նանի, Արուսի հայրը նամակ է գրել, ուղարկել է նկարը, իսկ իմ հայրիկն ինչո՞ւ չի նամակ գրում, ինձ չի՞ սիրում...

— Լավ, բավական է,—մռնչաց որդին, ուժգին թափահարեց, թևը կպավ պատուհանին, ջղերը ցնցվեցին։ Նա կտրուկ ետ շրջվեց, ձախ ձեռքը տարավ դեպի կիսատ թևը, բռնեց, կծկվեց, մնաց այդպես։

Մայրը նայեց որդուն, սիրտը կսկծաց, մրմուռը փակեց լեզուն։ Տիրեց երկարատև, ծանր լռություն, մի լռություն, որի ժամանակ սրտերն ալեկոծվում են, լեզուները պապանձվում, արցունքները ցամաքում։

— Բա Անթի՞կը,—հանկարծ, կարծես թե քնից արթնանալով, հարցրեց Գուրգենը։

Մայրը լուռ էր։

— Քեզ հետ չե՞մ։

— Դե ո՞ւր պիտի գնար,—երկչոտությամբ ասաց մայրը, էլի մի պահ լռեց և ապա, կարծես թե իրեն արդարացնելու համար ավելացրեց,—բայղուշ հո չէր, որ մեն-մենակ նստեր տանը, օր-ջահելուց սուգ աներ...

Լուսնի շողը պատուհանից ներս կաթեց, նեղ առվակի պես հոսեց սենյակի միջով, հասավ դիմացի պատին։ Բրդբրդոտ, մոխրագույն կատուն կարծես հենց դրան էր սպասում. անկողնաշորերի ծալքի վրայից վար ցատկեց, եկավ կանգնեց լուսնաշողի տակ, նախ ձգվեց, մի ոստյու-

նով ցատկեց նրա ծնկներին, դունչը տարավ դեպի թևատակը...

Գուրգենը բռնեց կատվի պարանոցից, բարձրացրեց նրա դունչը, նայեց աչքերին և որպես թե կատվին դիմելով հարցրեց.

— Ե՞րբ ամուսնացավ։

— Մի ամիս չի լինի։

— Ո՞ւմ հետ։

— Փաղանենց Աթանի։

Եվ մայրը պատմեց մանրամասնությունը։

Բանի դեռ երեխան կենդանի էր, Անթիկն աշխատում էր կոլխոզում։ Ամեն օր աշխատանքից տուն էր գալիս, գուրգուրում երեխային, ասում, որ շուտով կվերջանա պատերազմը, հայրը կվերադառնա։ Երբ կեսուրը լաց էր լինում, Անթիկը հուսադրում էր նրան, ոգևորում։ Նա երբեք չէր տրտնջում, ամենևին հույսը չէր կտրում ամուսնուց։ Բայց երեխայի մահվանից հետո ամբողջովին փոխվեց։ Էլ չէր գնում գործի, չէր ուզում աշխատել։ Ամբողջ ժամանակ տանը նստած լաց էր լինում և կրկնում.

— Էլ ինչո՞ւ եմ ապրում։

Նա խուսափում էր ամենքից, ոչ մի անգամ տնից դուրս չէր գալիս։ Կեսուրը տեսնում էր, որ չար մտքեր են մտել հարսի սիրտը, ուզում է ինքնասպանություն կատարել։ Եվ ահա այդ ժամանակ էր, որ առաջարկություն արեց նրան կոլխոզի հաշվետարը։

— Իսկ դո՞ւ...

— Դե ես ինչ. հո չէի կարող արգելել։ Հիմա փոշմանել է, մեկ-մեկ մարդու ծածուկ գալիս է էստեղ, նստում, լաց լինում։ Ես էլ թույլ չեմ տալիս. ասում եմ որ գնացել ես, էլ ինչո՞ւ ես գալիս էստեղ, դարդիս մեկը հազար անում...

Կատուն կրկին մոտեցավ Գուրգենին, դունչը մեկնեց, սկսեց հոտոտել։ Գուրգենը դեն շպրտեց նրան, միանգամից ոտքի կանգնեց։

— Էլ ինչու համար եկա...

Մայրը վախեցավ։ Նրան թվաց, թե տղան ուզում է գնալ։

—Ինչու կանգնեցիր։

— Բունս տանում է։

— Բա ոչինչ չե՞ս ուտելու։

— Կուշտ եմ։

Մայրը շվարած նայեց որդուն։ Այդ ժամանակ գյուղավերևից լսվեց.

— Ծուղրուղու...

Առաջին աքլորականչն էր։

2.

Գուրգենի վերադառնալու լուրը գյուղում առաջինն իմացավ նրանց հարևանի աղջիկը՝ Նազիկը—տասներեք-տասնչորս տարեկան, անբարաց, աշխույժ, թրվռուն մի աղջիկ, որին գյուղացիք Վերջին ժամ մականունն էին տվել։ Նա որբ էր։ Մայրը վախճանվել էր վաղուց, հայրն էլ բանակ էր գնացել, որից ոչ մի լուր չկար։

Որբ մնալուց հետո Նազիկին նշանակել էին խրճիթվար։ Ամբողջ օրով նա խրճիթ-ընթերցարանից դուրս չէր գալիս։ Ականջը ռադիոբարձրախոսին դրած լսում էր բոլոր հաղորդումներն ու իսկույն հայտնում կոլտնտեսականներին կարևոր լուրերը, որի համար էլ այդ մականունն էր ստացել։

Այդ օրն էլ, առավոտը շուտ, խրճիթ-ընթերցարան գնալիս, դռան առաջ տեսնելով Գուրգենի մորը, ուրախ բացականչեց.

— Բարիլույս, Սանամ բիբի, էդ ի՞նչ շուտ ես վեր կացել էսօր,

— Ինչ վերկենալ, իսկի քնե՞լ եմ որ։

— Ինչու։

— Ո՞նց թե ինչու, բա չե՞ս իմանում, որ Գուրգենը եկել է։

— Ո՞ր Գուրգենը,— զարմացած հարցրեց աղջիկը։

— Էլ ո՛ր Գուրգենը, մեր Գուրգենը։

— Վայ, բա էդ ո՞նց է, որ ես հալա չեմ իմացել,— ասաց Նազիկն ու շտապ հեռացավ։

Քիչ հետո լուրը տարածվեց ամբողջ գյուղում։ Բոլորն էլ իմացան, որ Սաթինանց Գուրգենը վերադարձել է։

Առաջինը հեռնե վազեց Գուրգենի ընկերներից մեկը՝ Եղիշեն։ Նա Գուրգենից թեև մի քանի տարով փոքր էր, բայց մանկուց միասին էին եղել, միասին հաճախել դպրոց, միասին սկսել աշխատանքի։ Մինչև պատերազմի սկսվելը չէր լինի մի օր, որ նրանք չհանդիպեին, չէր լինի մի օր, որ միասին չճաշեին, միասին չծրագրեին օրվա աշխատանքը։ Այնքան մտերիմ էին նրանք ու այնքան համերաշխ, որ գյուղում ասում էին.

— Գուրգենն ու Եղիշեն տարբեր ծառերից ընկած միևնույն պտուղն են...

Եվ ահա, իմանալով, որ Գուրգենը եկել է, Եղիշեն էլ չիմացավ, թե ինչպես իրեն գցեց նրանց տուն։

Դռան մոտ Սանամ բիբին դուրս եկավ նրան ընդառաջ։

— Եղիշ ջան, աչքդ սիրեմ, պառկած է, սաղ գիշերը չի քնել։

— Ճանապարհս մի կտրի, Սանամ բիբի, թե չէ հում-հում կուտեմ,— կիսակատակ, կիսապառնալի ասաց նա, ճարպկորեն բռնեց համբուրեց պառավի երկու այտն էլ և իսկույն էլի բաց թողնելով նրան՝ ներս մտավ։

Գուրգենը վերմակն ամբողջովին քաշել էր գլխին, դեմքը ծածկել, միայն ոտներն էին երևում։ Եղիշեն մի շարժումով նրա վրայից դեն շպրտեց վերմակը, ուզեց գրկել նրան հենց պառկած տեղը, բայց երբ Գուրգենը բացեց աչքերը, նայեց ընկերոջը, նա այլայլվեց, կանգ առավ։ Տեսնելով Գուրգենի կտրած թևը, Եղիշեյի մարմնով սաստիկ մի սարսուռ անցավ։ Նա ուզեց ինչ-որ բան ասել, բայց լեզուն չշարժվեց։

— Հը, ի՞նչ ես նայում, չէ՞ր սպասում,— նրան կանխեց Գուրգենը։

— Գուրգեն ջան,—հազիվ բացականչեց Եղիշեն, կռացավ, զգուշությամբ ձեռքը տարավ նրա պարանոցով, շրթունքները հպվեցին…

Էլ ուրիշ բան չասաց. շրջվեց, ձեռքով սրբեց արցունքները, նայեց Գուրգենին։ Նա սաստիկ գունատ էր, նիհարած։ Անքնությունի՞ց, արդյոք, թե՞ ամբողջ գիշերը վերմակի տակ մենակ վշտանալուց աչքերի տակը թեթևակի ուռել էր, կապտել։

Դրսում ձայներ լսվեցին։

— Ձեր Արաքսյան ու Արեհատն են,—իսկույն ասաց Եղիշեն և ավելացրեց,—գիտե՞ս, որ կոլխոզի նախագահը հիմա Արաքսյա է։

— Արա՞քսյան է։ Բա Երվա՞նդը։

— Երվանդը քեզնից երեք օր հետո է գնացել բանակ։

— Էդ ի՞նչ է, գիշերով գողգողունի ես եկել, որ տունդ հյուր չգա՞,—ներս մտնելով ասաց Արաքսյան և չսպասելով իր հարցի պատասխանին, մոտեցավ Գուրգենին, գրկվեց հետը։

— Արեհատ, դու էլ համբուրվիր, թույլ եմ տալիս, մի ամաչի՛ր,—Արաքսիայի հետ եկած աղջկան դիմելով ասաց Եղիշեն։

— Ո՞ւմնից պիտի ամաչեմ, քեզնի՞ց,—համարձակ պատասխանեց Արեհատը և մոտենալով Գուրգենին, սեղմեց ձեռքը։

Գուրգենի մայրը մի կողմ քաշված, լուռ նայում էր նրանց։ Արաքսյան դիմեց նրան։

— Տեսա՞ր, Սանամ բիբի, հենց ասում էիր, թե մինուճարդ կորավ, լաց էիր լինում։

— Հա, Արաքս ջան, բարով-խերով Երվանդն էլ գա, մեղք ես, օր-ջահելուց…

Սանամ բիբին խոսքը չավարտեց. նա տեսավ Արաքսյայի դեմքին առաջացած փոփոխությունը և լռեց։

Մինչդեռ նրանք խոսում էին, Գուրգենը վեր կացավ, հագնվեց, ուզեց գնալ լվացվելու, բայց դուռը ճռռաց, ներս մտավ նրանց հարևանը—Եփրեմ բիձան՝ մի ձեռքին իր

անբաժան փայտը բռնած, մյուս ձեռքով երկար բեխերի մի մասը ոլորելով:

— Սանամ հարսան, էս գիշեր երազիս հենց Գուրգենին եմ տեսել, ճշմարիտ,— դեռ ներս չմտած, հենց շեմքից սկըսեց նա,— տեսել եմ, որ Գուրգենը...

— Տեսել ես, որ Գուրգենը կռվից վերադարձել է, Սանամ հարսանն ուրախությունից համ լաց է լինում, համ էլ ծիծաղում,— իսկույն ընդհատեց նրան Եղիշեն,— հետո բերում է արաղի շուշը, բաժակը տալիս է քո ձեռքը, ինքը լցնում է, դու խմում ես, դու խմում ես, ինքը լցնում է...

Եղիշեյի կատակը չազդեց ծերունու վրա: Նա առհասարակ բարի ու անհիշաչար մարդ էր: Սիրում էր կատակներ անել, չէր նեղանում, երբ ուրիշներն էլ իր հետ էին կատակում: Այդտեղ էլ Եղիշեյի կատակից նա չնեղացավ:

— Երազումս տեսել եմ, ճշմարիտ,— մի քանի քայլ առաջ գալով շարունակեց նա և հանկարծ մի ցատկումով բռնեց Գուրգենին, իր երկար բեխերով ամբողջովին ծածկեց նրա դեմքը, սկսեց չմփչմփացնելով համբուրել:

Այդ ժամանակ իրար ետևից, հասակի կարգով, մեկ առ մեկ ներս մտան նրա աղջիկները—Հայկուշը, Մանուշը, Անուշը:

— Դե հերիք է, հերիք է, Եփրեմ բիձա, սենյակումն էլ տեղ չմնաց,— աղջիկները ներս մտնելիս ասաց Եղիշեն,— թող մնացածներն էլ էգուց գան:

Եփրեմ բիձան ետ շրջվեց, նայեց աղջիկներին, ստուգեց, թե ով էր ներս մտել, ով էր բացակայում և գոհունակությամբ ասաց.

— Չէ, թող Հերիքն էլ գա, Հերիքը, ճշմարիտ:

— Ախր Գուրգենը մինչև սրանց բոլորի հետ մեկ առ մեկ բարևի, օրը կանցնի:

— Անտեղի ասած խոսքից նեխած ձվի հոտ կգա, ճշմարիտ,— մի պահ լուռ, խստահայաց նայելով Եղիշեյին, ասաց Եփրեմ բիձան:

Այնուհետև խոսակցության նյութը փոխվեց: Գուրգենը

հարցրեց գյուղի մասին, հետաքրքրվեց, թե իրենց կռ խողից ովքեր են կռիվ գնացել, ովքեր են մնացել, ապա ինքը պատմեց մարտերից։

— Իսկ հիմա վեր կացեք գնանք կոլխոզի գրասենյակը՝ թե չէ քիչ հետո ամբողջ գյուղը կհավաքվի էստեղ,—վերջում ասաց Արաքսյանի Գուրգենի մայրը խնդրեց, որ որդուն հետները չտանեն, թողնեն, որ նա մի բան ուտի, չէ որ դեռ երեկվանից ոչինչ չէր կերել։

— Ոչինչ, Սանամ բիբի, դու ամեն ինչ պատրաստիր, քիչ հետո մենք Գուրգենի հետ կվերադառնանք, միասին կուտենք,—խսկույն ասաց Եղիշեն և նրանք տնից դուրս եկան։

Արևն արդեն բարձրացել էր բավականին, կանգնել գյուղի գլխավերևը։ Տների տանիքներին, պատերի պռունկներին իջած ձյունն արևի ճառագայթներից հուրհուրում էր մարգարտե հատիկների պես, շլացնում նայողին։

Ընդհանուր անդորրի մեջ միայն չալպուտուրիկ կաչաղակների ձայնն էր ավել․ գիլ հնչում։ Նրանք հնամյա, ճղնատարած ընկուզենիների վրա կչկչալով մի տեղից մի այլ տեղ էին ցատկում, ցած մաղում ճղների վրա նստած ձյունը, լցնում ծառատակերին քուջուջ անող ծանրաշարժ հավերի, կարմրակատար աքաղաղների վրա։

Գուրգենենց տնից դուրս գալուց հետ, փողոցում, Եփրեմ բիձան երկար մահակը դեմ տալով, գնում էր առջևից։ Նրան հետևում էին Արևհատն ու Արաքսյանը։ Եղիշեն, Գուրգենը և Եփրեմ բիձա ի աղջիկները գնում էին կողք-կողքի։ Բոլորն էլ լուռ էին ու մտազբաղ, գլխահակ ու ինքնամփոփ—ուխտավորների պես։

Բրուտ Նահապետենց տնից մի քիչ ցածրանալուց հետո, խաչաձև հատվող երկու փողոցների անկյունում, հանկարծ մեկն արագ անցավ նրանց առջևից, թաքնվեց ցանկապատի ետևում։

Անթիկն էր – Գուրգենի կինը։ Ամուսնու վերադառնալու լուրն առնելով, նրան տեսնելո՞ւ էր գնում, արդյոք, թե՞

սպասում էր այդտեղ միայն հեռվից մոտիկ տալու համար։

Այդ ոչ ոք չիմացավ։

3.

Փաշոնենց Աթանը կոլխոզի վարչության գրասենյակում գլուխը համրիչի վրա հակած, տխուր միտք էր անում։ Այդ պահին նրա միտքն զբաղեցնողը թվերը չէին, ոչ էլ կոլխոզի առանձին հաշիվները։ Լսելով, որ կռվից վերադարձել է Գուրգեն Սարբինյանը—իր կնոջ նախկին ամուսինը, մտածում էր, թե այժմ ինչ պետք է անի ինքը։

Դեռ այն ժամանակ, երբ ինքն ամուսնանալու առաջարկություն արեց Անթիկին, նա ասաց.

— Իսկ եթե Գուրգենը վերադառնա…

— Այդ ջհեղեղից Ադամն էլ չէր կարող վերադառնալ,— պատասխանեց Աթանը,—դու հույսդ կտրիր նրանից։

Իսկ այժմ վերադարձել է նա և հավանական է, որ հեշտությամբ ձեռք չի քաշի Անթիկից…

Մտքերը ճնշում էին Աթանի սիրտը, ուղեղը մթագնում էր և այդ դրությունից դուրս գալու ոչ մի ելք չէր գտնում նա։

Կոլխոզի հաշվետարն այդ մտքերով էր տարվել, երբ դուռը բացվեց, մտավ կոլխոզի անասնաբույժ Վազգեն Դարբինյանը գեղեցկադեմ, առույգ մի երիտասարդ։

Դարբինյանը նոր մարդ էր Կաթնաձորում։ Նրան շրջանային հողբաժնից մի քանի ամիս առաջ էին ուղարկել այդտեղ աշխատելու։ Կարճ ժամանակում նա արդեն ծանոթացել էր գյուղի պայմաններին, մարդկանց, ցույց էր տվել իրեն և շնորհիվ անձնուրաց, նվիրված աշխատանքի, սիրվել էր շատերից։

Անասնաբույժը ներս մտնելիս հաշվետարը գլուխն անգամ չբարձրացրեց նրան նայելու։

— Էդ ինչ է պարտքերդ ես հաշվո՞ւմ, թե՞ դարդերդ։

— Ավելի լավ է մարդ շատ պարտք ունենա, քան թե դարդ,—մտամոլոր պատասխանեց Աթանը,—պարտքի տակից հեշտ է դուրս գալը, իսկ դարդի տակից…

— Ի՞նչ կարիք կա դարդի տակից դուրս գալու․ անխելք մարդիկ են առանց դարդի լինում։

— Լավ էր անխելք լինեի, քան թե էսպես դարդ ունենայի։

— Քո դարդը հենց անխելքության հետևանք է, խելք ունենայիր, հիմա չէիր ամուսնանա։

Աթանը բարձրացրեց գլուխը, ակնապիշ նայեց Դարբինյանին։

— Իսկ դու ի՞նչ իմացար, որ ես էդ մասին էի մտածում։

— Ամբողջ գյուղը հիմա էդ մասին է խոսում։

Հաշվետարը մի պահ մռայլ հայացքով նայեց Դարբինյանին, հետո մի շարժումով իրենից գեն հրեց հաշվիչը, լուռ ոտքի կանգնեց, մոտեցավ պատուհանին։

Լեռնալանջի ձյունը սկսել էր հալչել։ Ձնաջուրը կչկչալով թափվում էր ժեռ քարերի վրայից, միանում, վտակներ կազմում, հոսում դեպի պղտոր գետը։

Կաթնաձորցիները թիերն առած կտուրներից ցած էին թափում ձյունը, մաքրում բակերը, ճանապարհ բաց անում դեպի փողոց։ Այդ պահին վարարած գետի ընդհանուր խըշշոցին միացել էր մարդկանց ձայնը, մանուկների կանչը, բարձրաձայն կարգադրությունները։

Կոլխոզի վարչության գրասենյակի դուռն անընդհատ ճռռոցով բացվում էր, մարդիկ մեկ առ մեկ հավաքվում էին այնտեղ։ Սակայն Աթանը կարծես թե դրանցից ոչ ոքի չէր տեսնում, չէր պատասխանում նրանց բարևին։ Նա ամբողջովին տարվել էր իր ծանր խոհերով։

Քիչ հետո եկան նաև Արաքսյան, Եփրեմ բիձան, Գուրգենը, Եղիշեն։ Կոլխոզնիկներն իսկույն մոտեցան Գուրգենին, ոմանք գրկեցին, համբուրեցին նրան, ոմանք խանդաղատանքով սեղմեցին ձեռքը։

— Սա մեր նոր անասնաբույժն է, Գուրգեն, ծանոթացիր,— Դարբինյանին ցույց տալով ասաց Արաքսյան։

Գուրգենը ձեռք տվեց նրան, ապա անցավ մյուսներին, մեկ առ մեկ բարևեց բոլորին։ Երբ հասել էր պատուհանի

մոտ լուռ կանգնած Աթանին, նա ինքնաբերաբար ձեռքը մեկնեց նաև նրան, բայց հանկարծ բարձրացրեց գլուխը, նայեց դեմքին, կանգ առավ։ Աթանը, որ մինչև այդ ձեռքը կիսով չափ արդեն մեկնել էր, տեսնելով Գուրգենի դեմքի հանկարծակի փոփոխությունը, ետ տարավ ձեռքը, շփոթվեց, մնաց կանգնած։

Կոլխոզնիկներն ուշադրությամբ նայում էին նրանց, հետևում նրանց լարված հայացքներին։ Գուրգենն այդտեղ մեկ էլ խստահայաց նայեց հաշվետարին և կտրուկ ետ շրջվեց։

Աթանը ցնցվեց. նրա սիրտը կարծես թե սուր դանակով խոցեցին։ Նա գունատվեց, մռայլվեց, բայց ոչինչ չկարողացավ անել։ Նրա դեմքի փոփոխությունը շատերը նկատեցին, շատերը կարդացին նրա հոգեկան ապրումները։ Սակայն քիչ հետո կարծես թե բոլորն էլ մոռացան նրան, շրջապատեցին Գուրգենին, զանազան հարցեր տեղացին գլխին և ոչ ոք չիմացավ, թե գրասենյակից երբ դուրս եկավ Աթանն ու բռնեց տան ճամփան։

Ճանապարհին անասնաբույժը հասավ նրան։

— Հը, կարծես թե մենամարտն սկսվեց,—ձեռքն Աթանի թևատակը տանելով ասաց նա։ Աթանը հասկացավ, թե ինչ էր ակնարկում Դարբինյանը, բայց չպատասխանեց նրան։ Որոշ տեղ լուռ քայլելուց հետո նա անասնաբույժին ասաց.

— Գնանք տուն, տրամադրությունս լավ չի, մի քիչ գինի կխմենք,—և ավելացրեց,—բայց Անթիկին ոչինչ չասես։

— Մի վախեցիր, որ Անթիկը մտիկ տա դեմքիդ, առանց իմ ասելու էլ իմանալու է, որ դարդերդ շատ են։

Երբ ներս մտան, Անթիկը մի անկյունում կանգնած, լաց էր լինում։ Նա ամուսնուն ու Դարբինյանին տեսնելուն պես գոգնոցով սրբեց աչքերի արտասուքն ու դուրս գնաց։

— Ինչպես երևում է սրա տրամադրությունն իմից վատ է,—կնոջ գնալուց հետո ասաց Աթանը,—դու մի քանի րոպե նստիր, գինին ես ինքս կբերեմ։

Դարբինյանը առաջին անգամն էր լինում հաշվետարի

տանը։ Մինչև այդ Աթանը մի քանի անգամ հրավիրել էր նրան, ցանկացել էր խոսել հետը, բայց Դարբինյանը միշտ հրաժարվել էր։ Հաշվետարի անախորժ արտաքինը, նրա մութ լռությունը, լռակյացությունը, հենց սկզբից էլ դուր չէին եկել անասնաբույժին։ Նա երբեք չէր կարծում, որ կարող էր երբևէ մտերմանալ կասկածամիտ, ամենքից ու ամեն ինչից դժգոհ այդ մարդու հետ, սեղան նստել, բաժակ բաժակի տալ նրա հետ։ Աթանի դուրս գնալուց հետո Դարբինյանը մեկ ուզեց վեր կենալ, հեռանալ նրա տնից, բայց մեկ էլ անհարմար զգաց. որոշեց, որ քանի եկել է, պետք է նստի։ Սակայն նա միաժամանակ որոշեց զգույշ լինել, թույլ չտալ ավելորդ խոսք, սրտաբացություն, այլապես, գիտեր, որ հաջորդ օրը ամեն ինչ պետք է հայտնի դառնար ամբողջ գյուղում։

Նրա այդ մտորումների ժամանակ ետ եկավ Աթանը՝ կավե մի խոր անոթ լիքը գինի, սոխ, պանիր ու հաց բերելով։

— Աշխարհի դարդը միայն գինին կտանի, Վազգեն ջան, վերցրու բաժակդ։

Դարբինյանը վերցրեց բաժակը, խփեց Աթանի բաժակին, խմեց։

— Եթե իմանայի, որ նա կարող է վերադառնալ, սկի մտքովս էլ չէի անցկացնի նրա կնոջ երեսին մտիկ տալ,— երկրորդ բաժակը դատարկելուց հետո ասաց Աթանը,— ինչ հորս ցավին էի տվել, քի՞չ կին կար, կգնայի, մի ուրիշի հետ կամուսնանայի։

— Եթե սիրածի փոխարեն մի ուրիշին ուզելն այդքան հեշտ լիներ, աշխարհում ոչ Լեյլի—Մեջնուն կլիներ, ոչ Աշուղ—Ղարիբ։ Ցավն էլ այն է, որ մարդ հաճախ զգում է իր արարքի վատ հետևանքը, բայց այնուամենայնիվ էլի չի կարողանում հրաժարվել իր վճռից։

— Ես կարող էի, Վազգեն ջան, կարող էի։ Ախր ոչ ես էի Անթիկի համար Մեջնուն դառել, ոչ էլ նա էր ինձ համար Լեյլի դառել։

— Ինչ եղել է, եղել է, դու ասա վերջը բարի լինի,— ասաց Դարբինյանը, բարձրացրեց բաժակն Աթանի կենացը, խմեց մինչև վերջ և զգաց, որ գլուխն արդեն պտտվում է, աչքերը մշուշապատվում են։

— Եվ, առհասարակ, ինձնից քեզ խրատ, Վազգեն ջան, ինչքան հեռու լինես կնոջից, էնքան հոգիդ հանգիստ կլինի։

— Ինձ խրատելու ժամանակն արդեն անցել է, Աթան, վախենում եմ, որ իմ ջրերն էլ քո ջրերի առվով գնան։

— Այսինքն ինչպե՞ս,— զարմացած հարցրեց հաշվետարը։

— Էհ, ինչ ասեմ, սկի ասելու բան չի։

— Զէ, որ սկսել ես, պիտի ասես։

Դարբինյանը փորձեց հրաժարվել, բայց Աթանը ստիպեց նրան։

— Բա ընկերներ չե՞նք, ինձ էլ չե՞ս վստահում։

Ու Դարբինյանը պատմեց, որ սիրահարվել է Արաքսյային, կ րցրել է քունը, հանգստությունը, ոչ աշխատել է կարողանում, ոչ մտածել։

— Լավ, էդ երբվանի՞ց։

— Հենց այստեղ գալու առաջին օրվանից։

— Իսկ իրա հետ խոսե՞լ ես էդ մասին։

— Ոչ մի անգամ։

Աթանը լցրեց բաժակները, ուզեց ինչ որ բան ասել, բայց Դարբինյանը ոտքի կանգնեց։

— Բավական է, էլ չեմ խմու՛,— ասաց նա, արագ հագավ վերարկուն, անից դուրս եկավ

Արեն անցել էր ամպերի ետևը։ Դեռ հեռվից եկող թանձր մշուշը հարձակվում էր գյուղի վրա։ Անասնաբույժը մի պահ կանգ առավ փողոցում, մեկ ուզեց գնալ ֆերմաները, որ գտնվում էին գյուղից քիչ բարձր, մեկ էլ մտափոխվեց, գնաց տուն։ Նա սովոր չէր շատ խմելու։ Մի քանի բաժակ գինին արդեն ազդել էր նրա վրա։ Գլուխը պտտվում էր։ Երբ Դարբինյանը բաց արավ սենյակի դուռը, պառկեց թախտի վրա, նրան թվաց, թե թախտը շուռ եկավ. սկսեց

կարուսելի պես պտտվել անվերջ։ Այդպես տևեց ահագին ժամանակ, մինչև որ նա քնեց։ Իսկ երբ արթնացավ, համատարած մութն արդեն պատել էր ամբողջ գյուղը։

Արթնանալուց հետո Դարբինյանն էլ վեր չկացավ անկողնից։ Սկսեց շուռ ու մուռ գալ տեղում, վերմակը քաշեց գլխին, աչքերը փակեց, բայց քունն արդեն փախել էր նրա աչքերից։ Մտաբերեց Աթանի հետ խոսածը, զղջաց, որ արդեն սիրտը բաց էր արել հաշվետարի հետ։

Աթանը գաղտնապահ մարդ չէր, դրանում համոզված էր Դարբինյանը և նա զգաց, որ շուտով ամեն ինչ հայտնի կլինի ամբողջ գյուղում։ Նա սկսեց մեղադրել իրեն, երդվեց, որ այլևս չի խմի, ամեն մարդու հետ չի խոսի իր ապրումների մասին։ Նա զգաց, որ լուրն Արաքսյային էլ կհասնի, մի բան, որ ինքը դեռևս չէր ցանկանա։ Եվ ապա մտքում փորձեց արդարանալ։

— Ախր մինչև ե՞րբ կարող էի սրտումս պահել, ում սերն է գաղտնի մնացել, որ իմն էլ մնա։ Բարկանա, կասեմ մեղավոր ե՞մ, դատապարտիր, եթե անկեղծ սիրելու համար մարդու դատապարտում են...

Այնուհետև իր ամբողջ հասակով մեկ պատկերացավ նրան Արաքսյան—առույգ ու ժիր, մերթ քրոջ պես բարի ու գթառատ, մերթ մռայլ ու ցասկոտ։ Նա պատկերացրեց, որ արդեն ամուսնացել է, շարունակ միասին են լինում, միասին տնից դուրս գալիս, գործի գնում...

Հաճելի երևակայությունից Դարբինյանի սիրտը թըրթռում էր, մարմինը տաքանում, թեև դրսի բքախառն քամին թղթապատ պատուհանի ու հնամաշ դռան ճեղքերից ներս էր բերում ձնափոշին, լցնում սենյակը։

Կես գիշերին ցուրտն ավելի խստացավ։ Դարբինյանի մարմինը հետզհետե ավելի սաստկությամբ սկսեց սառել։ Տեսնելով, որ բարդ մտորումներն ու ցուրտը չպիտի թույլ տան իրեն քնելու, նա վերկացավ, դեռ մի քանի օր առաջ բերած փայտը լցրեց թիթեղյա վառարանի մեջ, պատից կախած ճրագի նավթից մի քանի կաթիլ լցրեց փայտի վրա, լուց-

կին վառեց: Նավթը բռնկեց, վառարանի մեջ դարսված փայտերը չրթչրթալով վառվեցին: Քիչ հետո սենյակը լցվեց դուրալի ջերմությամբ: Նա թախտի վրայից վերցրեց վերմակը, գցեց ուսերին, նստեց վառարանի մոտ դրած աթոռին: Տաք վառարանն ու մտորումները կրկին թմրեցրին նրան: Նա ննջեց, կոպերն ինքնաբերաբար իջան իրար վրա, թեպետ միտքը տակավին արթուն էր:

... Ահա գարուն է, սիզավետ, արևով լի գարուն: Վարդերը բացվել են, ծաղկաբուրմունքը լցվել է ամենուր: Նրանք—Դարբինյանն ու Արաքսյան, քայլը գլուցելով անցնում են մարգագետինների, ծաղիկների ու թավիշ խոտերի միջով, մի պահ նրանք քայլում են թևանցուկ, կողք—կողքի, հետո, հանկարծ, Արաքսյան իր թևն անջատում է նրանից, առաջ ընկնում: Գարնան ոսկեփայլ արևի շողերը հուրհուրում են նրա թաց ուսերի վրա և բարձր ջրվեժից թափվող ջրի ցոլքերի պես անվերջ հոսում, վտակներ կազմում, կարկաչելով հեռանում: Մեղմ զեփյուռը բարձրացնում է նրա ծաղկավոր չթե շորը, Արաքսյան թևավորվում է, ճերմակ աղավնու պես թափահարում թևերը, ճախրում օդի մեջ:

Դարբինյանը կանաչ խոտերի մեջ վազում է նրա ետևից, ուզում է հասնել, բայց չի կարողանում: Նա մերթ վայր է ընկնում, գլորվում, մերթ ոտքի է կանգնում, շնչահեղձ ձայն տալիս, կանչում, իսկ Արաքսյան չի լսում: Այդ ժամանակ նա մեկ էլ տեսնում է, որ իր ճանապարհին մեկնվել է հսկա մի սև օձ, աչքերն առաջ հառած, երախը բաց և հարձակման է պատրաստվում: Վազգենը ճիգ է անում, ուզում է կանչել Արաքսյային , բայց ձայնը դուրս չի գալիս: Այդ ժամանակ օձը ցատկում է Վազգենի վրա, իր սուր ատամները խրում նրա ճակատը: Այդտեղ միայն, սաստիկ ցավից, Դարբինյանը բարձր ճչում է...

... Իր ձայնից վեր ցատկեց Դարբինյանը, բացեց աչքերը: Վերմակն ուսերին գցած, ննջած ժամանակ, նա կռացել էր և ճակատը կպել էր վառարանի շիկացած խողովակին:

Դրանից հետո Դարբինյանն էլ չկարողացավ քնել։ Վեր կացավ, վիրմակն անփութորեն գցեց թախտին, վերցրեց մի գիրք, բաց արեց առաջին էջը.

«Աստված տեսնելով Ադամի մենակությունը, խոսեց ինքն իր հետ,— Եկեք ստեղծենք Ադամի համար մի քնքուշ ընկեր, որ մարդը միայնակ չվայելե դրախտի հրապույրները։

Եվ բանեց դեպի վեր սուրացող կրակը, և նրա բեկբեկուն, ճախրուն բոցերից ստեղծեց անդրանիկ նոջը՝ Լիլիթին։ Եվ նայելով իր ստեղծածի վրա, հիացած ասաց.— Բարի է, որովհետև գեղեցիկ է»...

Այդ ժամանակ բարձրաբերձ սարերից ցած, լայն հարթավայրերի վրա, շառագունում էր արևելքը...

4.

Առավոտից սկսած բքախառն ձյունը արդեն դադարել էր։ Երկինքը թեև ամպամած էր, բայց ոչ մի նշան չկար, որ ձյունը կարող է շարունակվել։ Խոնավությամբ լի բնության անդորրն այդ պահին խանգարում էր միայն գետի անսովոր ուժգին վշշոցը։ Ջրերի միալար վշշոցին խառնվում էր նաև հեռվից եկող կանացի մեղմիկ երգի ձայնը.

Ես քեզ տեսա, սիրտս եղավ ցիր ու ցան,
Յար արի, յար արի, ա՜խ, արի, արի,
Վա՜խ արի, արի,
Ես քեզ ինչ արի...

Արաքսյան էր։ Վերջերս նա ավելի թախծոտ էր դառնել, քիչ էր խոսում, խուսափում էր մարդկանցից, առանձնանում էր, մեն-մենակ նստում տխուր ու լաց լինում, մի բան, որ արդեն շատերի համար էր նկատելի դառել։ Առաջ ոչ ոք այդպես չէր տեսել Արաքսյային։ Նա հաստատակամ էր ու խիզախ, վճռական էր ու ձեռներեց։ Դրա համար էլ երբ նրա ամուսինը—կոլխոզի նախագահ Երվանդ Սաղյանը գնաց բանակ, բոլոր կոլխոզնիկները միաձայն

որոշեցին, որ միայն Արաքսյան կարող է փոխարինել կոլխոզի նախագահին։

Պատերազմի առաջին օրերը կոլխոզից շատերը գնացին բանակ, բայց աշխատանքները չտապալվեցին։ Կարճ ժամանակում նոր նախագահն այնպես վերակառուցեց աշխատանքները, այնքան ճիշտ դասավորեց մարդկանց—նոր բրիգադիրներին ու օղակավարներին, ֆերմաների վարիչներին, որ կարծես թե այդ մարդիկ տարիներ շարունակ ընտելացած լինեին իրենց աշխատանքներին։

Գործը գնում էր հարթ ու անվթար։ Նախագահը շարունակ լինում էր աշխատանքի տեղում—դաշտերում, ֆերմաներում, կոլխոզնիկների, բրիգադիրների մոտ, զրուցում էր նրանց հետ, ցուցմունքներ տալիս, ոգևորում։ Սակայն վերջին օրերը նա ինչ-որ արտասովոր կերպով թախծոտ էր դառել, քիչ էր խոսում մարդկանց հետ, էլ չկային նրա նախկին կատակները, քիչ էր լինում դաշտերում, կոլխոզնիկների մոտ։

Այդ օրը, կեսօրից հետո, նա դարձյալ տնից դուրս չեկավ։ Հայելու մոտ մազերը սանրելիս աչքն ընկավ շրջանակի մեջ դրած ամուսնու փոքրիկ լուսանկարին, վերցրեց, երկար նայեց նրան և հանկարծ, ինքնաբերաբար, արցունքներն սկսեցին գլորվել աչքերից։

Մայրը Թոնրատանը նոր տարու գիշերվա համար պատրաստություն էր տեսնում։ Նա ձեռներն ալրոտ ներս մտնելիս Արաքսյան նստել էր մահճակալի վրա և լուռ մղկտում էր։

— Է՞լի,—մի պահ լուռ, խստահայաց աղջկան նայելով ասաց մայրը։

— Ի՞նչ եմ անում որ։

— Էլ ի՞նչ պիտի անես, դարդիս մեկը հազար ես անում։

— Դու քո բանին կաց, ինձ հետ գործ չունենաս։

— Իմ բանը ծռն է, քո բանը ծռը։

— Իմ բանն էն է, որ տխրելիս տխրում եմ, աշխատան-

քից էլ ես չեմ մնում։ Քեզ նման ամբողջ օրը արցունք չեմ թափում։

Մայրը մի պահ չիմացավ ինչ պատասխանել աղջկան, ուզեց դուրս գնալ, բայց մեկ էլ ետ շրջվեց, ասաց.

— Դու հալա շատ ես ջահել, որ իմ հասակին հասնես, էդպես չես խոսի։

— Հասակն էստեղ ոչ մի կապ չունի։

— Ունի, մեծ կապ ունի,—լրջորեն ասաց մայրը,—հասակն իր հետ բերում է հոգս, դարդ, դարդն էլ՝ արցունքներ։

— Հոգսը կայծակի պես բան է, մայրիկ, որտեղ վրա հասավ, էն տեղ էլ կպանի. ուզում ես ջահել եղիր, ուզում ես՝ ահել։

— Սխալվում ես, որդիս, հոգսը ծնվում է մարդու հետ. ինչքան մեծանում է մարդ, էնքան էլ ավելանում է հոգսը, քեզ օրինակ...

Մայրը չավարտեց խոսքը։ Մի հաստ թղթապանակ թևի տակ՝ ներս մտավ հայրը—Սանթուր քեռին, հասակն առած, բայց տակավին առույգ, կայտառ մի մարդ։ Նա թևատակի թղթապանակն անփութորեն գցեց սեղանին, նախ նայեց աղջկան՝ Արաքսյային, ապա կնոջը՝ Մարիամին և հետո ասաց.

— Հը, Մարիամ խանում, խոսքդ կարծեմ կիսատ մնաց։

— Կիսատ մնա կյանքդ։

— Ամեն,—իսկույն վրա բերեց ամուսինը—չթողնելով, որ կինը շարունակի։ Նա գիտեր կնոջ բնավորությունը, գիտեր, որ նա իր սերն էլ, սրտի դառնությունն էլ արտահայտում է միատեսակ—կշտամբանքով ու բարկությամբ։ Սակայն ամուսինը չէր վշտանում դրանից։ Տարիներ շարունակ նա ընտելացել էր այդ խոսքերին և գիտեր, թե կինն ամեն անգամ միևնույն բառով ինչ տրամադրություն է արտահայտում։ Նման դեպքերում հարկավոր էր միայն նայել նրա աչքերին և ամուսինն այնտեղ կարդում էր այն բոլորը, ինչ կար կնոջ սրտում։

Եվ ահա այդ ժամանակ էլ. Սանթուր քեռին նախ մի հայացք ձգեց աղջկան, ապա կնոջը, իսկույն զգաց, որ նրանք երկուսն էլ մտախռով են, տխուր։

— Էլի ինչ է պատահել,— մի քիչ լուռ մնալուց հետո հարցրեց նա։

— Եթե աշխարհը խորտակվի, դու էլի կասես՝ բա՞ն է պատահել,— զայրալից ասաց կինն ու դուրս գնաց։

Սանթուր քեռու տարակուսանքն ավելացավ և նա դիմեց աղջկան.

— Արաքսյա խանում, սկի չասացիր, թե ինչ կա ախր։

— Ոչինչ էլ չկա,— անտարբերությամբ պատասխանեց Արաքսյան, ոտքի կանգնեց որ գնա, բայց հայրը կանգնեցրեց.

— Իսկ աչքերդ ինչու՞ են կարմրած։

— Օջախի մոտ էի, երևի ծխից է,— պատասխանեց Արաքսյան, կախարանից վերցրեց վերարկուն, հագավ և շեմքում միայն, դուրս գալիս, ասաց.

— Գնում եմ դրասենյակ, քիչ հետո կգամ։

— Զուշանաս։ Ինչպես արա, որ էս տարի վերադառնաս,— և իր միտքը բացատրելու համար ավելացրեց,— մինչև տարվա վերջը հազիվ երկու ժամ մնացած լինի։

Արաքսյան դուրս գնալուց հետո Սանթուր քեռին մտավ թոնրատուն։ Կինն այնտեղ խմոր էր հունցում։

— Մարիամ խանում, խոսքը մեր մեջ, ախր սկի չասացիր աղջկադ լացի պատճառը։

— Քի՞չ պատճառ կա։

— Դնենք թե կա, հենց դրա համար պետք է շարունակ լաց լինել, ամոթ չի՞, տեսնողն ինչ կասի։

— Եթե էդքանը հասկանում ես, բա ինքդ ինչու՞ էիր գնացել, կանգնել Զարահավուզի մոտ, պառավ կնկա նման լաց լինում։

Զարահավուզը գյուղի նոր աղբյուրն է. Նրա հիմքը դրել էր Երվանդ Սաղյանը, որ այն ժամանակ դեռ ամուրի էր։

Մեկ օր, իրիկնադեմին, Սանթուր քեռին աղբյուրի մոտից անցնելիս, միտն ընկավ, թե փեսան որքան էր ոգևորվել աղբյուրը կառուցելիս, ինչպես էր աշխատում գիշեր ու ցերեկ։ Այդտեղ, աղբյուրի մոտ կանգնած ժամանակ, Սանթուր քեռին մտաբերեց փեսային, որին սիրում էր հարազատ որդու պես, և հանկարծ արցունքի կաթիլները գլորվեցին նրա այտերի վրայից։

— Իսկ քեզ ո՞վ ասաց, թե ես Զարահավուղի մոտ լաց էի լինում,—զարմացած հարցրեց նա կնոջը, կարծելով, թե դա մի այնպիսի գաղտնիք է, որ իրենից բացի ուրիշ ոչ ոք չգիտե։

— Քեզ համար մեկ չի՞, թե ով ասաց,—անտարբերությամբ պատասխանեց կինը,—ծիտն ասաց։

— Օձը կծի ծտի լեզուն,—վրա բերեց ամուսինը,—բայց այնտեղ ախր ծիտ էլ չկար։ Կանգնել էի, հանկարծ միտս ընկավ, թե մի անգամ ինչպես էր Երվանդը նստել ավազանների մոտ, կոշիկները հանել, ոտները կախել ջրի մեջ և երկար ժամանակ չէր ուզում գնալ, մինչև որ ես մոտեցա, ասացի,—այ տղա, մութ է, վեր կաց գնա տուն։ Նա առանց ինձ մտիկ տալու ասաց, թե ավելի լավ է այդտեղ մնալ, խոսել քչքչան ջրերի հետ, քան թե տուն գնալ, մեն-մենակ փակվել չորս պատերի արանքում և մեկն էլ չլինի, որ հետը երկու խոսք խոսեւ

— Խեղճ բալա, որբ բալա,—վշտաբեկ մրմնջաց Մարիամ քեռակինը,—մեն-մենակ մեծացավ, իրա համար տուն դրավ, ընտանիք ստեղծեց, բայց չկարողացավ տեսնել ընտանիքի քաղցրությունը, գնաց կորավ…

— Ես էլ հենց էդ մասին էի մտածում և ինձ չկարողացա զսպել, սիրտս փուլ եկավ…

— Էլ մի հարցնի, թե Արաքսյան ինչու էր լաց լինում,—ասաց կինը,—տեսնո՞ւմ ես, դժվար է չէ՞։

— Նայած թե ում համար։

— Ամեն մարդ էլ մարդ է, սիրտ ունի։

— Բան ասացիր, եթե էդպես լինի, պետք է բոլորն էլ

բան ու գործ թողնեն և լաց լինեն, որովհետև հիմա մեզ նման հարյուր-հազարավորները կան։

— Կան, ոնց չկան։ Հենց մենակ մեր գյուղից քանի՞ մարդ գնաց։

— Էդ ես կարող եմ ասել․ բոլորը մեկ-մեկ գրել եմ։

Սանթուր քեռին թոնրատնից դուրս եկավ, գնաց սենյակ, վերցրեց իրենից անբաժան թղթապանակը և կրկին ետ եկավ։ Նա այնտեղ գրել էր, թե իրենց գյուղից քանի հոգի և երբ են գնացել բանակ։

— Հրես․ Վահան Ղուլյան, որսկան Ավոյի տղան․ գնաց օգոստոսի վեցին։ Հինգ ամիս է, լուր չկա։ Ավետարիս Ծատուրյան․ քոռ Ծաղիկի թոռը․ սպանվեց Կերչում։ Սմբատ Ղարիբյան, Նախրչունց Վաղարշակի տղան, պարգևատրվեց «Կարմիր Աստղ» շքանշանով։ Սահակ Գասպարյան․ Նանագյուլի տղան․ հարյուր տասնչորս Ֆրից է սպանել․ պարգևի մասին հալա լուր չկա։ Իմ կարծիքով սրան պետք է Լենինի շքանշան տալ։ Դու ի՞նչ ես կարծում, Մարիամ խանում։

— Ինչի՞ ես ինձ հարցնում․ ես շքանշան տվո՞ղ եմ․ գնա ընկեր Կալինինից հարցրու։

— Ընկեր Կալինինը բարի մարդ է, կաա, ոչ ոքի առանց շքանշանի չի թողնի։

— Ցուցակդ վերջացա՞վ,—անհամբերությամբ հարցրեց կինը, որ ուշադրությամբ լսում էր ամուսնու ընթերցանությունն ու բացատրությունները։

— Չէ, հալա կա․ Հրես․ Գուրգեն Սաթինյան․ մեր Սանամի տղան, աջ թևը թողեց Ռոստովի տակ և գյուղ վերադարձավ հազար իննըհարյուր քառասուն երկու․․․

Դրսից եկող երգի ձայնն ընդհատեց Սանթուր քեռուն։

Մի քիչ ժամանակ ինձ էլ լսեցեք․․․

Դարդս պատմեմ ձեզ, մեկ-մեկ լսեցեք,

Մարիամ քեռակինն ընդառաջ գնաց, բաց արավ թոնրատան դուռը։

— Գուրգեն, գեսը եկ, քեռիդ էստեղ է,—կանչեց նա։

Դրսի ցուրտն իր հետ ներս բերելով մտավ Գուրգենը։ Ցրտի՞ց, արդյո՞ք, թե՞ մի քանի բաժակ գինուց, նրա դեմքը կարմրել էր, աչքերը վառվում էին։ Երևում էր, որ տրամադրությունը բարձր է։

Գյուղ վերադառնալու առաջին օրերի թախիծն առհասարակ անցել էր նրա դեմքից։ Հարազատների շրջապատը, թե մի ուրիշ բան, վերացրել էին նրա մռայլությու՛նը։ Հաճախ լինում էր կոլխոզնիկների ընդհանուր ժողովներում, խոսում, վիճում, կատակում էր նրանց հետ։ Նույն ուրախ տոնով էլ նա, հենց շեմքում, առանց ներս գալու, շարունակեց երգը.

Աշխարհի բանը ոչ ոք չիմացավ,
Յարի դարդերը յարն էլ չիմացավ...

— Իմացո՞նք, Գուրգեն,— ուշադրությամբ նրան նայելով ասաց Սանթուր քեռին,— համեցիր, լավեղ տաք է։ Բայց, բաջօղլի, քեֆդ կարծես թե մի քիչ էնպես...

— Հոգուդ մեղք չանես, քեռի։ Էլ չեմ խմում։ Առաջին օրերը մի-երկու բաժակ խմեցի, դրանով ամեն ինչ վերջացավ։ Խմելու համար ընկեր է հարկավոր։ Ո՞ւմ հետ նստես, ում հետ խմես։

— Էհ, բալամ, մարդ դարդը մոռանալու համար մենակ էլ կխմի,— թախծալի ասաց Մարիամ քեռակինը։

— Թույլ մարդու մասին է խոսքդ, Մարիամ խանում,— վրա բերեց ամուսինը,— դարդը մոռանալու համար աշխատել է հարկավոր, այլ ոչ թե խմել։ Որքան խմես, էնքան կավելանան դարդերդ։

— Քեռուս ասածի տակ երկու ձեռքով կստորագրեմ,— ուրախ վրա բերեց Սաթինյանը, բայց հանկարծ մտաբերելով իր կորած թևը, ավելացրեց,— իսկապես, մոռանում եմ, քեռի։ Բայց ոչինչ, էդ մասին չեմ մտածում։ Ողջություն լինի, մի ձեռքով էլ կաշխատենք, ետ չենք մնա։

— Էհ, ուր է, երնեկ իմ Երվանդն էլ սաղ լիներ, թող առանց ձեռքի գար տուն,— ասաց Մարիամ քեռակինը, շրջվեց, գոգնոցի տուտը տարավ աչքերին։

Բարակ էր առհասարակ Մարիամ քեռակնոջ սիրտը՝ աշնան ցրտից դեղնած տերևի նման և բավական էր մեղմիկ մի քամի, որ պոկվեր այդ տերևը, հողմի բերնին քշվեր հեռուները…

Երվանդի լոկ անունը լսելիս փուլ էր գալիս պառավի սիրտը, անզուսպորեն հոսում էին արցունքները։ Նա հիշում էր փեսային, նրա կենսուրախ կատակները, նրա սիրալիր վերաբերմունքը, փաղաքշանքները դեպի իր կինը, նրա պատկառանքը դեպի աները, զոքանչը, և կարոտից սիրտը կիզվում էր…

Մարիամ քեռակինը երբեք տղա չէր ունեցել։ Նա միշտ էլ նախանձով էր նայում տղա ունեցող մայրերին։ Իսկ երբ Երվանդն ամուսնացավ Արաքսյայի հետ, եկավ նրանց տուն, պառավին թվաց, թե կատարվեց իր վաղեմի ցանկությունը, ունեցավ հարազատ, սիրելի զավակ։ Բայց այդ զավակն էլ երազի պես հեռացավ, պառավին թողնելով վշտի ու արցունքների մեջ տապակվելիս։

— Դե բավական է, այ կնիկ, բավական է,—կնոջ արցունքները տեսնելով ասաց ամուսինը։

— Ոչինչ, քեռի, թող լաց լինի, լացը մարդու սրտին հովություն է բերում։

— Տապակված սրտին սառույցն էլ չի օգնի…

Գուրգենը խոսք չգտավ քեռուն պատասխանելու։ Նրանք լռեցին։ Որոշ ժամանակ այդպես լուռ մնալուց հետո Գուրգենը հարցրեց.

— Լավ, քեռի, բա ասում են, թե սեքարեցի Համբարձումը նրան տեսել է։

— Ի՞նչ իմանաս, այ մարդ։ Սեքարեցի Համբարձումը աշխարհի ամենամեծ ստախոսներից մեկն է։ Ասում է, թե Երվանդի հետ եղել է միևնույն վաշտում և նրանից բաժանվել է…

Սանթուր քեռին կանգ առավ, նայեց կնոջը, աչքով արավ Գուրգենին և նրանք թոնրատանից դուրս եկան։ Սենյակ մտնելուց հետո նա շարունակեց խոսքը։

— Էդ քեռակնոջդ հետ խոսելը կրակ է։ Բերանդ բաց ես անում թե չէ, սկսում է լացը։ Հա, սեքարեցի Համբարձումն ասում է, թե Երվանդից վերջին անգամ բաժանվել է ահա էստեղ...

Սանթուր քեռին մոտեցավ պատից կախած քարտեզին, մատը դրավ Թերակղզիներից մեկի վրա։

— Իսկ էստեղ էլ, գիտես, թե ինչպիսի կռիվներ եղան...

— Էդ նշանակություն չունի, քեռի, Նոյը մեծ ջրհեղեղից էլ ազատվեց... Պատերազմը սելավի պես բան է. մի տեղ տակով կանի, մի ուրիշ տեղ էլ ափ կհանի...

— Էլ ինչո՞ւ եք ոտի վրա կանգնած խոսում, չե՞ք կարող նստել,— մի քանի կարմիր կաթնահունց ներս բերելով ասաց Մարիամ քեռակինը։

— Հա, քեռակինդ ճիշտ է ասում։ Շինելդ հանիր, նոր տարին միասին պիտի դիմավորենք։

— Նոր տարի դիմավորելու հավաս մնա՞ց, ավերվի մեր հավասը կոտրողի տունը։

— Ոչինչ, քեռակին, մեր հավասն էլի կգա, էլի կգան մեր խաղաղ, մեր ուրախ օրերը...

— Ե՞րբ կգան ախր, ե՞րբ,— անհամբեր հարցրեց պառավը։

— Ե՞րբ կգան, երևի շուտով։ Մի պայծառ, արևոտ օր ընկեր Ստալինը ողջ աշխարհին ուրախ, զվարթ ձայնով կհայտարարի — այ ժողովուրդ, թշնամին դուրս է քշվել մեր երկրից, ջախջախվել...

— Ճշմարի՜տ, բարի լուր կա՜...

Եփրեմ բիձան էր։ Ձեռնափայտն առաջ տալով, բեխի մի մասը երկու մատով բռնած, հանկարծ դռան շեմքում ցցվեց նրա երկար հասակը։ Դեռ լույսից առաջ դիմացի պատի վրա գծագրվեց նրա դեմքի մութ ստվերը։ Դրսից կարծես թե մի սև չղջիկ թռավ-կպավ պատին և սկսեց այնտեղ թպրտալ։ Դա ծերունու մատների արանքում ոլորվող բեխի ստվերն էր։

Ծերունին առհասարակ սովորություն չուներ որևէ մեկի մոտ գնալիս դուռը ծեծել, իմաց տալ իր գալու մասին։

Այդ ժամանակ էլ, ներս մտնելիս, երբ լսեց Գուրգենի վերջին բառերը, կարծեց, թե ինչ-որ դեպքեր են կատարվել, որոնցից ինքը տեղյակ չի։ Չնայած հոգնած էր ու քրտնաթոր, սիրտն անհամաչափ վեր ու վար էր անում, բայց առանց շունչ քաշելու նա հարցը մեկ էլ կրկնեց.

— Ճշմարի՞տ ես ասում, Գուրգեն, բալի…

Գուրգենը նայեց նրան, քիչ լսեց, բայց կարծես թե հարցն իրեն չէր ուղղված, միևնույն տոնով շարունակեց.

— Խաղաղություն կհայտարարվի. երկիրն էլի կանցնի շինարար աշխատանքի. մարդիկ ուրախ կլինեն…

— Բա Ստալի՞նը, ընկեր Ստալի՞նը…

— Ընկեր Ստալինն ի՞նչ…

— Իմ ազիզ որդու, իմ Երվանդի մասին ի՞նչ կասես։

— Բարի լուր կհայտնի, քեռակին, բարի լուր. դու հույս մի կտրի։

— Էհ, Գուրգեն, որդիս, հե՞շտ է։ Ամեն օր վեր եմ կենում՝ աչքս ճամփին է։ Ծիտը գալիս է, նստում ծառի վրա, ծլվլում, ասում եմ այ ծիտ, իմ Երվանդի՞ց ես լուր բերել, գուցե նրան տեսել ես, նրա մասին ես պատմում, խակ ես լեզուդ չեմ հասկանում։

— Քեռակին, իսկ Երվանդը ե՞րբ գնաց։

— Հունիսի քսանվեցին,— կնոջ փոխարեն պատասխանեց ամուսինը։

— Հա, քեզնից երկու օր հետո գնաց,— լրացրեց Մարիամ քեռակինը,— հարսանիք արինք, ինն օր մնաց տանը, հետո գնաց։ Գնաց, համ ինքն անբախտացավ, համ էլ խեղճ աղջկա անբախտացրեց, անբախտ մնա դուշմանի մերը…

Տիրեց ծանր լռություն։ Սանթուր քեռին ու Եփրեմ բիձան կախել էին գլուխները, ոչ ոք չէր ուզում խոսել։ Էլի Գուրգենը, այդ ծանր լռությունից դուրս գալու համար, հարցրեց.

— Հենց գնացած օրվանից էլ ոչ մի լուր չկա՞։

— Չէ, էն գնալն է, որ գնաց,— տխրահեծ պատասխանեց քեռակինն ու ավելացրեց,— միայն մի նամակ էր գրել ճա-

նապարհից, թե Արաքսյա ջան, արդեն կռվի ենք գնում, բայց դու չանհանգստանաս, չմտածես իմ մասին, ես չեմ կորչի, գերեզմանից էլ լինի, դուրս կգամ, կհասնեմ իմ մուրազին: Հասավ, ոնց չէ, հասավ մուրազին...

— Հը, Եփրեմ բիձա, ի՞նչ կասես, աշխարհ տեսած մարդ ես,—հենց այնպես, մի բան ասած լինելու համար հարցրեց Գուրգենը:

— Ե՞ս եմ աշխարհ տեսած մարդը: Տնաշեն, մեր հողից դենը ոտ չեմ դրել, ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում:

— Չէ, ուզում եմ ասել, որ հասակդ մեծ է, փորձդ շատ: Դու ինձ չհասկացար:

— Ես քեզ հասկացա, բայց դու ինձ՝ չէ, ճշմարիտ,—վրա բերեց Եփրեմ բիձան,—ես էլ ուզում եմ ասել, թե անգրագետ, գյուղացի մարդ եմ: Դա ենպես մի մարդուց պետք է հարցնես, որ օրական օխտը գաղթ է կարդում, օխտը անգամ էլ պատերազմ է տեսել, ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում: Ես ի՞նչ կարող եմ ասել: Ես կարող եմ ասել միայն լսածս, թե պատերազմն՝ էն տեսակ մի բան է, որտեղ մեռնողներ էլ կլինեն, ապրողներ էլ... Քաջի անունով մեռնողը պատիվ կբերի իր տանը, քաջի անունով վերադարձողը՝ բարի նախանձ: Թող էս տանը նախանձողներ շատ լինեն, այ Սանթուր, ճշմարիտ...

Եփրեմ բիձան խոսքը դեռ չէր վերջացրել, Գուրգենն իրար վրա երկու անգամ փռշտաց: Մարիամ քեռակինը, որ մինչև այդ ուշադրությամբ լսում էր Եփրեմ բիձային, ուրախությամբ բացականչեց.

— Էս էլ ջուխտ սաբր, Գուրգեն ջան, փորձել ես:

— Չէ, քեռակին, հալա չեմ փորձել:

— Փորձիր, բալա ջան, փորձիր. էդ էլ մի հավատ է. մարդ որ մի բանի հավատում է, սրտի դարդը կես է լինում:

— Իմ սրտում էլ դարդ չկա, քեռակին,—արտաքին անտարբերությամբ ասաց Գուրգենը,—իմն արդեն վերջացավ:

— Քո դարդն օխտը ուղտի բեռներ, չէն կարող տանել,

ճշմարիտ,—ասաց Եփրեմ բիձան,—կնոջդ հետ հաշիվներդ վերջացրի՞ր։

Գուրգենը սուր մի հայացք ձգեց Եփրեմ բիձային, բայց ոչինչ չասաց։ Նա արագ ոտքի կանգնեց, մոտեցավ կախարանին, շինելը գցեց ուսերին։

— Էդ ո՞ւր, Գուրգեն։

Գուրգենը քեռուն ևս թողնելով անպատասխան՝ դուրս գնաց։

— Գուրգե՛ն, այ մարդ, սպասիր, բա չասացի՞, որ Նոր տարին միասին պիտի դիմավորենք։

Սակայն Գուրգենն արդեն հեռացել էր։ Դրսից լսվում էր նոր եկած ձյան համաչափ ճռճռոցը և շների անդուլ վեճը, որ սկիզբ էր առել տարբեր թաղամասերից՝ չգիտես թե ինչ հարցի շուրջը։

— Համա դու էլ բան գտար ասելու է, Եփրեմ բիձա,— բավականին լուռ մնալուց հետո կշտամբեց Սանթուր քեռին,—ի՞նչ կարիք կար էդ մասին հարցնելու, դարդերն իրար տալու։

— Ճշմարիտ, սխալ բան արեցի,—ընկճված պատասխանեց բիձան ու ինքն էլ հո՞ վեր կացավ, որ գնա։

— Լավ, բա դու ո՞ւր ես գնում։

— Որ էդպես է, ես էլ գնամ Նոր տարին աղջիկներիս հետ դիմավորեմ,—ասաց ծերունին ու դուռը ծածկեց իր ետևից։

5.

Արաքսյան տագնապի մեջ էր։

Մի քանի օր առաջ գնալով մարագները, տեսել էր, որ խոտը սպառման մոտ է։ Եթե ցրտերն այդպես շարունակվեին, ուրիշ տեղից էլ կեր չստացվեր, բոլոր անասունները կկոտորվեին։ Իսկ որտեղի՞ց ճարել կեր, ո՞վ կտար։ Շրջանի համարյա թե բոլոր կոլխոզներն էլ նույն վիճակում էին։ Աշխատող ուժերը խոտհարքի եռուն ժամանակ պատերազմ էին գնացել, իսկ կանայք էլ չէին հասցրել ամբողջ խոտը

ժամանակին հարևլու Ուրեմն ուրիշի օգնության վրա հույս դնել չէր կարելի։ Հարկավոր էր այդ ծանր դրությունից դուրս գալ։ Իսկ ինչպե՞ս։

Առավոտը շուտով նա գնաց գոմերը, կարգադրեց, որ անասուններին դուրս տանեն, չթողնեն ֆերմաներում։ Դրսում սաստիկ ցուրտ էր, ամենուրեք պատած ձյունով։ Նա վճռեց տեսնել անասնաբուժին, խորհրդակցել այդ մասին նրա հետ։

Գնաց կոլխոզի վարչության գրասենյակը։ Այնտեղ միայն հաշվետարն էր գլուխը կախ աշխատում։

— Վազգենը չի՞ եկել էստեղ,— հարցրեց Արաքսյան։

— Եկել էր, քեզ էր հարցնում, բայց էլի գնաց։

— Ո՞ւր գնաց։ Նա վերջերս չգիտեմ ինչով է զբաղված, գոմերում չի լինում։

— Նրա դարդերը հիմա գոմերը չեն, միտքն ուրիշ տեղ է։

Հաշվետարը վերջին բառն ավելի շեշտեց, բայց այնուամենայնիվ չարժանացավ Արաքսյայի ուշադրության։ Դրա համար էլ ավելացրեց.

— Մարդը սիրահարվել է...

— Ի՞նչ, սիրահարվե՞լ է,— զարմացած հարցրեց Արաքսյան,— ում է սիրահարվել։

— Պարզ չի՞. կոլխոզի նախագահից հարմար էլ ով կա։

— Ինչ է, դու...

Արաքսյան չավարտեց խոսքը։ Ձյունաթաթախ ներս մտավ Նավասարդ ապերը—ալեհեր, կարճահասակ, հարաշարժուն ու ժիր մի ծերունի, և հենց դռան շեմքում հանեց մորթե փափախը, թափ ավեց ձյունը։

— Առաջ եկ, Նավասարդ ապեր, շեմքում մի կանգնիր, կմրսես։

— Ցավդ տանեմ ինձ համար՝ հեչ, Արաքսյա, գործով եմ եկել մոտդ։

— Բարի լինի։

— Ինքս էլ բարի մարդ եմ։

— Էլ մի երկարացնի,— վրդովված ասաց Աթանը,— խոսք ունես՝ խոսքդ ասիր։

— Մի անգամ Մոլլա-Նասրադդինը,— մի քանի քայլ առաջ գալով սկսեց ծերունին, բայց Աթանը դարձյալ ընդհատեց նրան։

— Էլի՞։

— Համբերիր,— առանց շփոթվելու, հանգիստ շարունակեց ծերունին,— Մոլլա-Նասրադդինը ծերացած, ընկած է լինում տանը։ Ժողովուրդը նրա անունը տալիս է, բայց իրեն մոռանում։ Մի օր սելավը գալիս է, գյուղի աղբյուրը սրբում-տանում, գյուղը մնում է առանց աղբյուրի։ Ամառ ժամանակ է լինում, մարդիկ շոգից տապակվում են, համա մեկը չի լինում, որ ցույց տա, թե ինչպես սարքեն աղբյուրը։ Լուրը հասնում է Մոլլա-Նասրադդինին և նա իր կնոջը՝ Ռեհան-խաթունին, օրհնվի նրա ծնունդը, ասում է, թե այ կնիկ, վեր կաց, թևիցս բռնի, ինձ աղբյուրի մոտ տար։ Ռեհան-խաթունն էլ, օրհնվի նրա ծնունդը, վերցնում է Մոլլային, տանում էնտեղ։ Մոլլան տեսնում է, որ գյուղում որքան անել-չանել կա, աշխատում են, բայց աղբյուրի ակունքը չեն կարողանում գտնել։ Էդ ժամանակ Մոլլան բարձրանում է մի մեծ քարի վրա և ուժովը մեկ կանչում...

— Դե բավական է էլի, գլուխներս գնաց,— զայրալից մի կողմ հրելով համբիչը, բացականչեց Աթանը, սակայն Արաքսյան սաստեց նրան։

— Թող Նավասարդ ապերը խոսքն ասի։

— Հա,— առանց ուշադրություն դարձնելու Աթանի վրա, շարունակեց ծերունին,— Մոլլան բարձրանում է մի մեծ քարի վրա և ուժովը մեկ կանչում.— Հասան, հեյ Հասան, այ կրակի մեջ խրակվես դու, էս ժողովրդին ինչի՞ ես առանց ջրի խրակում։

Այստեղ Նավասարդ ապերը մի պահ կանգ առավ, նայեց նախ Արաքսյային, ապա Աթանին, որ գլուխը կախ, հաշվիչն առաջը քաշած, իր գործին էր, և նույն տոնով շարունակեց.

— Հիմա ասեմ, թե ով է լինում էդ Հասանը...

— Երևի քեզ պես շատախոսի մեկը,—տեղից բացականչեց Աթանը, բայց դա ևս չազդեց ծերունու վրա. Նա նույն անտարբերությամբ շարունակեց.

— Էդ Հասանը հայտնի քանքան է լինում։ Աշխարհի ամենալավ բյահրիզները նրա ձեռքով են շինված լինում, ամենալավ աղբյուրները նրա ձեռքի գործն են լինում։ Իսկ երբ Մոլլան կանչում է, նա սկի էնտեղ չի լինում։

— Բա որ էնտեղ չի լինում, Մոլլան էլ ինչու՞ է կանչում նրան,—չհամբերելով, տեղից հարցրեց Աթանը։ Այդ դուր եկավ ծերունուն, նա զգաց, որ հաշվետարը թեև գլուխը կախել է, ձևացնում է, թե աշխատում է, բայց փաստորեն ուշադրությամբ լսում է պատմությունը։ Դրա համար էլ ծերունին մեկ հազաց, ձեռքը տարավ դեպի բեխերը, ոլորեց և դանդաղ ու ծանրակշիռ շարունակեց.

— Մոլլային ասում են, թե այ մարդ, ինչու՞ ես իզուր տեղից հայհոյում խեղճ Հասանին. Նա էս գործից տեղյակ չի։ Բա որ տեղյակ չի, էլ ինչո՞ւ եք արին-քրտինք թափում,—ասում է Մոլլան,—գնացեք, գտեք նրան, բերեք, աղբյուրը մի օրում հանի, տա ձեզ...

— Լավ, Մոլլա-Նավասարդ, ախր էդ բոլորն ինչո՞ւ ես պատմում։

Ծերունին հաշվետարի այդ հարցն էլ անուշադրության մատնեց։ Նա միայն մի խիստ հայացք ձգելով Աթանի վրա, ասաց.

— Համբերիր, կիմանաս,—և շարունակեց,—մարդիկ միտք են անում-միտք ու տեսնում, որ Մոլլա-Նասրադդինը ճիշտ է ասում։ Մարդ են ուղարկում Հասանի ետևից։ Նա գալիս է, մեկ օրում սարքում աղբյուրը, վարձը ստանում ու գնում իր գործին։ Հասանը գնալուց հետո մեկը հարց է տալիս, թե այ ժողովուրդ. ո՞վ սարքեց մեր աղբյուրը։ Այ քեզ հիմար մարդ,—ասում են հարց տվողին,—պարզ չի՞, որ Հասանը։ Չէ, սխալվում եք,—ասում է հարց տվողը,—աղբյուրը Մոլլա-Նասրադդինը սարքեց։

— Լավ, Նավասարդ ապեր, դու հիմա դրանով ինչ ես

ուզում ասել.—հարցրեց Արաքսյան, որ մինչ այդ ուշադրությամբ լսում էր նրան։

— Ուզում եմ ասել, որ ինչքան էլ ծերացած լինեմ, իմ խորհուրդներով էլի մի գեղ կկառավարեմ,— վստահորեն պատասխանեց նա, մոտեցավ վառարանին և հանդիսավոր կերպով նստեց աթոռին։

— Դե եթե սիրտդ գեղ կառավարել է ուզում, գնա գյուղսովետ, ընկեր Թոխյանին քշիր էնտեղից, նստիր տեղումը։ Էլ ինչո՞ւ ես կոլխոզի վարչությունը եկել։

— Թոխյանի պաշտոնն ինձ պետք չի. ինձ ուրիշ պաշտոն է հարկավոր, ընկեր Աթանես։

— Իսկ ի՞նչ պաշտոն ես ուզում, Նավասարդ ապեր,— հարցրեց Արաքսյան։

Ծերունին մի քիչ մտածեց, գրպանից դուրս բերեց ծխամորճը, լցրեց ծխախոտով, ձեռքով մի կրակ վերցրեց վառարանից, դրեց ծխամորճի վրա, մի քանի անգամ փառացրեց և նոր միայն ասաց.

— Մոլլա-Նասրադդինն ասում է,—ով ձեռքից եկած գործից հրաժարվի, դժոխքի դռներն էլ կփակվեն նրա առաջ։ Ինչ պաշտոն որ կարող եմ կատարել, էն էլ տվեք։ Երե՛կ ծերունիներս հավաքվել ենք, որոշել, որ գանք քեզ մոտ, Արաքսյա, պաշտոն ուզենք։ Հիմա ահել-ջահելի ժամանակ չի, բոլորն էլ պիտի աշխատեն։

Արաքսյային դուր եկավ ծերունու ասածը։ Նա մի քիչ մտածեց, լրջորեն նայեց Նավասարդ ապորը, ապա դարձավ դեպի հաշվապահը։

— Ի՞նչ ես կարծում, Աթան, եթե Նավասարդ ապորը փեթակապահ նշանակենք, ո՞նց կլինի։

— Փեթա՞կ... Հըմ, փեթակի մասին, ոչինչ չունեմ, Արաքսյա, ազնիվ գործ է,—խոկուն արձագանքեց ծերունին,—բայց, դրուստն ասած, իմ աչքը ոչխարի վրա է։

— Ոչխար պահելը քեզ համար դժվար կլինի, Նավասարդ ապեր։

— Աշխարհում դժվար բան չկա. դու էդ պաշտոնը տվեք ինձ, գործ չունեք, ես տակիցը դուրս կգամ։

— Դրա համար դու ոտ չունես, Մոլլա-Նավասարդ։

Աթանի խոսքերից Նավասարդ ապերն այս անգամ բորբոքվեց։

— Աշխատանքը կատարելու համար ոտ չի հարկավոր, այ դալիբաշ, սեր է հարկավոր, հասկանո՞ւմ ես, սեր։ Ես էդ պաշտոնի վրա սեր ունեմ։ Բսան տարի ոչխար եմ պահել։ Ոչխարը որ մի անգամ մայում է, ես հասկանում եմ, թե որն է նրա ուզածը։ Գլխի ընկա՞ր, թե գլխի գցեմ։

Աթանն ուզեց ինչ-որ ասել, բայց չկարողացավ։ Գրասենյակի դուռը միանգամից բացվեց, ներս մտավ Եփրեմ բիձան։ Նա հենց դռան շեմքում ձեռքի փայտով թափ տվեց չուխայի փեշերը և հանկարծ տեսնելով Նավասարդ ապորը, ասաց.

— Վա, դու արդեն էստե՞ղ ես։

— Բա որտե՞ղ պիտի լինեմ,—լրջորեն պատասխանեց Նավասարդ ապերը։

— Ուրեմն ամեն ինչ ասել ե՞ս։

— Ինձ վերաբերողն ասել եմ։

— Ճշմարիտ, բախտդ լավ է, Մոլլա-Նավասարդ, ամեն տեղ առաջ ես ընկնում, տա աստված, որ մեռնելում էլ եա չմնաս։ Իսկ ես, Արաքսյա, երեկվանից էնքան եմ փնտրել քեզ, որ կերած-խմածս քթածակներիցս է եկել։

— Իսկ ինչո՞ւ էիր փնտրում ինձ։

— Պարզ չի՞։ Երեկ Մոլլա-Նավասարդի և մյուս ծերունիների հետ պայման ենք կապել, որ գանք քեզ մոտ, պաշտոն ուզենք։ Բոլորս էլ աշխատել ենք ուզում, ճշմարիտ։

— Լավ, իսկ դու ի՞նչ պաշտոն ես ուզում։

— Ինչ պաշտո՞ն։ Ի՞նչ ասես, որ ձեռքիցս չի գալ. ոչխար պահել՝ կարող եմ, ջաղացպանություն անել՝ կարող եմ։ Ի՞նչ գործ ասես, որ չկարողանամ, ճշմարիտ։

Եփրեմ բիձան թերևս երկար պատմեր այն բոլոր աշխատանքների մասին, որ նա կատարել էր տարիներ շա-

րունակ, բայց նրան ընդհատեց Դալըբինյանը։ Վերջինս ներս մտավ քրտնաթոր ու մի քիչ այլայլված։ Նա մտնելուն պես դիմեց կոլխոզի նախագահին։

— Արաքսյա, էս եղանակին ինչպե՞ս ես թույլ տվել, որ անասունները դաշտ տանեն։

— Բա ի՞նչ անեի, թողնեի, որ գոմում քաղցած կոտորվե՞ն։ Դու գիտե՞ս, վար մի քանի օրվա խոտի պաշար հազիվ է մնացել։ Էսօր-էգուց սկսվելու է գարնանացանը, մենք էնքան եզներին ինչպե՞ս ենք կերակրելու։

— Դրա համար խոտի մասին պիտի մտածել, այլ ոչ թե անասունները դուրս քշել այս ցրտով, որ կոտորվեն։

— Այ բալամ, ես հալա աշունքվանից էի ասում, թե քանի ձյունը չի եկել, գետինը ծածկել, հարկավոր է գնալ Բոլատակի խոտը հարել։ Բայց ինձ չլսեցիք, ճշմարիտ։

— Ինչ է, կարծում ես հիմա չի՞ կարելի հարել,— Եփրեմ բիձային ընդհատելով ասաց Նավասարդ ապերը,— հիմա էլ կարելի է հարել։

— Ձյունի տակ խոտ չի հարվի, Մոլլա-Նավասարդ։

— Էդ մեկում սխալվում ես, Աթան,— Նավասարդ ապոր փոխարեն պատասխանեց Եփրեմ բիձան,— էնքան ենք էսպես ձմեռներ տեսել, էնքան ենք գնացել, ձյունը ետ տվել, տակից խոտ հարել, բերել կերակրել անասունները։

Եվ այնուհետև սկսվեց մի վեճ այն մասին, թե կարելի՞ է, արդյոք, ձյան տակից խոտ հարել, բերել, անասուն կերակրել։ Եփրեմ բիձան ու Նավասարդ ապերը հաստատում էին, որ կարելի է, իսկ Աթանը պնդում էր, որ չի կարելի և այդպիսի խոտը հարելու դեպքում էլ անասունները չեն ուտի։

Արաքսյան ուշադրությամբ լսում էր նրանց վեճը և գտնում էր, որ այսպես թե այնպես հարկավոր է հոգալ խոտի մասին։ Բոլատակ կոչվող հողամասի խոտը նրանք չէին կարողացել հարել և նույնությամբ մնացել էր։ Եփրեմ բիձայի և Նավասարդ ապոր ասածները նրան հավանական թվացին։

— Ծերունիները ճիշտ են ասում։ Պոլատակի խոտը պետք է հարել ու կրել ֆերմաները և դա մենք կանենք,— ասաց Արաքսյան,— իսկ Թերահավատների ասածին ուշադրություն չենք դարձնի։

Ծատուրենց Ալեքսանը, որ նրանց խոսակցության ընթացքում ներս էր մտել ու լուռ լսում էր, Արաքսյայի այդ խոսքերից կատաղեց։ Նրան գյուղում Թերահավատ մականունն էին տվել՝ ամեն ինչի նկատմամբ կասկածամտությամբ վերաբերվելու և ամենքի ուժերը թերագնահատելու համար։

— Ախպեր, թերահավատն էլ եք դուք, անհավատն էլ,— բորբոքված ասաց նա,— էլի ի՞նչ եք կպել իմ ջանից։

— Ալեքսան, դու որտեղի՞ց մեջ ընկար, էստեղ քո մասին խոսող չկար, ճշմարիտ։

— Մոլլա-Նասրադդինն ասում է՝ չոբանը որ ճիպոտն իրար տա, գող շունն իսկույն գլուխը կթաքցնի,— Եփրեմ բիձային լրացրեց Նավասարդ ապերը,— Ալեքսան, կարծում ես մենակ դո՞ւ ես թերահավատ, ուրիշներն էլ կան։

— Այ մարդ, էն ասվածը թերահավատ չեմ, ախր ի՞նչ գործ եղավ, որ թերահավատություն արեցի։ Ախպեր, գնամ գետն ընկնեմ, խեղդվեմ, կհավատա՞ք, որ թերահավատ չեմ։

— Գետն ընկնելու կարիք չկա,— տեղին ընդհատեց Արաքսյան,— ուժերդ պահիր, էգուց Պոլատակի խոտը հարելիս հարկավոր կգան։

— Էդ մեկը գլուխ եկող գործ չի։

— Դե կտեսնենք,— ասաց Արաքսյան և դիմեց Նավասարդ ապորը,— լեզուդ քաղցր է, Նավասարդ ապեր, էգուց առավոտվանից Պոլատակը գնալու մասին ձեր թաղեցիներին իմաց անելը քեզ եմ հանձնարարում։ Տեսնեմ գործը ոնց ես կազմակերպելու։

— Աչքիս վրա, հենց էս րոպեիս գնամ և ցույց տամ լեզվիս հունարը,— ասաց նա և շտապ դուրս գնաց։ Եփրեմ բիձան հետևեց Նավասարդ ապորը։

— Էդ հալա կերևա, թե ով է թերահավատը,— վերջում

ասաց Ալեքսանն ու ինքն էլ դուրս եկավ։ Ալեքսանի ետևից դուրս եկավ նաև Աթանը՝ Արաքսյային ու Դարբինյանին դիտավորյալ կերպով թողնելով մենակ։

— Հը, Վազգեն, դու ի՞նչ ես կարծում,—բոլորը դուրս գնալուց հետո ասաց Արաքսյան։

— Հարկավոր է փորձել, կարծում եմ, որ վատ չի լինի։

— Ինչ գնով էլ ուզում է լինի,—կերի հարցը պիտի լուծենք, թե չէ ամեն ինչ կտապալվի,—կարծես թե ինքն իրեն ասաց Արաքսյան և ապա շեշտակի նայելով անասնաբույժին, ավելացրեց,—լավ, ի՞նչ է պատահել քեզ, վերջերս չես երևում։

Դարբինյանն անմիջապես չպատասխանեց նրան։ Նա երազկոտ կախեց գլուխը, աչքերը հառեց գետնին։

— Էլ ի՞նչ ես մտածում։

— Չեմ մտածում, Արաքսյա, բայց...

— Էլ ի՞նչ բայց։

— Չգիտեմ ինչպես պատասխանել հարցին։

— Դե որ չգիտես՝ մտածիր։

Դարբինյանը մոտեցավ Արաքսյային, բռնեց ձեռքը, ուզեց ինչ որ ասել, բայց հանկարծ աչքն ընկավ Արևհատին, որ անխոս ներս էր մտել, կանգնել դռան շեմքում։ Նա ինչպես լուռ ներս էր մտել, այնպես էլ ետ շրջվեց, դուռը ծածկեց ետևից, հեռացավ։

Այդ ժամանակ միայն Արաքսյան նկատեց նրան և կանչեց.

— Արև, Արև, ինչո՞ւ ետ դառար։

Բայց Արևհատը չլսեց նրան։

6.

Հուզմունքը խեղդում էր Արևհատի կոկորդը։

Առավոտյան, գոմերում, կով կթող մի կին նրան ասաց.

— Աչքդ լույս, ընկերուհիդ մարդու է գնում։

— Ո՞ր ընկերուհիս,—զարմացած հարցրեց նա։

— Էլ ո՞ր ընկերուհիդ, չե՞ս իմանում, որ Արաքսյան ամուսնանում է Դարբինյանի հետ։

— Սուտ է,— վճռականորեն պատասխանեց Արևհատը։ Բայց դրանից հետո իր սիրտն էլ կասկած ընկավ։ Նա հիշեց, որ վերջերս Արաքսյան ինչ-որ լռակյաց է դառել, խուսափում է մարդկանցից, բայց այդ բոլորը նա վերագրում էր ընկերուհու ապրումներին, կարծում էր, թե կոլխոզի աշխատանքներն են մտահոգում նրան, կամ ամուսնուն է կարոտում։ Դրա համար էլ ոչինչ չէր հարցնում այդ մասին, որպեսզի չբորբոքի նրա վշտերը։ Իսկ երբ կով կթող կինը դիմեց նրան այդ հարցով, նա իսկույն հավատաց, որ Արաքսյայի մռայլության պատճառը դա կարող է լինել։ Հավատաց և պայրացավ։

Նրանք մանկութ ընկերուհիներ էին։ Սիրում էին իրար հարազատ քրոջ պես և իրարից ոչ մի գաղտնիք չունեին։ Եվ հանկարծ Արևհատը լսում է, որ Արաքսյան այսպիսի վճռական մի քայլ է դիմում ու այդ մասին իրեն ոչինչ չի ասում։

— Իսկ ես կարծում էի, թե նա ինձնից ոչ մի բան չի թաքցնում,— ինքն իրեն ասաց Արևհատը,— ուրեմն ե՞ս էի գիժը, որ ամեն ինչ ասում էի իրեն, խորհրդակցում հետը։ Լավ, թող այդպես լինի, ես էլ իրեն հետ կվարվեմ այնպես, ինչպես ինքն է վարվում։

Հետո նա մտքում դատապարտեց ընկերուհուն.

— Ինչ է, երկու օր չկա Դարբինյանը եկել է էստեղ, նա իսկույն սիրահարվե՞լ է, մոռացե՞լ է ամուսնուն— այնպիսի մի տղայի, որի անունով ողջ գյուղն է երդվում։ Դրա համա՞ր էր Երվանդը կռվի գնում, որ կինն էստեղ ուրիշի հետ ամուսնանա՞...

Իր իսկ մտորումներից Արևհատն ավելի բորբոքվեց, հուզվեց ու վճռեց իսկույն և եթ գտնել Արաքսյային, խոսել հետը։ Նա գնաց դեպի կոլխոզի վարչության գրասենյակը, մտքում կրկնելով այն խոսքերը, որ պիտի ասեր ընկերուհուն։ Բայց կոլխոզի վարչության գրասենյակում տեսնելով

նրանց միասին խոսելիս, անմիջապես մտափոխվեց, եւ դառավ, արդեն հաստատ վճռելով, որ կթող կնոջ ասածը ճիշտ է։

Տուն գալուց հետո Արևհատն էլի չհանգստացավ։ Դառն մտքերը տանջում էին սիրտը, գայրույթից քիչ էր մնում պայթեր։ Էլ չկարողացավ սպասել, երեկոյան դեմ գնաց Արաքսյայի մոտ։

— Լավ, կեսօրին ինչո՞ւ էնպես վարվեցիր,— Արևհատը ներս մտնելուն պես ասաց Արաքսյան,— վախենում էիր բռնեինք, էլ բաց չթողնեի՞նք։

— Չէ, վախենում էի ձեզ խանգարել:

— Այսինքն ի՞նչ ես ուզում ասել։

— Մենակ ես չեմ ասում, ամբողջ գյուղն է խոսում էդ մասին։

— Ի՞նչ են խոսում։

— Խոսում են քո հիմարությունների մասին, անխիղճ աղջիկ։

Արաքսյան լռեց, ոչինչ չասաց։ Նա զգաց, որ Արևհատի հետ այդ վիճակում չի կարողանալու խոսել։ Դրա համար էլ նա հնարավորություն տվեց ընկերուհուն ասելու այն բոլորը, ինչ ինքն էր կարծում, ինչի մասին որ մտածում էր, ինչի մասին խոսում էին գյուղում։ Եվ նրան մինչև վերջ լսելուց հետո միայն անտարբերությամբ ասաց.

— Անտեղի խոսակցություններ են, սիրելիս։ Դու չե՞ս իմանում, որ էդպես բան չի կարող լինել:

— Ինչպե՞ս թե չի կարող լինել,— զայրագին բացականչեց Արևհատը,— հիմա էլ ուզում ես ասե՞լ, բա աչքովս չտեսա՞։

— Դու աչքովդ ոչինչ չես տեսել։ Դու տեսել ես միայն մեզ իրար հետ խոսելիս։

— Իսկ դու ուզում էիր, որ ես ձեզ համբուրվելի՞ս տեսնեի։

— Այդ դու երբեք չես տեսնի։

Արաքսյայի խոսելու հանգիստ ու անվրդով եղանակն

ավելի էր զայրացնում Արևհատին։ Նա ցասկոտ նայելով ընկերուհուն, ասաց.

— Լավ, ինչո՞ւ ես ստում, Արաքսյա։

— Չեմ ստում։

— Բա ինչ էիք խոսում։

— Ինչ էինք խոսում...

Արաքսյան շփոթվեց, սկսեց ծամծմել բառերը, չիմացավ ինչպես սկսի։

— Այ, տեսնո՞ւմ ես. չես ուզում ասել։ Լավ, մնաս չունի։ Մնաս բարով։

Նա ոտքի կանգնեց, ուզեց գնալ, բայց Արաքսյան չթողեց։

— Ո՞ւր, Արև ջան։

— Էլ չեմ ուզում քեզ հետ խոսել։

— Գժություններ մի անի, սպասիր, տես ինչ եմ ասում։

Եվ նա բռնելով ընկերուհուն, տարավ դեպի թախտը, ստիպեց նստել։

-- Դու ուզում ես այդ համոզմունքին էլ հասնել։ Չես ամաչում, Արևհատ։

Արևհատը լռեց, կախեց գլուխը։ Մտքերը պղտոր էին, հուզմունքից ձեռքերը դողում էին։ Նա մեկ էլ բարձրացրեց գլուխը, ուղիղ նայեց ընկերուհու աչքերին և հանկարծ ձեռքերը տանելով դեպի Արաքսյան, փաթաթվեց նրան և մանկան նման աղիողորմ հեկեկաց։

— Հանգստացիր, Արև ջան, հանգստացիր,—սփոփեց ընկերուհին, բայց Արևհատը չէր կարողանում հանգստանալ, արցունքները գլորվում էին առատորեն, սիրտը դառնագին մղկտում էր։

— Ախր ի՞նչ պատահեց քեզ, Արև ջան, ինչո՞ւ ես լաց լինում։

— Էհ, լավ չես անում, Արաքսյա, լավ չես անում։ Բա մի՞թե էդպես շուտ մոռացար Երվանդին,—արցունքների միջից մրմնջաց նա և ավելի անզուսպորեն հեծկլտաց։

Արաքսյան փարվեց նրան, գլուխը դրեց կրծքին և ինքն էլ ակամայից սկսեց լաց լինել…

Այդպես, իրար գրկած, նրանք ահագին ժամանակ լաց եղան անհագուրդ։ Հետո Արաքսյան մի կերպ զսպելով իրեն ասաց.

— Լաց մի՛ լինի, Արև ջան, ես Երվանդին երբեք, երբեք չեմ մոռանա, ուրիշ ոչ ոք, ոչ ոք չի կարող փոխարինել նրան…

— Մեր Երվանդն էնպես տղա չէր, Արաքսյա, որ դու մոռանաս նրան։

— Երբեք, երբեք, Արև ջան…

Խոսքն արցունքի թշնամին է։ Երբ լուռ է մարդ, ինքնամփոփ, այնքան ավելի է հակված դեպի լացը։ Խոսքը չորում է արցունքը, ինչպես հողմը՝ անձրևաբեր ամպերին։ Եվ այդ խոսքերն էլ սրբեցին, տարան նրանց արցունքները։ Քիչ հետո նրանք արդեն խաղաղվել էին, էլ լաց չէին լինում, մտածում էին թախծոտ, գլխահակ…

— Ասում ես չմոռանաս, բա մոռանալ կլինի՞,—երազկոտ ասաց Արաքսյան,—այ, կարծես թե հենց էս րոպեիս աչքիս առաջ կանգնած լինի։ Ամուսնանալուց մի ամիս առաջ վերադառնում էինք սարից։ Գարուն էր. ծաղկաբուրմունքով լցվել էր սար ու ձոր։ Զոկենց ծերպի տակից անցնելիս Երվանդի աչքն ընկավ մասրենու մի թփի, որը հուրհուրում էր վարդերի մեջ։ Մեկ էլ տեսա նա վազում է դեպի այդ թուփը, ես իսկույն ճչացի—Երվանդ, Երվանդ, հետ եկ, վայր կընկնես։ Բայց նա ինձ չլսեց, սկսեց ծերպով մագլցել, հասնել թփին։ Սիրտս դողում էր. ասում էի հիմա գլորվելու է, ընկնի ձորը։ Աչքերս փակել էի, որ չտեսնեմ նրան վտանգավոր տեղից անցնելիս։ Եվ այդ ժամանակ, մեկ էլ տեսա նա մասրենու ճյուղը մոտեցրեց ինձ։ Ասացի ինչո՞ւ արեցիր, բա որ ընկնեիր։ Ասում է.—ի՞նչ կա որ, ընկնում էի—ընկնեի, սիրո համար ընկնելուց լավ ի՞նչ կարող է լինել։

— Ճիշտ է, իհարկե,— հաստատեց Արևհատը,—պատահում է, որ մարդիկ ընկնում են իրենց սիրածի համար

իսկ հետո սիրածը թողնում, ամուսնանում է ուրիշի հետ։

— Արև ջան, ազնիվ խոսք, ես հենց այդպես էլ ասացի իրեն,—լրացրեց Արաքսյան,—այն ժամանակ նա կանգ առավ, նայեց աչքերիս և լռեց։ Անցքին տեղ մենք գնացինք լուռ։ Հետո նա հարցրեց,—Արաքսյա, ի՞նչպես, եթե ես չլինեմ, դու ուրիշին կսիրե՞ս, կամուսնանա՞ս ուրիշի հետ։ Իսկ ես էլ հենց էնպես, կատակով ասացի, թե իհարկե կսիրեմ, ինչո՞ւ չպիտի սիրեմ։ Ասաց՝ կատա՞կ չես անում։ Ասացի՝ չէ, միանգամայն լուրջ եմ ասում։

— Անգութ ես, անգութ,—ընկերուհուն ուշադիր սելուց հետո ասաց Արևհատը։

— Ես էլ եմ զղջում ասածիս համար,—համաձայնեց Արաքսյան,—այնուհետև մի քանի անգամ մեր մեջ խոսք բացվից էդ մասին։ Երվանդը միշտ հարցնում էր, թե ինչպես ես ճի՞շտ էի ասում, ես էլ համառում էի, թե ճիշտ եմ ասում, առանց կատակի։

— Հիմար,—վրա բերեց Արևհատը։

— Էլ ասում ես թողնեմ։ Նա էդպես էլ հավատացած էր, կարծում էր, թե ինչպես կարող եմ իրենից հետո մի ուրիշին սիրել, ուրիշի հետ ամուսնանալ։

— Իսկ հիմա չե՞ս զղջում ասածիդ համար։

— Բա չե՞մ զղջում,—իսկույն վրա բերեց Արաքսյան,— էդ բանը մի փուշ է դառել, ժանգ սիրտս, զուրս չի գալիս։ Եվ հիմա գիշեր-ցերեկ անիծում եմ ինձ իմ հիմար խոսքի համար։ Ախր սկի են ժամանակ էլ մտքովս էդ տեսակ բան չէր անցնի. ինչո՞ւ ասացի, ինչո՞ւ կասկածի մեջ թողեցի նրան։

— Դե հիմա տառապիր քո հիմար խոսքի համար։

— Տառապում եմ, Արև ջան, բայց միայն մի բան եմ ցանկանում—հենց մի անգամ էլ տեսնել նրան, ուղիղ նայել աչքերին, գրկել ու ասել—չէ, Երվանդ ջան, հոգիս, արևս, ես լուրջ չէի ասում, կատակ էի անում, հիմար կատակ։ Ես միայն քեզ եմ սիրում, քեզ...

Դուռը երկու անգամ կամաց ծեծեցին։ Արաքսյան գնաց բաց արավ։

Դարբինյանն էր։ Նա ներս մտնելուն պես Արևհատը ոտքի կանգնեց, հագավ վերարկուն, լուռ դուրս գնաց, դարձյալ պղտոր մտքերի մեջ ընկած։

7.

— Այ քեզ խաթա, ես մինչև ե՞րբ պիտի մնամ էստեղ։ Չլինի թե իմն էլ մինչև էստեղ էր։ Էյ հե՜յ, այ կոլխոզական...

Ծերունի Նավասարդն էր։

Առավոտյան բոլոր կոլխոզնիկները դուրս էին եկել խոտհարքի։ Նրանք իրենց հետ թիեր ու մանգաղներ վերցնելով, գնացել էին Բոլատակի խոտը հարելու, որ ամառը չէին հասցրել հարել, մնացել էր ձյան տակ։ Խոտը կոշտացել էր, դեղնել, բայց այնուամենայնիվ դրանով կարելի էր կերակրել անասուններին։

Կոլխոզնիկները ցրվել էին լեռնալանջի վրա, ոմանք թիերով ետ էին տալիս ձյունը, ոմանք հարում էին, խոտը խուրձ-խուրձ կապում, դասավորում, որ վերջում, երեկոյան, շալակով իրենց հետ տանեն գոմերը։

Նավասարդ պապն էլ նրանց հետ էր։ Նա առանձնացել էր մյուսներից, որոնում էր այնպիսի տեղ, ուր ձյուն չլինի, առանց երկար ժամանակ կորցնելու շատ խոտ հարի։ Բայց մի ժայռի գլխից անցնելիս սայթաքել էր, գլորվել, ընկել խոր մի վիրապի մեջ, որտեղից այլևս չէր կարողանում դուրս գալ։

Թանձր մշուշը եկել, պատել էր ամենուրեք։ Հսկա ահռելի սարերն իրենց գագաթներով, ժայռ ու ձոր քողարկվել էին ամպերի ճերմակ քուլաների մեջ։ Մշուշապատ ձորերի ու ժայռերի պես ծերունու սիրտն էլ էր մթագնել, մռայլել։ Նա մերթ մտածում էր այն մասին, որ կոլխոզնիկները կաշխատեն, խոտը կհարեն, իսկ ինքը չի կարող մատը-մատին զարկել, երեկոյան տուն վերադառնալիս կարժանանա նրանց

ծաղրանքին, մերթ մտածում էր, թե ինչպես դուրս գա վիրապից, չմնա ձյան մեջ, սառչի...

Նա ճիգ էր անում, բռնում քարերից, թփերից, որ դուրս գա, բայց ամեն անգամ սայթաքելով գլորվում, դարձյալ նույն փոսի մեջ էր ընկնում։

Ցուրտը հետզհետե սաստկանում էր, թափանցում նրա մարմնի մեջ։ Նա փչում էր մատներին, ձեռքերը շփում իրար, սակայն դրանից էլ չէր տաքանում։

— Պահ, պահ, պահ, մատներս փետացան,—ինքն իրեն ասաց նա,—փչելը չի օգնում։ Էս ցրտին Նալբանդ Աղաբեկի փուքսն էլ փչես, էլի չի օգնի։ Էյ հեյ, ուր կորաք, այ կոլխոզական...

Ծերունին կանչեց, հետո լռեց, որ լսի, թե ինչ արձագանք է գտնում իր ձայնը, բայց ոչ մի պատասխան չկար։

— Վայ խլանաք դուք, ոնց որ խլացել եք.—կոլխոզնիկների հասցեին ասաց նա,—բա որ էդքան կանչում ենք, մեկը չկա՞, որ լսի։ Տես է, ակլի խելքներին փչո՞ւմ է, որ հետաքրքրվեն, թե ուր մնաց էս մարդը։ Հիմա բոլորն էլ կատարելու են իրենց պլանը, գնան, սաղ գիշերը ես մնալու եմ էստեղ։ Անտեր ցուրտն էլ ավելի է սաստկանում. էս ցրտին դիմանալ չի լինի։ Եթե գիշերն էլի էսպես ամպոտ լինի, ոչինչ, տաք կլինի։ Բայց վախենում եմ աչաղ լինի, ցամաքեմ, մնամ էստեղ։ Էս էլ կրա՞կ էր, որ մեջն ընկա...

Ծերունին մեկ էլ փորձեց, որ դուրս գա, բայց ավելի ցած գլորվեց, ընկավ և էլ չկարողացավ նստած տեղից բարձրանալ ու մի քիչ մտածելուց հետո հուսահատորեն ասաց.

— Մեռնելու եմ, մնամ էստեղ։ Թերահավատը գալու է, դիակիս մոտ կանգնի, ասի Մոլլա-Նավասարդ, որ հունարդ էդ էր, ինչո՞ւ էիր մեծ-մեծ խոսում, թե Բոլատակի խոտը կարելի է հարնի։ Դե հիմի վերկաց հարի...

Նա լռեց և տարվեց մտքերով։ Հանկարծ արագ մի շարժում կատարեց ու, որպես թե ներքին մի ուժ ստանալով, վեր կացավ, դիմեց դեպի ժայռը։

— Չէ, Թիրահավատ Ալեքսան, դու ականջիդ ետևը կտեսնես, բայց իմ մահը՝ չէ։

Նա երեսն ի վար մեկնվեց ճյուղապատ լանջի վրա, սողեսող մի քիչ բարձրացավ, ձեռքը մեկնեց դեպի Թուփը և հենց այդ ժամանակ լսեց.

— Նավասարդ, հե՜յ Նավասարդ։

— Այ տա, էս ի՞նչ էր, ականջիս ձեն հասավ,—ինքն իրեն ասաց նա, մի պահ ունկնդրեց և ուրախաձայն արձագանքեց,—հեյ, հեյ...

— Արա որտե՞ղ ես է, որտե՞ղ ես...

Սանթուր քեռին էր։ Նրանք բավականաչափ աշխատելուց հետո նկատել էին, որ ծերունին չկա և զգացել էին, վոր նրա հետ կարող է դժբախտություն պատահած լինել։ Սանթուր քեռին ու Եփրեմ բիձան նրան փնտրելով հասել էին ժայռի գլուխը։ Ծերունին ավելի մոտիկից լսելով նրա ձայնը ասաց.

— Դեսը եկեք, դեսը, էստեղ եմ։

— Այ մարդ, ի՞նչ ես անում էդտեղ,—ժայռի գլխից նրան նայելով ասաց Սանթուր քեռին

— Աղոթք եմ անում չար Սաթայելին։

— Հեր օրհնած, եկել ես ընկել էդ ձորը, մեզ էլ գործից ավարա արել,—ավելացրեց Եփրեմ բիձան,—հրեն բոլոր կոլխոզնիկները գործը թողած՝ քեզ են ման գալիս, ճշմարիտ։

— Ինչո՞ւ, ես կորե՞լ եմ, որ ինձ են ման գալիս։

— Բա ինչո՞ւ ես ընկել էդ փոսը։

— Հիմա հարց ու փորձի ժամանակ չի, ողորմի հորդ, օգնիր մի հենց դուրս գամ։

Սանթուր քեռին մեջքից բաց արեց պարանը, որ բերել էր շալակով խոտ տանելու, պարանի մի ծայրն ինքը բռնեց, մյուս ծայրը կախեց ներքև։ Նավասարդ պապը պարանի ծայրը կապելով մեջքին՝ ներքևից կանչեց.

— Դե քաշեք։

— Մոլլա-Նավասարդ, ասես քյանդիրբազ լինես, ճշմարիտ,— կատակեց Եփրեմ բիձան։

— Քյանդիրբազ, ի՞նչ կա որ, քյանդիրբազությունն էլ վատ բան չի։ Մոլլա-Նասրադդինն ասում է...

— Հիմա Մոլլա-Նասրադդինի ժամանակ չի, ոտք դեմ արա,— պարանի ծայրից քաշելով ընդհատեց նրան Սանթուր քեռին, իսկ Եփրեմ բիձան ավելացրեց.

— Քեզ հազար անգամ ասել եմ Մոլլա-Նասրադդինի անունը քիչ տուր. էնքան անունը տալու ես, որ ծոցն ես գնալու, ճշմարիտ։

Ջրաբերանից եկավ թանձր մշուշը, իր անթափանցիկ քողի մեջ առավ ծերունիներին, նրանց զրույցը։ Ներքևում, ժայռի տակ, երկու քարի արանքում միայն մի փոքրիկ բաց տեղ մնաց առանց մշուշի։ Այդտեղ, ժայռի տակ, երևացին Եղիշեն ու Արևհատը։

Աղջիկն անհանգիստ էր։ Նա մտածում էր հոր մասին։ Նա վախենում էր, որ ծերունին քարից ընկած կլինի, վնասված կլինի և մի գլուխ տագնապալից ասում էր.

— Դե գնանք, Եղիշ ջան, գնանք տեսնենք ինչ եղավ։

Իսկ Եղիշեն նրա թևից բռնած բաց չէր թողնում։

— Դու մի վախեցիր, Արև ջան, որտեղ որ է նա հիմա կգա, տեսնես ինչ է գտել, գլուխը խառնվել է, դու...

— Չէ, մի ասիր, Եղիշ ջան,— թախանձում էր աղջիկը,— սիրտս անհանգիստ է։ Ախր ջահել չի, ծեր մարդ է, առավոտյան ինչքան ասացի՝ այ հեր, մի եկ, ինձ չլսեց։ Ասում է անպայման պիտի գամ, ումի՞ց եմ պակաս։

— Ճիշտ է ասում, դու նրա հասակին մի նայիր, դեռ ջահել է։

— Էհ, դու էլ նրա խոսքերին ես նայում։ Ոսկորներն են մնացել։ Մեկ-մեկ որ հիվանդանում է, մեջքին բաժակ եմ գցում, կաշին էլ ուզում է բաժակի հետ պոկվել։ Վրան միս չի մնացել։

— Միսն ինչի՞ է հարկավոր, մարդու ոսկորը պինդ լինի։ Հրեն Թերահովատն էլ է մսակալել, բայց ի՞նչ օգուտ,

քանակ չեն տանում։ Լավ, էդ հալա մի կողմ, դու հետը խոսեցի՞ր...

Քանի՛ երրորդ անգամն էր, որ Եղիշեն այդ հարցը տալիս էր Արևհատին։

Մի տարի առաջ գոմերում Արևհատը կաթով լիքը դույլը բարձրացնելիս Եղիշեն տեսավ նրա թևատակից թեթևակի բացված կրծքի մի մասը և ապշեց, մնաց տեղը կանգնած։ Նա այդտեղ առաջին անգամ զգաց, որ ինքն արդեն տղամարդ է, առաջին անգամ զգաց, որ աշխարհում կին կա և կինը կարող է գրավել մարդուն, հմայել նրան, կաշկանդել միտքը, իր հայացքով, իր արտաքինով այրել, տոչորել սիրտը։ Նա այդտեղ առաջին անգամ զգաց, որ Արևհատը գեղեցիկ է, թարմ՝ մայիսյան բողբոջած վարդի կոկոնի պես, բուրումնավետ, ինչպես ծաղկափթիթ յասաման։ Նա հենց այդտեղ էլ զգաց, որ Արևհատը խելոք է, պարկեշտ, առաքինի։ Առաջ էլ Եղիշեն ամեն օր տեսնում էր նրան, խոսում հետը, լսում նրա ելույթները՝ ժողովներում։ Բայց ինչո՞ւ մինչև այդ օրը նա ոչ մի անգամ չէր նկատել նրա գեղեցկությունը, չէր զգացել նրա հմայքը,

Այդտեղ ահա, գոմում, կաթի դույլը բարձրացնելիս, Եղիշեն կարծես մի ակնթարթում իմաստուն դարձավ, հասկացավ ամեն ինչ, զգաց ամեն ինչ և սիրտն ամբողջովին կլանվեց Արևհատով։

Այնուհետև նա Արևհատից ոչ բաժանվել էր ուզում, ոչ հեռանալ։ Ամեն անգամ առիթ էր փնտրում նրա հետ առանձնանալու, խոսելու։ Եվ մեկ օր, դաշտից միասին տուն գալիս, Եղիշեն համարձակվեց ասել.

— Արևհատ, եթե ես քեզ ուզեմ, ի՞նչ կասես...

— Ինչո՞ւ ես ինձ ասում, հորս ասիր,— ամոթից շառագունած պատասխանեց Արևհատը և երկչոտ եղնիկի պես չորս կողմը նայելով հեռացավ նրանից, սրտում մի կասկած տանելով, թե, արդյոք, ոչ ոք չլսե՞ց իրենց։

Եղիշեն ամաչում էր Արևհատի մասին Նավասարդ պապի հետ խոսել։ Նա խնդրում էր, որ ինքը՝ Արևհատը խոսի հոր

հետ։ Արևհատն էլ խոստանում էր կատարել Եղիշեի ցանկությունը, բայց չէր կատարում։ Նա ևս ամաչում էր հորից։ Եվ ահա, այդ ժամանակ էլ, ժայռի տակ, Եղիշեի հարցին նա դարձյալ նույն պատասխանը տվեց.

— Չէ, չեմ խոսել։

— Ախր ինչո՞ւ։

— Որովհետև, գիտեմ, ասելու է՝ ամոթ է, ուրիշները հրեն կռվի դաշտում արյուն են թափում, իսկ դուք ամուսնանալու մասին եք մտածում։

— Կռիվն ի՞նչ կապ ունի դրա հետ, մեկը մյուսին հո չի խանգարում։ Քչե՞րը կան, որ հա՛մ ամուսնացած են, համ երեխաներ ունեն, համ էլ առյուծի պես կռվում են։ Ախր ես որքա՞ն սպասեմ. ամեն օրն ինձ համար մի տարի է թվում, իսկ անտեր պատերազմի վերջն սկի չի երևում։

— Էդ կույրերն են, որ չեն տեսնում,—խսկույն ընդհատեց Արևհատը,—աչքը բաց մարդիկ պատերազմի վերջն էլ են տեսնում, նրանից հետո եկող գեղեցիկ օրերն էլ։ Որ լավ մտիկ տաս, դու էլ կտեսնես։ Հարկավոր է սպասել, բա չե՞ս իմանում, որ լավ պտուղն ավելի ուշ է հասնում։ Ինչքան երկար սպասես, էնքան ավելի կքաղցրանա։

— Իսկ հասած պտուղը եթե ժամանակին չքաղես, կարող է փթել,—ասաց Եղիշեն և իր պատասխանից գոհ շարունակեց,—չէ, Արև ջան, էլ չեմ կարող համբերել։ Էսօր-էգուց պետք է կռվի գնամ, գոնե հույս կունենամ, որ դու իմն ես, որ դու տանն ինձ ես սպասում։ Դրանից ես էլ ավելի լավ կկռվեմ, ավելի սրտով, որ թշնամին շուտ ջախջախվի, ավելի շուտ վերադառնամ տուն, քեզ մոտ... Արև ջան, էլ չեմ կարող սպասել. ինչ ուզում է լինի, պետք է հարցը լուծենք էս քանի օրը։

— Լավ, դու հիմի ինձնից ի՞նչ ես ուզում, եթե էդքան անհամբեր ես, գնա ինքդ խոսիր հետը։

— Դե գնանք, գնանք նրան գտնենք և էս րոպեիս էլ հարցը լուծենք,—վճռականորեն ասաց Եղիշեն ու Արևհատի հետ ժայռի տակից դուրս եկան։

Կոլխոզնիկները խմբվել էին մի տեղ։ Նրանք, յուրաքանչյուրը մի քանի խուրձ խոտ կապած, սպասում էին Եղիշեին և Արեհատին, որ գան ու միասին վերադառնան գյուղ։ Արեհատն ու Եղիշեն երևալուն պես Նավասարդ ապերն ասաց.

— Աղջի, էդ ուրտե՞ղ մնացիք, մենք առավոտվանից ձեզ ենք սպասում։

— Ինչ է, առաջ ես ընկնում, որ նկատողություն չանեմ,—պատասխանեց Արեհատը,—էսօր դու մեր գործը փչացրիր, ես քեզ առավոտն ասացի՝ մի եկ, ծեր մարդ ես, խոտ կրելը քո գործը չի։

— Սրտիս մի դիպչիր, Արեհատ,—ընկճված ասաց հայրը,—Մոլլա-Նասրադդինն ասում է՝ ծեր մարդու սիրտը բարակ շուշա է, որ կոտրվեց, էլ չի շինվի։

— Սրտիդ ինչո՞ւ է դիպչում, այ Մոլլա, ծերացել ես էլի, ինչո՞ւ չես վիզդ առնում, ճշմարիտ։

— Դու շատ էլ մի ուրախանա ծերությանս վրա, Եփրեմվերդի, էդ ուղտը քո դռանն էլ է չոքելու։ Ես ուզում էի էսօր առաջավոր լինել, վաղեցի, էդ փորձանքը եկավ գլուխս։

— Ոչինչ, Նավասարդ ապեր, մենք քեզ նոր չենք ճանաչում,—տեսնելով, որ ծերունին ընկճված է, ասաց Արաքսյան,—գիտենք, որ խոսքիդ տեր մարդ ես, թերահավատների վրա դու ուշադրություն մի դարձնի։

— Այ ախպեր, ախր ես ի՞նչ ասացի, ի՞նչ եք ուզում ինձանից,—դժգոհեց Ալեքսանը և իր հարած խոտը գցեց ուսով, որ հեռանա, բայց Եփրեմ բիձան բռնեց նրան։

— Դու էլ ի՞նչ ես քո շվաքից խրտնել, քո անունն էստեղ ո՞վ տվեց։

— Չէ, դու չգիտես, նրանք խոսքը պարզ չեն ասում, համա ես գիտեմ, որ քարն իմ բախչան են գցում։

— Բախչիդ դռները պինդ փակիր, Ալեքսան, թե չէ քարերով կարող է լցվել,—կատակեց Եղիշեն և տեսնելով, որ հեռվից մեկը վազեվազ դեպի իրենց է գալիս, ավելացրեց —

սպասեցեք, սպասեցեք, Վերջին ժամը վազելով գալիս է։

Մարդիկ իրենց հայացքներն ուղղեցին Եղիշեյի ցույց տված ուղղությամբ։ Մեկը նրանց կողմն էր վազում արագ, հևիհև։ Նա շտապելուց մերթ վայր էր ընկնում, խրվում ձյան մեջ, մերթ ոտքի կանգնում, իրենից թափ տալիս ձյունը, էլի առաջ գնում։

— Այ տա, ասում եք եկողն ո՞վ է,—ուշադրությամբ դեպի եկողը նայելով հարցրեց Եփրեմ բիձան։

— Վերջին ժամն է, Եփրեմ բիձա, խրճիթվար Նազիկը։

— Մոլլա-Նասրադդինը դրան գարնան ծիծեռնակ կասեր,—վրա բերեց Նավասարդ ապերը,—էդ աղջիկն ամեն անգամ երևալիս ծիծեռնակի պես մի բարի լուր է բերում։

— Վերջին ժամը ծիծեռնակից շատ բարի լուր է բերում և դրա լավն էն է, որ չի սպասում միայն գարնանը, միշտ գալիս է—ամառ լինի, թե ձմեռ...

— Էդ մեկը ճշմարիտ է, հալա գիշերն էլ է գալիս, ճշմարիտ,—լրացրեց Եփրեմ բիձան։

Նազիկը դեռ չհասած նրանց, հանկարծ խրվեց ձյան մեջ։ Նա այդտեղ առանց ոտքի կանգնելու, ձեռքին քառածալ մի թուղթ բարձրացրած կանչեց.

— Արաքսյա, Արաքսյա, հեռագիր, հեռագիր...

Եղիշեն վազեց դեպի աղջիկը։

— Ի՞նչ հեռագիր է, աղջի։

— Ստալինից, ընկեր Ստալինից, մեր գյուղին, Արաքսյային, Նավասարդ ապորը, Կարմիր Բանակի մասին հոգալու առթիվ՝ շնորհակալություն...

Մի ամիս առաջ արձագանքելով սարատովցի Ֆերապոնտ Գոլովատիի կոչին—իրենց խնայած միջոցներով Կարմիր Բանակին օգնելու մասին, կաթնաձորցիք էլ էին զգալի գումար հատկացրել բանակի գեներալ Բաղրամյանի անվան տանկային շարասյուն կառուցելու համար։ Միայն Արաքսյան տվել էր հարյուր հազար ռուբլի։ Արևհատն ու Նավասարդ ապերը տվել էին հիսուն հազար ռուբլի։ Գերագույն Գլխավոր Հրամանատար Ստալինը Կարմիր Բանակի

անունից շնորհակալություն էր հայտնում նրանց՝ հայրենասիրական այդ ազնիվ գործի համար։

Նազիկի բերած լուրն իրարանցում առաջ բերեց կոլխոզնիկների շարքերում։ Բոլորն էլ ուրախ բացականչություններով վազեցին դեպի խրճիթվարը, իսկ նա դեռ խրված էր ձյան մեջ ու չէր կարողանում դուրս գալ։ Եղիշեն բռնեց, բարձրացրեց, ձյունը թափ տվեց վրայից, իսկ Նավասարդ-ապերը նրա ձեռքից խլեց հեռագիրը։

— Դու կարդալ չես իմանում, հեռագիրը տուր ինձ, տեսնեմ ինչ է գրված,— դիմեց նրան Արաքսյան, բայց ծերունին հեռագիրը չտվեց։

— Սխալվում ես, Արաքսյա,— ասաց նա,— ուրիշի գրածը, գրուստ է, չեմ կարողանում կարդալ, համա ընկեր Ստալինի գրածը կարդում եմ։ Ստալինի գիրը բոլորն էլ կարողանում են կարդալ։

— Դե հերիք է շատախոսես, այ Նավասարդ, մի դեսը տուր տեսնենք էդ հեռագիրը,— Սանթուր քեռին այդ ասելով խլեց թուղթը, մոտեցրեց աչքերին, որ կարդա, նրա ձեռքից էլ խլեց Արաքսյան, Արաքսյայի ձեռքից խլեց Եղիշեն, Եղիշեյի ձեռքից՝ Արևհատը։

Եվ այդպես մի քանի րոպե շարունակ ձեռքից-ձեռք էր անցնում հեռագիրը, ամեն մեկը ցանկանում էր առաջ ինքը կարդալ մեծ Ստալինի շնորհավորական խոսքերը, իսկ օրը մթնում էր, մշուշը հետզհետե ավելի էր թանձրանում և նրանց բոլորին առնում իր կաթնագույն քողի տակ։

8.

Ստալինի հեռագիրն անսովոր ոգևորություն էր առաջացրել գյուղում։ Կոլխոզնիկներից յուրաքանչյուրը համարում էր, որ անձամբ իրեն է ուղղված այդ հեռագիրը, մեծ առաջնորդը նրան է կոչ անում՝ աշխատել և օգնել Կարմիր Բանակին։ Եվ նրանք աշխատում էին անձնվիրաբար, ոչ մի ջանք չէին խնայում դժվարությունները հաղթահարելու, շրջանում առաջնությունը ձեռքից չտալու համար։

Արաքսյան տարվել էր աշխատանքով։ Նրա դեմքից արդեն չքացել էր թախիծը, մռայլությունը։

Սկզբում, երբ նրան կոլխոզի նախագահ էին ընտրել, երկչում էր, կարծում էր, թե չի կարողանալու աշխատել, չի կարողանալու ղեկավարել կոլխոզը, տապալելու է աշխատանքները, գցելու է և՛ իր, և՛ կոլխոզի անունը։ Բայց վերջին օրերի ընդհանուր ոգևորությունը կոլխոզում՝ նրան ներշնչել էր ինքնավստահություն, վճռականություն, հաստատակամություն։ Նա արդեն պատրաստվում էր գարնանացանի, ամռան անասունները սար տանելու, այգիները մշակելու համար։ Այդ եռուն աշխատանքների մեջ նա արդեն մոռացել էր իր անձնական վիշտը, և չէր մեկուսանում, խուսափում մարդկանցից, լաց լինում։ Ընդհակառակը, ոգևորում էր բոլորին, հուսադրում նրանց, ովքեր կորցրել էին իրենց հարազատներին, մերձավորներին, կատակում էր, երգում ընկերուհիների հետ։

Սակայն մի հանգամանք դարձյալ փչացրեց նրա տրամադրությունը։

Լուր տարածվեց գյուղում, որ իբր թե Արաքսյան ամուսնանում է Դարբինյանի հետ։ Ոմանք արդեն հաստատապես ասում էին, թե շուտով կլինի հարսանիքը։ Եվ դրան էին վերագրում այն, որ կոլխոզի նախագահը վերջերս աշխուժացել էր, ուրախ էր լինում։

Այդ լուրն ամենից շատ վրդովել էր Գուրգեն Սաթինյանին։ Նա այդ մասին այսպես էր դատում.

— Հանցավորն Արաքսյան է,— ասում էր նա,— Դարբինյանն ազատ մարդ է, նա պետք է մեկն ու մեկի հետ ամուսնանա։ Արաքսյան չպետք է տեղիք տար իրեն այդպիսի առաջարկություն անելու։ Նա ամուսնացած է, նա հավատարիմ լինելու խոսք է տվել մեկին ու կռվի դաշտ ուղարկել նրան։ Այդպե՞ս է կատարում իր հավատարմության պարտքը։ Չէ, չի լինի, եթե ամեն մարդ իր ցանկացածը կատարի, հազարավոր ընտանիքներ կդժբախտանան։

Եվ այդ պահին նրա աչքերի առաջ կանգնում էր իր

կինը—Անթիկը։ Նա էլ խաբվեց, մոռացավ ամուսնուն, տունը, ըմբոստացրեց իրեն...

Հուզմունքից Սաթինյանի լեզուն կապ էր ընկնում, նա մոռանում էր խոսքերը, վրդովմունքից դողդողում էր ամբողջ մարմնով։

— Ով գիտե, եթե մեկը լիներ, խորհուրդ տար, գուցե Անթիկն էլ չամուսնանար, սպասեր... Չէ, Արաքսյա, քո ուզածը չի լինի, խոսքն էլ չազդի քեզ վրա, բռունցքը կազդի։ Հիմա սանձարձակության ժամանակ չի...

Նա որոշել էր այդ օրը և եթ տեսնել Արաքսյային, խոսել հետը, համոզել, որ թողնի Դարբինյանի հետ ամուսնանալու միտքը, չանվանարկի իրեն, ոտնատակ չտա ամբողջ կոլխոզի պատիվը։ Նա այդպես էլ համոզված էր, գըտնում էր, որ նախագահի պատիվը՝ ամբողջ կոլխոզի պատիվն է. ընկավ նախագահի հեղինակությունը, կընկնի կոլխոզի հեղինակությունը։ Շրջանում ոչ ոք հաշվի չի նստի իրենց հետ, կվերանա համերաշխությունը կոլխոզնիկների միջև և կքայքայվեն ամբողջ շրջանում երբեմնի ամենաառաջավոր համարվող իրենց կոլխոզի աշխատանքները։

Գուրգեն Սաթինյանը գիտեր, որ Արաքսյան համառ է, իր ասածին, և այդ հարցի մասին նրա հետ խոսելն ու իր վճռից ետ պահելն այնքան էլ հեշտ չի լինելու։ Նա գիտեր, որ խստությամբ կամ հայհոյանքով չի կարելի խոսել նրա հետ։ Հարկավոր էր հանգիստ տոնով համոզել նրան, և Սաթինյանն արդեն մտածել էր, թե ինչպես պետք է սկսի զրույցը, ինչպես պիտի խոսի հետը։ Բայց Արաքսյան չկար այդ օրը, նրան խորհրդակցության էին կանչել շրջանային կենտրոն և նա այնտեղից պիտի վերադառնար ուշ երեկոյան։ Դրա համար էլ Սաթինյանն առավոտյան գնաց ֆերմաները՝ աշխատանքներն ստուգելու, իսկ իրիկնադեմին այնտեղից վերադառնալիս ճանապարհին հանդիպեց Վազգեն Դարբինյանին, որը վերջին ժամի հետ գնում էր դեպի գոմերը։

Դարբինյանին ուրախացրեց այդ հանդիպումը։ Նա վեր-

ջերս սկսել էր սիրել Գուրգենին, հաճախ էր գնում մոտը զրուցում հետը, լսում նրա ճակատային պատմությունները: Նա տեսնում էր, որ Սաթինյանն ազնիվ, հավատարիմ տղա է, աշխատունակ, ձեռներեց: Նրան ոչխարաբուծական ֆերմայի վարիչ նշանակելուց հետո զգալի չափով բարելավվել էին աշխատանքները. մարդիկ դասավորվել էին ըստ իրենց ընդունակությունների և արդեն բոլորն էլ զգում էին, որ նրա ֆերման կոլխոզում ամենալավ ցուցանիշները կունենա:

Դարբինյանը տեսնելով Գուրգենին, ուզեց հարցնել նրանից ոչխարների ծինի մասին, սակայն նկատելով նրա մռայլ դեմքը, ասաց.

— Էդ ի՞նչ է, Գուրգեն, կարծես քացախ խմած լինես:

— Լավ չես տեսնում, առհասարակ կուրացել ես և աչքերիդ ամեն ինչ թարս է երևում:

Դարբինյանին թվաց, թե նա կատակ է անում և ուզեց ինքն էլ կատակով պատասխանել:

— Ավելի՞ լավ է երևույթներին կույրի պես նայել, քան թե կորած-մոլորված ոչխարի պես:

— Քո կույր աչքերի փոսը ես աղ ու տախտեղ կլցնեմ, եթե դու հայացքդ չփոխես:

Դարբինյանն ապշած կանգ առավ, ակնապիշ նայեց Գուրգենին: Գուրգենը սփրթնել էր և վրդովմունքից դողդողում էր: Անասնաբուժին թվաց, թե նա հարբած է և հազիվ է կանգնում ոտի վրա:

— Գուրգեն ջան, ի՞նչ է պատահել քեզ:

— Ինձ ոչինչ չի պատահել, ինչ պատահել է, քեզ է պատահել, դու ես գործերդ թողել, ընկել կարմրբանակայինների կանանց ետևից, ուզում ես խայտառակել նրանց անունը:

Դարբինյանն ամեն ինչ հասկացավ: Նա հասկացավ, որ Սաթինյանը կատակ չի անում, իրոք վրդովված է: Նա շփոթվեց, կորցրեց իրեն, չիմացավ ինչ ասել: Բայց նրա լռությունն ավելի զայրացրեց Գուրգենին: Նա մի քանի քայլ մոտեցավ, բռնեց անասնաբուժի օձիքից, աչքերը հառեց նրա աչքերին:

— Նախ զգուշացնում եմ, տես, հետևանքը վատ կլինի։

— Դու, ինչ է, սպառնո՞ւմ ես։

— Ասացի, որ նախազգուշացնում եմ, քեզ լավ պահիր։

— Ախր դու ո՞վ ես, որ նախազգուշացնում ես ինձ, քո ի՞նչ գործն է։

— Ես ո՞վ եմ, ես էս գյուղի տերն եմ։ Եթե էդպես շարունակես, քիթ ու մռութդ կջարդեմ ու հետ կուղարկեմ քո եկած ճանապարհով։

Դարբինյանի ինքնասիրությունը վիրավորվեց. նա էլ կորցրեց սառնասրտությունը և սաստող տոնով ասաց.

— Լսիր, չափդ ճանաչիր, գլխիցդ ավել-պակաս դուրս մի տուր,— և ապա հետ հրելով Սաթինյանին, օձիքն ազատեց նրա ձեռքից։ Գուրգենը մեկ էլ տարավ ձեռքը, բռնեց նրան, ձգեց իրեն, ուժգին թափահարեց։

— Դե՛ բավական է, բաց թող ինձ, քյալլագյոզի մեկը,— կրկին հրելով նրան ասաց անասնաբույժը, ուզեց ազատվել նրանից, բայց Սաթինյանն այնպես էր բռնել Դարբինյանի շապկից, որ նա չկարողացավ ազատվել։ Այդ ժամանակ նա հրեց Սաթինյանի կրծքին, որ նա բաց թողնի իրեն, բայց դրանից Սաթինյանն ավելի կատաղեց, իր մի ձեռքով դեպի իրեն ձգեց անասնաբույժին և գլխով սաստիկ հարվածեց նրա ծնոտին։

Դարբինյանի քթից ու շրթունքներից արյունն սկսեց հոսել, թափվել շապիկի վրա։ Վերջին ժամը, որ մինչև այդ լուռ ու զարմացած նայում էր նրանց, տեսնելով անասնաբույժի արնոտած դեմքը, ահաբեկված ճչաց.

— Վա՜յ, օգնեցե՛ք, օգնեցե՛ք, սպանեց, սպանեց...

Աղջկա ճչի վրա Գուրգենը սթափվեց և բաց թողեց անասնաբույժին։ Դարբինյանը ձեռքը տարավ դեպի գրպանը, որ այնտեղից թաշկինակ հանի, մաքրի արյունը, բայց թաշկինակ չկար։ Նա ձեռքով սրբեց քիթը, շրթունքները, որից արյունն ավելի ցրվեց, պատեց երեսը։ Գուրգենը տեսնելով անասնաբույժի արնոտ դեմքը, իսկույն ուշքի եկավ, սարսեց իր արածից։ Նրա մարմնով սաստիկ մի դող

անցավ, զղջաց, մտքում սկսեց մեղադրել իրեն, որ անտեղի կերպով տաքացավ, կորցրեց իրեն, արեց այն, ինչ մինչև այդ մտքով անգամ չէր կարող անցկացնել։ Եվ այդ ժամանակ նա ուզեց մոտենալ, իր Թաշկինակով սրբել Դարբինյանի երեսը, ներողություն խնդրել նրանից, բայց ամաչեց, թողեց նրան, կտրուկ շուռ եկավ, գնաց դեպի գյուղ։

Իրիկնամուտ էր։ Ամպերը կուտակվել էին դիմացի բարձըր սարի գագաթին, իսկ հեռու-հեռավոր դաշտավայրերից փչում էր քամին։ Թեև սաստիկ չէր ցուրտը, բայց Սաթինյանի մարմինը սարսռում էր։ Նա բարձրացրեց շինելի օձիքը, կուչ եկավ, արագացրեց քայլերը։ Մտքերը պղտոր էին, սիրտը՝ տխուր։ Քիչ առաջ կատարված դեպքը տանջում էր նրան։ Նա մինչ այդ չէր մեղադրում Դարբինյանին, չէր ուզում այդ մասին խոսել նրա հետ։ Բայց չգիտես ինչու վիճեց, անսպասելի կերպով բորբոքվեց, կռվեց և այժմ խիղճը տանջում էր նրան, զգում էր, որ անարդար վարվեց։ Ինչքան շատ էր մտածում այդ մասին, այնքան ավելի էր զայրանում իր դեմ, այնքան ավելի խորն էր մեղադրում իրեն։

Այդպես մտախոհ հասավ տուն։

Տանը մայրը նրան սպասում էր ճաշի։ Պառավը գիտեր, որ որդին շատ է սիրում կորկոտով քաշովի։ Քաշովի էր պատրաստել, սրտատրոփ սպասում էր որդու վերադարձին, որ միասին ճաշեն։ Իսկ երբ նա եկավ, մայրը նայեց դեմքին, իսկույն զգաց, որ որդին մտախոհ է, անշուշտ մի անախորժություն է պատահել։ Նա ոչինչ չհարցրեց, սպասեց, որ Գուրգենը ինքը պատմի։ Իսկ Գուրգենը լուռ էր, չէր խոսում, չէր էլ երևում, որ տրամադրություն ունի խոսելու։ Նա արդեն մոտեցել էր անկողնին, պատրաստվում էր շորերը հանելու։

— Վա, բա չե՞ս ճաշում,—զարմացած հարցրեց մայրը։

— Չէ, գլուխս ցավում է։

Մայրը թախծոտ նայեց որդուն, զգաց, որ նա ճիշտ չի ասում։ Մոր սիրտը կսկծաց, նա ուզեց իմանալ որդու վշտի պատ-

ճառը։ Իսկ որդին լուռ էր, կարկտաբեր ամպերի պես մռայլ։

Մայրը տանջվում էր, նա դեռ ցերեկվանից պատրաստվում էր տղայի հետ լուրջ խոսելու։ Այդ օրը հարսը եկել էր նրա մոտ, լաց եղել, պատմել, որ ինքը դժբախտ է, Աթանի հետ օր չունի, ուզում է տեսնել Գուրգենին, խոսել հետը։

Սանամ բիբին սիրում էր Անթիկին իր հարազատ զավակի պես։ Նա անչափ ուրախ կլիներ, որ հարսը վերստին վերադառնար իրենց մոտ, ապրեր իր որդու հետ, և նա խոստացել էր այդ մասին երեկոյան խոսել Գուրգենի հետ, խնդրել, որ նա հաշտվի, նորից ամուսնանա Անթիկի հետ։ Իսկ երբ մոտեցավ Գուրգենին, նա արդեն վերմակը քաշել էր գլխին։

— Քնեցի՞ր։

— Չէ, ի՞նչ է որ,—վերմակի տակից հարցրեց նա։

— Էս օր Անթիկը եկել էր էստեղ։

— Ղալաթ էր արել։

— Ասում է հիմարություն եմ արել, թող ների։

— Ասա, եթե մեկ էլ ոտը դնի էս տունը, էլ կենդանի դուրս չի գա...

Նա շրջվեց մյուս կողին, վերմակն ավելի քաշեց գլխին, դրանով իսկ հասկացնելով մորը, որ խոսակցությունը վերջացավ։ Մայրը նստեց որդու անկողնու մոտ, թախտի ծայրին և լռեց։

9.

Վազգեն Դարբինյանը երկու օր շարունակ նույն խնդրի մասին էր մտածում—թողնել, հեռանալ Կաթնաձորից։

Երեսունից անց այդ մարդը, որ կյանքում երբեք և ոչ ոքի սեր չէր բացատրել, սիրո մասին միայն գրքերից էր գաղափար կազմել, այժմ սիրահարվել էր պատանու պես, կորցրել էր տոկունությունը, աշխատանքի եռանդը և այդ դրությունից դուրս գալու միակ ելքը գտնում էր գյուղից հեռանալու մեջ։ Ուրիշ ելք չկար։ Որքան շատ մնար այդտեղ, այնքան ավելի էր խորանալու այդ անհույս, անհեռա-

նկար սիրո զգացումը, այնքան ավելի էր տանջվելու նրա սիրտը, նրա հոգին։ Արաքսյայից նա երբեք դրական պատասխան չէր ստանալու. այդ գիտեր հաստատ։ Արաքսյան երբեք հույսը չէր կտրելու ամուսնուց։ Որքան շատ անցներ ժամանակը, Արաքսյան այնքան ավելի կարոտով էր սպասելու իր ամուսնու վերադարձին և ուրիշի հետ ամուսնանալու ոչ մի ձգտում ու ցանկություն չէր ունենալու։ Ապա էլ ինչո՞ւ սպասել, ի՞նչ հույսով, ի՞նչու տառապել անպատասխան սիրո համար, ինչո՞ւ ենթարկվել ծաղրանքի ու անտեղի հալածանքի։

Այդ մտորումների ժամանակ նա սեղանից վերցրեց հայելու փոքրիկ կտորը, մոտեցրեց նավթի ճրագին, նայեց իրեն։ Վերին շրթունքն ուռել էր, կապտել։ Դեմքն այլանդակվել էր։ Այդ վիճակում նա ինչպե՞ս պետք է մարդամեջ դուրս գար, երևար ծանոթներին, Արաքսյային։ Բոլորն էլ գիտեին պատճառը, բոլորն էլ ծաղրելու էին իրեն։

Ամոթի ծանր զգացումը նստել էր նրա սրտին, թվում էր, թե հենց այժմ աներևույթ տեղերից հազարավոր աչքեր հառել են իրեն, նայում են իրեն, նրա շրթունքի ուռուցքին և ասում.— ամոթ քեզ, Վազգեն Դարբինյան, այդպե՞ս ես կատարում սովետական քաղաքացու քո պարտականությունը, այդպե՞ս ես պահում կարմիրբանակայինի ընտանիքի պատիվը։ Երբ քո հասակակիցներն արյուն են թափում Հայրենիքի համար, ժողովրդի կյանքի ու ազատության համար, դու թիկունքում նստած, կռվից հեռու, փոխանակ ազնվորեն աշխատելու, աչքդ գցում ես բանակայինի կնոջ, խաղում ես այն մարդու պատվի հետ, որը...

Նա դեն գցեց հայելին, գլուխը կախեց սեղանին, ծանր ամոթից ջուխտ ձեռքով ծածկեց դեմքը։ Սակայն ճնշող մտքերն էլի դադար չտվին նրան, նրան թվաց, թե այդ խոսքերը ոչ թե մտածում է ինքը, այլ լսում է ամեն տեղից—պատուհանից, դռան ճեղքից, պատերի անցքերից, տանիքից, հատակից...

Այդպես տևեց բավականին երկար։ Հետո նա ոտքի

ելավ, բարձրացրեց գլուխը, վերցրեց թղթի մի կտոր, թանաք, պատրաստվեց դիմում գրելու շրջանային հողբաժնին, որ իրեն ուրիշ գյուղ փոխադրեն։ Բայց նա դեռ չէր մտածել, թե ինչպես պատճառաբանի իր հեռանալը։

— Աշխարհում ամենալավ բանն անկեղծությունն է,— երկար մտածելուց հետո ինքն իրեն ասաց նա,—անկեղծորեն կգրեմ, որ…

Գրիչը դարձյալ ցած դրեց, կանգ առավ։ Դա պատճառաբանություն չէր։ Դրա համար նրան չէին փոխադրի ուրիշ տեղ։ Ընդհակառակը, կծիծաղեին վրան, կհամարեին մանկամիտ ու դիմումը կմնար անհետևանք։ Եվ նա որոշեց անպայման հիմնավորված պատճառաբանություն գտնել։

Մի քանի տարի առաջ սիրտն սկսել էր անհանգստացնել. դիմել էր բժշկի և նրան ասել էին, թե սրտի թուլություն ունի, պետք է խոնավ լեռնավայրերում աշխատելուց։

Հրաշալի պատճառ էր։ Այդպես էլ վճռեց. խնդրել շրջանային հողբաժնին, որ իրեն տեղափոխեն աշխատելու հարթավայրային մի գյուղում։

Դիմումի դեռ առաջին բառերը չգրած, դուռը ծեծեցին։ Դարբինյանը ցած դրեց գրիչը, ոտքի ելավ, բաց արեց։

Առաքյան էր։ Այդ օրը նա շրջանային խորհրդակցությունից գալով, լսել էր Դարբինյանի և Սաթինյանի միջև տեղի ունեցած կռվի անախորժ լուրը և առանց հանգստանալու, առանց ճաշելու, շտապել էր Գուրգենի մոտ, կռվել, հայհոյել, որ նա թույլ էր տվել իրեն այդպիսի անվայել քայլ։ Գուրգենի մոտից դուրս գալուց հետո նա վճռել էր Դարբինյանի մոտ էլ գնալ։

Դարբինյանը տեսնելով կոլխոզի նախագահին, նախ շփոթվեց, բավականին ժամանակ դռան առաջ կանգնելով չիմացավ ինչ անել։ Առաքյան առաջին անգամն էր լինում Դարբինյանի մոտ։ Նա ոչ մի անգամ չէր եղել այդտեղ։ Անսպասելի այցից անասնաբույժը շվարեց, մնաց դռան շեմքում կանգնած, բայց հետո էլ՝ ուշքի գալով, հետ քաշվեց դռան մոտից. ներս հրավիրեց նրան։

— Անշուշտ եկել ես ինձ նախատելու, այդպես չէ՞,— շփոթված ասաց Դարբինյանը։

— Ոչ, եկել եմ եռանդդ գովելու,—իրոնիայով պատասխանեց Արաքսյան, որ Դարբինյանի վրա ևս բարկացած էր, գտնում էր, որ նա կարող էր խուսափել, տեղիք չտալ այդպիսի անախորժության,—մեծ քաջագործություն եք կատարել, ինչու պիտի նախատեմ որ։

— Ես մեղավոր չեմ, Արաքսյա, հավատա, մեղավոր չեմ։

— Տեսնում եմ, հրեդ ուռած շրթունքիցդ է երևում։

Դարբինյանը ցնցվեց, ամոթից կարմրեց։ Նա լուռ ետ դնաց, ընկճված նստեց թախտի վրա, գլուխը կախեց։ Արաքսյան իսկույն զգաց, որ խիստ արտահայտվեց։ Նա զղջաց ասածի համար և ինքն էլ լռեց։ Տիրեց երկարատև լռություն։ Դարբինյանն էլ չհամարձակվեց բարձրացնել գլուխը, նայել Արաքսյային, գեթ մի խոսք ասել նրան, արդարանալ։ Արաքսյան փորձեց մեղմել ասած խոսքի տպավորությունը, հուսադրել նրան, բայց միտքը մի բառ չեկավ, չիմացավ ինչպես դուրս գալ վիճակից։ Երկար լռությունից հետո միայն նա ասաց.

— Լավ չեք արել, շատ վատ բան եք արել։

— Դե ինչ արած, էդ էլ երևի ձեր կոլխոզի բախտից է։ Ուրիշ գյուղեր խելքը գլխին մարդիկ են գնում, աշխատում են, օգնում կոլխոզի աշխատանքներին, իսկ ձեր գյուղը անասնաբուժի փոխարեն եկավ խուլիգանի մեկը, սկսեց...

— Քեզ ոչ ոք խուլիգան չի համարում,—իսկույն նկատեց Արաքսյան,—ընդհակառակը, մենք քեզ համարում ենք առաջավոր, կուլտուրական մարդ։ Դրա համար էլ դու պետք է այնպես անեիր, որ գործն այդպես չբարդանար։ Եթե Գուրգենն իրեն կորցրել էր, միթե դու չէիր կարող թողնել հեռանալ, վեճի չբռնվել նրա հետ։ Հետո նա կխաղաղվեր, ամեն ինչ կանցներ։

— Դու ճիշտ ես ասում, Գուրգենը ոչ մի հանցանք չունի, մեղավորը ես եմ։

Արաքսյան նայեց Դարբինյանին և ամբողջ հոգով խըղ-

ձայց նրան։ Նա այնքան էր ընկճված, այնքան հուսահատ, որ կարծես թե պատրաստ էր լաց լինելու։ Կոլխոզի նախագահը մոտեցավ նրան, ձեռքը դրեց ուսին, քնքշալիր ասաց.

— Էլ անցել է, հարկավոր է մոռանալ։

— Ինչպե՞ս մոռանալ։ Սա մոռանալ կլինի։ Ես մոռացա. բա գյուղում կմոռանա՞ն։ Ո՛վ գիտե, լուրը դեռ շրջանային կենտրոն էլ կհասնի, կմեղադրեն ինձ, կպախարակեն, որ…

Դարբինյանը խոսքը չկարողացավ ավարտել։ Նա ուզում էր ասել, որ ծեծվել է իրեն անվայել քայլ թույլ տալու համար, բանակայինի կնոջով տարվելու համար, կոլխոզնիկներին բարոյալքելու համար։ Իր իսկ մտորումներից նա ավելի էր ճնշվում, տառապում հոգեպես, թվում էր, թե խայտառակվել է ամբողջ շրջանում։

— Մի հուսահատվիր, ոչ ոք քեզ չի մեղադրի,— տեսնելով Դարբինյանի այլայլվածությունը, հուսադրեց Արաքսյան։

— Հեշտ է ասելը՝ մի հուսահատվիր… Ախր ինչի՞ էին պետք այս բոլորը։ Ես համոզված էի, որ սա լավ հետևանքի չի հասցնի, ինչո՞ւ թույլ տվեցի, ինչու…

— Լավ, ախր դու ի՞նչ ես արել որ։

— Ինքս էլ չգիտեմ, թե ինչ եմ արել։ Երևի մի բան արել եմ, որ մարդիկ կռվում են հետս։

— Թող, երեխա չես։

— Երեխա՛ չեմ, երեխայից էլ վատ եմ։ Էն օրվանից, որ եկա էս գյուղը, երեխա դառա, մոռացա ինձ, մոռացա ամեն ինչ, մոռացա ամբողջ աշխարհը, միայն դու մնացիր աչքերիս առաջ, դու մտար սիրտս։

— Բավական է, չեմ սիրում հիմար խոսակցություններ լսել,— փորձեց ընդհատել նրան Արաքսյան, բայց Դարբինյանը չկարողացավ զսպել իրեն, շարունակեց նույն տոնով։

— Չէ, մի ընդհատիր, Արաքս ջան, թող ասեմ, ինչ կուտակվել է սրտումս։ Սա վերջին անգամն է, էլ չենք խո-

սելու այդ մասին։ Դու էլ չես տեսնի ինձ, ես կհեռանամ էստե-
ղից, բայց ուզում եմ, որ դու իմանաս ամեն ինչ, իմանաս,
որ դու ես եղել առաջին կինը, որին...

— Ոչինչ էլ չեմ ուզում իմանալ, ոչինչ էլ չկա և դու էլ ոչ մի տեղ չես գնա,—դարձյալ ընդհատեց նրան Արաքսյան ու ոտքի կանգնեց,—ինչպես աշխատել ես, էնպես էլ կշարունակես աշխատել։ Ամոթ է։ Հիմա պետք է աշխատել։ Մի քանի հոգի ենք մնացել գյուղում։ Եթե մենք կողմնակի հարցերով զբաղվենք, ապա էլ ո՞վ պիտի աշխատի, ո՞վ պիտի կերակրի այն երեխաներին, որոնց ծնողները կռվի են գնացել՝ հույսերը մեզ վրա դրած։

Արաքսյան մի շարժում արեց, որ դուրս գա, բայց Դարբինյանը կանգնեցրեց։

— Արաքսյա, այնուամենայնիվ ես ուզում եմ իմանալ․

— Ամեն ինչ էլ դու լավ գիտես,—ճիշտ կռահելով Դարբինյանի միտքը, խիկույն ասաց Արաքսյան,—իմանալու ոչինչ չկա, դու գիտես, որ ես ամուսին ունեմ, ես սպասում եմ նրան։ Ուրիշ բան իմանալ հարկավոր չէ։ Աշխատել է հարկավոր։ Էգուց անցիր ղոմերը, Շիմշատն ու Սեյրանը երեք օր է այնտեղ ընկած են։ Առանց այն էլ լծկանները պակաս են․ եթե այդ երկու եզն էլ ղոմում մնան, ցանքը չենք կարող կատարել։ Եթե լավ կերակրել է հարկավոր նրանց, սա՛, լծող կերակրեն, որ մի քանի օրից հետո ցանքի դուրս բերենք։ Բարի գիշեր։

— Արաքսյա...

Բայց նախագահն էլ էտ չնայեց, իր ետևից ծածկեց դուռն ու լուռ հեռացավ։ Առանց այն էլ հազիվ էր կարողացել այդքանն ասել։ Նա տեսնում էր, թե ինչպիսի ծանր ներգործություն են ունենում անասնաբուժի վրա իր խոսքերը։ Արաքսյայի համար նույնպես ծանր էր այդ խոսքերն ասել, բայց հարկավոր էր ասել, որովհետև ուրիշ կերպ չէր կարող լինել․ բավական էր չնչին մի առիթ, աննշան մի թուլություն, որ Դարբինյանն ավելի տարվեր և գործը այնուհետև խիստ կբարդանար։ Դրա համար էլ նա վճռեց ա-

վելի խիստ լինել, կտրականապես վերջ տալ ամեն ինչի և խուսափել ավելորդ խոսակցությունից։

Դրսում պարզկա, աստղալից երկինք էր։ Մի զով քամի հեռվից գալիս, իրար էր տալիս Արաքսյայի մազերը։ Այդ պահին Արաքսյայի աչքերի առաջ էր Դարբինյանը—ընկճված, խեղճացած, իր հույզերի մեջ տառապելիս։ Արաքսյան հավատում էր Դարբինյանի անկեղծությանը, զգում էր, որ նա չի ստում, չի կեղծում, ասում է այն, ինչ ապրում է, ինչ զգում է։ Ոչ միայն այդ. թերևս նա ավելի էր զգում, ավելի տառապում սիրո հյուծող ալիքներում, բայց ամաչելուց ամբողջությամբ չէր արտահայտում իր զգացումները։ Իսկ ինչո՞ւ համար էին այդ բոլորը, ինքը՝ Արաքսյա՞ն, արդյոք, առիթ տվեց դրան։ Բայց ե՞րբ, ինչպե՞ս եղավ դա և ի՞նչ հետևանք կունենա, ինչպե՞ս կվերջանա։ Իրոք, կհեռանա՞ Դարբինյանը, կգնա՞ գյուղից։ Իսկ եթե մնա, չգնա, ավելի կխորանան նրա ապրումները և այդ ժամանակ...

Արաքսյայի մարմնով սրտատասավոր մի հոսանք անցավ։ Ցո՞ւրտ էր այդ հոսանքը, տհա՞ճ, թե՞ ջերմ էր այն, հաճելի։ Արաքսյան չիմացավ։ Նա միայն արագացրեց քայլերը, որ գեթ մի վայրկյան շուտ հասնի տուն, շուտ փակվի այնտեղ, առանձնանա ամենքից։

Տանը ծնողներն արդեն քնել էին։ Արաքսյան հանեց շորերը, մտավ անկողին, բայց քունը չէր տանում, անասնաբուժը չէր հեռանում նրա աչքերի առջևից, դուրս չէր գալիս մտքից։ Նա պատկերացնում էր, թե ինչպես հիմա Դարբինյանը մենակ նստել է իր սենյակում՝ ընկճված, տխուր և լաց է լինում անհույս սիրո հույզերի մեջ տանջվելիս։ Արաքսյան խղճաց նրան և ակամայից սրտում ցանկություն առաջացավ լինել անասնաբուժի մոտ, փաղաքշել, քաջալերական գեթ մի խոսք ասել նրան...

Դրսում շունը հաչեց երկու անգամ։ Արաքսյան վախեցավ։ Նրա մտքով անցավ, որ դա կարող է Դարբինյանը լինել, հետևած լինել իրեն, եկած մինչև իրենց դուռը։ Նա շնչառությունը պահեց, ունկնդրեց։ Շունն էլ չէր հաչում,

նա սսկվել էր։ Եվ ոչ մի ձայն, ոչ մի շշուկ չէր լսվում։ Արաքսյան ավելի լարեց լսողությունը, գլուխը քիչ բարձրացրեց, բաց արեց աչքերը, նայեց դեպի դուռը։

— Գուցե Երվանդն է,—հանկարծ ասկայծեց նրա մտքում,—կարող է վերադարձած լինել, շունը ճանաչեց նրան, փաթաթվեց ոտներին...

Արաքսյայի սիրտն սկսեց անհանգիստ թրթռալ։ Մեկ ուզեց ոտքի կանգնել, գնալ, բաց անել դուռը, նայել, մեկ էլ որոշեց քիչ էլ սպասել, լսել, թե շունն էլ ձայն չի՞ հանի արդյոք։ Իսկ շունն այլևս չհաչեց։

Այդպես, սպասողական դրությունը երկար անեց։ Արաքսյայի մտքերը հեռացան Դարբինյանից, սլացան հեռավոր, անծանոթ տեղեր, օտար քաղաքներ, ռազմադաշտ։ Որտե՞ղ է, արդյոք, Երվանդը, ի՞նչ է անում նա, ի՞նչ է մտածում։ Մտաբերո՞ւմ է իրեն—Արաքսյային, կարոտո՞ւմ է նրան, թե կրակի ու բոցերի մեջ միայն իր մասին է մտածում։ Զգո՞ւմ է նա, որ իր կնոջ պատճառով գյուղում մարդիկ կռիվ են անում, պախարակում իրար։ Զգո՞ւմ է նա, որ այժմ ուրիշ մարդ է տարվել նրա Արաքսյայով, ուրիշ մարդ է տառապում նրա համար։ Իսկ գուցե ոչինչ էլ չի զգում, գուցե նա չկա, գուցե սպանվել է նա թշնամու գնդակից...

— Յարաբ ո՞րն է եղել նրա վերջին բառը, ո՞ւմ անունն է տվել նա վերջին անգամ ու ընկել մի թփի տակ, մի ժայռի տակ, կամ օտար հողի վրա, օտար ջրի մեջ։ Ով գիտե, որ լեշակեր թռչունը եկավ, կտցահարեց աչքերը, որ գազանը հոշոտեց մարմինը, ի՞նչ եղավ նա, ի՞նչ եղավ նա...

Արաքսյան փղձկաց, սկսեց հեկեկալ բարձրաձայն, անզուսպ կերպով։ Սիրտն այնպես էր լցվել, այնպես ծանրացել, որ թվում էր, թե հիմա կպայթի, շունչը կփչի։ Բայց բարձրաձայն լացը քիչ թեթևացրեց նրան, նա հետզհետե հանգստացավ, հոգնածորեն ու հուսահատ գլուխը դրեց բարձին և չիմացավ, թե երբ քունն իջավ աչքերին։

Իսկ դրսում գարնան առաջին գիշերն էր...

10.

Զարմանալի է, առհասարակ, մարդու հոգին—անհանգիստ, ամեն ինչ ընկալող, խստապահանջ, անզիջող։

Անհանգիստ ու խստապահանջ էր դառել նաև Գուրգեն Սաթինյանը ժանավանդ վերջին օրերը։ Վազգեն Դարբինյանի հետ կռվելուց հետո նա ավելի մռայլ էր դառել, ինքնամփոփ, կյանքի նկատմամբ հուսահատ, կասկածամիտ՝ դեպի մարդիկ։ Քիչ էր գնում գործի, մեկուսանում էր, խմում հարբելու չափ։ Ոչ ընկերների կշտամբանքն էր ազդում նրա վրա, ոչ ծանոթների հորդորանքը։ Նույնիսկ իր մտերիմ ընկերոջը՝ Եղիշեյին, սկսել էր չհավատալ։ Մեղադրում էր նրան եսասիրության մեջ, քաղքենի էր համարում նրան, որ առանց հաշվի առնելու ընդհանուրի վիշտը, գյուղացիներից շատերի սուգը, պատրաստվում է ամուսնանալ, հարսանիք անել։ Նա ասում էր, որ այդպիսի ժամանակ ամուսնությունը արհամարհանք է դեպի ուրիշները։

— Այն ժամանակ, երբ ամեն օր լուր է գալիս, թե խփվեց այսինչ ծանոթը, այսինչ ընկերը, երբ մարդիկ գիշեր ու ցերեկ սգում են իրենց հարազատների կորուստը, դու պատրաստվում ես ամուսնանալ, ուրախանալ,—ասաց Գուրգենը, երբ մեկ օր ընկերը հայտնեց, թե երբ պետք է լինի հարսանիքը,—ես չեմ գա քո հարսանիքին, գնա ինքդ ուրախացիր, իմ սիրտը հիմա ուրախանալու վրա չի…

Եղիշեն ընկերոջ խոսքերին նշանակություն չտվեց, որովհետև գիտեր, որ նա վրդոված է։ Նա կարծում էր, որ շուտով կանցնի նրա վրդովմունքը և տրամադրությունը կբարձրանա։ Բայց մինչև հարսանիքի օրը նա մնաց անհողդողդ։

Այդ օրը, երեկոյան, Եղիշեն եկավ նրա մոտ, խնդրեց, որ գժություն չանի, ժամանակին լինի Արեհաանց տանը։

— Եթե չգաս, էլ ոչ ես, ոչ դու,—ասաց Եղիշեն։

— Ինչպես կուզես,—անտարբերությամբ պատասխանեց

Գուրգենը և ընկերոջ գնալուց հետո մի շիշ օղի վերցրեց, մի քիչ պանիր ու հաց, դրեց սեղանի վրա, սկսեց մենակ խմել ու մտածել։ Մի քանի բաժակ խմելուց հետո նրա տրամադրությունը փոխվեց, սկսեց այլ կերպ դատել և ի վերջո եկավ այն եզրակացության, որ Եղիշեյի հարսանիքին, այնուամենայնիվ, պետք է ինքը ներկա լինի։

Մութն արդեն ընկել էր։

Գյուղից բարձր ընկած սարերը թեև դեռ պատած էին ձյունով, բայց ստորին հանդերից փչում, գալիս էր վաղ գարնան բուրմունքը, ոգի տալիս մարդուն, ներշնչում հավատով, որ ուր որ է կբացվեն բուրումնավետ ծաղիկները, կկանաչեն դաշտերն ու ծառերը, կյանքով կլցվի ողջ բնությունը։

Գարնան շունչը Կաթնաձորում առաջինը Գուրգենն զգաց։ Մի քանի բաժակ օղո՞ւց, արդյոք, թե՞ գարնան կենսատու բուրմունքից կիսարբած, կիսաթմբիր քայլեց դեպի հարսանիք։

Արեհատենց տունը գտնվում էր գետի ձախ ափին։ Այնտեղ գնալու համար հարկավոր էր թեքվել ժայռի տակով, քարքարոտ, նեղ արահետով ցածրանալ դեպի ջաղացները, անցնել գետի վրա ընկած փայտե նեղ կամուրջով։

Դեռ ջաղացներին չհասած, ժայռի տակով անցնելիս, Գուրգենի աչքին մարդկային մութ մի ստվեր ընկավ։ Նա տեսողությունը լարեց, բայց ոչ շշուկ լսեց, ոչ էլ մարդուն տեսավ։ Կարծելով, թե սխալվել է ինքը, ստվերը միայն թվացել է, նա շարունակեց առաջ գնալ։ Մի քանի քայլ գնալուց հետո մեկը կանչեց.

— Գուրգեն։

Կանգ առավ, նայեց դեպի ջաղացները։ Կանչողն առվի մոտից դուրս եկավ, երկչոտ քայլերով մոտեցավ։

Անթիկն էր...

Գյուղ վերադառնալուց հետո Գուրգենը դեռ չէր տեսել նրան, չէր խոսել հետը։ Այդտեղ ձայնից ճակույն

ճանաչեց Անթիկին։ Ի՞նչ էր անում նա այստեղ, այդ ուշ ժամին, ինչու կանչեց իրեն, ի՞նչ է ուզում։

Գուրգենն ուզեց անուշադրությամբ մատնել նրան, գնալ իր ճանապարհով, բայց Անթիկն արդեն մոտեցել էր։ Նա մնացել տեղում, աչքերը հառեց կնոջը, սպասեց, թե ինչ կասի։

— Գուրգեն,—խուլ, երկյուղած ձայնով ասաց Անթիկը և լռեց, էլ չկարողացավ շարունակել։ Տիրեց ծանր, հոգեմաշ լռություն։ Կնոջ սիրտն անհանգիստ թպրտում էր, ինչպես թռչունը չար երեխայի բռան մեջ։ Նա շրթունքները շարժում էր, բայց լեզուն չէր շարժվում, ձայնը դուրս չէր գալիս։

— Հը, ի՞նչ ես ուզում,—վերջապես կոպտությամբ ասաց Գուրգենը, տեսնելով, որ նա չի կարողանում խոսել։

— Գուրգեն,—կրկնեց կինն ու դարձյալ լռեց։

Եթե լույս լիներ, կերևար, թե որքան գունատ է նա, սփրթնած։ Ամբողջ մարմնով դողում էր և թվում էր, թե հիմա կընկնի։

— Հենց դրա համա՞ր էիր կանչում։

— Չէ, Գուրգեն, ուզում եմ խոսել,—վերջապես քիչ խիզախելով ասաց Անթիկը, մի քիչ էլ մոտեցավ, ուղիղ նայեց նրա աչքերին,—ուզում եմ, որ...

— Ինչ ուզում ես՝ գնա քո Աթանից ուզիր, ես էլ ոչինչ չունեմ քեզ տալու,—չոր, դաժանությամբ ասաց նա, կնոջը թողեց կանգնած, առաջ գնաց...

Անթիկը ցամաքեց, մնաց տեղում կանգնած։ Նա նախօրոք մտածած բառերն էլ մոռացավ, մնաց Գուրգենի ետևից անհասկանալի նայելիս։

Գուրգենն արդեն հեռանում էր։ Կինը մի վերջին ճիգ էլ արեց, հուսահատ կանչեց.

— Գուրգեն...

Բայց Գուրգենն էլ ետ չնայեց։ Նա լուռ շարունակեց ճանապարհը, հասավ կամուրջին, կանգ առավ։ Նրան թվաց, թե Անթիկը հետևում է իրեն, գալիս է լուռ, համրաքայլ։

Նա ուզեց ետ նայել, գոռալ, թե ում ես գալիս, ինչ ես ուզում ինձանից։ Բայց այդպես չարեց, անհարմար զգաց իր իսկ մտորումներից, հայացքը հառեց գետի ջրերին։

Գետը պղտոր էր, նրա ոչ փրփուրն էր երևում, ոչ էլ կոհակները։ Միայն աղմուկն էր տարածվել, լցվել ամենուրեք։ Գուրգենը երկար անխոս ունկնդրեց ջրերի աղմուկին, միաժամանակ սպասելով, որ կինը կրկին կկանչի իրեն, կամ կմոտենա։ Բայց նա չէր մոտենում, ոչ էլ ձայն էր տալիս։ Այդտեղ Սաթինյանն էլ չհամբերեց, կտրուկ ետ շրջվեց, նայեց։ Ոչ ոք չկար։

Ծանր մի հուսախաբություն իջավ Գուրգենի վրա։ Նա մի պահ երազկոտ ետ նայեց իր եկած ճանապարհով, աչքերով որոնեց ծանոթ սալերը, բայց տեսավ երկնքի փեշերից կախված ահռելի ժայռերը, գետաբերանի հաստ ու կենտ բարդիները, իսկ ականջների մեջ՝ գետի համատարած խշշոցն էր։ Նա այդտեղ առաջին անգամ մենակություն զգաց — ծանր, տխուր մենակություն։ Նա այդտեղ, գյուղ վերադառնալուց հետո առաջին անգամ, Անթիկի հետ խոսելու անձուկ ցանկություն զգաց, ջերմ, անկեղծ, սրտաբուխ խոսելու ցանկություն։

Սակայն Անթիկը չկար…

Սաթինյանը կրկին շունչը պահեց, նայեց նեղ արահետին։ Գետն էր վշշում խուլ աղմուկով, իր մեջ առած ծառերի սոսափյունը, հեռու վայրերից եկող քնքույշ զովը… Պղտոր ջրերը դիպչում էին սալաքարերին, կրկին ետ գլորվում, կարծես թե հանգիստ կանչելով.

— Անթիկ հե՜յ, Անթիկ հե՜յ…

Իսկ Անթիկը չկար…

Անսպասելի կերպով փոխվեցին Գուրգենի մտքերը։ Նա ակամայից մտաբերեց իրենց ամուսնությունը, մտաբերեց իր փոքրիկ դստերը՝ Եվային, հիշեց, թե ինչպես ինքը բանակ գնալիս Անթիկը գրկել էր երեխային, եկել գյուղի ծայրը, Լեզգի Սիմոնի տնից ներքև, արցունքն աչքերին, ճանապարհ էր ձգում իրեն՝ Գուրգենին։ Այն ժամանակ էլ

նա խոսք չէր գտնում ասելու, այն ժամանակ էլ նա միայն կրկնում էր.

— Գուրգեն, Գուրգեն...

Սաթինյանի սիրտը փուլ եկավ, հուզմունքը սեղմեց կոկորդը, աչքերն արցունքակալեցին։ Նա զգաց, որ խիստ վարվեց Անթիկի հետ, վիրավորեց նրան։

— Սխալվել է,— կնոջ մասին ինքն իրեն ասաց նա,— իսկ կյանքում ո՞վ չի սխալվում։ Զղջում է իր սխալի համար, միթե՞ դա բավական չէ, էլի ի՞նչ է հարկավոր...

Եվ նա սկսեց դատապարտել իրեն, իր համառությունը, իր կոպտությունը, որոշեց ետ դառնալ, հասնել Անթիկին, խոսել հետը, ներողություն խնդրել վիրավորելու համար, բայց այդ ժամանակ կամուրջի վրա երևաց Եղիշեն։

— Ա՛ տնաշե՛ն, էլ ի՞նչ ես պղտոր ջրերում ձուկ որսում։ Հասել ես կամուրջին, նո՞ր ես մտածում գետն անցնելու մասին։ Ո՞ւր մնացիր, տես բոլորը հավաքվել են։

— Գալիս եմ, Եղիշ, գնանք,— սթափվելով իր մտքերից, ասաց Գուրգենը և հետևեց ընկերոջը։

Երբ նրանք կամուրջն անցան, ժայռի ստվերում տխուր կանգնած նրանց ետևից նայում էր Անթիկը.

Այդ օրը նա կռվել էր ամուսնու հետ և տնից դուրս եկել։

Փաղանենց Աթանի տունը նրան բանտ էր թվում, իսկ ինքը՝ Աթանը—որպես չարագործ մի հրեշ։ Ամեն անգամ, երբ հաշվետարը մոտենում էր նրան, կինը արգահատանքով շուռ էր տալիս երեսը, ջուխտ ձեռքերով փակում աչքերը, որ չտեսնի նրա դեմքը, չզգա նրա շունչը, բայց դեռ չէր արտահայտում զգացումները, զսպում էր իրեն, ոչինչ չէր ասում։ Նա կարծում էր, թե հետզհետե կանցնեն այդ բոլորը, կընտելանա ամուսնուն, կանցնեն խորթությունները ու օտարոտիությունները։ Բայց օրերն անցնում էին և ընտելանալու ոչ մի նշան դեռ չէր երևում։ Անուշադրությամբ էր մտնում Աթանի ասածները, չէր հետևում, չէր հետա-

քրքրվում, թե ինչով է զբաղվում նա, ինչ է անում, ինչ է ուտում։

Սակայն ամեն ինչ էլ իր սահմանն ունի, որ կարող է հատել։ Աթանի համբերության սահմանն էլ հատեց։

Դեպքն սկսվեց չնչին մի բանից։ Նա գործից սաստիկ քաղցած գալով տուն, իմացավ, որ կինը ուտելու համար ոչինչ չի պատրաստել։

— Բա ի՞նչ պիտի ուտենք։

— Ի՞նչ իմանամ, ինչ ուզում ես՝ կեր,— անտարբերությամբ պատասխանեց Անթիկը։ Կնոջ այդ պատասխանը զայրացրեց Աթանին. նա իր մի աչքը լայն չռելով գոռաց.

— Դու եկել ես էս տունն ինձ կնություն անելու, թե կերած-խմածս աղի-լեղի դարձնելու։

— Աղի-լեղին էլ քեզ համար ափսոս է։

Արյունը խփեց Աթանի գլխով, նա կատաղեց, կարմրեց, ձեռքը բռունցք դարձրած մի քանի քայլ մոտեցավ կնոջը, բայց չխփեց, զայրագին նայելով նրան ասաց.

— Այ բալամ, ի՞նչ ես ուզում ինձնից, ի՞նչ ես տվել, որ չես կարողանում առնել։

— Ոչինչ էլ չեմ ուզում, զզվում եմ քեզնից, ուրիշ ոչինչ։

— Լավ, ո՞վ է ձեռքդ բռնած պահում, զզվում ես, դուրս եկ գնա դժողքի ծոցը։

— Ինձ համար դժողքը հենց քո տունն է։

Աթանն էլ չկարողացավ զսպել իրեն, ուժգին ապտակեց նրան։

— Դե՛ առ քեզ դժողք...

Անթիկը երերաց, ուզեց ընկնել։ Աթանը մոտեցավ նրան, պատրաստվեց կրկին խփելու, բայց կինն ընկրկեց։

— Թյու քու աչքիդ,— զայրագին ասաց նա և տնից դուրս եկավ...

— Գնա, քո եկած ճանապարհը,— հայհոյեց Աթանը, դուռը կնոջ ետևից փակելով...

Դուրսը մութ էր։ Անթիկը քիչ ցածրանալուց հետո կանգ

տավ, մտածեց, թե ինչ անի այժմ ինքը, ուր գնա։ Գլուխը պտտվում էր, ոչինչ որոշակի չէր կարողանում պատկերացնել։ Հետո մտքում ասկայծեց՝ գնալ Գուրգենի մոտ, խոսել հետը, բացատրել, որ սխալվել է, զղջում է արածի համար, ներողություն խնդրել նրանից։ Գիտեր Գուրգենի բարի, անհիշաչար բնավորությունը, կարծում էր, որ վերջապես նա կների կնոջ սխալը, կհաշտվի հետը։

Անցնելով կամուրջը, ջաղացների առվի մոտով լռիկ գնալիս, մթության մեջ տեսավ Գուրգենին, խիզախեց, մոտեցավ նրան, բայց նա էլ նոր վերք հասցրեց կնոջ սրտին։

Գուրգենը գնալուց հետո Անթիկի սիրտը կարծես թե հատվեց, վայր՚ընկավ, նրա մտքերն ավելի մշուշապատվեցին, աշխարհը խավարեց աչքերին։ Այդպես մեն-մենակ երկար սպասեց ժայռի տակ, չիմացավ, թե ուր գնա, ինչ անի։ Տանը, հավեմաշ մտքերից նա իրեն ավելի կորցրեց։ Նրան թվաց, թե ամեն ինչ վերջացել է իր համար, այլևս իզուր է ապրելը...

11.

Հարսանիքը կարծես թե Եփրեմ բիձայինը լիներ։ Բոլորից շատ նա էր պարում, ուրախանում, կատակներ անում։

Թամադան Սամթուր քեռին էր։ Տեսնելով, որ ծերունին չի ուզում պարաշրջանից դուրս գալ, նա ասաց.

— Բավական է, Եփրեմ բիձա, հոգնեցավի չես ընկել հո։

— Արևհատի և Եղիշեյի հարսանիքը մեկմ՛ել է լինելու, թողեք պարենք էլի, ա տնաշեններ, ձեզնից ի՞նչ է գնում,— ճակատի քրտինքը սրբելով և ձեռքը հոգնած սրտին դնելով պատասխանեց նա,—հարսանիքում եթե պարը քիչ եղավ, տարին երաշտ կլինի, ճշմարիտ։

— Եփրեմվերդի, ախր սա հալա հարսանիք չի։ Սա հենց էնպես, թաթարյախնի... Իսկական հարսանիքը կլինի կռվից հետո, երբ բոլորը ողջ և առողջ վերադառնան իրենց տները, սիրտներս ուրախ լինի.

Նավասարդ ապոր խոսքերը դուր եկան Սանթուր քեռուն։ Նա ոտքի կանգնեց, բարձրացրեց բաժակը։

— Խմենք մեզ ուրախություն բերողների կենացը։ Նրանք հիմա կռվում են մեր կյանքի, մեր ազատության համար։ Թող նրանց կյանքը երկար լինի, սուրները՝ կտրուկ։ Ուստա Մաթոս, էս կենացը մի լավ քաղցրացրու։

Սանթուր քեռին բաժակը դատարկելուց հետո նստեց տեղը։ Մաթոսը դուդուկի կոթով հրեց դամ պահող Վահանի կողին։ Գանգրահեր, նեգրի նման սև պատանին ցնցվեց, տրորեց աչքերը։

— Մի քնի, ամոթ է,— ասաց Մաթոսը,— սովորի, հարսանիքում պիտի նստել օխտ օր, օխտ գիշեր առանց աչքը ճպացնելու։ Է, հալա ուր ես, էնքան հարսանիքներ տեսնես...

Հետո ուստան ինքնամոռացման աշխարհը տեղափոխվեց։ Գիշերվա խավարի մեջ նրա դուդուկի մելամաղձոտ, դուրեկան ձայնը դուրս եկավ բաց պատուհաններից, գնաց, խառնըվեց ողջ բնությունը համակած գարնան երգին, ամենուրեք լցրեց հմայիչ դյութանքով։

Մաթոսի ետևում նստած աղջիկներից մեկը երգեց.

Աստղերը նորից են
Կապուտակ երկնքում,
Սիրած յար, տուն արի,
Աննման, տուն արի...

Հանկարծ, զվարթ ձայնն անմիջապես գրավեց բոլորի ուշադրությունը։ Մարդիկ իրար երեսի նայեցին և մի պահ չիմացան, թե ով էր երգողը։ Այդպիսի ձայն Կաթնաձորը դեռ չէր լսել։ Կաթնաձորում գիտեին բոլոր երգիչներին էլ և հայտնի էր նրանցից յուրաքանչյուրի առավելությունը։ Այդ ձայնն առաջին անգամն էր լսվում գյուղում։ Այդքան քնքույշ, այդքան դուրեկան ու հուզառատ դեռ ոչ ոք չէր երգել Կաթնաձորում։ Դա Մանուշն էր—Եփրեմ բիձայի միջնեկ աղջիկը։ Նա հայտնի էր գյուղում իր պարկեշտությամբ, խոնարհությամբ։ Նա այնքան ամաչկոտ էր, որ մարդու

հետ խոսելիս կարմրում էր, քրտնում, թվում էր, թե ձյան նման հիմա պետք է հալչի, ջուր դառնա: Կաթնաձորում ոչ ոք նրան բարձրաձայն երգելիս չէր լսել: Իսկ այժմ, այդտեղ, աղջիկը սրտաճմլիկ երաժշտության ազդեցության տակ չկարողացավ զսպել իրեն, սիրտը խլրտաց և ինքնաբերաբար երգեց, իր երգից ինքն էլ հուզվելով, աչքերից արցունքներ քամելով, երևի իր սիրածին—նախկին տրակտորիստ, այժմ ռազմաճակատային շոֆեր իր Բագրատին մտաբերելով, որը կռվի էր գնացել պատերազմի սկզբից, իր հետ տանելով Մանուշի խոսքերը—որ հուր-հավիտյան կապասի Բագրատին, ուր ոչ ոք չի կարող փոխարինել իր տրակտորիստ յարին...

Երգից հետո տիրեց երկար լռություն: Կարծես թե բոլորն էլ կախարդվել էին Մանուշի ձայնից, համակվել նրա քնքուշ հույզերով:

— Զարմանալի բան է, Եփրեմ վերդուց էդպես ժառանգ,— վերջապես լռությունը խզեց Սանթուր քեռին,—աղջի, բա դու մինչև հիմա որտե՞ղ էիր, չլինի՞ ձենդ էսօր բացվեց:

Մանուշը ամաչելուց թաքնվեց ուստա Մաթոսի ետևում, գլուխը կախեց:

Հետո Սանթուր քեռին շարունակեց.

— Մի ամաչի, աղջիկս, լավ բանից չեն ամաչի, վատ բանն է ամոթալի: Ձենդ լավ էր, հավանեցի, թող հավիտենական լինի էդ ձենը, թող սոխակները նախանձեն քեզ և քեզնից դաս առնելու համար ամեն տեղից հավաքվեն մեր գյուղը, առավոտից մինչև ուշ երեկո անուշ երգեր երգեն...

— Սոխակը իրիկունը չի երգի, Սանթուր, սխալմունք մի անի: Համ էլ խոսքդ շատ երկարացավ: Ժողովներում որ հինգ ժամ խոսում ես, մենք լուռ քնում ենք, քեզ չենք խանգարում, ճշմարիտ էստեղ էլ հո չենք կարող քնել, գինին կթթվի...

— Տեղին բան ասացիր, Եփրեմ բիձա,—համաձայնեց Սանթուր քեռին,—ամեն բան էլ որ չափից ավել մնա՝ կթթըվի: Նոր կենաց եմ առաջարկում: Ինչպես տեսնում եք,

էսօր էս հարսանիքում մեծամասնությունը կազմում են կանայք։

— Միտքդ հասկանում եմ, Սանթուր, ճշմարիտ...

— Սպասիր, Եփրեմ, ինձ չխանգարես։ Նա — կինը, աշխարհի զարդն է, կինը...

— Արդար միտք է, եռ իմ հոգին, — հրճվանքով բացականչեց Նավասարդ ապերը, ուզեց էլի ինչ որ ասել, բայց Սանթուր քեռին ակնհայտ բարկությամբ ընդհատեց նրան։

— Մարդ արարած, թող խոսքս ասեմ։ Կնոջ մասին ինձնից լավ խոսող չի լինի։ Դուք ինձ մի ընդհատեք։ Հա, ասում է առանց կնոջ՝ տղամարդու աչքին արևն էլ սև կերևա։ Կինն արևի պես լուսավորում է տղամարդու կյանքը։

— Լուսավոր մնա կյանքդ, ճիշտ բան ասացիր, ճշմարիտ։

— Կինն արևի պես լուսավորում է տղամարդու կյանքը, — կրկնեց Սանթուր քեռին և առանց ուշադրություն դարձնելու Եփրեմ բիձայի, Նավասարդ ապոր և ուրիշների համաձայնական բացականչություններին, շարունակեց, որ նրանք էլի չխանգարեն իրեն, — կինը տղամարդու սրտի մեջ եղած արյունն է։ Եթե արյուն չկա, սիրտը չի աշխատում, մեռած է։ Առանց կնոջ տղամարդն էլ է մեռած։ Ուրեմն կինը տղամարդու կյանքն է։ Խմենք մեր կյանքի — կանանց կենացը։

— Հոգիդ դրախտն ընկավ, Սանթուր, ճշմարիտ...

Թախիծով ասաց այդ բառերը Եփրեմ բիձան։ Մարդիկ նայեցին նրան, իսկ նա գլուխը կախեց, գրպանի կարմիր թաշկինակը տարավ աչքերին։

Յոթ-ութ տարի առաջ էր մեռել Եփրեմ բիձայի կինը — Վարդերես քեռակինը, ամուսնուն թողնելով արցունքի ու վշտի մեջ։ Ամբողջ Կաթնաձորը գիտեր, թե որքան հավատարիմ, սիրով ամուսիններ էին նրանք։ Ոչ ոք չէր տեսել, որ նրանք իրար վիրավորական խոսք ասեն, դժգոհեն իրարից։ Ասում են Եփրեմ բիձան ամուսնության սկզբից մինչև կնոջ մահը սովորություն էր դարձրել ամեն անգամ տնից

դուրս գալիս, գործի կամ մի այլ տեղ գնալիս անպայման կմոտենար կնոջը, կհամբուրեր նրա ճակատը, հետո կհեռանար, իսկ տուն գալիս էլ, սովորական բարևի փոխարեն կասեր․

— Արևդ իմ վրայից անպակաս լինի, Վարդերես, ճշմարիտ…

Երբ Վարդերես քեռակինը մեռել էր, Եփրեմ բիձան այնպես էր հուսահատվել, այնքան էր տխրել, որ մի գլուխ ասում էր․

— Ինձ էլ թաղեք Վարդերեսի հետ, առանց նրան իմ օրը սև կլինի, ճշմարիտ։

Կնոջ դին գերեզման իջեցնելիս Եփրեմ բիձան նույնպես իրեն գցել էր գերեզմանափոսի մեջ և մարդիկ նրան ուժով էին դուրս բերել այնտեղից։ Ծանոթ-բարեկամները երկար ժամանակ շարունակ հսկում էին, որ նա իրեն չվնասի, կնոջ պատճառով ինքնասպանություն չկատարի։ Նա ամեն երեկո գնում էր գերեզմանատուն, նստում կնոջ շիրիմի մոտ, մանկան նման հոնգուր-հոնգուր լաց լինում և տուն չէր գալիս, մինչև որ աղջիկները կամ որևէ բարեկամ չէին բռնում թևից, ուժով տուն բերում։

Տարիներ հետո թուլացել էին նրա տառապանքները, պակասել էին արցունքները։ Ժամանակը մեղմել էր Եփրեմ բիձայի վիշտը, և առհասարակ ո՞վ է շարունակ վշտի մեջ ապրում։ Եփրեմ բիձան էլ ինքնամոռացության րոպեներ էր ապրում, ուրախ ժամեր էր ունենում։ Բայց երբ խոսք էր լինում կնոջ մասին, նա անմիջապես տխրում էր, թախծում և լաց լինում։ Այդ ժամանակ էլ, հարսանիքում, երբ Սանթուր քեռին խոսք բացեց կնոջ մասին, ծերունին իսկույն հիշեց Վարդերեսին, տխրեց, լաց եղավ։

— Եփրեմ բիձա, կնոջ մասին խոսելիս մարդու դեմքը պիտի պայծառանա մայիսյան առավոտի պես,— ասաց Սանթուր քեռին,— իսկ դու տխրում ես։ Մի տխրիր, խմում ենք աղջիկներիդ կենացը։ Շնորհքով լինեն, հավատարիմ լինեն։

— Կնոջ հավատարմությանը հույս կապողը հացը ցամաք կուտի...

Ալեքսանն էր։ Այդ բառերը դուրս թռան նրա բերնից ինքնաբերաբար։ Նա չէր ուզի, որ այդ րոպեին իրեն լսող լինի։ Բայց Եփրեմ բիձայի ուշադրությունից չվրիպեց նրա ասածը։

— Այ անհավատ Թերահավատ, բա դու հույսդ ինչի՞ ես կապում։

— Ես ոչ մի բանի էլ հույս չեմ կապում։ Առհասարակ էս աշխարհում հավատալու բան չկա։ Իսկ կինը...

— Դու կնոջ մասին մի խոսա, Թերահավատ Ալեքսան։ Ինքդ ոչ ամուսնացել ես, ոչ էլ կին ես ունեցել։ Էլ որտեղի՞ց կիմանաս, թե սերն ու հավատարմությունն ինչ բաներ են։

— Դրանք դատարկ բաներ են

— Սանթուր, այ Սանթուր, աստծու հետ վիճելն ավելի հեշտ է, քան Թերահավատին մի բան հասկացնելը,—անհամբերությամբ ձայն տվեց Եփրեմ բիձան,—այ մարդ, դու քո խոսքն ասի, ճշմարիտ։

Վիճաբանությունը թերևս այլ բնույթ առներ, սրվեր ու խորանար, եթե չլիներ ուստա Մաթոսի դուդուկը։ Տեսնելով, որ հարսանիքը ժողովի է վերածվում, աղջիկներից մեկը կամացուկ շշնջաց Մաթոսի ականջին, նա վերցրեց դուդուկը և նվագեց։ Աղջիկները ոտքի կանգնեցին, շրջան բաց արին, թև-թևի բռնեցին։ Մանուշը մտավ շուրջպարի մեջ, երգեց.

Արևը ելավ սարին,
Երի-երի յաման, օյ, օյ...
Ես կսպասեմ իմ յարին,—
Ջընազ յարին, օյ, օյ..

Սակայն պարողները մի քանի պտույտ դեռ չէին կատարել, երբ շեմքում երևաց Վերջին ժամը։ Նա այլայլված էր, դունատ։ Տեսնելով պարն ու աղմուկը, նա շփոթվեց, չիմացավ ում դիմել։ Մի վայրկյան միայն լուռ մնալուց հետո հանկարծ ուժգին կանչեց.

— Դե ինձ լսեք։

Նրա բարակ ձայնը մարվեց ընդհանուր ժխորին, անհետացավ։ Աղջիկը մի քանի անգամ էլ կանչեց, բայց դարձյալ ոչ ոք ուշադրություն չդարձրեց նրա վրա։ Այդ ժամանակ նա մոտեցավ ուստա Մաթոսին, նրա բերնից հանեց դուդուկը։ Նվագածությունը դադարեց, պարողները լուռ մեխվեցին տեղներում։

— Ինձ լսեք։ Անթիկն ընկել է ճամբի վրա, մեռնում է,— լռության մեջ հայտարարեց խրճիթվորը։

Գուրգեն Սաթինյանը, որ ամբողջ ժամանակ լուռ նստել էր, ոչ ուտում էր, ոչ խոսում, վերջին ժամի հայտարարությունը լսելուն պես ահաբեկված ոտքի ցատկեց։

Երբ խրճիթվորը պատմում էր, թե ինչպես ինքը հարսանիք գալիս տեսել էր Անթիկին ուշագնաց, ճանապարհի մեջտեղում ընկած, Սաթինյանն արդեն անցել էր ջաղացների կամուրջը և հևասպառ վազում էր գետաբերանով։

12.

Օդի մեջ, ոսկեփայլ արևի ճառագայթների տակ ճախրող դեղնակապույտ թիթեռնիկն էր գրավել Նավասարդ ապոր ուշադրությունը, թե՞ Վահանի շվու դայլայլանքով էր տարվել նա։ Ճանապարհից վերև, լեռնալանջին, մի քարի վրա կանգնած, հայացքը հառել էր նա թփից թուփ, ծաղկից-ծաղիկ թռչող թիթեռնիկին, աչքերը կիսախուփ, նայում էր լուռ, ծով մտքերի մեջ խորասուզված։

Վահանը չէր երևում։ Որ թփի տակ էր թաքնվել, որ քարի ստվերում էր նստել, հայտնի չէր։ Միայն նրա շվու մեղմ, սրտաճմլիկ ձայնն էր լսվում։ Կարծես ծաղիկներն ու մասրենու կարմիր վարդերն էին ձայնակցում Վահանի նվագածությանը, թիթեռնիկներն ու թռչուններն էին իրենց բարակ թևիկներով ուրախ ծափ տալիս, պարում շվու կախարդիչ նվագի տակ։

— Պահ, պահ, պահ, մարդու սիրտ է քաշում,— հայացքն անորոշ հեռուները հառած, զմայլանքով ասաց Նավասարդ

ապերը,— Մատներիդ մատաղ, Վահան, քո շվու ձենը մեռելներին էլ կարթնացնի։ Տես, անասուններն էլ մոռացան իրենց, էլ չեն արածում, շվի՛ն նրանց անուշ երազների մեջ գցեց...

Եվ իրոք, ամբողջ լեռնալանջի վրա փռված ոչխարները, որ մինչ այդ մուշ-մուշ արածում էին հանգիստ, թողեցին թարմ, հյութալի խոտերը, նրբածիլ ծաղիկները, իմի խմբվեցին՝ գունչները օդի մեջ վեր ցցած։ Այծերն շտապեցին կտրել նրանց առաջը։ Սրնգջյուր մի ներկի պոզահարեց ոչխարների խմբին, որ ճեղքի նրանց շղթան, ճանապարհ բացի այծերի համար, բայց Նավասարդ Ապերը սաստեց նրան։

— Հե, հե, այ պոզը կոտրած, էդ ոչխարներից ձեռք քաշիր։

Նա քար նետեց, քարը կպավ ներու եղջյուրներին, ներին թողեց ոչխարներին, հետ քաշվեց։ Այդ ժամանակ Վահանն անսպասելի կերպով փոխեց եղանակը։ Նավասարդ ապերը մեղմիկ, կարկաչահոս ձայնով երգեց.

Ոչխարն արել եմ գուղը,
Ջոկել եմ ալագյոզը,
Ոչխար, արատիդ մեռնեմ,
Յար ջան, կարոտիդ մեռնեմ...

— Մոլլա-Նավասարդ, էդ ո՞ւմ հետ ես էդպես քաղցր զրից անում։

Եփրեմ բիձան էր։ Նա Սանթուր քեռու հետ գնում էր սարվորների մոտ։ Ներքևից անցնելիս նրանք տեսել էին Նավասարդ ապորը, մոտեցել նրան, իսկ նա երգով տարված՝ չէր լսել նրանց ոտնաձայնը։ Եփրեմ բիձայի հարցը լսելուն պես նա հետ շրջվեց, նայեց նրան, ուզեց ինչ-որ ասել, բայց Եփրեմ բիձան կանխեց.

— Էդ ի՞նչ է. ագռավնե՞րին ես խրատում։

— Չէ, Եփրեմվերդի, կաքավներին եմ դաս տալիս։

— Իրար լեզու ինչ շուտ եք հասկանում,— ասաց Սանթուր քեռին,— դա էլ ձեր բարև-աստծու բալի՞ն է։ Տնա-

չհննեի, երկար ժամանակ իրար չեք տեսել, գոնե հարցրեք, թե ինչպես եք ապրում, հետո էլի։

— Ի՞նչ կարիք կա հարցնելու,— իսկույն վրա բերեց Նավասարդ ապերը,— ասում է գիժը կամ էստեղ, կամ Բաղդադում, մեկ է՝ էլի էն Եփրեմվերդին է, էն Եփրեմվերդին։ Մի ամսվա մեջ նա չի փոխվել։

— Իսկ դու շատ ես փոխվել. մի քի՛չ անդարդ էիր, մի քիչ էլ ավելացել է, դառել ես իսկական անդարդ, ճշմարիտ։

Եփրեմ բիձան սպասում էր, որ Նավասարդ ապերն իսկույն կպատասխանի, սակայն նա դեռ մտածում էր։ Այդպես բավականին մտածելուց հետո միայն ասաց.

— Դե ինչո՞ւ պիտի դարդ անեմ որ։ Փառք աստծու, լեզուս տեղումը, մեջքս էլ պինդ։ Հրես էս սարերը ոտիս տակը ըլած, սաղ օրը ուտում եմ, խմում, աշխարհների հետ անուշ-անուշ զրուցելով ման գալիս։

Եփրեմ բիձան նախանձով նայեց Նավասարդ ապորը։ Հովվությունը նրա սիրած գործն էր։ Նա բազմաթիվ տարիներ հովիվ էր եղել։ Երբ Կաթնաձորի ծերունիները վճռեցին դիմել կոլխոզի նախագահին, որ իրենց էլ օգտագործեն կոլխոզի աշխատանքներում, նա կարծում էր, թե իրեն հովիվ կնշանակեն։ Բայց նա ուշացավ. հովիվ նշանակեցին Նավասարդ ապորը։

— Բախտավոր մարդ ես,— Նավասարդ ապոր գոհունակությունն զգալով ասաց նա,— կզրուցես, ինչու չես զրուցի։ Սագերն իմ ոտների պես հո քո ոտներն էլ չեն կապել։ Ամբողջ օրը առվի մոտ նստած մտի՛կ եմ անում, որ նրանցից մեկը ետ չմնա, ճուտը չպակասվի, կամ թե ձուն չկորչի։ Հոգիս կոկորդիս է հասել։ Արաքսյան էլ ամեն օր գալիս է, գովում, թե Եփրեմ բիձա, սագերին լավ ես նայում, իսկական սագարած ես, աշունը անունդ կարմիր տախտակին եմ գրելու։

— Սև տախտակին գրվի անունդ,— վրա բերեց Նավասարդ ապերը։

— Քո անունից հետո։

— Դուք որ սկսեցիք իրար «գովել», էլ չեք վերջացնի,— միջամտեց Սանթուր քեռին,— բավական է, գնանք։

Նրանք հրաժեշտ տվին Նավասարդ ապորը, հեռացան։ Մի քանի քայլ գնալուց հետո Եփրեմ բիձան ետ դարձավ, սիրալիր ասաց.

— Առաքելս թող սրտից չհիշի, Մոլլա-Նավասարդ, շատ սիրելուց է։

— Մոլլա-Նասրադինն ասում է՝ կատուն շատ սիրելուց իր ձագերին է ուտում։ Գիտեմ, էնքան խոսելու ես, որ գլուխս ուտելու ես,— պատասխանեց Նավասարդ ապերը, շրջվեց, անցավ բլուրի մյուս կողմը։

Վահանի շվու ձայնն էլ չէր լսվում։ Լռություն էր տիրում ամենուրեք։ Ամեն ինչ խաղաղ էր, համատարած անդորր։ Լեռնալանջի վրա արածող այծերը ձգտում էին դեպի թփերը, ստվերոտ տեղերը։ Ոչխարները մի քանի շղթա կազմած շարվել էին իրար ետևից, գլուխները կախել։ Տաքն ընկնում էր, հարկավոր էր հոտը ջուր տանել։

Նավասարդ ապերը ցուպին հենված՝ ուզեց ցածրանալ դեպի ոչխարների շղթան, իրար տալ նրան, քշել դեպի գետը, բայց տեսնելով ձորաբերանով անցնող երկու մարդու, կանգ առավ, ուշադրությամբ նայեց նրանց։

Գուրգենն ու Անթիկն էին։

Եղիշեյի հարսանիքին, երբ Նազիկը հայտնեց, թե ինքը այնտեղից գալիս տեսել է Անթիկին ուշագնաց ընկած, Գուրգենն խելույն դուրս էկավ հարսանիքից և վազեց դեպի այնտեղը, ուր քիչ առաջ բաժանվել էր կնոջից։ Ճանապարհին նա ոչ մի բանի մասին չէր մտածում, ոչինչ չէր կարողանում պատկերացնել։ Ուզում էր միայն շուտ հասնել, կենդանի տեսնել նրան և ասել.

— Ներիր, Անթիկ ջան, ներիր...

Իսկ երբ հասավ, Անթիկը նստել էր ճանապարհի եզրին և մազերն էր շոյում։ Լուսնի տա՞կ էր այդպես երևում, թե իրոք նա այնքան գունատ էր, որ դեմքին կենդանության ոչ մի նշույլ չէր մնացել։

— Անթիկ, Անթիկ, ինչ է պատահել քեզ,—վռազ ասելով Գուրգենը մոտեցավ նրան։

Անթիկը ոչինչ չպատասխանեց. նա լուռ ետ շրջվեց, անտարբերությամբ նայեց Գուրգենին և հետո անսպասելի կերպով փղձկաց, սկսեց հեկեկալ։

Գուրգենը կռացավ, ձեռքը տարավ դեպի նրա գլուխը, փաղաքշեց մազերը։

— Դե լավ, լաց մի լինի, լաց մի լինի,—հազիվ կարողացավ ասել նա։

Այդ ժամանակ հասան նաև մյուսները։

— Աղջի, հարսանիք էիր ուզում գալ, էլ ճանապարհին ընկնելդ ինչ էր, ճշմարիտ։

— Եփրեմ բիձա, դու քո «ճշմարտությամբ» մի քիչ սպասիր, հիմա հարց ու փորձի ժամանակ չի,—ընդհատեց նրան Եղիշեն, բռնեց Անթիկի թևից, բարձրացրեց։

Եղիշեն, Արաքսյան ու Գուրգենը Անթիկին բռնած տարան տուն, իսկ մյուսները վերադարձան հարսանիք։

Սանամ բիբին դռան շեմքում տեսնելով հարսին, գորովալից ասաց.

— Անթիկ ջան, անուշդ սիրեմ, հաշտվեցի՞ք,—և ապա նկատելով նրա գունատությունը, մի քանի քայլ ետ գնաց, վախեցած բացականչեց.

— Վահ, հիվա՞նդ է։

— Լավ, հետո, մայրիկ, հիմա հարց ու փորձի ժամանակ չի,—պատասխանեց Գուրգենը և Անթիկի թևից բռնած մոտեցրեց թախտին։

Քիչ հետո Եղիշեն ու Արաքսյան նույնպես վերադարձան հարսանիք։ Գուրգենը Անթիկի հետ մնալով մենակ, երկար ժամանակ մի խոսք չգտավ նրան ասելու։ Անթիկն էլ չէր խոսում։ Նա հայացքը փախցնում էր Գուրգենից, ամաչում էր ուղիղ նայել աչքերին։ Հետո շուռ եկավ, թախծոտ նայեց ամուսնուն, ապա բռնեց ձեռքը, քնքշությամբ տարավ իր ափերի մեջ, ուզեց համբուրել։ Գուրգենն շտապ

եա քաշեց ձեռքը, կապույտ գոտի կինը, շրթունքները հրավիրեցին։

Մի ամիս հետո նրանք սար էին գնում։ Նախապարգապետը տեսնելով նրանց միասին ձորաբերանով բարձրանալիս, ինքն իրեն ասաց.

— Ա՛ անաշենններ, բա որ վերջ ի վերջո հաշտվելու էիք, էլ ինչու էիք իզուր տեղից ձգձգում, Արևհատի հարսանիքն էլ խանգարում։

13.

Առավոտյան սար գնալիս Եղիշեն այնքան հուզված չէր, որքան այժմ այնտեղից վերադառնալիս։ Նա կարծում էր, թե հրաժեշտ կտա սարվորներին, կհամբուրվի Արևհատի հետ, կվերադառնա գյուղ, կվերցնի իր փոքրիկ պայուսակը, իրիկնադեմին կգնա շրջանային կենտրոն, նույն օրն էլ, երևի, կհասնի քաղաքային շոգեկառք, գնացք կնստեն...

Իսկ կեսօրից հետո, Արևհատի հետ այնտեղից եա գալիս, նա չէր շտապում, ընդհակառակը, կերպով դանդաղ էր գնում, ուզում էր ավելի երկար մնալ կնոջ հետ՝ ավելի երկար նայել նրան, խոսել հետը, ասել այն, ինչ դեռ չէր հասցրել ասել, ինչ չէր ուզեցել ասել՝ կամ ամաչելուց, կամ թե դրա կարիքն առայժմ չզգալուց, կարծելով, թե դեռ շատ ժամանակ կունենա իր զգացումները, իր սերը, հետագայում ամբողջությամբ արտահայտելու...

Բայց մի՞թե սիրահարն է ունեցել այդպիսի ժամանակ, հարմար առիթ—ասելու և արտահայտելու այն բոլորը, ինչ զգում է։ Տարիներն անցնում են ակնթարթի պես, պատանեկությունը տեղի է տալիս հասունության, շատ վճիռներ մնում են անկատար, կյանքը վերցնում է իրենը, հաշվի չնստելով մարդու անթիվ ցանկությունների, երազանքների հետ։

Երբ հասել էին աղբյուրին, Եղիշեն կանգ առավ, աչքերը հառեց նրա պարզ, արծաթափայլ, կարկաչահոս ջրերին։

— Ինչու կանգնեցիր,—զարմացած հարցրեց Արևհատը։

Եղիշեն երազկոտ հայացքով նայեց աղբյուրին, ապա կամաց, հազիվ լսելի ձայնով ասաց.

— Հիշո՞ւմ ես, Արև ջան, անցյալ տարի առաջին անգամ էս աղբյուրի մոտ բացատրվեցինք։

— Հիշում եմ։

— Եկ էս աղբյուրի մոտ էլ իրարից բաժանվենք։ Իմ գնալուց հետո, երբ էստեղից անցնես, կհիշես, որ իմ սերն էլ է եղել նույնպես զուլալ, ինչպես էս աղբյուրի ջուրը...

— Էդ ինչո՞ւ ես ասում, ես հո չեմ կասկածում,—մեղմ, քնքշալիր ասաց Արևհատը։

— Գիտեմ, որ չես կասկածում, գիտեմ, որ դու էլ ինձ ես սիրում։ Էդպես էլ կսիրես մինչև իմ վերադարձը...

Եղիշեն կանգ առավ, հայացքը փախցրեց կնոջից, նայեց հեռուները և շարունակեց միտքը, կարծես թե հեռու-հեռավոր սարերին, թփերին ու ծաղիկներին դիմելով.

— Իսկ եթե չվերադառնամ, կարող ես ուրիշին սիրել, կարող ես ուրիշին գնալ, բայց, տես, ինձ չմոռանաս...

— Եթե շարունակես էդպես հիմար բաներ խոսել... լաց կլինեմ...

— Դե, երեխա հո չես, գիտես, որ կռիվ գնացողը կարող է և չվերադառնալ,—լուրջ շարունակեց Եղիշեն,—բան է, եթե ինձ էլ էդպես դեպք պատահի, լաց չլինես։ Եթե լաց էլ լինես, էնպես արա, որ ուրիշները չիմանան։ Քեզ ուրախ պահիր...

Եղիշեն կրկին լռեց։ Նա տեսավ Արևհատի մռայլ դեմքը և կարծեց, թե իր խոսքերն ազդեցին նրա վրա, կարող է լաց լինել։ Բայց նա լաց չէր լինում, նա ուշադրությամբ լսում էր ամուսնուն։ Դրա համար էլ Եղիշեն շարունակեց ավելի լրջորեն։

— Երբ մենակ լինես, հիշես ինձ, այն ժամանակ մի քիչ, շատ քիչ լաց կլինես՝ Արաքսյայի պես։ Դու գիտե՞ս, որ նա ուրիշներից թաքուն միշտ լաց է լինում։ Դա վատ չէ։ Անկեղծ սիրողը միշտ այդպես կանի, նա չի ուզենա,

որ իր սրտի գաղտնիքներն ուրիշներն էլ իմանան։ Հասկացի՞ր։ Քո արցունքների մասին թող ոչ ոք չիմանա։

— Լավ, եթե ուզում ես, որ քեզ չմոռանամ, միայն քեզ սիրեմ, էլ ինչո՞ւ ես ասում, որ քեզնից հետո ուրիշին գնամ…

— Որովհետև չեմ ուզում, որ մենակ մնաս, ամբողջ կյանքդ մենակ անցկացնես։ Եթե իմ մասին վատ լուր առնես, կարող ես ամուսնանալ… Բայց ոչ իսկույն։ Կսպասես պատերազմը վերջանա, իսկ պատերազմից հետո էլի երկու տարի կսպասես…

— Բավական է, բավական է, թե չէ…

— Լավ, լավ, էլ չեմ խոսի,—վախեցած ասաց Եղիշեն,— Միայն մի բան էլ խնդրեմ, հետո։ Տես, բան է, եթե դու ամուսնանաս ուրիշի հետ, ամուսնուդ հետ չգաս էս աղբյուրի մոտ։ Էս աղբյուրը թող լինի իմ և քո անկեղծ սիրո հավիտենական վկան։ Թող սա չիմանա, որ դու ինձանից բացի ուրիշին էլ ես սիրել…

— Չի լինի, չի լինի, Եղիշ ջան, չի լինի… Ես միայն քեզ եմ սիրում։ Դու կվերադառնաս, անպայման կվերադառնաս և ես միայն քեզ կսիրեմ…

— Ճիշտ է, Արև ջան, ճիշտ է, մենք միայն իրար կսիրենք, հավիտյան իրար, այ էսպես։

Եղիշեն ոգևորությամբ գրկեց Արևհատին, շրթունքները մոտեցրեց նրան, ուզեց համբուրել, բայց հենց այդ ժամանակ աղբյուրի մոտ երևաց Վերջին ժամը։ Նա երկար վազելուց քրտնել էր, շունչը հազիվ էր պահում։ Նա աղբյուրի մոտ տեսնելով Արևհատին ու Եղիշեյին, բարձրաձայն կանչեց.

— Արևհատ, Եղիշե, Եղիշե…

— Վայ նամարդ,—իսկույն բաց թողնելով Արևհատին ասաց Եղիշեն և շրջվելով դեպի Վերջին ժամը՝ զայրալից ասաց,—չոռ ու զահրումար, ի՞նչ ես ձենդ գցել էս սարերը։ Ի՞նչ է պատահել։

— Եկել է, եկել է,—հազիվ արտասանեց աղջիկը։

— Աղջի, ո՞վ է եկել,—անհամբերությամբ հարցրեց Արևհատը։

— Երվանդը, Արաքսյայի մարդը...

— Վա՜հ, ինչ է ասում... Աղջի, գժվե՞լ ես։

— Չէ, գժվել չեմ, պապիս արևը, Եղիշ ջան, գժվել չեմ։ Նա ինքը հիմա կգա էստեղ։ Ես նրան թողեցի գյուղում, ինքս առաջ ընկա, վազեցի, որ սարվորներին իմաց անեմ։

— Դե շուտ հասիր։ Քիչ առաջ Արաքսյան ու Գուրգենը գնացին կթվորների մոտ, հասիր նրանց, իմաց տուր։ Մարիամ քեռակնոջ, Սանթուր քեռուն էլ ասա։ Դուրս եկ բլուրը, ձեն տուր, թող բոլորն էլ լսեն։

Վերջին ժամն էլ չսպասեց այդտեղ։

Քիչ հետո նրա ձայնը լսվեց բլուրի վրայից.

— Էյ հե՜յ, Սաղունց Երվանդը գալիս է, գալիս է...

Առաջինը եկավ Նավասարդ ապերը։ Նա ոչխարի հոտի մոտ թողնելով Վահանին, ինքը գնացել էր շների համար կեր բերելու։ Ճանապարհին լսելով Վերջին ժամի ձայնը, քայլերն արագացրեց, որ տեսնի մեկն ու մեկին, իմանա, թե ինչ է պատահել։ Աղբյուրի մոտ նա հանդիպեց Եղիշեյին ու Արևհատին։

— Այ տա, էդ ի՞նչ հարայ-հրոց բարձրացավ, էն սատանի պոչն ի՞նչ է ձենը գցել սար ու ձոր։

— Հայրիկ, Երվանդը գալիս է, Երվանդը,— ասաց աղջիկը։

— Յանի ո՞նց թե գալիս է։

— Շատ պարզ, Նավասարդ ապեր, ողջ և առողջ է, հիմա էլ վերադառնում է։

Այդտեղ Արևհատը քաշեց ամուսնու թևից.

— Հազար անգամ ասել եմ հայրիկ ասա, ոչ թե Նավասարդ ապեր։

— Արև ջան, ախր մոռանում եմ, շատ եմ էդպես ասել։

— Հիմա էլ սովորիր հայրիկ ասել։

— Լավ, թող կամաց վերադառնամ, հետո կսովորեմ։

Բլրի վրա երևացին սարվորները—կանայք ու երեխաներ, տղամարդիկ։ Նրանք բոլորն էլ վազում էին դեպի գյուղը տանող ճանապարհով։

— Ո՞ւր է, ո՞ւր է իմ բալան...

Մարիամ քեռակինն էր։ Նա մազերը խռիվ, ձեռքերով շորը մինչև ծնկները բարձրացրած, հուզված ու գլխիկոր առաջ էր վազում ու միալար ասում.

— Ո՞ւր է, ո՞ւր է իմ բալան...

— Օրհնված, էլ ի՞նչ ես քեզ կորցրել,—նրան այդ վիճակում տեսնելով ասաց Նավասարդ ապերը,—նա որ քեզ էդպես տեսնի, կարծելու է, թե գժվել ես, թողնելու է, էլի ետ փախչի,

— Հանաքդ մի կողմ դիր, Նավասարդ ապեր, ո՞ւր է իմ Երվանդը։

Նավասարդ ապերը ձեռքը տարավ գրպանը, այնտեղից դուրս բերեց թաշկինակը, օդի մեջ թափահարեց։

— Հրես, առ քո Երվանդը։

Իսկ այդ ժամանակ աղբյուրի մոտ երևաց Երվանդը։

Սարվորները եթե նախազգուշացված չլինեին, թե ով է եկողը, հազիվ թե իսկույն ճանաչեին նրան։

Երկու տարի առաջ, բանակ գնալիս, նա բարակիրան, նրբակազմ մի երիտասարդ էր։ Իսկ այժմ սարվորների հանդեպ կանգնած էր զինվորական հագուստով, առնական, արևահար հասունացած մի մարդ, որի սև գանգուրների մեջ արդեն ճերմակին էին տալիս արծաթափայլ մազերը։

Կոլխոզի նախկին նախագահը չէր կարծում, որ այդպես, աղբյուրի մոտ կդիմավորեն իրեն և դրա համար էլ դեռ չէր շտկել շորերը։ Տեսնելով հավաքվածներին, նա իսկույն կանգ առավ, ձեռքը տարավ դեպի գոտին, ուզեց շտկվել, բայց ժամանակ չունեցավ։ Մարիամ քեռակինն ընդառաջ վազեց նրան, գրկեց, արցունքների միջից մրմնջալով.

— Երվանդ, բալաս, եկած ճանապարհիդ մատաղ...

— Մարիամ խանում, մեզ էլ բաժին թող,—տեսնելով, որ կինը երկար ժամանակ իր գրկից բաց չի թողնում փեսային, ասաց Սանթուր քեռին, մոտեցավ մի կողմից էլ ինքը գրկեց։

Այնուհետև երկար ժամանակ Երվանդ Սաղյանը հնա-

րավորություն չունեցավ տեսնելու, թե ով է իրեն համբուրողը, ում հետ է գրկվում, ով է սեղմում ձեռքը։

— Ախպեր տղա, դե մի պատմիր տեսնենք էդ որտեղի՞ց եկար, որտե՞ղ էիր, ի՞նչ էիր անում,— քիչ հետո, երբ արդեն բոլորն էլ գրկվել, համբուրվել էին Երվանդի հետ, առաջինը հարցով դիմեց նրան Եփրեմ բիձան։

— Պարտիզանական շրջանում էի, Եփրեմ բիձա, պարտիզանություն էի անում։

— Բան չհասկացանք, մի լավ, հասկանալի լեզվով խոսիր, որ տեսնենք, թե էդ ինչ եղավ, ճշմարիտ։

— Դե ինչ պետք է լիներ, մինչև մերոնց գալը թշնամու թիկունքում էինք, նրանց հարվածում էինք թիկունքից։ Հենց որ Կարմիր Բանակը եկավ, ազատեց այն տեղերը, որ գրավել էր թշնամին, մեզ մի ամսով արձակուրդ տվին և... Լավ, դուք ինչպե՞ս եք, մեր տղաներից ովքե՞ր են գնացել, ովքե՞ր են մնացել։

— Չէ, ախպեր տղա, դու քարը կոտր մի գցի,— համառեց Եփրեմ բիձան,— մի լավ ճառ ասիր, մեզ ուրախացրու։ Ախր մենք քեզ կորած էինք համարում։ Շատերը թաքուն, շատերն աշկարա լաց են եղել քեզ համար։ Էդ բոլորի փոխարեն դու հիմա մի լավ ճառ ասիր, ուրախացրու մեզ, ճշմարիտ...

— Ի՞նչ ճառ ասեմ, Եփրեմ բիձա, դու գիտես, որ ես գյուղում եղած ժամանակ էլ լավ ճառ ասել չէի կարողանում։ Իսկ հիմա իմացածս էլ մոռացել եմ։ Երկու տարի շարունակ մեր լեզվի փոխարեն աշխատել են ավտոմատները։ Գիտե՞ս ավտոմատը ինչ բան է։

— Գիտեմ, ջանըմ, ինչո՞ւ չգիտեմ,— վստահորեն ասաց Եփրեմ բիձան,— դա Մոլլա-Նավասարդի լեզվի պես մի բան է, որ բաց ես թողնում, մինչև վերջ բլբլում է, ճշմարիտ...

— Իմ լեզուն մի փուշ է դառել, մտել սիրտս, դուրս չի գալիս։

— Դուք ձեր անձնական հաշիվները թողեք,— Նավասարդ

ապորն ընդհատեց Երվանդը,— առայժմ պատմեցեք աշխատանքներից։

— Դե մենք ի՞նչ պատմենք, աշխատանքը դուք եք կատարել։ Մենք էստեղ շարունակել ենք առաջվա գործը։ Եվրեմյերգին սագերի ղեկավարությունն է ձեռքն առել, ես էլ՝ ոչխարներինը։ Աներդ Գաբրել հրեշտակապետի պես կանգնած է եղել պահեստի գլխին, իսկ…

Նավասարդ ապոր աչքն ընկավ Դարբինյանին, որ բլրի ետևից դուրս գալով մոտենում էր աղբյուրին։

Նա ոչ մի բանից դեռ տեղյակ չէր։ Տեսնելով սարվորներին այնտեղ խմբված, նա մի պահ կանգ առավ, նայեց նրանց։ Նավասարդ ապերը շարունակեց.

— Սա էլ մեր նոր անասնաբույժն է։ Անցյալ տարի է եկել մեր գյուղը։ Ոչինչ չունենք, լավ տղա է, լավ աշխատող է։ Մոլլա-Նասրադդինը կասեր՝ հալալ կաթնակեր է։ Դու էլ ի՞նչ ես խրտնած եղնիկի պես ականջներդ սրել,— Դարբինյանին դիմելով ասաց ծերունին,—մեր կոլխոզի նախագահն է, կավից է գալիս, մոտեցիր, ծանոթ եղեք։

Դարբինյանն ավելի շփոթվեց, փորձեց ինչ որ շարժում կատարել, առաջ գալ, բայց ոտները չենթարկվեցին նրան, մնաց տեղում կանգնած։ Այդ ժամանակ Երվանդը մոտեցավ նրան, ձեռք տվեց և ասաց…

— Շատ ուրախ եմ, ծանոթանանք։ Ես գիտեմ մեր գյուղացիների բնավորությունը, մարդկանց անտեղի չեն գովում։

— Նավասարդ ապերը երևի բացառություն է կազմում, նա իրոք ավելի գովեց,—պատասխանեց Դարբինյանը, ուզեց էլի ինչ որ ասել, բայց Եփրեմ բիձան ընդհատեց։

— Յավաշեք, հրեն Արաքսյան գալիս է, ճշմարիտ…

Բոլորն էլ ետ շրջվեցին։ Արաքսյան գալիս էր Գուրգենի հետ հևասպառ, քրտնաթոր։ Նա երբ հասավ աղբյուրին, շունչը հազիվ էր պահում։ Սարվորներից մի քանի քայլ հեռու կանգ առավ, աչքով փնտրեց ամուսնուն, ճանաչեց։

Այստեղ նա մի քանի րոպե լուռ առաջ նայեց, խորը շունչ քաշեց և հազիվ լսելի ձայնով ասաց.

— Ախր ես գիտեի, ես գիտեի, սիրտս ասում էր, որ նա կվերադառնա...

Վերջին բառն ասելիս նա արդեն Երվանդի գրկում էր։

ՈՒՌԵՆՈՒ ՏԱԿ

1.

Հաշված է, Բարաշենում ընդամենը յոթ հատ ուռենի կա—ճղնատարած, հարածփուն ուռենի։ Դրանցից մեկը գտնըվում է գյուղավերևում, Սաղաթել ապոր նորակառույց տան ցանկապատի առաջ, մշտահոս առվի ափին, մյուս վեցը գյուղից ներքև են, ջաղացի մոտ, ջրերի վրա կռացած։

Գյուղի որ կողմից էլ նայես, կերևան այդ ուռենիները՝ շուրջպարի պատրաստ աղջիկների պես ձեռք-ձեռքի տված, ջաղացի շուրջը օղակ կազմած։

Ամառ լինի, թե ձմեռ, ջաղացում ամեն գիշեր պլպլում է նավթի ճրագը։ Ճրագի լույսը ճեղքելով անցնում է ուռենիների ճյուղերի արանքից, հասնում հեռու-հեռու, մինչև գյուղի ներքին հանդերը և ուղեցույց փարոսի պես իր վրա գրավում գիշերվա խավարի մեջ մոլորված անցորդների ուշադրությունը։

Սուրեն Սարիբեկյանն էլ Մորուտից դուրս գալով, ճրագի լույսի ուղղությամբ գնաց դեպի ջաղացը։ Ջաղացում Սաղաթել ապերը ոտի մեկը ծալել, դրել էր տակը, մյուսն ալրաթեղի մեջ կախած, սուր դուրով տաշտաշում էր ջաղացաքարը։ Այդ ժամանակ նա նկատեց, որ կիսաբաց դուռը ճռաց, ամբողջովին բացվեց և մեկը լուռ ներս մտավ։ Ջաղացպանն առանց գլուխը բարձրացնելու, մի հոնքի տակով միայն նայեց նորեկի կոշիկների պռունգին, իսկույն ճանաչեց նրան, բայց ձևացրեց, թե տարված է աշխատանքով և չի նկատել եկողին։

— Բարի երեկո, Սաղաթել ապեր։

Բարևին պատասխան չհետևեց։ Ծերունին առանց ուշադրություն դարձնելու եկողին, ցած դրեց ձեռքի գործիքները, փչով սրբեց ջաղացաքարի վրա կիտված քարի մանր փշրանքները, ապա կրկին ձեռքն առնելով գործիքները, քթի տակ ինչ-որ մի երգ մրմռալով շարունակեց աշխատանքը։

Սարիբեկյանը չվիրավորվեց Ջաղացպանի անտարբերությունից։ Գիտեր ծերունու բնավորությունը. բարի էր նա ու հոգատար, սակայն սիրում էր խոսքին կշիռ տալ, իրեն պահել այնպես, որ հետը հաշվի նստեն, լսեն խորհուրդները։

Խորհուրդներ տալու համար էլ Սաղաթել ապերը միակն էր գյուղում։ Եթե իմանար, որ մեկն ու մեկին որևէ դժբախտություն է պատահել, իսկույն կթողներ գործը, կշտապեր ասելու, թե ինչ պետք է անել, ինչպես դուրս գալ դժբախտությունից։ Ծերունին չէր վշտանում, երբ հետագայում չէին կատարում խորհուրդները։ Նման դեպքում նա ասում էր.

— Վնաս չունի, ասված մարդուն խելք է տալիս նրա համար, որ նա իր սեփական խելքով կառավարի տունը։

Սակայն նա խիստ զայրանում էր, երբ խորհուրդներ տալիս հակաճառում էին իրեն։

— Ախպերացու, որ քեզ մի բան ասում եմ, լսիր. ինչո՞ւ ես հակաճառում. լավ խորհուրդը բարեկամի բերած նվեր է, մի տեղ հարկավոր կգա։

— Այդ ի՞նչ է, աշխատո՞ւմ ես, թե երգում,— Ջաղացպանի երկար լռությունը տեսնելով, վերջապես խոսեց Սարիբեկյանը։

— Երգում եմ աշխատելու համար։

— Էլի սկսեցիր փիլիսոփայություն անե՞լ։

— Միտքս չհասկացա՞ր։

— Հասկացա։

— Ի՞նչ հասկացար։

Սարիբեկյանը լռեց։ Այդ պահին նրա մտքերն ուրիշ

տեղ էին, ուրիշ հարցեր էին հուզում նրան։ Նա սկի չիմացավ էլ, թե ինչ հարցրեց ջաղացպանը. միայն մեքենայաբար «հասկացա» ասաց։ Բայց ծերունին այժմ ուզում էր իմանալ իր հարցի պատասխանը։ Ի՞նչ ասեր նրան։

— Հը, լռում ես, ախպերացու։

— Բա ի՞նչ անեմ։

— Խոսիր։

— Խոսելուց բան չի դուրս գա. խորհուրդ տուր։

— Խորհուրդ տամ...

Սաղաթել ապերը գործիքները դրեց ջաղացքարի վրա, դանդաղ ոտքի կանգնեց, փեշերից թափ տվեց քարի փոշին, մոտեցավ Սարիբեկյանին, ձեռքը դրեց նրա ուսին, մի պահ լուռ նայեց նրան և կամաց, յուրաքանչյուր բառը շեշտելով ասաց.

— Խորհուրդ տալը մի անգամ կլինի, ախպերացու, երկու անգամ, երեք անգամ։ Իսկ ես հրես մի ամիս է ամեն օր քեզ ասում եմ—ուրիշի հացին աչք դցողն իր տաշտում հաց չի ունենա...

Ծերունին էլ ոչինչ չասաց։ Մի քիչ էլ լուռ նայեց Սարիբեկյանին և ջաղացից դուրս եկավ։

Սուրեն Սարիբեկյանը գլխահակ մնաց ջաղացում։

Մի տարի առաջ բանակից զորացրվելուց հետո գալով տուն, նա իմացավ, որ Զարուհի Վարդանյանն ամուսնացել է հարևան Մորուտ գյուղի կոլխոզի նախագահ Ռուբեն Սիմոնյանի հետ։ Զարուհի Վարդանյանը Սարիբեկյանի դպրոցական ընկերուհին էր։ Նրանք միասին էին ավարտել գյուղի տասնամյա դպրոցը։ Դպրոցի վերջին դասարանում նրանց միջև ստեղծվել էր ջերմ մտերմություն։ Շարունակ միասին էին լինում թե դասերի ժամանակ և թե ժողովներում։ Ստեղծվել էր այն կարծիքը, թե նրանց մտերմությունը հետագայում կավելանա, կփոխվի սիրո և նրանք այլևս իրարից չեն բաժանվի։ Բայց դպրոցն ավարտելուց հետո Սարիբեկյանը գնաց գյուղատնտեսական ինստիտուտում սովորելու, Վարդանյանն էլ մանկավարժական ինստիտու-

տում։ Ընկան տարբեր քաղաքներ, ժամանակն ու տարածությունը նրանց միջև խլեց շատ բան, թողնելով միայն պատանեկան տարիների քաղցր, անմոռաց հուշը։

Բանակից զորացրվելուց հետո Սարիբեկյանն իմանալով Զարուհու ամուսնանալու մասին, առանձնապես չհուզվեց։ Նա համարեց դա շատ բնական մի երևույթ ու կարծես թե մոռացավ ամեն ինչ։ Բայց պատահական մի դեպք վերստին եկավ բորբոքեց անցյալ զգացումները և պղտորեց ֆերմայի վարիչի հոգին։

Դա մոտ մի ամիս առաջ էր։

Շրջանային կենտրոնում կայացած խորհրդակցությունից տուն վերադառնալիս Սարիբեկյանը երբ ուզում էր բարձրանալ ավտոբուս, հանկարծ լսեց իր անունը։

— Սուրեն։

Հետ շրջվեց, նայեց չորս կողմը, բայց առաջին պահ ծանոթ դեմք չտեսնելով, կարծեց, թե սխալված է, միայն թվացել է, թե իրեն կանչեցին։

— Ի՞նչ է, չե՞ս ճանաչում, թե չես ուզում ճանաչել։

Զարուհին էր։ Նա արևից պաշտպանվելու համար բարակ մի քող էր գցել աչքերին, կանգնել ավտոբուսից մի քանի քայլ հեռու և սպասում էր այնտեղ։

— Այդ դո՞ւ ես, Զարուհի,— կարծես թե իր աչքերին չհավատալով, զարմացած բացականչեց Սարիբեկյանը և ժպտալիր մոտեցավ նրան,— ինչո՞ւ ես այդպես քողարկվել։

— Քողարկվել եմ, որ տղամարդիկ չգրավեն ինձնով։

— Ինձ թվում է, թե արդեն ուշ է, ում հարկավոր էր, արդեն գրավել ես։

— Միթե՞ ուրիշին էլ չեմ կարող գրավել։

— Իսկ էլի ո՞ւմ ես ուզում գրավել։

— Քեզ։

— Ի՞նձ։

— Այո։ Կարծում ես չե՞մ կարող։

Սարիբեկյանը շփոթվեց և շփոթմունքից շիկնեց նրա դեմքը։ Նա մի պահ լռեց, գլուխը կախեց, բայց աստիճա-

Նարար խիզախելով գլուխը բարձրացրեց, սկսեց դիտել իր նախկին վտիտ, գունատ ընկերուհուն, որն այժմ փարթամացել էր, հասունացել, ինչպես կարմիր խնձոր։

Զարուհին իր խոշոր, փայլուն աչքերը հառել էր Սարիբեկյանին և կարծես թե սպասում էր իր հարցի պատասխանին։ Իսկ Սարիբեկյանը մտքերով տարված, շարունակում էր լուռ նայել նրան։

— Դե, ինչո՞ւ ես լռում, խոսիր,—վերջապես խոսեց Զարուհին։

— Կարող եմ ասել, որ անչափ գեղեցկացել ես։

— Նույնիսկ անչա՞փ,—խորամանկորեն ժպտալով հարցեց Զարուհին։

— Այո, անչափ։

— Ուրե՞մն...

— Կարող ես գրավել ոչ միայն ինձ, այլև ուզածդ ամեն մի տղամարդու։

— Այդ ես չգիտեի, թե չէ առիթը բաց չէի թողնի,— իսկույն վրա բերեց Զարուհին և, խոսակցության նյութը փոխելու համար ավելացրեց,—կատակը մի կողմ, պատմիր, ինչպե՞ս ես։

— Ես սովոր չեմ կատակի և իզուր ես ուզում նյութը փոխել,—Զարուհու համարձակությունից ինքն էլ սրտապնդվելով ասաց Սուրենը,—ինձ թվում է, թե երկար անջատումից հետո հենց այսպես էլ պետք է սկսեր մեր խոսակցությունը։ Շարունակիր, խնդրում եմ։

— Ես ի՞նչ պետք է ասեմ։ Դու խոսիր։ Ինչպե՞ս ես։ Լսեցի, որ ֆերմայի վարիչ ես նշանակվել։

— Լավ է, որ հետաքրքրվել ես ինձնով։ Բայց դա մի կողմ թողնենք։ Ես ուզում եմ քո մասին լսել։

— Ի՞նչ է հետաքրքրում քեզ։

— Ամեն ինչ, պատմիր...

Սարիբեկյանի ձայնն սկսել էր դողդողալ։ Սիրտը հուզմունքից անհամաչափ թփրտում էր և նա զգում էր, որ շփոթված է, անբացատրելի մի զգացում պատել էր նրան և նա չէր

կարողանում խոսել, կենտրոնանալ, մտքերն արտահայտել։ Նա մոռացած շրջապատը, մարդկանց, հմայված նայում էր Զարուհուն և ուզում էր, որ նա խոսի։ Իսկ նա չէր խոսում, նա էլ իր հերթին Սարիբեկյանին էր նայում մի տեսակ կարոտով, գուցե և թախիծով, որ այդ պահին դժվար էր որոշել։

— Ես կարծում էի, թե երկար անջատումից հետո դու մի բան կգտնես ինձ հետ խոսելու,— Սարիբեկյանի երկար լռությունից հետո թախիծով ասաց Զարուհին,— իսկ դու լռում ես։

— Հետո ես քեզ գուցե շատ բան ասեմ, իսկ այժմ դու խոսիր։

— Իսկ ի՞նչ կուզենայիր, որ ես ասեի քեզ։

— Ես կուզենայի, որ դու ինձ...

Սարիբեկյանը չկարողացավ խոսքն ավարտել։ Լսվեց ավտոբուսի սուլոցն ու շոֆերը նստած տեղից գլուխը դուրս բերելով հարցրեց.

— Բոլո՞րն են նստած։

— Լավ, էլ ինչո՞ւ ես սպասում, չե՞ս գնում,— ասաց Սարիբեկյանը։

— Չէ, տալոջս եմ սպասում։ Նա պետք է հիմա գար, բայց չգիտեմ ինչու ուշանում է։ Հաջորդ ավտոբուսով կգանք։

— Այդ դեպքում ես էլ սպասեմ։

— Չէ, դու գնա,— առարկեց Զարուհին,— հետո կհանդիպենք, կխոսենք։

— Իսկ կհանդիպե՞նք, արդյոք։

— Անպայման կհանդիպենք։

Սարիբեկյանը շտապ բռնեց Զարուհու ձեռքը, ամուր սեղմեց և արագ ցատկեց ավտոբուսը։

Ճանապարհին Սարիբեկյանը միայն Զարուհու մասին էր մտածում։ Որքա՞ն էր փոխվել նա, գեղեցկացել։ Ինչո՞ւ նա այդ չիմացավ դպրոցում, ինչո՞ւ խզվեցին նրանց կապերը։ Միթե՞ չէին կարող դպրոցն ավարտելուց հետո ա-

մուսնանալ և այժմ, ռազմաճակատից վերադառնալուց հետո իրենց ընտանիքը կունենային, հաստատուն օջախը։ Սուրեն Սարիբեկյանը հիմարաբար ձեռքից բաց թողեց հրաշալի առիթը և զրկվեց մեկից, որի հետ նա կարող էր լինել ուրախ ու երջանիկ։ Իսկ այսուհետև կլինի՞ նման առիթ, կհանդիպի՞ նա մի ուրիշին, որ Զարուհու նման գեղեցիկ լինի, փարթամ, կենսուրախ, աշխույժ։ Կլինի՞ մեկը, որ նրան—Սուրեն Սարիբեկյանին ոգևորի կյանքում և աշխատանքում, կլինի՞ մեկը, որին սիրի նա ամբողջ սրտով, ինչպես սիրում էր նա Զարուհուն դպրոցական տարիներին։

Արևակեզ դաշտը հետզհետե սեղմվում էր, փոքրանում։ Ավտոբուսը համաչափ թխթխկոցով մտնում էր լեռնալանջերին։ Մեքենայի մեջ բոլորն էլ լուռ էին. ոչ ոք չէր խոսում, ոչ մի շարժում չէր նկատվում։ Տաքի՞ց, թե հոգնածությունից կիսաթմբիր ճանապարհորդները կախել էին գլուխները, կռացել իրար վրա, ամփոփվել օրվա հոգսերի մեջ։ Միայն Սարիբեկյանն էր տարվել ինքնակշտամբող մտքերով, խռիվ ու փոթորկված հույզերով։

Տուն գալուց հետո էլ այդ մտքերը հանգիստ չտվին նրան։ Նա անդադար մի տեղից մյուսն էր գնում, սկսում մի գործ, բայց այն կիսատ թողնելով՝ անցնում մի ուրիշին։ Որդու անհանգիստ շարժումները չվրիպեցին մոր ուշադրությունից։

— Ի՞նչ է պատահել քեզ, տեղդ տաքիկ չես անում,—հարցրեց մայրը։

Սուրենն անպատասխան թողնելով մորը, գնաց և մտավ անկողին, ձևացրեց, թե հոգնած է, հանգստանալ է ուզում։

Հաջորդ օրը Սարիբեկյանը փոխանակ գնալու սար, որտեղ գտնվում էր ֆերման, գնաց դեպի Մարուտ։ Դա Բարաշենից մոտ չորս կիլոմետր հեռու փոքրիկ մի գյուղ էր, ամբողջովին այգիների մեջ թաղված։ Հեռվից նայողին կթվար, թե դա պտղատու ծառերի խոշոր մի այգի է։ Երկնասլաց ու ճղնատարած ծառերի արանքից ոչ մի տուն

չէր երևում։ Իսկ ներսից գյուղը գեղեցիկ էր—մաքուր, զուգահեռ փողոցներով, երկհարկանի, կղմինդրածածկ տներով, որոնց առջևից նեղ առվակներով մշտապես հոսում էր ջուրը։

Սարիբեկյանի քույրը—Վարդուշն ամուսնացել էր մորուտցու հետ։ Նա գյուղի տակով անցնելով գնաց դեպի քրոջ տունը։ Սանդուխքներից վեր բարձրանալիս քրոջ փոքրիկ տղան դուրս եկավ քեռուն ընդառաջ, բայց նա փոխանակ քեռու հետ խոսելու, թողեց նրան սանդուխքների վրա և ինքը վազեց դեպի գոմ։

— Սուրեն քեռին եկել է, մայրիկ,—գոռում մոր փեշից քաշելով ասաց փոքրիկը։

— Սուրեն քեռի՞ն,—զարմացած հարցրեց մայրը,—ի՞նչ է պատահել այդպես առավոտը շուտ։

— Չեմ իմանում,—պատասխանեց երեխան և կրկին հետ վազեց քեռու մոտ։

Քույրը կիսատ թողնելով կիթը, հորթը բաց թողեց կովի տակ, գնաց տուն։ Այնտեղ եղբայրը հայելու առաջ կանգնած շտկում էր մազերը։

— Սուրե՞ն, ի՞նչ կա, բարի լինի։

— Ոչինչ, ասացի տեսնեմ ինչպես եք։

— Չէ, եկ ասենք մի բան է պատահել,—անհանգիստ ասաց քույրը,—չլինի՞ մայրիկը…

— Մայրիկը ողջ և առողջ է, բարևեց քեզ։

— Բա էլի ի՞նչ կա։ Ամիսներով ոտդ մեր տուն չես դնում, իսկ հիմա, լույսը դեռ չբացված…

Քույրն ուզեց էլի ինչ որ ասել, կշտամբել եղբորը, որ ուշ-ուշ է գալիս իրենց մոտ, մեկ էլ զղջաց, կիսատ թողեց խոսքը, վախենալով, որ կվիրավորի նրան։ Եղբայրը հասկացավ քրոջ միտքը։

— Ոչինչ, ըստ երևույթին այսուհետև շուտ-շուտ կգամ ձեզ մոտ,—ասաց նա։

— Ի՞նչ է պատահել որ։

Սուրենը մի պահ լռեց և չիմացավ ինչպես սկսել։ Եղբոր լռությունը քրոջն անհանգստացնում էր։ Նա դարձյալ կարծում էր, թե ահավոր մի բան է պատահել, որ եղբայրը դժվարանում է ասել։ Այդպես էր ենթադրել տալիս նաև եղբոր դեմքի մռայլությունը, մտախոհությունը։

— Դե խոսելո՞ւ ես, թե չէ,— անհանգիստ բացականչեց քույրը։

— Ախր ակի ասելու բան էլ չի, որ ասեմ,— հուզված սկսեց եղբայրը,— սիրտս կպել է Զարուհուն...

— Ո՞նց թե,— խայթվածի պես վեր ցատկեց քույրը,— գժվե՞լ ես, ի՞նչ է...

— Չգիտեմ գժվել եմ, թե չէ, բայց այդպես է։

Ու նա սկսեց հանգամանորեն պատմել երեկվա դեպքը, իր զրույցը Զարուհու հետ, և վերջում ավելացրեց, թե կամ պետք է ամուսնանա նրա հետ, կամ էլ...

— Կամ էլ ի՞նչ,— չգիտես զայրալի՞ց, թե զարմանքով լի, հարցրեց Վարդուշը։

— Կամ էլ գլուխս պետք է վերցնեմ, հեռանամ այս կողմերից։

Քույրը լռեց։ Նա գլուխը կախեց, տարվեց մտքերով, որոնք սկսել էին ճնշել հոգին, խիղճը։

Լռությունը տևեց բավականին երկար։ Եղբայրն ուզում էր լսել քրոջ խոսքը, նրա կարծիքը, իսկ քրոջ լեզուն բերանում չէր շարժվում, միտքը կաշկանդվել էր, չգիտեր ինչ ասել։

— Ինչո՞ւ չես խոսում,— երկարատև լռությունը խախտեց եղբայրը։

— Բա խոսելու տեղ կա՞, որ խոսեմ։

— Ինչո՞ւ, հանցանք ե՞մ կատարում։

— Չես ամաչո՞ւմ, դեռ խոսո՞ւմ էլ ես,— վերջապես բռնկեց քույրը,— ամուսին, երեխա ունեցող կնոջ վրա աչք դնելուց էլ մեծ հանցա՞նք կլինի, ընտանիք քայքայելուց էլ վատ բան կարո՞ղ է լինել աշխարհում։

— Ինչո՞ւ ես կարծում, որ ես եմ քայքայում նրանց

ընտանիքը։ Մի ընտանիք, որ ամուր հիմք չունի, այն ինքն ըստ ինքյան քայքայված է։ Ես այդտեղ ոչ մի մեղք չունեմ։

— Դու որտեղի՞ց գիտես, որ այդ ընտանիքն ամուր հիմք չունի։

— Գիտեմ, եթե չկա փոխադարձ սեր, չկա և հաստատուն ընտանիք։

— Իսկ դու գիտե՞ս, որ նրանք իրար չեն սիրում։

— Գիտեմ։ Եթե սիրեին, Զարուհին ինձ հետ այնպես չէր խոսի։

— Զարուհին քեզ ո՞չինչ էլ չի ասել. կատակել է և ուրիշ ոչինչ։

— Կատակե՞լ է…

Սարիբեկյանի շրթունքները դողդողացին։ Զայրույթի մի հոսանք անցավ նրա մարմնով և նա ջղային վեր կացավ տեղից, սկսեց շրջել սենյակում։

— Կատակել է… Ես երեխա չեմ, որ ինձ հետ կատակ անեն։

— Այո, կատակել է,—հաստատեց քույրը,—դու եթե սիրում էի՞ր նրան, վաղուց պետք է ամուսնանայիր։

— Այն ժամանակ չամուսնացա, հիմա…

— Մի ասիր, Սուրեն, մի ասիր,—իսկույն ընդհատեց քույրը,—էդ տեսակ խոսք մի ասիր. ամուսնու ականջը կընկնի և դու նրանից էլ չես պրծնի։

— Ամուսնու մասին դու մի մտածիր, ես նրանից չեմ վախենում։

— Իզուր։ Նա ուժեղ է, Սուրեն ջան, քեզ կվնասի։ Ասածդ իզուր բան է, գլուխ եկող չի, բայց քեզ անտեղի վտանգի մի ենթարկիր։

— Վտանգը հենց այն է, որ մտել է սիրտս և այնտեղից էլ դուրս չի գա. ուրիշ վտանգ չկա,—ասաց նա, պատուհանի վրայից վերցրեց գլխարկը, ուզեց դուրս գնալ։

— Ո՞ւր։

— Բա քեզ հետ էլ ի՞նչ խոսեմ. միևնույն է, դու ինձ չես հասկանալու։

— Սպասի՛ր,— եղբոր թևից բռնելով ասաց քույրը,— ես քեզ համար եմ ասում, քեզ սիրելուց եմ ասում։

— Դու ինձ չես սիրում, ոչ ոք էլ ինձ չի սիրում,— ասաց նա և շտապ տնից դուրս եկավ։

Բակում Սարիբեկյանը կանգ առավ, սկսեց մտածել։ Ի՞նչ անել, ինչպե՞ս տեսնել Զարուհուն, խոսել հետը։ Սպասել փողոցում, կամ նրանց տան մոտերքը, որ նա դուրս գա տնից, տեսնի իրեն։ Բայց որքա՞ն կարելի է սպասել. տեսնողները ի՞նչ կասեն, ի՞նչ կմտածեն իր մասին։ Ուղիղ գնա նրանց տո՞ւնը։ Բայց ինչպե՞ս. գուցե ամուսինը տանն է, ի՞նչ կարող է խոսել նրա հետ, ինչպե՞ս պատճառաբանել իր անժամանակ այցը։

Բակում երկար մտածելուց հետո նա որոշեց վերադառնալ իրենց գյուղը, գնալ ֆերմաները, առանց Զարուհու հետ տեսնվելու։ Այդ ժամանակ քույրը մոտեցավ նրան։

— Էլ ինչո՞ւ ես կանգնել էստեղ, գնանք մի կտոր հաց կեր։

— Ինձ հաց-բան հարկավոր չի։ Հետս եկ մինչև գյուղի ծայրը։

Նա անհարմար էր զգում առավոտը շուտ մենակ անցնել գյուղամիջով։ Քույրը հետ դառավ, շալը գցեց գլխին, եղբոր հետ միասին դուրս եկան բակից։

Գյուղում լուռ էր. փողոցներում ոչ ոք չէր երևում։ Դա ուրախացնում էր Վարդուշին։ Նա գիտեր, որ եթե եղբորը տեսնեին, հետո հարցնելու էին, թե ինչու էր եկել։ Այն ժամանակ ի՞նչ պետք է ասեր ինքը, ի՞նչ պատասխան պետք է տար հարցնողներին։ Ստել չէր կարող. կյանքում սուտ խոսած չկար, ստախոսներին էլ ատելով ատում էր։ Իսկ ճշմարտությունն էլ չէր կարող ասել, դա իր համար մահու չափ ծանր կլիներ։

Նրանք Զարուհու հետ մտերիմ ընկերուհիներ էին, քրոջ պես սիրով, իրարից անբաժան։ Չկար մի գաղտնիք, որ չհաղորդեին իրար, չկար մի բան, որ թաքցնեին իրարից։ Այժմ եթե Զարուհին իմանար, թե նրա եղբայրը խորթ

աչքով է նայում իրեն, ինչպես կվերաբերվեր դեպի Վարդուշը, չէ՞ր ասի, թե այդ բոլորը նրա հորինած գործերն են, նա ուզում է անվանարկել ընկերուհուն, քայքայել նրա ընտանիքը...

Գյուղամիջով անցնում էին լուռ, և քույր ու եղբայր ոչ մի խոսք չէին փոխանակում իրար հետ։ Գյուղից դուրս չեկած, Սարիբեկյանն ինքնաբերաբար բարձրացրեց գլուխը, նայեց դեպի երկհարկանի, կղմինդր-ծածկ տան պատշգամբը։

Դա Մարուտի կոլխոզի նախագահ Ռուբեն Սիմոնյանի տունն էր։

Սարիբեկյանն ուզում էր ձևացնել, թե չի նայում տան կողմը, բայց չէր կարողանում։ Նա ակնհայտորեն դանդաղեցրեց քայլերը և հայացքը հառեց տան պատշգամբին։ Այնտեղ ոչ ոք չէր երևում։ Մի ակնթարթ միայն պատշգամբում երևաց շիկագանգուր մի երեխա, ձեռքի յուղահացը ցույց տվեց մոխրագույն կատվին, կատուն իսկույն երեխայի ձեռքից խլեց յուղահացն ու քաշվեց մի անկյուն, սկսեց ուտել։ Երեխան լաց լինելով ներս գնաց։

Քույրն աչքի տակով նայում էր եղբորը։ Եղբայրն ամբողջապես տարվել էր Սիմոնյանի տնով։

— Սուրեն ջան, տես, քեզ չխայտառակես,— գյուղավերևում հրաժեշտ տալիս ասաց քույրը։

Եղբայրն առանց պատասխանելու հեռացավ, քրոջը թողնելով տագնապահար կանգնած։

Մի քանի օր հետո գյուղում արդեն ամեն ինչ հայտնի էր։ Եվ ո՞ր գաղտնիքն է, առհասարակ, անհայտ մնում։ Անմիջապես տարածվեց, որ Սուրեն Սարիբեկյանը սիրահարվել է Մարուտի կոլխոզի նախագահ Ռուբեն Սիմոնյանի կնոջը, գիշերները շարունակ գաղտագողի գնում է Մարուտ, քրոջ տանը հանդիպում Զարուհու հետ, պահանջում, որ նա թողնի ամուսնուն, երեխային էլ վերցնի, գա իր մոտ...

Ո՞վ տարածեց այդ լուրը և այդ քան արագ։ Սուրեն

Սարիբեկյանը մտածում էր ու չէր հասկանում։ Ճիշտ է, նա ոչ ոքից չէր թաքցնում, որ սիրում է Զարուհուն, բայց ձեւ էր անել, թե հանդիպում է նրա հետ և ո՞վ էր հնարել այդ բոլորը, նրա համար մնում էր գաղտնի։

Եվ որքան գնում, այնքան ավելանում էին խոսակցությունները այդ մասին։

— Սիրո մերը չմեռնի, որ բուն դրավ մարդու սրտում, թափով ու թվանգով էլ խփես, դուրս չի գա էնտեղից,— ասում էր պայտար Գրիգորը, որը վաթսունից անց ծերունի էր, բայց երբեք չէր ամուսնացել։

Գյուղում ասում էին, որ պայտարը երիտասարդ հասակում պատահաբար հանդիպել է մի հույն աղջկա, սիրահարվել նրան, բայց աղջկա ծնողները մերժել են և նա սիրուց խելագարվել է, երեք տարի մնացել գժանոցում, իսկ այնտեղից դուրս գալուց հետո այլևս ոչ մի աղջկի չի համաձայնել ամուսնանալ նրա հետ։

Հայտնի չէ, թե իր խոսքերով ինչ էր ուզում ասել ծեր պայտարը—Սարիբեկյանի՞ն էր ուզում արդարացնել նա, թե՞ միայն սիրո ամենակարող ուժի մասին էր հիշեցնում։

Այդ դժվար էր իմանալ։

Իսկ ուրիշ ոչ ոք գյուղում չէր արդարացնում Սարիբեկյանին։ Մանավանդ Սաղաթել ապերը, որի մոտ հաճախակի գալիս էր Սարիբեկյանը, խնդրում, որ նա խորհուրդ տա, կամ միջնորդի այդ հարցում, ասում էր.

— Չէ, ախպերացու, բուն դրած թռչունին բնահան անելը մեծ մեղք է, հասկացիր միտքս...

2.

Սարիբեկյանը գլուխը կախ կանգնել էր ջաղացում։ Սաղաթել ապերը տեսնելով, որ նա այնտեղից դուրս չի գալիս, ինքը մեկել հետ եկավ, բռնեց նրա թևից, ասաց.

— Էլ ո՞ւմ ես սպասում, ախպերացու, ես արդեն գնում եմ տուն։

Սարիբեկյանն առանց խոսքի՝ դուրս եկավ։ Ծերունին

նրա ետևից փակեց Ջաղացի դուռը և միասին գնացին դեպի գյուղ։

Ամառային տաք երեկո էր։ Ոչ ձայն էր լսվում, ոչ շշուկ։ Ծառերն անգամ դադարել էին սոսափելուց։ Ճանապարհի աջ ու ձախ եզրերին ընկուզենիները կախել էին դառամ փղի ականջների չափ տերևները, կարծես թե խոր քնի մեջ մրափել հեղձուցիչ շոգից հետո։ Ընկուզենիների բաց արմատները լիզելով անաղմուկ հոսում էր Ջաղացի առուն։ Կանաչի մեջ թաքնված գորտերը, նրանց քայլերից խրտնած, ցատկում էին առուն, կարծես թե անհագին ջուր կուլ տալուց շնչակտուր լինելով տհաճ մի ձայն արձակում ու լռում ջրի ալիքների տակ։

Գիշերային տոթը ծեր Ջաղացպանի ու Սարիբեկյանի վրա էլ էր ազդում։ Նրանք գնում էին դանդաղ, լուռ, համր քայլերով։ Երկու օր առաջ այդպես չէր։ Նույն ժամին, նույն տեղով անընդհատ խոսում էին, վիճում։ Գիշերն էլ այդպես տոթ չէր։ Հարավի հարթ դաշտավայրից փչում էր զուլալի մի զեփյուռ։ Ծառերը սոսափում էին, խշխշում էին կանաչ տերևները, ծաղկառատ այգիներն արձակում էին հաճելի բուրմունք։ Այժմ ծաղիկների բուրմունքն էլ էր չքացել։ Ծաղիկնե՞րն էլ էին նիրհել, դադարել հոտ արձակելուց, թե՞ նրանք—ծերունին ու Սարիբեկյանն էին մոռացել ամեն ինչ, տարվել իրարամերժ մտքերով։ Գուցե խոսելու նյո՞ւթն էր սպառվել։ Էլ ինչի՞ մասին խոսեին։ Ինչ պետք էր, Սարիբեկյանն արդեն ասել էր և լսել Ջաղացպանի պատասխանը։

Բարաշենի Ջաղացը գտնվում էր Մորուտի ճանապարհի վրա։ Երեք օր շարունակ Սարիբեկյանը գնում էր Մորուտ, Զարուհուն տեսնելու առիթ փնտրում, բայց ապարդյուն հետ դառնում, ճանապարհին մտնում Սաղաթել ապոր մոտ, պատմում վիշտը։ Ծերունին զայրանում էր, ասում, որ նա իր այդ արարքով վարկաբեկում է ոչ միայն իրեն, այլև ամբողջ գյուղին։

— Աչք եմ բաց արել, ոչ մի անգամ չեմ տեսել, որ մո-

բուտցիների և մեր գյուղացիների մեջ խռովություն լինի։ Մորուտցիները մեր պատիվն են իրենցը համարել, մենք էլ՝ մորուտցիներինը...

— Գիտեմ, Սաղաթել ապեր, գիտեմ,—հեզությամբ համաձայնում էր Սարիբեկյանը,—բայց չգիտեմ ինչ անեմ։

— Գնա և գլուխդ քարին տուր,—բռնկվում էր ծերունին, հայհոյում, բայց էլի խղճում էր, ասում,— քեզ համար եմ ասում, ախպերացու, ստանի ճանապարհով ես գնում։

Սարիբեկյանը լռում էր, գլուխը կախում, մտածում էր արդարանալու բան գտնել, բայց ոչ մի խոսք չէր գտնում ասելու։ Աչքերը մշուշապատվում էին և նրան այդ մշուշի մեջ պատկերանում էր Զարուհին՝ ճերմակ քողը երեսին գցած, ավտոբուսի մոտ կանգնած, ժպիտը դեմքին...

— Կարո՞ղ եմ գայթակղել քեզ,—կարծես թե ասում էր նա։

Սարիբեկյանը տրորում էր աչքերը, ուզում էր գեթ մի պահ մտքից հանել նրան, բայց նա համառորեն դիմադրում էր, չէր հեռանում ոչ մտքից, ոչ աչքերի առաջից։ Նա այլ կերպ էլ չէր պատկերացնում Զարուհուն. միայն այնպես, ինչպես տեսավ նրան վերջին անգամ։ Դպրոցական տարիների Զարուհին այլևս չկար, որպես թե գոյություն էլ չէր ունեցել։ Կարծես թե նա հենց այնպես էր ծնվել—առույգ, հասունացած, վարդի պես փարթամ, ճերմակ քողը երեսին...

— Առաջները լիներ...

Երկար լռությունից հետո շշնջաց Սարիբեկյանը, բայց չավարտեց խոսքը։

— Ի՞նչ ասացիր,—մտքերից սթափվելով հարցրեց ծերունին, կարծելով, թե Սարիբեկյանի խոսքերն իրեն էին ուղղված։

— Ասում եմ առաջները լավ էր։

— Ի՞նչն էր լավ։

— Բավական էր, որ աղջիկը դուր եկավ։ Ծնողները կտային՝ լավ. չտային, մի գիշեր կառնեիր, կփախցնեիր... Էլ ո՞վ էր երկար-բարակ մտածում։

— Հը՜մ,—լսվեց Սաղաթել ապոր ձայնը։ Սակայն դժվար էր որոշել՝ քմծիծա՞ղ էր դա, թե զարմանքի բացականչություն։ Ահագին ժամանակ ծերունին էլ ոչինչ չասաց։ Նրա այդ անորոշ բացականչությունը սկսեց անհանգստացնել Սարիբեկյանին։ Նա ուզում էր իմանալ՝ դո՞ւր եկավ իր միտքը ծերունուն, թե չէ։ Բայց Սաղաթել ապերը բավականին լուռ մնալուց հետո միայն ասաց.

— Ջահել ես հալա, ջահել...

— Ինչո՞ւ։

— Ո՞նց թե ինչու. ջահել չլինես, էդ տեսակ բանը կասե՞ս։ Քեզ ո՞վ է ասել, թե առաջներում հեշտ էր սիրած աղջկա հետ ամուսնանալը։ Գրքերում ես կարդացե՞լ, թե՞ աչքովդ ես տեսել։

— Իսկ դու ի՞նչ ես կարծում։

— Ես չեմ կարծում, ես հաստատ գիտեմ։ Քանի՜-քանի՜ մարդիկ են իրենց գլուխը տվել սիրած աղջկա համար։ Կարծում ես աղջկան փախցնելով հարցը վերջանո՞ւմ էր։ Սխալվում ես, ախպերացու։ Ես քեզ հազար ու մի դեպք կպատմեմ, թե ինչպիսի արյունահեղություններ էին տեղի ունենում աղջիկ փախցնելու համար։ Այ, վերցրու մեր սարի մատուռը։ Դու չգիտե՞ս, թե ինչու է նա «Անիծված սուրբ» կոչվում։

Սարիբեկյանը լսում էր։ Ծերունին մի պահ միայն լռեց, հավաքեց մտքերը, սկսեց։

— Ղոշա-Արխում մի քիրվա ունեինք։ Միր-Մովսում էր անունը. լավ մարդ էր ողորմածիկը։ Նա ունեք-չունեք՝ մինուճար մի տղա ուներ։ Սարում էդ տղեն սիրահարվում է մի Թյարաքյամայի աղջկա։ Ասում են էդ աղջիկն սկի էնքան էլ գեղեցիկ չի լինում։ Բայց դե ինչ կանես—սրտի բան է. աչքի կպածը սրտի կպածին չի հասնի։ Տղան էլչի է ուղարկում աղջկա հոր մոտ, բայց հայրը չի ուզում իր

աղջիկը տալ Միր-Մովսումի տղային. Նրա աղջիկը նշանված է լինում մի հարուստի հետ։ Էդ որ իմանում է մեր քիրվայի տղան, մի գիշեր օբաներից փախցնում է աղջկան, գնում մտնում մեր մատուռը։ Աղջկա հայրն իմաց է տալիս իր փեսացուին, նրանք տաս-տասներկու հոգով զինված, գալիս են մատուռը։ Սկսվում է սարսափելի կռիվը։ Կռվի ժամանակ Միր-Մովսումի տղան սպանում է իր հակառակորդներից չորսին, բայց տեսնելով, որ իր գնդակները վերջանում են, մնում է միայն երկուսը և էլ չի կարողանալու դիմադրել, այդ գնդակներից մեկով սպանում է սիրած աղջկան, որ նա թշնամիների ձեռքը չընկնի, մեկն էլ խփում է իր ճակատին... Բա՜ս, ախպերացու։ Սա հին բան է, բայց որքա՜ն են այսպիսի դեպքերը։ Միտքս հասկացա՞ր։

— Հասկացա։

— Դե լսիր։

Եվ Սարիբեկյանը լսեց։ Լսեց ու զղջաց ասած խոսքի համար։ Ինչո՞ւ ասաց նա այդ հիմար բանը։ Միթե ինքը չգիտեր, որ ծիծաղելի բան էր ասում։ Մի այլ ժամանակ եթե մի ուրիշը խոսեր այդ մասին, ինքը կարհամարհեր, արժան չէր համարի պատասխանել։ Իսկ Սաղաթել ապերը նույնիսկ հարկ համարեց օրինակ բերել, ապացուցել նրա ասածի անհեթեթությունը։

— Չէ, ախպերացու,— Սարիբեկյանի երկար լռությունը տեսնելով ասաց Սաղաթել ապերը,— մաքրիր հանիր էդ բոլորը, իգուր տեղը մի խաղա ուրիշի պատվի հետ։ Բռնած գործդ լավ չի...

— Գիտեմ, Սաղաթել ապեր. կարծում ես չե՞մ հասկանում։

— Բա որ հասկանում ես, ինչո՞ւ ես անում։

— Չգիտեմ, քամի է, խփել է գլխիս։

— Բշիր, դեն տար էդ քամին։ Մարդու գլխում խելք պետք է լինի, ոչ թե քամի...

Սարիբեկյանը կրկին լսեց, տարվեց մտքերով։ Նա մըտքում փորձեց արդարացնել իրեն, բայց արդարացուցիչ

մարդ կար դրսում։ Ամենքն արդեն քուն էին մտել։ Աղբյուրի մոտ ծերունին ձեռք տվեց Սարիբեկյանին և մի քանի քայլ հեռանալուց հետո միայն հետ շրջվեց, ասաց.

— Միտքս ասացի, ախպերացու, դրանից էլ պարզ խոսել չի լինի։ Գնա, գիշերդ բարի լինի...

Նրանք բաժանվեցին, բայց հարցը դրանով չվերջացավ։ Սարիբեկյանը տան սանդուխքներով բարձրանալիս մայրը կանգնեց Նրա հանդեպ։

— Էդ ո՞րտեղից։

Որդին ուզեց խուսափել, չպատասխանել մոր հարցին, բայց չեղավ։ Դրա համար չէր մայրը քունը կտրել, մինչև կես գիշեր սպասել պատշգամբում։

Սուրենի ապրումները մորն էլ էին հայտնի. Նա էլ գիտեր, թե վերջերս ինչու էր որդին ուշ գալիս տուն և որտեղ էր լինում նա։ Այդ գիշեր վճռել էր չքնել, սպասել մինչև Նրա գալը և հետը խոսել ինչպես հարկն է։ Բայց որդին գալուց հետո մոր հարցը թողեց անպատասխան, մտեցավ թաղթին, ուզեց շորերը հանել։

— Քեզ հետ չե՞մ, ո՞րտեղից ես գալիս,— իր հարցը կրկնեց մայրը։

— Քնիր, քնիր, ուշ է,— անտարբերությամբ պատասխանեց որդին ու մտավ անկողին։

— Ո՞նց թե ուշ է։ Ես որ ուշ է, ինչո՞ւ ես հիմա գալիս։

Որդին այս անգամ էլ մոր հարցը թողեց անպատասխան։ Զնայած տաքին, վերմակն ամբողջովին քաշեց գլխին ու լռեց, թեև գիտեր, որ մայրը չի հանգստանալու, քանի որ սկսել է, դեռ շատ է խոսելու։

Եվ իրոք, մայրն սկսեց.

— Քեզ հետ չե՞մ, ինչի՞ ես գող կատվի պես ձենդ գցել փորդ։

— Լավ, թողնելու ե՞ս, որ քնենք, թե չէ,— վերմակը ետ տանելով ասաց՝ որդին։

— Էդ հալա դո՞ւ ես բարկանում։ Քնել էիր ուզում, ժամանակին գայիր։ Հիմի դու իմ հարցին պատասխանիր.

մինչև Թոր ես դու շարունակելու քո հիմարությունները։ Ի՞նչ է, ուզում ես անունս խայտառակե՞լ։

— Դե բավական է էլի,— ակնհայտ բարկությամբ բացականչեց Սուրենը,— անունս, անունս, անունդ ո՞րն է, ինչ անուն ունես։

Մայրը ջղային շարժումով մոտեցավ Թաղթին, որդու վրայից գետ շպրտեց վերմակը, մի պահ զայրալից նայեց նրան և ասաց.

— Ի՞նչ է, հիմա էլ ինձ ես ծաղրում։ Մարդ ես դառել ձեռք առնելու։ Ես Թույլ չեմ տա, ինձ Խըրըմբասանենց Սաթենիկ կասեն։ Հրես վաթսուն տարու մեջ եմ, ոչ ոք խոսքիս մեկը երկու չի արել, մեկը երեսիս ցուրտ խոսք չի ասել. հիմա դո՞ւ ես ուզում ինձ ձեռք առնել։

— Այ մեր, ի՞նչ ես ուզում ինձանից,— այլևս չհամբերելով բացականչեց որդին,— կրակի մեջ չնկանք։

— Քեզ կրակի մեջ գցողն ինքդ ես։ Սիրտդ մաքուր չի։ Կես գիշերին դու ի՞նչ գործ ունես Մորուտում։ Մեր տոհմում էդ տեսակ բան եղել է՞, քո հայրը էդ տեսակ բան արած կա՞, որ դու անում ես։

— Եթե հայրս էլ երեսունհինգ տարի ապրեր, գուցե ավելի շատ բան աներ, քան ես եմ անում։

Մայրն ընկրկեց, հեռացավ որդուց: Կարծես թե մի սուր բանով խոցեցին սիրտը։ Նա ձեռքը տարավ դեպի կուրծքը, բռնեց, ուզեց ինչ որ ասել, բայց չկարողացավ։ Նրա շրթունքները դողդողացին և արցունքներն ինքնաբերաբար հոսեցին աչքերից։

Սուրենը տակավին չորս տարեկան էր, որ զրկվեց հորից։ Մի օր սարից ձիով տուն գալիս երկու զինված մարդ հարձակվել էին նրա հոր վրա, սպանել, դիակն անդունդ գլորել, ձին վերցրել ու գնացել։

Սկզբում տարածվել էր այն լուրը, թե սպանությունը կատարել են անհայտ ավազակներ՝ ձին գողանալու համար։ Բայց հետագայում պարզվել էր, որ սպանողը եղել է տանուտեր Արզումանն իր եղբոր հետ։

ոչ մի փաստ չգտավ։ Որքան էլ մտածում էր, դարձյալ միևնույն հարցն էր համառորեն պտտվում ուղեղում.

— Վա՞յել գործ է բռնածդ...

Առաջ էլ, մինչև պատերազմը, պատերազմի օրերին էլ, ծանր, անել պայմաններում մեջ էր եղել նա։ Բայց երբեք այդպես չէր ընկճվել, երբեք չէր զգացել իր անկարողությունը, ինչպես այդ ժամանակ։ Ներքին մի բան թելադրում էր, որ նա առանց Զարուհու չի կարող ապրել, դժբախտ կլինի, ուրախ և երջանիկ օր չի ունենա, իսկ գիտակցությունը պնդում էր, որ ինքը Զարուհու հետ լինելով կդժբախտացնի մի ուրիշին, կքայքայի մի ընտանիք։

— Լավ, ախպերացու, իսկ Զարուհին ի՞նչ է ասում, նա համաձա՞յն է։

Սարիբեկյանն անակնկալի եկավ։ Մինչ այդ նա չէր մտածել այդ մասին։ Իսկապես, ի՞նչ կասեր ինքը՝ Զարուհին. չէ՞ որ նա Զարուհու հետ դեռ չէր բացատրվել։ Նրա մեն մի ժպիտը բավական էր, որ նա բանկվեր այդպես, տարվեր, առանց հաշվի առնելու հետևանքների մասին։ Իրոք, դույզն նա կասածի էր անում, դույզն ձևաց էր առնում իրեն։ Ինչու նա այդքան մանկամիտ դանվեց, շտապեց, անհարմար դրության մեջ դրեց և՛ իրեն, և՛ նրան, որին...

Սարիբեկյանը չուզեց նույնիսկ ավելին մտածել, մի տեսակ սոսկաց և ակամայից ձեռքը տարավ դեպի ճակատը— չգիտես ցավի՞ց, թե ամոթի զգացումից...

Նրանք քայլում էին լուռ, դանդաղ, իսկ ներքևում, բլուրի ուսից դուրս էր գալիս լուսինը՝ զրոսանքի ելած ինքնագոհ տիկնոջ նազանքներով։ Լուսնի լույսից պայծառացան սարերի գագաթները, անտառի վրայից չքացավ անթափանց խավարի քողը և դրան հաջորդեց դաշտավայրից եկող զովը։ Ծափ տվին ծառերն իրենց կանաչ տերևներով, ծղրիդներն աշխուժացան և կարծես թե սկսվեց մի հարսանիք, որպիսին միայն գյուղում է լինում ամռան գիշերը...

Մտել էին գյուղ, իսկ այնտեղ ոչ ձայն էր լսվում, ոչ

Ամուսնությունից հինգ տարի առաջ, երբ Ծըրսքասանենց գեղեցիկ Սաթենիկը դեռ ամուսնացած չէր, տանուտերը նրան ամուսնանալու առաջարկություն է անում։ Սաթենիկի ծնողները դեմ չեն լինում տանուտերի առաջարկին։ Բայց աղջիկը ծնողներին ասում է.

— Եթե ինձ տաք Արզումանին, թոկ կգցեմ վզովս, կըկախվեմ…

Արզումանն իմանում է, որ Սաթենիկի աչքը Սարիբեկենց Սանթրոսի վրա է։ Եվ նա վճռում է ինչ գնով էլ ուզում է լինի նրանցից վերացնել Սանթրոսին։ Շարունակ հետամուտ է լինում նրան, բայց չի կարողանում իրականացնել իր չար նպատակը։ Դա հաջողվում է նրան Սաթենիկի ամուսնանալուց հինգ տարի հետո միայն, երբ նա արդեն երկու երեխայի մայր էր։

Սանթրոսին սպանելուց հետո Արզումանը դարձյալ հանգիստ չի տալիս նրա կնոջը, խնդրում է նրան ամուսնանալ իր հետ, խոստանում է պահել նրա երեխաներին, բայց Սաթենիկը պատասխանում է նրան իր անսահման ատելությամբ։

Երիտասարդ այրին ապավինում է իր երկու փոքրիկ մանուկներին, մեծագույն զրկանքներով ու դժվարությամբ մեծացնում նրանց, նրանց մեջ գտնում և՛ սեր, և՛ սփոփանք։

Սակայն նա երբեք մտահան չի անում նաև իր վաղամեռ ամուսնուն։ Տարիներ հետո էր, երբ նա վաղուց արդեն պառավել էր, ամուսնու լոկ անունը լսելիս հուզվում էր ու հեծկլտում։

Եվ ահա որդու վերջին խոսքերը ևս հուզեցին նրան, բորբոքեցին վշտերը, և նա սկսեց դառնագին հեկեկալ։

Սուրենը լսում էր մոր հեծկլտանքը և դրանից իր սիրտն էլ էր մղկտում։ Նա երբեք չէր վշտացրել մորը, երբեք ցուրտ խոսք չէր ասել նրան։ Նա գիտեր, թե որքան բարի, որքան գթառատ է մայրը։ Ճիշտ է, երբեմն խիստ էր լինում նա, պահանջկոտ, բայց որդին դրանից չէր վշտանում. գիտեր,

որ դա միայն շատ սիրելուց է։ Եվ ահա այդ ժամանակ էլ նա չկարողանալով տանել մեր հեծկլտանքները, նստեց տեղը, սկսեց հագնել շորերը։

— Ո՞ւր ես պատրաստվում,— հանկարծ թողնելով լացը հարցրեց մայրը։

— Գլուխս առնում եմ, գնամ էստեղից։

— Շուտ պետք է անեիր։ Մի մարդ, որ սրբություն չգիտե, նա իր հոր հարկի տակ տեղ չպետք է ունենա։

Սուրենը չպատասխանեց մորը. լուռ ոտքի կանգնեց, սանդուխքներից ցած իջավ։

Մայրն ահաբեկվեց։ Նրա ինքնասիրությունը թույլ չտվեց կանգնեցնել որդուն, հարցնել, թե ուր է գնում նա, բայց հանկարծ նրան թվաց, թե նա հեռանում է ընդմիշտ, այլևս չի վերադառնա, մանավանդ, որ Սուրենը համառ էր, աննկուն. եթե մի բան վճռել էր, անպայման կկատարեր, որքան էլ դժվար լիներ այդ վճռի կատարումը, որքան էլ այն թանկ նստեր նրան։

Այստեղ մորը իսկույն ամեն ինչ դատարկ թվաց և իրեն՝ մեն-մենակ այդ դատարկության մեջ կանգնած։ Երբեք այդպիսի մենակություն չէր զգացել նա և երբեք այդքան չէր վախեցել մենակությունից։

Չորս տարի Սուրենը հեռացել էր մորից, ռազմաճակատ գնացել։ Պատահում էր, որ ամիսներով նրանից լուր չէր գալիս։ Բայց մայրը երբեք չէր վախենում, շարունակ պատկերացնում էր որդուն իր մոտ կանգնած, իր հետ խոսելիս։

Շատերի մահվան բոթն էր գալիս, շատերն էին գյուղ վերադառնում խեղանդամված, բայց Սաթենիկ մոր մտքից երբեք չէր անցնում, թե իր որդու հետ էլ կարող է դժբախտություն պատահել, այլևս հետ չգալ։ Նա մի անբացատրելի վստահությամբ սպասում էր, որ Սուրենին ոչինչ չի պատահի, կվերջանա պատերազմը և նա կվերադառնա ողջ ու առողջ։ Եվ, իրոք, այդպես էլ եղավ։ Կռվի դաժան ոլորտների մեջ եղավ Սուրեն Սարիբեկյանը, բազմիցս մասնակցեց ահավոր սվինամարտերի, վտանգավոր հետա-

խուզումթյունների գնաց անհամար անգամ, սակայն երբեք չնչին վերք անգամ նա չստացավ։ Կարծես հզոր մի ուժ նրա հետ լիներ, հովանավորելիս՝ վտանգի պահին։

Իսկ այդ ժամին նա տնից դուրս գալուց հետո մայրը սոսկաց, կարծեց, թե այլևս հետ չի գա որդին։

— Եվ ինչու, ինչու, մի...

Մայրը կանգ առավ։ Ուզեց ինչ որ անուն տալ, բայց լեզուն պատ չեկավ։ Նա գիտեր Զարուհուն, ճանաչում էր նրան և սիրում։ Գիտեր, որ նա թեև երբեմն անմեղ կատակներ է անում, բայց հոգին պարզ է, անբասիր, վարքը՝ առաքինի։ Նա չուզեց Զարուհու մասին վատ բան մտածել և բարձրաձայն ասաց.

— Նա ինչ անի, ինչով է մեղավոր...

Իսկ ինչո՞վ էր մեղավոր իր որդին, ո՞րն էր նրա հանցանքը։ Նա սիրում էր։ Իսկ որտե՞ղ է ասված, թե սերը հանցանք է։ Մի՞թե ինքը—Սաթենիկ մայրիկը չի սիրել. մի՞թե այդպես չէր անի Սանթրոսը—Սուրենի հայրը, եթե մերժեին Սաթենիկին իրեն տալ։

Այդտեղ մայրն ակամայից վերհիշեց, թե որքան էր սիրում իրեն Սանթրոսը։ Ամուսնության առաջին օրերը չէր ուզում կնոջ մոտից մի քայլ անգամ հեռանալ, աշխատանքի գնալ։ Նույնիսկ ամուսնանալուց բավականին անց մի անգամ հերկ անելիս, կեսօրին եզները թողել էր արտում լծած, տուն եկել կնոջը տեսնելու համար։ Իսկ երբ վերադարձել էր, տեսել էր, որ իրենց հարևանը ցելի մեջ նստած եզներն արձակել, տարել է իր արտը վարելու։

— Էլ ինչու եմ մեղադրում Սուրենին,—ինքն իրեն ասաց մայրը,—չէ՞ որ նա էլ ջահել է, առաջին սերն է...

Մայրն այդտեղ հիշեց, թե վերջին օրերը որքան էր որդին նիհարել, գունատվել։ Հիշեց, թե որքան էր նա տառապում։ Մտնում էր անկողին, բայց աչքերին քուն չէր գալիս։ Անվերջ պտտվում էր տեղում, իսկ քնելիս էլ սկսում էր երազի մեջ խոսել, անհանգիստ բացականչություններ անել։

Մոր սիրտը փափկացավ. Նա զղջաց, որ այնպես խիստ խոսեց որդու հետ, հարկադրեց հոգնած ու անքուն դուրս գնալ տնից։ Եվ մայրն առանց երկար մտածելու, շա՛լը գըցեց ուսերին ու սանդուխքներից ցած վազեց։ Դուրս գալով փողոց, նա մի քանի անգամ իրար վրա կանչեց.

— Սուրեն, Սուրեն...

Բայց Սուրենը չկար։

Գյուղից վերև, դեպի սարերը տանող նեղ արահետի եզրից մի սև ստվեր էր ձգվել, երկարացել, հասել մինչև ձորաբերանը։ Դա Սուրեն Սարիբեկյանի ստվերն էր։ Նա գնում էր ֆերմաները։

3.

Բարաշենից շրջանային կենտրոն տանող երկու ճանապարհ կա. մեկը խճուղին է, որ անցնում է գյուղի վերևով, բազմաթիվ մեծ ու փոքր բլուրների ուսից թեքվում, մտնում խոր ձորը, միանում ճյուղավորված, գիշեր ու ցերեկ երթևեկությունն անպակաս կենտրոնական ճանապարհին, մյուսն էլ մի արահետ է, որ անցնում է գյուղի տակով, Մորուտի մոտից գնում, մտնում անտառը, լեռնա անջերով հասնում մինչև շրջանային կենտրոն։ Արահետով գնացողն ավելի շուտ տեղ կհասնի։ Սակայն այդտեղով կարելի է միայն կամ ոտով գնալ, կամ էլ ձիով։ Արահետը մինչև այժմ դեռ ոչ մեքենա է տեսել, ոչ էլ սայլ։

Կեսօրից հետո քարաշենցիներն իմանալով, որ շրջանային կենտրոնում խորհրդակցություն պետք է լինի, հեծան իրենց ձիերը և ավելի շուտ տեղ հասնելու համար, որոշեցին կարճ ճանապարհով գնալ։ Իսկ գյուղից դուրս գալուց հետո նրանք մտքերով տարված՝ բարձիթող էին արել ձիերը, որոնք ճանապարհի եզրերին բսած խոտերն արածելով, դանդաղ առաջ էին գնում։

Միայն Միսակ Դանիելյանն էր շարունակ խթանում իր ձիուն, արագացնում նրա ընթացքը, բավականին առաջ

գնում, ապա հետ նայում, տեսնում, որ ընկերները շատ հեռու են մնացել։

Ընկերների դանդաղկոտությունը հուսահատեցնում էր Դանիելյանին։ Նրան թվում էր, թե այդ ընթացքով նրանք մինչև երեկո տեղ չեն հասնի։ Մինչդեռ նա ուզում էր ավելի շուտ տեղ հասնել, իմանալ, թե այդ ինչ խորհրդակցության էին կանչել իրենց։

Առաջ երբեք այդպես չէր լինում. եթե որևէ խորհրդակցության էին կանչում, հայտնում էին, թե ինչի համար է, ինչ հարց պետք է քննվի։ Եվ կոլխոզի նախագահը նախօրոք պատրաստում էր ասելիքը, զինվում փաստերով և տվյալներով։ Նա երբեք տնից դուրս չէր գա անպատրաստ։ Եթե անգամ քննվող հարցն իրեն չվերաբերվեր, նա այնուամենայնիվ կմտածեր, թե ինքն ինչ կարող է ասել տվյալ հարցի վերաբերյալ։

Իսկ այս անգամ նրան ոչինչ հայտնի չէր։ Գիտեր միայն, որ խորհրդակցությանը պետք է մասնակցեն կոլխոզների նախագահները, հաշվետարները և անասնապահական ֆերմաների վարիչները։

Անորոշությունը միշտ էլ անհանգստություն է առաջացնում։ Եվ Միսակ Դանիելյանը շրջանային խորհրդակցության գնալիս երբեք այդքան անհանգիստ չէր եղել։ Նրա անհանգստությունը կրկնապատկում էր նաև ընկերների դանդաղկոտությունը։ Սուրեն Սարիբեկյանը թուլացրել էր իր ձիու սանձը, հայացքը հառել հեռու սարերին, աշխարհի հոգսը կարծես իր մեջ ամփոփել։ Հաշվետար Գեղամ Բալունցն էլ իր վիրավոր ոտը դուրս էր բերել ասպանդակից, թեք նստել ձիու թամբին, ճանապարհին ծառերից կտրած ճյուղերը դրել գլխին, հով արել, որպես թե հեռավոր ուխտագնացության ուղևորված լիներ։

— Գեղամ, ձիդ շարժիր, սեյր անելու չես գնում,— տեսնելով, որ հաշվետարը բավականին հետ է մնացել, կանչեց կոլխոզի նախագահը։

— Ոտս անհանգստացնում է, ընկեր Միսակ,— տխուր

մրմնջաց հաշվետարը և ավելացրեց,—դուք գնացեք, ես կհասնեմ ձեր ետևից։

— Քեզ ասացի, որ սպասիր, ավտոբուսով եկ, ձիով դժվարանալու ես գալ,—ետ շրջվելով ասաց Սարիբեկյանը և ուզեց էլի ինչ որ ավելացնել, բայց աչքն ընկավ բլուրների վրայով սլացող մի հեծվորի և խոսքը կիսատ մնաց։ Նա սպիտակ ձիուց ճանաչեց հեծվորին, մարմնով մի ցնցում անցավ, սիրտն սկսեց անհանգիստ զարկել։

— Հիմա կհասնի,—ինքն իրեն ասաց Սարիբեկյանը, հանկարծ ձգեց ձիու սանձը, ապանդակեց, ձին ծառս եղավ, մի պահ կանգնեց տեղը, բայց հետո թափահարեց գլուխը, առաջ սլացավ, անցավ նախագահի ձիուց։

— Էդ ի՞նչ է, ձիուդ հունարն ես ուզում փորձե՞լ,—Սարիբեկյանի ետևից կանչեց նախագահը, բայց մնաց անպատասխան։ Դանիելյանը տեսավ, թե ինչպես Սարիբեկյանը խոր քաշեց գլխարկը, ուղղեց գոտկի տակից կիսով չափ դուրս եկած շապիկը, պատրաստվեց արշավի։

— Հիմա կհասնի,—կրկնեց Սարիբեկյանը և ապա լսելի ձայնով ավելացրեց,—բայց չես անցնի...

Մի քանի րոպե չանցած լավեց արագնթաց եկող ձիու սմբակների դոփյունն ու թանչանքը։ Միսակ Դանիելյանն արագ ետ շրջվեց, տեսավ հեծվորին և իսկույն հասկացավ, թե ինչու Սարիբեկյանն իր ձին առաջ քշեց։

Հեծվորը Մրրուտի կոլխոզի նախագահ՝ Ռուբեն Սիմոնյանն էր։ Այդ իմանալով, հաշվետարն իսկույն իր ձին դուրս բերեց ճանապարհից, ձգեց սանձը, կանգնեցրեց, որպեսզի նա անցնի։ Գիտեր, որ Սիմոնյանի ձին կատաղի է, վազելու ժամանակ նրան դժվար է պահելը։ Այդ ձին, որին «Կաքավ» մականունն էր տրված, հայտնի էր ամբողջ շրջանում։ Գիտեին, որ նա գնում է մեքենայի արագությամբ։ Մի անգամ Սիմոնյանը գրազ էր եկել, որ ինքն իր «Կաքավով» ավելի շուտ կհասնի շրջանային կենտրոն, քան ավտոբուսը։ Եվ ավտոբուսի հետ իր ձիով գյուղից դուրս գալով միաժամանակ, շարունակ քշել էր, անհագին

ճանապարհն անցել ավտոբուսից չորս րոպե շուտ ու տարել գրազը...

Միսակ Դանիելյանը նույնպես հետևեց հաշվետարի օրինակին. Նա ևս ճանապարհից դուրս բերեց ձին, կանգնեցրեց, և երբ Սիմոնյանը հավասարվել էր նրան, գլխով բարևի նշան արեց ու անցավ։

— Քշիր, քշիր հասիր Սարիբեկյանին,— նրա ետևից կանչեց Դանիելյանը, բայց Սիմոնյանը չլսեց նրան, մի ակնթարթում առաջ ընկավ, հավասարվեց Սարիբեկյանին։ Վերջինս առանց ետ նայելու, խթանեց ձիուն, ձին բերնից փրփուր թափելով առաջ սլացավ։

— Այ տղա, ո՞ւր ես քշում, սպասիր, թող ընկերներդ հասնեն,— կանչեց Սիմոնյանը, բայց Սարիբեկյանը չլսելու դրեց և ավելի բորբոքեց ձիուն։

— Մրցությունն սկսվեց,— ասաց հաշվետարը, բայց Դանիելյանը չպատասխանեց։ Նա սպասում էր, թե ինչով կվերջանա իրոք այդ մրցությունը։

Սարիբեկյանը միտք չուներ իր ձին պահելու։ Այդ նկատելով, Սիմոնյանն ինքն էլ թուլացրեց Կաքավի սանձը։ Ձիերը հավասարվեցին և նեղ, քարքարոտ ճանապարհով վազեցին կողք-կողքի, կատաղի մոլուցքով բռնված։

Սիմոնյանը ոչ մի ջանք չէր թափում առաջ ընկնելու։ Նա ազատ, գլուխը բարձր բռնած, նստել էր իր ձին, իսկ Սարիբեկյանը կռացել էր, ամբողջ մարմնով կպել թամբին և մի գլուխ խթանում էր փրփրակալած երիվարին։

Սիմոնյանը աչքի տակով հետևելով Սարիբեկյանին, տեսնում էր նրա դեմքի գունատությունը, ջղերի լարվածությունը, ուզում էր ասել, որ նա պահի ձին, անտեղի չհոգնեցնի, բայց լռում էր, վախենալով, որ կվիրավորի նրան։

Եվ նրանք լուռ առաջ էին սլանում։

Արդեն վերջացել էր նեղ, քարքարոտ ճանապարհը, դուրս էին եկել հարթ սարալանջը։ Այստեղ Սիմոնյանը թեթևակի խթանեց Կաքավին, թուլացրեց սանձը և ձին մի ակնթար-

թում ամբողջ թափով առաջ սլացավ։ Երբ Սիմոնյանն արդեն անցել էր Սարիբեկյանից, չգիտես ինչու հանկարծ շրջեց ձին, դուրս բերեց լայն ճանապարհից, դեմ արեց բարձր ժայռին, կանգնեցրեց։ Սարիբեկյանն առաջ անցավ և թաքնվեց բլուրի ետևում։ Նրա անցնելուց հետո Սիմոնյանն իջավ ձիուց, բռնեց սանձը, գնաց ոտով։

Սարիբեկյանն առաջին տեղ անցնելուց հետո, տեսնելով, որ արդեն մենակ է, ժայռից հեռու մի աղբյուրի մոտ ցած իջավ ձիուց։ Քիչ անց, երբ Սիմոնյանը հասավ նրան, նա ձին մոտեցրել էր աղբյուրին, ջուր էր տալիս։

— Ձին քրտնած է, իզուր ես ջուր տալիս,— դեռ մի քանի քայլ հեռվից ասաց Սիմոնյանը։

Սարիբեկյանը լսեց, ոչինչ չասաց, ինքն էլ հասկանալով սխալը։ Սակայն իսկույն մտքովն անցավ.

— Կարծելու է, թե ես ոչինչ չեմ հասկանում...

Եվ բավականին անց, երբ Սիմոնյանը կանգնել էր մոտը, կամաց, հազիվ լսելի ձայնով ասաց.

— Ոչինչ, էլի ճանապարհ է գնալու, ջուրը վնաս չի տա։

— Ի՞նչ,— նրան լավ չլսելով հարցրեց Սիմոնյանը, բայց Սարիբեկյանն էլ ասածը չկրկնեց։

— Լավ, ձեզ է՞լ չեն հայտնել, թե ինչի մասին է խորհրդակցությունը,— մի քիչ լուռ մնալուց հետո դարձյալ հարցրեց Սիմոնյանը։

— Ոչ,— կտրուկ պատասխանեց Սարիբեկյանը և իսկույն շրջվեց, մոտեցավ աղբյուրին, ափերով ջուր վերցնելով սկսեց լվանալ ձիու ոտները, բաշը։ Նա չէր ուզում բարձրացնել գլուխը, նայել Սիմոնյանին, բայց զգում էր, որ Սիմոնյանը հետևում է իր շարժումներին, չափում նրան ոտից մինչև գլուխ։ Ձին քշելուց, թե ներքին հուզմունքից նա քրտնել էր, շապիկն ամբողջովին ջուր էր դարձել։ Նա բաց արեց շապիկի օձիքը, բարձրացրեց թևքերը, լվացավ ձեռքերն ու երեսը, հեռացավ աղբյուրից և շարունակեց մնալ լուռ։

— Ինչպե՞ս են գնում գործերդ, Սուրեն,—լռությունը խզելով հարցրեց Սիմոնյանը։

— Ոչինչ,— դարձյալ կարճ պատասխանեց Սարիբեկյանը և շարունակեց քար լռությունը։

— Անցյալ օրը ձեր ֆերմայումն էի։ Մատղաշներն աչքիս այնքան էլ լավ չերևացին։ Մանավանդ հորթերը շատ նիհար են, երևի նրանց քիչ եք կաթ տալիս։

— Դե մենք ձեզ չափ կաթ չունենք, որ հորթերին էլ առատ բաժին հասցնենք։

Սարիբեկյանի պատասխանը դուր չեկավ Սիմոնյանին։ Նա զգաց, որ ֆերմայի վարիչը դժկամորեն է պատասխանում իր հարցերին, խոսելու տրամադրություն չունի։ Դրա համար ինքն էլ լռեց ու այլևս ոչ մի նոր հարց չավեց նրան։

Քիչ հետո հասան Դանիելյանն ու Բալունցը։

— Հը, հաղթանակը մո՞տ տարավ,—աղբյուրի մոտ ձիու սանձը քաշելով, հարցրեց Դանիելյանը։

— Սուրենը, ի հարկե, վատ չի քշում. բայց նրա ձին թույլ է, չի կարող մրցել Կաքավի հետ։

— Խոստանում ես՝ քո և՛ ձին է լավ, և՛...

Սարիբեկյանն ուզեց էլի ինչ որ ասել, բայց զսպեց իրեն։ Դանիելյանը դժկամորեն աչքերը ոլորեց և նրա խոսքերի տհաճ տպավորությունը փոխելու համար անմիջապես ասաց.

— Գնանք։

— Գնանք,—քմծիծաղ տալով պատասխանեց Սիմոնյանն ու նրանք առաջ ընկան։

— Դու էլ առաջ ընկիր, Սուրեն, ես կամաց եմ գալու,—ճանապարհ ընկնելուց հետո ասաց Բալունցը։

— Ոչինչ, մենք միասին կգնանք,—պատասխանեց Սարիբեկյանը, ձին ետ գցեց և ամփոփվեց մտքերի մեջ։

Արևն արդեն նստել էր դիմացի բարձր սարի ուսին և նրա վերջին շողերն էին միայն երկարաձգվել, հասել շրջանային կենտրոնի նորակառույց ապակեպատ

հիվանդանոցի ճերմակ պատերին։ Իսկ երբ հասան նրանք հիվանդանոցին, այդտեղից արդեն անցել էին արևի շողերը և իրիկնահովի հետ գալիս էր մութը։

Ձիերը տեղավորելուց հետո նրանք գնացին պարտիայի շրջանային կոմիտե։ Այնտեղ նիստն արդեն սկսվել էր։ Երբ ներս մտան շրջկոմի նիստերի դահլիճը, ամբիոնի մոտ կանգնած խոսում էր Մթերումների մինիստրության շրջանային լիազոր՝ Հայկ Արզանյանը։

— Տեսա՞ր, մենք ուշացել ենք,— դեպի Դանիելյանը թեքվելով շշնջաց Սիմոնյանը։

— Բալուճցի տոտով ճանապարհ գնացողն իհարկե կուշանա,— պատասխանեց Դանիելյանը, ուզեց էլի ինչ-որ ասել, բայց տեսնելով, որ շրջկոմի քարտուղարն իրենց է նայում, իսկույն լռեց և նստեց վերջին շարքի ազատ աթոռներից մեկի վրա։ Նրան հետևեցին նաև մյուսները։ Այդ ժամանակ շրջկոմի քարտուղարը ձեռքի նշանով Սիմոնյանին կանչեց իր մոտ։ Մինչև Սիմոնյանը կհասներ նախագահության սեղանին, շրջկոմի քարտուղարն իր մոտ աթոռ ազատել-տվեց։ Սիմոնյանը մոտեցավ քարտուղարին, ձեռք տվեց, նստեց մոտը։

— Դա ի՞նչ է նշանակում,— դեպի Դանիելյանը կռանալով հարցրեց Սարիբեկյանը։

— Դա շատ բան է նշանակում,— իսկույն կռահելով ֆերմայի վարիչի միտքը, պատասխանեց կոլխոզի նախագահը,— դա նշանակում է, որ…

— Դա նշանակում է, որ Բարաշենի կոլխոզի նախագահ Միսակ Դանիելյանն ինքնահոսի է մատնել աշխատանքները, փափուկ բարձ է դրել գլխի տակ, քնել, կարծելով, թե մի ուրիշը պետք է տա նրա պարտքը…

Ասողն Արզանյանն էր։

Դանիելյանն իր ազգանունը լսելով, ինքնաբերաբար իրենից դեն հրեց Սարիբեկյանին, մի ձեռքը դրեց ականջին, որ լավ լսի և աչքերը հառեց դեպի ամբիոն։

— Այդպես է, թե չէ՞, ընկեր Դանիելյան,— նստած տեղից հարցրեց շրջկոմի քարտուղարը։

— Լավ չլսեցի, ընկեր Ապրեսյան,— շփոթված ոտքի կանգնելով ասաց Դանիելյանը։

— Ասում եմ Արղանյանը ճի՞շտ է ասում, թե չէ,— իր հարցը կրկնեց քարտուղարը։

— Ձեր ասածը լսեցի, ընկեր Ապրեսյան, բայց չիմացա, թե ինչ էր ասում ընկեր Արղանյանը։

— Բա ուշքդ ո՞րտեղ էր։ Ընկեր Արղանյանն ասում է, թե բարձ ես դրել գլխիդ տակ, քնել…

— Մեզ կեսօրից հետո են հայտնել խորհրդակցության մասին, ընկեր Ապրեսյան,— դեռ ոտի վրա կանգնած շարունակեց Դանիելյանը և դահլիճում բարձրացավ ծիծաղ։ Ծիծաղն ավելի շփոթեցրեց Դանիելյանին։ Նա կարմրեց, քրտնեց, չհասկանալով, թե ինչ է կատարվում իր շուրջը։

— Սիրելիս, խոսքն այստեղ ոչ թե ժողովից ուշանալու մասին է, այլ պետական մթերումներն ուշացնելու մասին,— ոտքի կանգնելով բացատրեց քարտուղարը,— ընկեր Արղանյանն ասում է, որ դուք մինչև այժմ դեռ չեք կատարել մսի և յուղի մթերումների պլանները։ Ընկեր Արղանյանն ասում է, որ ձեր և Մորուտի կոլխոզները հարևաններ են, ձեր անասուններն արածում են միևնույն սարերում, խմում միևնույն ջրից, միևնույն գիրությունն ու միևնույն կաթնատվությունն էլ պետք է ունենան։ Բայց ինչպե՞ս է, որ մորուտցիներն ամբողջ շրջանում բոլորից շուտ են կատարել մթերումների իրենց պլանները, իսկ դուք դեռ…

— Դե ձեզ հայտնի է, որ մեր անասուններն անցած ձմեռ կերի պակասություն կրեցին…

— Լավ, լավ,— ասաց քարտուղարը,— ելույթ կունենաս և կբացատրես պատճառները։

Դանիելյանը նստեց տեղը։

Սուրեն Սարիբեկյանը գլուխը թաքցրել էր հաղթանդամ մի հաշվետարի ետևում և չէր ուզում աչքի ընկնել։ Նա զգում էր, որ քննադատությունը խիստ է լինելու և

դրանից անձամբ ինքն էլ է մեծ բաժին ստանալու, և մտածում էր, թե արդարանալու համար ինչ կարող է ասել։ Բայց արդարացուցիչ ոչ մի փաստ չէր գտնում։ Նա արդեն այնքան անհարմար էր զգում իրեն, որ քիչ էր մնում վեր կենար, թողներ դահլիճն ու դուրս գնար։ Բայց չէր կարող, պետք է նստեր ու մինչև վերջ լսեր, որքան էլ խիստ լիներ մեղադրանքը։

Սարիբեկյանին մեծապես անհանգստացնում էր նաև Սիմոնյանի ներկայությունը։

— Կգնա և կնոջը կպատմի, թե շրջկոմում ինչպես խայտառակեցին մեզ,—ինքն իրեն մտածում էր նա,—կասի, որ քարաշենցիները ծույլ են, ա խատել չգիտեն, կասի, որ նրանք պատիվ չունեն, չեն մտածում իրենց կոլխոզի համբավի մասին։ Կասի, որ մի մարդ, եթե զուրկ է ինքնասիրությունից, ծույլ է, էլ ի՞նչ ընտանիք կարող է պահել նա, ի՞նչ աշխատանք կարող է կատարել...

Որքան երկար էր մտածում, այնքան ավելի էին պղտորվում նրա մտքերը, այնքան ավելի էր հուզվում նա։ Նա այլևս չէր լսում, թե ինչի մասին էին խոսում ամբիոնից, չգիտեր էլ, որ Արղանյանն արդեն վերջացրել է զեկուցումը, ուրիշներն են ելույթ ունենում։ Այդ ժամանակ նա մեկել այն լսեց, որ շրջկոմի քարտուղարը ձայն տվեց Մորուտի կոլխոզի նախագահին։

Սարիբեկյանի սիրտն ավելի անհանգիստ սկսեց զարկել։ Ի՞նչ կասի նա։ Կխոսի՞ Քարաշենի կոլխոզի մասին։ Ո՞վ գիտե, գուցե և խոսի էլ—Սարիբեկյանի մասին, ասի, որ կոլխոզի ֆերմայի վարիչն աշխատանքները թողած, գիշերները Մորուտի փողոցներում է թրև գալիս, ուրիշի պատվի հետ է խաղում։

— Ինձ թվում է, թե մենք կարող ենք օգնել որոշ կոլխոզների, որ նրանք տան իրենց պարտքը,—մեկել լսեց Սարիբեկյանը։ Նա լարեց ուշադրությունը, ի՞նչ օգնության մասին էր խոսում Ռուբեն Սիմոնյանը։ Իսկ նա շարունակում էր.

— Ես կարող եմ այժմ հարյուր հիսուն կիլոգրամ յուղ պարտք տալ Բարաշենին, որպեսզի նրանք կատարեն իրենց մթերման պլանը։

— Ի՞նչ կասես, Դանիելյան,— դիմեց շրջկոմի քարտուղարը,— համաձա՞յն ես պարտք վերցնել։

— Ուրիշ կերպ չենք կարող մոտ օրերս կատարել մեր պետական մթերումների պլանը,— ամաչելով, հենց նստած տեղից ասաց Դանիելյանը։

Սարիբեկյանն էլ չկարողացավ տեղում նստել։ Նա վեր կացավ և դահլիճից դուրս գնաց։

4.

— Անտառի տակով գնա՞նք, թե Խաչի աղբյուրով,— շրջանային կենտրոնից դուրս գալուց հետո հարցրեց Միսակ Դանիելյանը։

— Միևնույն է, քշիր, որտեղից ուզում ես,— անտարբերությամբ պատասխանեց Սարիբեկյանը և հետևեց Դանիելյանին։

Խորհրդակցությունը վերջանալուց հետո նրանք անմիջապես գնացել էին գոմերը, հեծել ձիերը և ճամփա ընկել։

Գեդեոն բալունցը չկար նրանց հետ։ Նրա ոտը շատ էր անհանգստացնում և նա մնացել էր առավոտյան ավտոբուսով գալու։ Նրա ձիու սանձը բռնած՝ իր ետևից քաշում էր Սարիբեկյանը։

Ամառային խաղաղ, անդորր գիշեր էր։ Լսվում էր միայն ձիերի սմբակների դոփյունը և մեկ էլ հեռվում, խոր ձորի միջով հոսող գետակի թույլ վշշոցը։ Իսկ Դանիելյանն ու Սարիբեկյանը չէին խոսում։ Պարտիայի շրջանային կոմիտեի քարտուղարի քննադատությունը խիստ ազդել էր նրանց տրամադրության վրա։ Եթե անարդարացի լիներ այդ քննադատությունը, էլի ոչինչ, կարելի էր մոռանալ, առանձնապես չհուզվել։ Բայց շրջկոմի քարտուղարն արդարացի էր. այդ իրենք—քարաշենցիներն էլ էին իմանում։ Ուրեմն արժանի էին քննադատվելու. դա էր ցավալին։

— Եվ մինչև ե՞րբ պետք է տևի սա,— ինքն իրեն հարց էր տալիս Դանիելյանը,— պատերազմի ժամանակ, երբ գյուղի աշխատավորների լավագույն մասը ճակատում էր գտնվում, մենք էլի պլանները կատարում էինք, ոչ ոքի առաջ սևերես չէինք մնում։ Իսկ հիմա, երբ և՛ աշխատանքի պայմաններն են լավացել, և՛ աշխատող ձեռքերն են ավելացել, պետք է ուր չից պարտք վերցնենք մեր մթերումների պլանները կատարելու համար...

Հետո Դանիելյանի միտքը կանգ էր առնում Մթերումների մինիստրության շրջանային լիազորի խոսքերի վրա. «Դանիելյանը փափուկ բարձ է դրել գլխի տակ, հանգիստ քնել...»։

— Ուրիշ ի՞նչ պետք է ասե՞ր. հո չէ՞ր ասելու, թե Դանիելյանը գիշեր-ցերեկ աշխատել է ու պլանները... թերակատարել...

Ամոթի ծանր զգացումը ճնշում էր Դանիելյանի սիրտը, արգելակում շնչառությունը և թվում էր, թե օդ չկա շնչելու, շնչահեղձ պետք է լինի շուտով։

— Բայց ըստ երևույթին Աշրեսյանը շատ է սիրում Սիմոնյանին,— հանկարծ լռությունը խզելով ասաց Սարիբեկյանը։

— Հիմա բոլորն էլ լավ աշխատողին են սիրում, սիրելիս, դու էլ լավ աշխատեյիր, քեզ էլ կսիրեր Ասրեսյանը,— չզիտես ինչու բորբոքված պատասխանեց Դանիելյանը, մի պահ լռեց և ապա էլի նույն տոնով շարունակեց,— ի՞նչ է, դու ուզում էիր, որ Ասրեսյանը քե՞զ կանչեր իր մոտ, նստեցներ կողքին, ձեռքը բարեկամաբար դներ ուսիդ և ասեր— արևդ սիրեմ, դուք ձեր պլանները չեք կատարել, շատ եմ խնդրում մի կերպ կատարեք... Ա՞յդ էիր ուզում։

— Ես ոչինչ էլ չեմ ուզում, դու իզուր տեղից արյունդ մի պղտորիր։

— Հապա ի՞նչ անեմ. գնամ նորից փափուկ բարձ դնեմ գլխիս տակ ու հանգիստ քնե՞մ։

— Քո անելիքը դու ինձնից լավ պետք է իմանաս։

— Իսկ դո՞ւ, դու ի՞նչ պետք է անես։

— Ես իմ անելիքը գիտեմ։

— Ինչպես չէ, գիտես, կարող ես ասել, թե ինչու է ֆերմայում օր-օրի վրա կաթը պակասում, կարող ես ասել, թե ինչու են այնտեղ կաթի փոխարեն ջուր կթում կովերից, ինչու են նիհարել մատղաշները։

— Կարող եմ ասել, ինչո՞ւ չեմ կարող։ Որովհետև երեք շաբաթ է, քո անասունները աչքի երես չեն տեսել։ Կովերի բերանից անտանելի հոտ է գալիս։ Խոտի չեն մոտենում, ջուր չեն խմում։

— Մեծապես շնորհակալ եմ, բեր ճակատդ համբուրեմ։ Ինկապես ճիշտ տեղին ու ժամանակին ես ասում—կես գիշերին, խավար անտառում... եթե շուտ ասեիր, լավ չէր լինի, կխայտառակվեինք...

Սարիբեկյանը լռեց, ոչինչ չկարողացավ ասել։

Ծանր է լսել կշտամբանքն առհասարակ։ Որքան էլ դա տեղին է լինում, մարդ, այնուամենայնիվ, չի ուզում ընդունել, փորձում է հերքել, արդարանալու հազար ու մի պատճառ է որոնում։ Սակայն ինչպե՞ս արդարանար Սարիբեկյանը, ի՞նչ ասեր։ Եվ նա մտքում ինքն իրեն ասաց.

— Արդարացի է...

Այդ միակ բառը մտածելիս Սարիբեկյանի մարմնով տաքություն մի հոսանք անցավ, հասավ ճակատին, քրտնեցրեց, ու թեև մութ էր, ոչ ոք չէր կարող նկատել նրա ճակատի քրտինքը, բայց նա խուսափողաբար շրջեց դեմքը, թևքով սրբեց քրտինքը և շարունակեց մնալ լուռ, ճնշող մտքերի տակ կծկված։

Սարիբեկյանի երկարատև լռությունը Դանիելյանին էլ հուզեց։ Նա զգաց, որ խիստ արտահայտվեց, շուտ բռնկվեց։ Ու սկսեց մտքում մեղադրել իրեն դյուրաբորբոքության համար։ Ապա փորձեց մեղմել իր ասած խոսքերի տպավորությունը, բայց չկարողացավ։ Նա չգտավ մի բառ, որով կարելի լիներ խախտել ծանր լռությունը, վերսկսել խոսակցու-

թյունը, և ինքն էլ մնաց լուռ։ Բավականին տեղ անցնելուց հետո միայն նա կամացուկ ասաց.

— Սուրեն։

Սարիբեկյանը չարձագանքեց։

— Ի՞նչ է, վիրավորվեցի՞ր։

— Ինչո՞ւ պետք է վիրավորվեմ, ճիշտ ես ասում։

Ցերմայի վարիչի այդ բառերն ավելի ազդեցին կոլխոզի նախագահի վրա։ Նա ավելի խորագին զղջաց իր խիստ խոսքերի համար, ձգեց ձիու սանձը, ընդհուպ մոտեցավ Սարիբեկյանին, մեղմ, քնքշալիր ասաց.

— Մի նեղանա, սիրելիս, ախր ինձ համար էլ հեշտ չի, չէ՞...

Նա կրկին լռեց, բայց այս անգամ լռությունը երկար չտևեց։

— Այ, ասում ես, թե ընկեր Ասլանյանը շատ է սիրում Սիմոնյանին։ Ճիշտ է, չես սխալվում։ Բայց առաջ իմ մասին էլ էին նույնն ասում։ Չէր լինի մի խորհրդակցություն, որտեղ Ասլանյանը չգովեր ինձ, մեր կոլխոզին։ Իսկ այսօր...

Դանիելյանն էլ չշարունակեց խոսքը. Նրան թվաց, թե այդքանն էլ իզուր ասաց, անտեղի ցուցաբերեց իր անհամեստությունը։ Սակայն դա անհամեստություն չէր. դա ճշմարտություն էր, որի մասին գիտեին ամբողջ շրջանում, գիտեր և ինքը՝ Սարիբեկյանը։

Տասը տարուց ավելի էր, որ Դանիելյանը վարում էր Բարաշենի կոլխոզի նախագահի աշխատանքները։ Այդ տարիների ընթացքում նա արդեն ցուցաբերել էր կազմակերպչական իր ընդունակությունները, հմուտ տնտեսվարի, հոգատար մարդու համբավ էր ձեռք բերել։ Նրա նախագահության տարիներին կոլխոզը զգալի նվաճումներ էր ձեռք բերել—ընդարձակվել էին ցանքադաշտերը, այգիները, ավելացել էր անասունների գլխաքանակը։ Կոլխոզնիկներն ունևոր էին դառել։

Դանիելյանը գիտեր աշխատանքի վայրում մարդկանց

դասավորել ըստ իրենց ընդունակությունների, շահագրգռել գործի համար։ Նա գիտեր նաև ոգևորել մարդկանց։ Կոլխոզում ոչ մեկի լավ աշխատանքը չէր մնում աննկատ։ Նա անպայման խոսում էր այդ մասին, գովաբանում։ Նա գիտեր խրախուսանքի նշանակությունը։

— Մարդու լավ հատկությունը չնկատես, մոռացության տաս, չի ամրանա, չի արմատավորվի այդ հատկությունը,— հաճախ ինքն իր համար կրկնում էր Դանիելյանը,—որքան խրախուսես մարդուն, այնքան կոգևորվի նա։

Մարդկանց մեջ լավը տեսնելը Դանիելյանի բնավորության առավել հատկություններից մեկն էր և նա նույնիսկ ծույլերի, ասսերների աշխատանքում անգամ փնտրում էր լավի գեթ մի հատիկ, որպեսզի ոգևորի նրանց, ամրապնդի այդ լավը։

— Մարդը ալրով լիքը քսակի հատկություն ունի. որքան հարվածես, այնքան լավը կգնա, վատը կմնա,—մեր գրողներից մեկի այս թևավոր արտահայտությունը յուրովի փոխելով հաճախ ասում էր Դանիելյանը և շարունակ հետևում, թե ում աշխատանքում կարող է գովասանքի արժանի բան գտնել նրան գովելու համար։

Մարդու նկատմամբ այս լավատեսությունը հենց իրեն— Միսակ Դանիելյանին դարձրել էր լավագույն մարդկանցից մեկը։ Կոլխոզում չկար մեկը, որ չհարգեր նրան, չպատկառեր նրանից։ Բարաշենում բոլորի բարեկամն էր Դանիելյանը։ Բոլորն էլ այնտեղ շարունակ դիմում էին նրան իրենց անձնական գործերով, օգնություն խնդրում։ Իսկ նա երբեք չէր զլանում օգնել մարդկանց այն ամենով, ինչով կարող էր։

Պատերազմի տարիներին Միսակ Դանիելյանի տունը վեր էր ածվել յուրատեսակ մի փոստի։ Այնտեղ էին գալիս գյուղից ռազմաճակատ մեկնած մարտիկներից շատերի նամակները։ Մարտիկները կոլխոզի նախագահից էին հարցնում, թե ինչպես են ապրում իրենց հարազատներն ու բարեկամները, ինչո՞ւ է ուշանում իրենց նամակի պատաս-

խանը։ Եվ նախագահն առանց հապաղելու կամ ինքն էր պատասխանում այդ նամակներին, կամ կանչում էր նամակ գրողի հարազատին, ստիպում, որ նա գրի անմիջապես։

Սուրեն Սարիբեկյանն էլ շատերի պես հաճախ նամակներ էր գրում Դանիելյանին։ Այդ նամակներում նա պատմում էր իրենց մարտերի մասին, նկարագրում էր իր տեսած նոր երկրները, մարդկանց նիստն ու կացը։ Նրա այդ նամակներից մեկը շատ դուր էր եկել Դանիելյանին։ Այնտեղ Սարիբեկյանը պատմում էր լեհական մի աղքատ գյուղի մասին, հայտնում էր, թե ինչպիսի չարքաշ կյանք են վարում լեհ գյուղացիները։

«Քանի դեռ պատերազմ չկար, տանն էինք, երբեմն դժգոհում էինք մեր կյանքից ու աշխատանքից։ Բայց պատերազմը մեզ օտար երկրներ փոխադրեց, տեսանք, թե ինչպես են աշխատում ու ապրում ուրիշները, ինչպես արյուն-քրտինք են թափում մի կտոր հողի համար, իսկ հող ստանալուց հետո էլ՝ ոչ միջոց են ունենում այդ հողը մշակելու, հերկելու, ոչ էլ հերկածը հնձելու։ Օտար երկրներում տեսանք, թե ինչպիսի փոխհարաբերությունների մեջ են գտնվում մարդիկ, ինչպես թշնամաբար են վերաբերվում իրար հետ, ինչպես ամեն մեկը ցանկանում է տապալել իր հարևանին, որպեսզի նրա ունեցվածքի տերը դառնա ինքը։

Զարհուրելի է դա, զարհուրելի։ Մեր սերունդը չէր տեսել այդպիսի զարհուրանք, չէր տեսել կապիտալիստական նեխված աշխարհը։ Նա գրքերից միայն գիտեր, որ այդ անիծյալ աշխարհում իրոք մարդը մարդու համար գայլ է։ Սակայն ո՞ր գիրքը կարող է տալ այն պատկերը, ինչ մարդ տեսնում է իր սեփական աչքերով։

Այժմ նրանք, ովքեր եղան ռազմաճակատում, ովքեր եղան արտասահմանում, իրենց սեփական աչքերով տեսան այդ զարհուրանքը։

Ափսոս չե՞ն մեր կարգերը, մեր մարդիկ։

Անցյալ օրը մայրիկս գրել էր, թե Նազար քեռին նկել, կոլխոզի հաշվին սպիտակեցրել է մեր սենյակները։ Գրել էր, որ դեռ հոկտեմբերին երեք սայլ փայտ է ստացել ձմեռվա համար։ Դա ձեզ—Թիկունքի մարդկանց համար գուցե շատ սովորական բան թվա։ Բայց դա հոգատարության ինչպիսի՜ օրինակ է։ Այդպիսի հոգատարություն դեպի մարդը կապիտալիստական ո՞ր երկրում կարող է լինել։

Կարդացի մորս գրած նամակը և ուրախությունից աչքերս լցվեցին արտասուքով, սիրտս լցվեց հպարտությամբ, որ ես սովետական քաղաքացի եմ, սովետական երկրի մարդ։

Կարդացի մորս նամակը և սիրտս լցվեց մեր երկրի, մեր աշխատանքի, մեր մարդկանց նկատմամբ եղած անսահման կարոտով։ Կարոտեցի մեր կոլխոզային աշխատանքն ու կոլխոզի մարդկանց։ Հիշեցի, թե ինչպես ամեն օր խըմբովին, երգով ու իրար հետ կատակելով աշխատանքի էինք գնում։ Այժմ ինձ համար երազ է թվում այդ աշխատանքը։ Երնեկ այն օրվան, որ կվերջանա պատերազմը, կվերադառնանք տուն և նորից կսկսենք մեր խաղաղ, շինարար աշխատանքը։ Ու այն ժամանակ, հարգելի ընկեր Դանիելյան, դու կտեսնես, թե ինչպես կաշխատենք մենք»։

— Տեսավ, ինչպես չէ,—հիշելով իր նամակի վերջին տողերը ինքն իրեն ասաց Սարիբեկյանը,—տեսավ, թե ինչպես օգնեցին իրեն պատերազմից տուն վերադարձած քսան և մեկ հոգի քարաշենցիները, տեսավ, թե դրա համար շրջկոմի քարտուղարն ինչպես «գովեց» Քարաշենի կոլխոզի նախագահին...

Այդ մտորումների ժամանակ Սարիբեկյանի աչքերին ակամայից պատկերացավ շրջկոմի դահլիճում շփոթված կանգնած իրենց նախագահը և ականջներում ուժգնությամբ հնչեց ժողովականների ծիծաղը...

Որքա՜ն դառն էր այդ ծիծաղը, ճնշող ու դաժան։ Պատերազմի ժամանակ, թշնամու գնդացիրներից ու սավառնակներից կարկուտի պես տեղացող գնդակների տակ Սարի-

ընկյանը երբեք չէր ցնցվել, երբեք նրա մարմնով այնպիսի սաստիկ սարսուռ չէր անցել, ինչպիսի սարսուռ որ անցավ նրա մարմնով այդտեղ—շրջկոմի դահլիճում, իր համերկրացիների, իր կոլխոզնիկ ընկերների ծիծաղից…

— Հապա, Սուրեն Սարիբեկյան, այդպես է,—լուռ մտորումների մեջ ինքն իրեն ասաց ֆերմայի վարիչը,— բազմահազար ընկերներիդ գոհից թև ու թիկունք առած, հպարտորեն անցնում էիր պարտված Բեռլինի փողոցներով և կարծում էիր, թե ծովը ծնկներիդ ցած է։ Դե հիմա էլ պարծեցի՛ր։ Ինչո՞վ կարող ես պարծենալ։ Նրանո՞վ, որ վախկոտ ջայլամի պես գլուխդ թաքցրել էիր հաղթանդամ հաշվետարի հետևում և ամոթից կարմրել, նրանո՞վ, որ քո կոլխոզի պարտքն ուրիշներն են տալիս…

Սարիբեկյանի տխուր մտորումնե՛րը թերևս ավելի երկար շարունակվեին, եթե հանկարծ նրա ականջին չհասներ գիշերվա զովի հետ եկող հոգեզմայլ երգի ձայնը։

Մէ խոսկ ունիմ իլթիմազով,
Անգաճ արա, ով աչկի լուս…

— Ռուբեն Սիմոնյանն է,—ձայնից երգողին ճանաչելով ասաց Դանիելյանը և լարեց լսողությունը։

Միակ Դանիելյանը երգի սիրահար էր։ Նույնիսկ վատ երգողներին նա լսում էր հաճույքով։ Իսկ այժմ երգում էր Մորուսի կոլխոզի նախագահը, որին նա չլսել չէր կարող։

Ամբողջ շրջանում հայտնի էր Սիմոնյանի դուրեկան, թավիշ ձայնը։ Հաճախ հեռու տեղերից գալիս, հյուր էին կանչում նրան, որպեսզի նա երգի գեթ մի անգամ։ Իսկ նա երգելում վերին աստիճանի քմահաճ մարդ էր։ Երբեմն կերգեր առանց խնդրելու, առանց պահանջելու, երբեմն էլ որքան աղաչեին, ձայն չէր հանի։

— Երգը ցանկությամբ չի կատարվի, պետք է տրամադրություն լինի,—ասում էր նա,—ես հո պրոֆեսիոնալ չեմ, որպեսզի ուզած ժամանակ և ուզած տեղը կարողանամ երգել։

Իսկ այժմ, ըստ երևույթին, նա տրամադրված էր երգելու։ Այնքան նուրբ, այնքան խորունակ էր երգում նա, որ կարծես թե ամբողջ բնությունն էր ոգի առել, միացել նրան։

Աչքաբ քեզ ի՞նչ գեթ իմ արև,
Կենում իս խըռով աչկի լուս.
Աշխարս աշխարով կըշտացավ,
Իս քեղնից սով, աչկի լուս...

— Որքա՜ն լավ է երգում անպիտանը,—չկարողանալով զսպել իրեն, զմայլանքով բացականչեց Դանիելյանը։ Սարիբեկյանը չարձագանքեց նրան։ Նա մնաց լուռ, նոր մտքերով տարված, և բավականին անց միայն մտքում ասաց.

— Ներգի, ինչո՞ւ չի երգի,—և այդտեղ ահա, առաջին անգամ կյանքում, տարօրինակ մի բան զգաց սրտում։

Նախանձ չէր արդյոք։

Նա այդպես էլ կարծեց, սակայն փորձեց արդարանալ։

— Ինչո՞ւ պետք է նախանձեմ, ինչո՞ւ. լա՞վ է աշխատել։ Միթե՞ քիչ կան լավ աշխատողներ։ Կամ...

Սարիբեկյանը չուզեց շարունակել. նա զգաց, որ մի բան ներսից գլխադրում է, չի ուզում համաձայնել իր հետ և ներքին այդ գլխադիր ուժի հետ կռվելով ասաց.

— Էհ, ի՞նչ կա որ, թող նախանձ լինի. կգա ժամանակ, ուրիշներն՛ էլ մեզ՛ կնախանձեն...

Ովքե՞ր էին այդ «ուրիշները»։ Սուրեն Սարիբեկյանը չգիտեր։ Նա սկի չուզեց էլ իր համար պարզել այդ հարցը։ Մի պահ այդպես անորոշ մտածելուց հետո վճռականորեն հայտարարեց.

— Կգա ժամանակ, որ Ռուբեն Սիմոնյանն էլ մեզ կնախանձի։ Բայց կգա՞ այդպիսի ժամանակ...

Սարիբեկյանի մարմնով դարձյալ ներքին մի ցնցում անցավ։ Նրան թվաց, թե անմիտ բան է մտածում, անիրականանալի, անհնարին բան։ Ի՞նչ պետք է աներ նա, որ Ռուբեն Սիմոնյանը նախանձեր իրեն։ Անապարծությո՞ւն չէր դա, անհիմն ցնորք։

Նա մոռանալով, որ միայն իր մտքում էին ասվել այդ բառերը ,ոչ ոք դեռ չգիտեր նրանց մասին, սակայն ամոթից կարմրեց ու շփոթվեց։ Եվ այդ ժամանակ ահա ակամայից հնչեց մի ձայն։

1944 թվականին Մերձ—Բալթիկայի ճահճուտներում մի ամբողջ շաբաթ հետախուզություն կատարելուց հետո վերադարձել էր ձեռնունայն, առանց որևէ տեղեկության։ Գնդի հրամանատարը նրան կանչել էր իր մոտ և լուտանք չկար, որ չթափեր գլխին։

— Դու ինձ մոտ հանգստանալու՞ ես եկել, թե կռվելու,— ասում էր հրամանատարը,—ո՞ւր է քո մի շաբաթվա հետախուզության արդյունքը։ Ի՞նչ բարի լուր ես բերել ինձ համար։

Սարիբեկյանը գլխահակ կանգնել էր հրամանատարի առաջ, ամոթից քրտինքը պատել էր ճակատը և նա արդարանալու համար ոչ մի բառ չէր գտնում։ Նրա լռությունն ավելի էր գրգռում հրամանատարին։

— Չլինի՞ կարծում էիր, թե հանգստյան տան ես գտնվում, արևի վաննաներ էիր ընդունում։

— Ընկեր գնդապետ...—շրթունքները հազիվ շարժելով ինչ-որ ուզեց ասել Սարիբեկյանը, բայց հրամանատարն իսկույն ընդհատեց նրան.

— Ի՞նչ գնդապետ։ Առանց քո ասելու էլ գիտեմ, որ ես գնդապետ եմ. դու ասա, թե ի՞նչ ես արել մի ամբողջ շաբաթ։

— Թույլ տվեք կրկին հետախուզության գնալու,—տեսնելով, որ հրամանատարը հետզհետե ավելի է բորբոքվում, խոսքի արանքում ասաց Սարիբեկյանը։

— Որ մի շաբա՞թ էլ հանգստանաս։

— Չէ, կամ կմեռնեմ, կամ անպայման «լեզու» կբերեմ։

— Դու ինձ մոտ մեռնելու համար չես եկել, ընկեր Սարիբեկյան, այլ կռվելու համար։ Եթե մեռնելու միտք ունեիր, ուրիշ տեղ գնայիր։

— Չեմ մեռնի. անպայման կկատարեմ ձեր առաջադրանքը,— վստահորեն ասաց նա, ամբողջ խոսակցության ժամանակ առաջին անգամ բարձրացրեց գլուխը, ուղիղ նայեց հրամանատարի աչքերին և հանկարծ մտքումն անցավ.

— Իսկ եթե խոստումս չկատարեմ...

— Չե՛ս պարծենում,—ուշադրությամբ Սարիբեկյանին նայելով ասաց հրամանատարը։

Սարիբեկյանը լռեց։

Երեք օր Սարիբեկյանը չերևաց գնդում։ Նրա մասին լուր էլ չկար։ Գնդի հրամանատարի խիղճը տանջում էր։

— Չլինի՞ տղան գնաց, անհաջողության հանդիպեց, կամ, ով գիտե, ինքնասպանություն կատարեց...

Չորրորդ օրը, առավոտյան, հրամանատարն իր մոտ կանչեց երկու հետախույզի, հրամայեց մինչև երեկո ողջ կամ սպանված գտնել Սարիբեկյանին։ Հետախույզները գնդի հրամանատարի մոտից չհեռացած տեսան, որ երկու կապած «լեզու» առաջն արած գալիս է Սարիբեկյանը։

— Ահա և նա, ընկեր գնդապետ,— զեկուցեց հետախույզներից մեկը։

Հրամանատարն իսկույն վեր կացավ, ընդառաջ գնաց Սարիբեկյանին։

— Ձեր հրամանը կատարված է, ընկեր գնդապետ,— պատիվ բռնելով զեկուցեց Սարիբեկյանը։

Հրամանատարը մի պահ լուռ նայեց նրան, զգաց, թե որքան հոգնած էր նա, հազիվ էր ոտքի վրա կանգնում։ Դրա համար էլ երկար չխոսեց հետը, միայն ասաց.

— Ի՞նչ է, սպասում էիր, որ վրադ բարկանամ, նոր միայն պարտքդ կատարեիր։

— Չէ, ընկեր գնդապետ, արդեն բաժակը լցվել էր...

«Իսկ մի՞թե հիմա բաժակը չի լցվել»,—կես գիշերին, ինքն իրեն, մտքումն ասաց Սարիբեկյանը, ընդհուպ մոտեցավ Դանիելյանին, հաշվետարի ձիու սանձը տվեց նրան։ Դանիելյանը մեքենայաբար բռնեց սանձը, մի քանի քայլ

առաջ գնաց, հանկարծ նկատեց, որ Սարիբեկյանը շեղեց իր ճանապարհը։

— Այդ ուր ես գնում,—հարցրեց Դանիելյանը։

— Ֆերմաները,--կարճ պատասխանեց Սարիբեկյանը և հեռացավ։

— Լսիր, զգույշ կաց, դայլ-բան կպատահի։

Բայց Սարիբեկյանը նրան չլսեց։

Երկնքի աղոտ ֆոնի մեջ երևացին երկնասլաց սարերի գագաթները։

Լույսը բացվում էր։

5.

Երկու շաբթից ավելի էր, որ Սարիբեկյանը տուն չէր գնացել։ Ամեն օր մենակ գնում էր ստուգում, թե սարում որքան խոտ է հարվել, ինչպես է դիզվել հարած խոտը։ Լինում էր նախրապաններին, հորթարածներին մոտ, հետևում էր, թե որ կողմերն են տանում նախիրն արածացնելու, որ ժամերին են ջուր տալիս անասուններին։ Ֆերմայում հետևում էր կաթի ժակարդման և պանրի պատրաստման աշխատանքներին, հաճախ անձամբ կանգնում էր երկու սեպարատ մեքենաների մոտ, պտտում էր անիվները, որ հնարավորին չափ շուտ զտեն կաթը, չթթվի։ Ապա և գնում էր, ձորից շալակով քար կրում, բերում ֆերմայում աշխատող կանանց հանրակացարանի պատը շարում, որ կիսով չափ փլվել էր վերջին օրերի անձրևի պատճառով։

Այդ օրը, առավոտյան, երբ նա ստացավ կոլխոզի նախագահի գրությունը, ուր առաջարկվում էր նրան անպայման կեսօրին գյուղում լինել, մեծապես ուրախացավ. դա ամենից առաջ հրաշալի առիթ էր սափրվելու համար։ Նա իր հետ չէր վերցրել ածելին, և այդ երկու շաբաթվա ընթացքում կոշտ մազերը երկարացել էին, ծածկել ամբողջ երեսը։

Մեկ օր առաջ կով կթողներից մեկի մոտ տեսնելով հայելու փոքրիկ մի կտոր, վերցրեց, նայեց երեսին, ինքն էլ

զարհուրեց իրենից—այնքան էր սևացել ու կոպտացել, որ կարծես թե միանգամայն օտար մարդ լիներ իր դեմը կանգնած։ Լեռնային արևից չորացել, թափվում էր ճակատի մաշկը, շրթունքները ճաքճքել էին, փոխվել էր նույնիսկ մազերի գույնը։ Մինչ այդ նա կարծում էր, թե իրենի մազերը սև են։ Իսկ այժմ բավականին երկարելուց հետո ինչ-որ արտասովոր գույն էին ստացել։ Ոչ սև էր դա, այդ գույնը, ոչ էլ մուգ-շականակագույն։ Կարծես թե արևի տակ խանձված եղիպտացորենի չիկագանգուր թելեր լինեին նրա երեսին փռած։

Շորերն էլ էին կեղտոտվել ու տեղ-տեղ պատռոտվել։ Ֆերմայի կացարանի կիսափուլ պատը շարելիս ծանր քարեր բարձրացնելուց քայքայվել էին շապկի փեշերն ու շալվարի ծնկավերևի մասերը։

— Անկին մարդ, անտեր մարդ,—Սարիբեկյանին ծաղրելով ասում էր Սոփի քեռակինը, որին գիրության համար գյուղում Ալրի տոպրակ մականունն էին տվել։

— Բա ոնց չէ, Ղազար քեռիս շատ բախտավոր է, որ Ալրի տոպրակի նման կին ունի,—պատասխանում էր Սուրենն այնպիսի տոնով, որ Սոփի քեռակինը չէր հասկանում՝ լուրջ է ասում նա, թե՞ կատակով։ Եվ նա լռում էր, կիսատ թողնելով այն, ինչ մտքում որոշել էր ասել Սուրենի ամուրիության մասին։

Կոլխոզի նախագահի գրությունը կարդալուց հետո Սարիբեկյանը մեկ առ մեկ մոտեցավ կթվորներին, հորթապահներին, ֆերմայի հաշվետարին, կարգադրեց, որ չփչացնեն կաթը, ժամանակին մակարդեն, ժամանակին հարեն, լավ հետևեն հորթերին, ճիշտ պահեն հաշիվը, թե որ կովը որքան կաթ է տվել, ապա վերցնելով նախշավոր խուրջինը, որի մեջ մայրը հաց և այլ ուտելիքներ էր ուղարկում գյուղից, ճանապարհ ընկավ։

Արևն արդեն բավականին բարձրացել էր, բայց նա այլևս չուներ նախկին ուժը։ Անտառից վերև, լերկ լեռնալանջի թավիշն արդեն թոշնել էր, գույնը փոխել։ Դեղնել էին

անտառի ծառերը։ Արևը կարծես թե իր գույնը տվել էր տերևներին և անտառը լցրել անթիվ ու անհամար դեղին-կլորիկ ոսկիներով, ինչպիսիք որ երբեմն իր ճակատից կախում էր Սաթենիկ մայրիկը։

Աշնանամուտ էր։

Սարիբեկյանը մինչև գետաբերանը եկավ լուռ, անտառի միջով, անտարբերությամբ անցնելով փունջ-փունջ կախված հասուն հոնի, վայրի խնձորների ու տանձերի մոտով։ Իսկ գետաբերանին հասնելով, կանգ առավ, ուսից ցած բերեց խուրջինը, դրեց գետնին, բարձրացավ գետեզրյա ճղնատարած ընկուզենին, թափահարեց։

Ընկույզը հասել էր։ Կանաչ կեղևները ճեղքվել էին, նրանց միջից դուրս էին ցցվել պտուղները։ Բավական էր Սարիբեկյանի մի փոքրիկ ցնցումը, և ընկույզները տեղատարափ կարկուտի պես ցած էին թափվում։ Բավականին թափելուց հետո նա ծառից ցած իջավ, թափած ընկույզները հավաքեց, լցրեց խուրջինի երկու աչքն էլ, գցեց ուսը, շարունակեց ճանապարհը։

Ինքնամոռացության մեջ, թե ժամ առաջ տեղ հասնելու համար արագ գնալուց, գուցե և խուրջինի ծանրությունից, Սարիբեկյանը քրտնել էր, շապիկն ամբողջովին ջուր էր դառել։ Նա որոշեց դուրս գալ անտառից, նեղ արահետով ցածրանալ լայն խճուղին, գնալ «Խաչի» աղբյուրը, երեսը լվանալ, քիչ հանգստանալ։ Իսկ երբ հասավ աղբյուրին, զարմացած կանգ առավ։ Այնտեղ, աղբյուրից մի քանի քայլ հեռու, կանգնել էին երեք գեղեցիկ, փայլուն ավտոմեքենա։ Սարիբեկյանն այդ ճանապարհին առաջին անգամն էր տեսնում այդպիսի մեքենաներ։ Շարունակ ավտոբուսներ ու բեռնատար մեքենաներ էին անցնում այդտեղից, երբեմն շրջկոմի քարտուղարն էր գալիս իր վիլլիսով։ Իսկ այդպիսի մեքենաներ...

— Բարև, ընկեր Ռոբինզոն Կրուզո...

Սարիբեկյանը մեքենաներով տարված, չէր նկատել նրանից քիչ հեռու, աղբյուրի մոտ կանգնած մարդկանց։

Ձայն լսելով նա շրջվեց, տեսավ, որ աղբյուրի մոտ կանգնած մարդկանցից մեկն անջատվել, մոտենում է իրեն։ Նա այլայլվեց. ակնոցների տակից ժպտալից հայացքը նրան հառած մարդը ծանոթ թվաց։ Ե՞րբ և որտե՞ղ էր տեսել նրան, այդ առույգ, մի քիչ արդեն գեր, կեպիի տակից սպիտակ մազերը երևացող մարդուն։ Միթե՞ միայն նկարը։ Իսկ նկարում նա խիստ է, ժպիտի և ոչ մի հետք։ Այժմ նա ժպտում է և այդ ժպիտը կարծես թե ոգի ու շունչ է տալիս մարդուն։

Սարիբեկյանը մի քանի անգամ ճպճպացրեց աչքերը, ինքնաբերաբար թափահարեց գլուխը, զարմացած նայեց ակնոցավորին։

— Շալակդ ծանր է երևում,—տեսնելով Սարիբեկյանի այլայլվածությունը, ասաց ակնոցավորն ադրբեջաներեն։

— Ծանր չի, ընկեր Բաշիրով,—հանկարծ, ինքն էլ չիմանալով թե ինչպես հիշեց Սարիբեկյանը և ձգվեց զինվորականի պես։ Նրա արագ շարժումներից խուրջինը ճոճվեց, ուզեց ընկնել, բայց Սարիբեկյանն զգուշությամբ բարձրացրեց ուսը, խուրջինը մնաց կախված։

— Սա ի՞նչ է,—խուրջինը ցույց տալով ասաց Բաշիրովը։

«Խայտառակվեցի»,—անմիջապես անցավ Սարիբեկյանի մտքով։ Նա հապաղեց, մի պահ ոչինչ չասաց, հետո միայն կակազեց,—ընկույզ է, ընկեր Բաշիրով...

— Ընկո՞ւյզ։ Կարելի՞ է հյուրասիրվել։

— Прошу,—ասաց Սարիբեկյանը՝ խուրջինն ուսից ցած բերելով։

Բաշիրովը կռացավ, խուրջինից վերցրեց երկու հատ ընկույզ, սեղմեց ափում, մի քանի անգամ խփեց բռունցքով, բայց ընկույզները չկոտրվեցին։

— Պինդ է։ Ղուբայի և Օրդուբադի ընկույզը երկու մատով կարելի է կոտրել։

— Ձմեռը սա էլ հարկավոր կգա, ընկեր Բաշիրով,—արդեն մի քիչ համարձակ պատասխանեց Սարիբեկյանը։

— Ձմեռվա համար է,—տեսնելով, որ Սարիբեկյանն իր

հարցերին ռուսերեն է պատասխանում, նույնպես ռուսերեն ասաց Բաշիրովը։

— Այո։

— Լավ, էդ որ աշնանից մտածում եք ձմեռվա մասին, ինչո՞ւ չեք մտածում նաև ձեր երեսը սափրելու մասին։ Էդ ի՞նչ է, կարծես թե նախամարդու հետ մրցելիս լինեք։

— Ֆերմայումն էի, ընկեր Բաշիրով, երկու շաբաթ է տուն չեմ գնացել։

— Հիմա ֆերմայի՞ց եք գալիս։

— Так точно!

— Իսկ ե՞րբ եք վերադարձել բանակից։

— Արդեն մի տարի է։

— Լավ է, լավ է,—մեղմ ասաց Բաշիրովը և շրջվելով դեպի աղբյուրի մոտ կանգնած, բայց ուշադրությամբ նրանց զրույցը լսող մարդկանց, ավելացրեց,—ընկերներ, ձեզնից ով է ուզում ընկույզ ուտել, մոտեցեք: Ճիշտ է, պինդ է, բայց պինդ ընկույզը համով է լինում։

— Գուցե ընկերը չի ուզում մեզ հյուրասիրել,—ասաց աղբյուրի մոտ կանգնածներից բարձրահասակ մի մարդ և մոտենալով խուրջինին, ինքն էլ վերցրեց երկու ընկույզ, չսպասելով իր հարցի պատասխանին։

— Մեր գյուղացին հյուրի համար ոչինչ չի խնայի, այդպե՞ս չէ,—Սարիբեկյանին դիմելով ասաց Բաշիրովը։

Սարիբեկյանը համեստաբար լռեց։

Բաշիրովը կռացավ, խուրջինից վերցրեց ևս երկու ընկույզ, ափի մեջ ընկույզները խաղացնելով հարցրեց.

— Ֆերմայում դուք ի՞նչ եք անում։

— Վարիչն եմ, ընկեր Բաշիրով։

— Երբվանի՞ց։

— Հենց բանակից գալու օրից։

— Իսկ ի՞նչ եք բերել բանակից։

Սարիբեկյանը շփոթվեց։ Նա չհասկացավ Բաշիրովի հարցի իմաստը։ Բայց տեսնելով, որ Բաշիրովը համառորեն սպասում է իր հարցի պատասխանին, ասաց.

— Միայն մի շինել, ընկեր Բաշիրով, մեկել այն, ինչ տեսնում եք հագիս, ազնիվ խոսք։

Ծիծաղը բռնեց Բաշիրովին։ Նա մտերմաբար խփեց Սարիբեկյանի ուսին, ապա բռնելով նրա ձեռքն ասաց.

— Իսկ աշխատելու փորձ, դժվարությունները հաղթահարելու համառություն, կարգապահություն։

Սարիբեկյանի շփոթմունքն ավելացավ։ Քրտինքի կաթիլները գլորվեցին ճակատից։ Նա կուզեր սրբել քրտինքը։ Բայց ինչպես սրբեր—նրա ջուխտ ձեռքերից բռնել էր Բաշիրովը և բաց չէր թողնում։ Ինքը Սարիբեկյանն էլ չէր ուզում ազատել ձեռքերը. այդպես նա մի տեսակ խորունկ, ջերմ հաճույք էր զգում։ Թվում էր, թե երազի մեջ է. վախենում էր որևէ շարժում անել և զրկվել անուշ երազից...

— Իսկ ինչպե՞ս են ֆիրմայի աշխատանքները,—վերջապես բաց թողնելով նրա ձեռքերը, հարցրեց Բաշիրովը։

— Այնքան էլ լավ չեն, ընկեր Բաշիրով։

— Լա՛վ չեն, ինչո՞ւ։

Սարիբեկյանը գլուխը կախեց։ Ամոթից նա շշմեց, թվաց, թե մի սև քող ընկավ գլխին, ծածկեց աչքերը, խավարի մեջ առավ ամեն ինչ։ Միտքն էլ կաշկանդվեց, դադարեց աշխատելուց։

Առաջներում քանի-քանի անգամ է երազել Սարիբեկյանը գեթ մի անգամ հանդիպել այդ մարդուն, որի անունով երդվում են ամբողջ ռեսպուբլիկայում, որին սիրում ու պաշտում է ամեն մարդ, քանի-քանի անգամ է երազել նա գեթ մի անգամ տեսնել նրան, դեմ առ դեմ կանգնել և ասել.

— Ամբողջ հոգով պատրաստ եմ կատարելու այն, ինչ որ ասեք, ընկեր Բաշիրով։

Իսկ այժմ կատարվել է նրա իղձը, հանդիպել է նրան և խոսք չի գտնում ասելու։ Ի՞նչ ասի. ասի չկարողացա՞վ աշխատել, ասի ուրիշի՞ց են պարտք վերցրել իրենց յուղամըթերման պլանը կատարելու համար։ Ինչպե՞ս ասի։

Լեզուն պապանձվել էր։ Սարիբեկյանին թվում էր, թե լակվել է, այլևս չի կարողանալու խոսել,

— Ձեր լռությունն ինձ դեռ ոչինչ չի ասում, թե ինչու են վատ գնում ֆերմայի աշխատանքները։

— Կնշանակե վատ ենք աշխատում,— հազիվ կակազեց Սարիբեկյանը։

— Այդ էլ նորություն չի. եթե լավ աշխատեիք, ֆերմայի աշխատանքները վատ չէին լինի։

Բանի գնում, ավելանում էր Սարիբեկյանի շփոթմունքը։ Նա ոչ կարողանում էր բարձրացնել գլուխը, նայել Բաշիրովին, ոչ էլ խոսք էր գտնում ասելու։ Էլ ի՞նչ ասեր։

— Իսկ ինչպե՞ս են գյուղում, հաշտ են աշխատում,— տեսնելով Սարիբեկյանի երկար լռությունը, հարցրեց Բաշիրովը,— նախագահից հո չե՞ն դժգոհում կոլխոզնիկները։

— Հաշտ լինելը՝ հաշտ են, ընկեր Բաշիրով,— վերջապես կարծես թե քնից արթնանալով ասաց Սարիբեկյանը,— նախագահից էլ դժգոհ չեն...

— Ընկերներ, այստեղ շատ հետաքրքիր մի հանելուկ կա, հապա լսեցեք,— ծիծաղելով Բաշիրովը դիմեց մեքենաների մոտ կանգնածներին,— կոլխոզում ահա այսպիսի առողջ, բանիմաց, պատերազմի բոցերի միջից անցած մարդիկ կան, նախագահից դժգոհ չեն, իրար հետ համերաշխ են, բայց ֆերմայի աշխատանքները վատ են գնում։ Ի՞նչ եք կարծում, ո՞րը կլինի սրա պատճառը։ Գուցե ձեր այս սարերում խոտ չկա, գետերում ջուր չկա, որ տաք անասուններին։

— Հենց խնդիրն էլ այն է, ընկեր Բաշիրով, որ մենք անցյալ տարի խոտի շատ քիչ պաշար ունեինք. գարնանամուտին ամբողջովին սպառվել էր կերի պաշարը, անասունները խիստ նիհարել էին և...

— Ինչ է, անցյալ տարի ձե՞զ մոտ երաշտ էր, որ խոտի քիչ պաշար ունեիք,— ծիծաղելով ընդհատեց նրան Բաշիրովը։

— Երաշտ չէր, չէ, մենք ուղղակի...

— Ծուլացել էիք, այդպես չէ։

— Եվ ինքնահանգստացել,— լրացրեց Սարիբեկյանը և

Բաշիրովի մտերմական զրույցից ոգևորված ավելացրեց,— բայց ես ձեզ խոսք եմ տալիս, ընկեր Բաշիրով…

— Ներողություն, մի րոպե,—դարձյալ ընդհատեց նրան Բաշիրովը,—խոսք տալու ի՞նչ կարիք կա։ Ծաղրով չի, բան չի։ Ես կուզենայի, որ ինձ խոսք տալու փոխարեն ձեր խղճին խոսք տայիք, կոլխոզնիկներին խոսք տայիք, խոսք տայիք նրանց, ովքեր պատերազմի տարիներին աշխատում էին գիշեր ու ցերեկ, բազմաթիվ զրկանքներ կրում և հավատով լի սպասում, որ կվերջանա պատերազմը, մարդիկ կվերադառնան խաղաղ աշխատանքի և կյանքը լավ կլինի…

Բաշիրովը հանկարծ կանգ առավ, աչքն ընկավ ձեռքի ընկույզներին, ընկույզները գցեց խուրջինը, բռնեց Սարիբեկյանի ձեռքից։

— Իսկ դուք ասում եք խոսք եմ տալիս… Հը, ի՞նչ կասեք։

Սարիբեկյանը ոչինչ չասաց։ Բաշիրովն էլ թույլ չտվեց, որ նա շատ մտատանջվի. առանց այդ էլ տեսնում էր, որ նա ամոթից կարմրել է, գլուխը կախել։

— Շուտով ձեր շրջանում տասնյակ հազարավոր հանքափորներ են աշխատելու,—մի պահ լռելուց հետո, ուշադրությամբ Սարիբեկյանին նայելով շարունակեց Բաշիրովը,— գիտե՞ք այդ մասին։ Գիտե՞ք, որ ձեր լեռներում հարուստ հանքանյութեր են հայտնաբերվել։

— Գիտեմ։

— Շատ լավ է, որ գիտեք։ Ուրեմն դուք պարտավոր եք կաթնամթերքներով ապահովել ոչ միայն ձեր կոլխոզնիկներին, այլ նաև այդ հանքերում աշխատող բանվորներին։ Ի՞նչ եք կարծում, մենք նրանց համար Շվեցարիայի՞ց ենք կաթ բերելու։

Սարիբեկյանը կանգնել էր մտամոլոր, գլխահակ, աչքերը հառած ոտների առաջ դրած ընկույզով լի խուրջինին։ Նա ոչ խոսք էր գտնում պատասխանելու, ոչ էլ գիտեր, թե ինչ անի—վերցնի՞, արդյոք, խուրջինը, լուռ հեռանա՞, թե մնա այդպես լուռ, մտամոլոր կանգնած։

— Ցտեսություն,—հանկարծ անսպասելիորեն արագ բռ-

նելով Սարիբեկյանի ձեռքը, ասաց Բաշիրովը,— խնդրում եմ իմ անունից բարևեք կոլխոզնիկներին, նախագահին։ Ինչպե՞ս է նրա ազգանունը։

— Դանիելյան,— ընկճված շշնջաց Սարիբեկյանը։

— Ասում եք կոլխոզնիկները չե՞ն դժգոհում նրանից։

— Դանիելյանը վատ աշխատող չէ, ընկեր Բաշիրով։ Մենք պետք է օգնենք նրան։

— Դե դուք էլ օգնեցեք։ Առանց կոլխոզնիկների օգնության նախագահը մենակ ոչինչ չի կարող անել։ Ցտեսություն…

Բաշիրովը մոտեցավ մեջտեղի մեքենային, բաց արեց դռնակը, նստեց։ Նստեցին նաև մյուսները։ Մեքենաները շարժվելիս մեկը դուրս բերեց ձեռքը, թափահարեց օդում, որպես հրաժեշտի նշան։ Սարիբեկյանը մինչև ուշքի կգար, մեքենաներն անհետացան զառուղում։ Նա մի քիչ էլ նայեց մեքենաների գնացած ուղղությամբ, ապա նոր միայն ուշքի գալով, ինքն իրեն ասաց.

— Երա՞զ էր սա, թե՞ իրականություն…

Բավականին անց, երբ նա արդեն սթափվել էր և ուզում էր գնալ, աչքն ընկավ խուրջինին։

— Խայտառակվեցի,— ինքն իրեն ասաց նա,— ի՞նչ պետք է մտածեն իմ մասին։ Ասելու են ֆերմայի աշխատանքները բարձիթող արած, ընկույզ է հավաքում…

Եվ առանց երկար մտածելու, նա վերցրեց խուրջինը, մոտեցրեց ճանապարհի եզրին, բաց արեց երկու մասն էլ, շուռ տվեց։ Չոր պտուղները խշխշալով գլորվեցին լանջն ի վար։ Հետո նա ոտով հրեց, դեն ածեց ճանապարհին թափված մի քանի ընկույզներն էլ ու հեռացավ։

Գյուղում Սարիբեկյանը խուրջինը թևի տակ դրած գնաց դեպի կոլխոզի վարչության գրասենյակը։ Այնտեղ ահագին բազմություն էր հավաքվել։

Բարաշենի կոլխոզի վարչությունը որոշել էր սոցիալիստական մրցության հրավիրել Մորուտի կաթնապրանքային ֆերմային։ Այդ երեկոյան Մորուտում պետք է տեղի

ունենար մրցության պայմանագրի կնքումը։ Հավաքվել էին կոլխոզի վարչության բոլոր անդամները և Սարիբեկյանին էին սպասում։ Չգիտես ում հրամանով մեկը վերցրել էր գյուղսովետի դրոշը, նրա մոտ իրենց զուռնա-դըհոլով կանգնել էին նաև նվագածուները։ Չիմանալով, թե ով է այդպիսի հանդիսավոր երթ կազմակերպելու նախաձեռնողը, կոլխոզի նախագահը բռնել էր զուռնաչի Մաթևոսի օձիքից.

— Դուք ձեր եք եկել։ Ի՞նչ է, հարսանի՞ք ենք գնում,— բարբոքված ասում էր նա,— դեռ գետին չհասած, կոշիկներդ եք հանել։ Սպասեցեք, ժամանակը կգա, կիմանաք, թե ինչ եղանակ պետք է նվագել։ Հիմա դեռ շուտ է, գնացեք ձեր գործին։

Իր խոսքը Մաթևոսի հետ դեռ չվերջացրած, Դանիելյանի աչքն ընկավ Սարիբեկյանին։

— Դու էլ սպասում ես, որ ետևիցդ կարմիր խնձոր ուղարկե՞նք։ Հրավիրում ենք, ժամանակին եկ էլի։

Սարիբեկյանն առանց նրա հարցին պատասխանելու մոտեցավ և կամացուկ շշնջաց.

— Ընկեր Բաշիրովը բարևել է քեզ։

— Ձեռ ե՞ս առնում։

— Լուրջ եմ ասում։

Դանիելյանը շրջվեց, ուշադրությամբ նայեց Սարիբեկյանին։ Նրա դեմքին կատակի ոչ մի հետք չկար։

— Որտեղի՞ց իմացար,— հետաքրքրությամբ հարցրեց նախագահը։

— Ինքն ասաց ինձ...

— Ի՞նչ,— զարմանքից աչքերը չռեց Դանիելյանը։

Սարիբեկյանը բռնեց նրա թևից, ներս տարավ, պատմեց ամենը։

6.

Ժողովն անսպասելի կերպով կարճ տևեց։ Երբ հավաքվել էին երկու կոլխոզների վարչության անդամները, Ռուբեն

Սիմոնյանը դիմեց Միսակ Դանիելյանին, որ նա բաց անի նիստը։

— Մենք հյուր ենք, հյուրին երես տաս, գլխիդ կնստի,— կատակեց Դանիելյանը։

— Այդ մեկը թույլ չենք տա, մի վախեցիր։

— Ուրեմն ժողովը բաց արա դու։

Սիմոնյանն առանց հապաղելու, ոտքի կանգնեց, մի պահ լուռ նայեց ժողովականներին, և երբ բոլորն էլ լուռ սպասում էին, նա սկսեց.

— Ընկերներ, Բարաշենի՝ Շահումյանի անվան կոլխոզի վարչության անդամները եկել են սոցիալիստական մրցության հրավիրելու մեր Մորուտի՝ Ազիզբեկովի անվան կոլխոզի անասնաբուծական ֆերմային։

— Բարով-հազար բարի են եկել,— տեղից բացականչեց առաջին շարքում նստած, հասակով, բայց տակավին առույգ, արևահար դեմքով մեկը։

Դա Մորուտի անասնաբուծական ֆերմայի վարիչ՝ Խաչատուր Մեխակյանն էր։

Մորուտում Մեխակյանից բացի ուրիշ ֆերմայի վարիչ չէր եղել։ Գյուղում կոլխոզ կազմակերպվելու առաջին իսկ օրից նա էր նշանակվել այդ պաշտոնին, որպես նախկին հովիվ և լավ մասնագետ։

Ֆերմայի վարիչ նշանակվելուց հետո Մեխակյանը մի քանի անգամ եղել էր անասնաբուծական կարճատև կուրսերում, այնքան լավ էր ուսումնասիրել իր գործը, որ շրջանի զոոտեխնիկն անգամ հաճախ դիմում էր նրա օգնությանն ու խորհրդին։

Աչքաբաց և սրամիտ մարդ էր Մեխակյանը։ Չէր լինի մի լավ գործ, որ նա չաշխատեր ընդօրինակել, չէր լինի մի ժողով, որ նա ելույթ չունենար, չխարազաներ իրենց բացերը։ Վերջերս գյուղի երիտասարդներից մեկը նրա անհանգիստ բնավորությունը նկատի ունենալով, «Ատոմային ռումբ» մականունն էր տվել։

Այդ ժողովում էլ, երբ լսվեց նրա բացականչությունը,

Ռուբեն Սիմոնյանն խոկույն իր հայացքը հառեց նրան, նա ճոճռացրեց տակի աթոռը, երկու անգամ արհեստականորեն հազաց ու գլուխը կախեց։

— Ընչատուր ապեր, կարելի՞ է շարունակել,—նա լռելուց հետո ասաց Սիմոնյանը։

— Շարունակիր, մատաղ, շարունակիր, ես ներողություն...

— Ինձ թվում է կարիք չկա բացատրելու սոցիալիստական մրցության նշանակությունը, դա բոլորն էլ գիտեն,— շարունակեց Սիմոնյանը,—մենք կարող ենք շնորհավորել միայն քարաշենցիների նախաձեռնությունը։ Եթե առարկողներ չկան, թույլ տվեք խնդրելու ընկեր Դանիելյանին, որ նա հայտնի մեզ իրենց պայմանները։

Դանիելյանը չէր սպասում այդպիսի գործնականություն։ Նրան թվում էր, թե Սիմոնյանը երկար կխոսի, կխոսեն և մորուցիները։ Ինքն էլ էր մտքում ճառ պատրաստել։ Բայց տեսնելով, որ մորուցիներից ոչ ոք չխոսեց, ինքը ոտքի կանգնեց, ծոցագրպանից դուրս բերեց քառածալ մի թուղթ և կարդաց.

— Մենք, Քարաշենի՝ Շահումյանի անվան կոլխոզի անդամներս սոցմրցման հրավիրելով Մորուտի՝ Ազիզբեկովի անվան կոլխոզի անասնաբուծական ֆերմային, խոստանում ենք եկող տարի մեր ֆերմայի խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն ավելացնել 15 տոկոսով, հարյուր կովից աճեցնել 80 հորթ, կովերի կաթնատվությունն ավելացնել 25 տոկոսով։

— Գլուխս բան չմտավ Դանիելյանի կարդացածից,— Դանիելյանն իր գրածը կարդալուց հետո տակի աթոռը ճոճռացնելով ասաց Ընչատուր Մելիքյանը,—խնդրում եմ մեկ էլ կարդալ։

Դանիելյանը նորից կարդաց գրածը։

— Ես խոստանում եմ ինձ ամրացրած տասնչորս կովից աճեցնել տասնչորս հորթ,—տեղից բացականչեց մի կին։

— Սպասիր, Սրբուհի,—սաստեց Սիմոնյանը,—առայժմ հարկավոր է խոսել ըստ էության, պայմանագրի մասին. որքա՞ն մեզ համար ընդունելի է քարաշենցիների պայմանը։ Այդ մասին խոսող կա՞։

Սիմոնյանի հարցին արձագանքող չեղավ։ Տիրեց ընդհանուր լռություն։

— Մի՞թե ոչ ոք չի ուզում խոսել,—կրկնեց Սիմոնյանը։

— Էլ ի՞նչ խոսելու բան կա էստեղ,—լսվեց մեկի ձայնը,—բերենք պայմանագիրն ստորագրենք, վերջացավ-գնաց։

— Իսկ ես համաձայն չեմ,—առարկեց Սիմոնյանը,—եթե այս ձևով ստորագրենք պայմանագիրը, մրցությունը մենք տանուլ կտանք։

— Մի վախեցիր, տանուլ չենք տա,—ոտքի կանգնելով ասաց Մեխակյանը, բայց նրա մոտ նստած երիտասարդ մի կոլխոզնիկ իսկույն բռնեց թևից, նստեցրեց։

— Համբերիր, այ Խաչատուր ապեր, թող մտածենք։

— Մինչև դուք մտածեք, Քարաշենի կովերը կսկսեն ծնել։

— Եթե Քարաշենի կովերն այդքան շուտ ծնելու լինեին, քարաշենցիները մեզնից չէին յուղ վերցնի իրենց պարտքը տալու,—կամաց շշնջաց անկյունում մինչ այդ լուռ նստած մի կին։ Կնոջ մոտ նստածները փռթկացրին։ Սիմոնյանը չիմանալով, թե ինչու են ծիծաղում կանայք, խիստ նայեց նրանց կողմը։

Ծիծաղողներն իսկույն լռեցին, բայց Սուրեն Սարիբեկյանը, որ լսել էր կնոջ խոսքերը և գիտեր, թե ինչու են նրանք ծիծաղում, տեղից բացականչեց.

— Ընկեր Սիմոնյան, չի՞ լինի ասեք, թե ձեր պայմանագրի որ կետի դեմ եք դուք առարկում։

— Ես առարկում եմ ձեր պայմանագրի երեք կետի դեմ էլ,—իսկույն ասաց Սիմոնյանը, մի րոպե միայն մտածեց, ապա ավելացրեց,—ես խնդրում եմ մրցման պայմանները գրել բացահայտ թվերով, այլ ոչ թե տոկոսներով։

— Իսկ ինչ տարբերություն կա։

— Ինձ թվում է տարբերությունը շատ մեծ է, ընկեր Սարիբեկյան։

— Չի՞ լինի բացատրեք այդ տարբերությունը։

Սիմոնյանը կանգ առավ։ Մտքե՞րն էր հավաքում նա, թե՞ շփոթվել էր։ Նրա հետ իսկույն լռեց նաև փոքրիկ դահլիճը։ Տիրեց մի տեսակ լարված հետաքրքրություն։ Որքան հապաղում էր Սիմոնյանը, այնքան ավելի էին հուզվում մասնակիցները։ Չլինի՞ թե նա ասելիք չունի, առարկելու ոչինչ չկա։ Չլինի՞ նա առհասարակ վախենում է, չի ուզում մրցության մեջ մտնել քարաշինցիների հետ։ Չէ՞ որ նրանց ֆերման էլ ուժեղ է, ի՞նչ անենք, որ այս տարի հետ են մնացել։ Ինչո՞ւ չի խոսում Սիմոնյանը, ինչո՞ւ է լռում...

— Էստեղ անձնական հաշիվ կա, ուրիշ ոչինչ,— նստած տեղից, կարծես թե ինքն իր համար ասաց մի կին, բայց ձայնը հասավ ուրիշներին։

— Ի՞նչ ես հիմար-հիմար դուրս տալիս,— ասողի կողքին հրեց երիտասարդ կոլխոզնիկը,— ի՞նչ անձնական հաշիվ կա։

— Կա, դու չես իմանում, ինձնից հարցրու,— համառեց կինը։

— Լավ, լավ, ավել-պակաս մի խոսի։

— Սկի էլ չեմ լռի, ես հաստատ գիտեմ։

Կինը գուցե էլի ինչ-որ ասեր, բայց տեսնելով, որ Սիմոնյանն ուզում է խոսել, իսկույն լռեց։

— Որպեսզի ես բացատրեմ տարբերությունը, կխնդրեի որ դուք ինձ հայտնեք հետևյալ տվյալները,— Դանիելյանին դիմելով ասաց Սիմոնյանը,— որքան է ձեր խոշոր եղջերավոր անասունների քանակը, քանի հորթ եք ստացել յուրաքանչյուր հարյուր կովից և որքան կաթ՝ ֆուրաժային մեկ կովից։

— Ի՞նչ նշանակություն ունի դա,— հանդիստ հարցրեց Դանիելյանը։

— Ես այս րոպեիս կասեմ. միայն դուք ինձ տվեք տվյալները։

— Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, մոտավորապես, երեք հարյուր է։

— Գրենք ոչ թե մոտավորապես, այլ ուղղակի երեք հարյուր. դե՞մ չեք։ Մյուս երկու հարցին էլ պատասխանեցեք։

— Դու արդեն դատավորի նման ես խոսում, Ռուբեն,— ծիծաղելով ասաց Դանիելյանը,— մյուս երկու հարցը ո՞րն է. թե քանի հորթ ենք ստացել յուրաքանչյուր հարյուր կովից և որքան կաթ՝ փուրաժային մեկ կովի՞ց

— Այո։

— Գրիր, հարյուր կովից՝ 65 հորթ, փուրաժային մեկ կովից՝ 800 լիտր կաթ։

— Բայց կիթը դեռ շարունակվում է,— տեղից բացականչեց Սարիբեկյանը։

— Ոչինչ, մեզ մոտ էլ է շարունակվում,— կարճ պատասխանեց Սիմոնյանը և սկսեց թղթի վրա ինչ-որ հաշվումներ անել։

Դահլիճում հետաքրքրությունը դեռ շարունակվում էր։ Բոլորն էլ ակնդետ հետևում էին Սիմոնյանի շարժումներին, դեմքի փոփոխիկ արտահայտությանը։

— Այսպես ուրեմն,— իր հաշվումները վերջացնելուց հետո սկսեց Սիմոնյանը,— մեր սոցիալիստական մրցության նպատակը, տվյալ դեպքում, այն պետք է լինի, որպեսզի ավելացնենք անասունների գլխաքանակը, ավելի շատ կաթ ստանանք։ Ճի՞շտ է, թե չէ։

— Այդպես է,— հաստատեց Դանիելյանը։

— Իսկ ձեր պայմանները դրա համար մեզ ոչնչով չեն պարտավորեցնում։ Դուք խոստանում եք խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն ավելացնել 15 տոկոսով. այսինքն ձեր այս տարվա երեք հարյուր գլուխ անասունների թիվը հասցնել 345-ի։ Իսկ մեր խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն այս տարի դրանից ավելի է։ Եթե մենք ձեր պայմանագիրն ընդունենք, պետք է մեր անասունների գլխաքանակը եկող տարի ավելացնենք առնվազն 80-ով։

Դուք հարյուր կովից այս տարի ստացել եք 68 հորթ և խոստանում եք եկող տարի ստանալ 80։ Իսկ մենք հենց այս տարի յուրաքանչյուր հարյուր կովից ստացել ենք 87 հորթ։ Դուք այս տարի ֆուրաժային մեկ կովից ստացել եք 800 լիտր կաթ, իսկ մենք ստացել ենք 1300 լիտր։ Ձեր պայմանագրի համաձայն, եթե եկող տարի կովերի կաթնատվությունն ավելացնելու լինենք 25 տոկոսով, դուք պետք է մեկ կովից տաք 1000 լիտր կաթ, իսկ մենք՝ 1625 լիտր։ Դուք, անշուշտ, կարող եք ֆուրաժային մեկ կովից 1000 լիտր կաթ տալ։ Իսկ մենք գուցե չկարողացանք 1625 լիտր տալ։ Այդ դեպքում դուք մրցանակը կտանեք, որովհետև իրոք 25 տոկոսով ավելանում է ձեր կովերի կաթնատվությունը։ Ի՞նչ եք կարծում, դա արդարացի՞ կլինի։

— Ռուբեն Սիմոնյանի միտքը չմեկնի,— դարձյալ աթոռը ճռճռացնելով բացականչեց Խաչատուր Մեխակյանը,— յոթ փաստաբանի ջուրը կտանի և ծարավ ետ կբերի։

— Եթե քարաշինցիները դեմ չեն,— շարունակեց Սիմոնյանը,— մենք կարող ենք պայմանավորվել այսպես — յուրաքանչյուր հարյուր կովից աճեցնել 95 հորթ, մեկ ֆուրաժային կովից ստանալ 1500 լիտր կաթ։ Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 15 տոկոսով ավելացնելուն ես դեմ չեմ։

Դարձյալ տիրեց խորին լռություն։ Քարաշինցիների բերանը խոսք չէր գալիս ասելու։ Ռուբեն Սիմոնյանի փաստերը նրանց շշմեցրել էին։ Բոլորն էլ մտածում էին, սակայն ելք չէին գտնում։ Երկար մտածելուց հետո էլ Սարիբեկյանը ոտքի կանգնեց և, արդյոք ինքնասիրությունի՞ց դրդված, թե՞ համոզված՝ ասաց.

— Ես կարծում եմ կարող ենք ընդունել մորուպցիների առաջարկը։

Քարաշենցիները, սակայն, ձայն չհանեցին։ Նրանք տակավին ընկճված շարունակում էին խորհել։ Բավականին անց ոտքի կանգնեց Մխակ Դանիելյանը։

— Ես չեմ ուզում առարկել ընկեր Սիմոնյանին,— հանդարտ, անվստահորեն ասաց նա,— ընկեր Սիմոնյանը գուցե

ճիշտ է ասում։ Այդ մասին մենք դեռ պետք է մտածենք։

— Մտածեք, կամքը ձերն է,—ուրախ բացականչեց Խաչատուր Մեխակյանը հարցն իր համար արդեն սպառված համարելով։

— Խաչատուր ապեր, ինչ որ տեսնում եմ, Յագութ աքիրն էսօր քեզ տախտեղալի կերակուր է տվել,—ներքին գոհունակությամբ, արտաքուստ խիստ ասաց Սիմոնյանը,—տեղդ հանգիստ նստել չես կարողանում։

— Յագութ աքիրը եթե խելք ունենար, ինքն էլ կգար ժողովի, մի քիչ կուրախանար…

— Ի՞նչ առաջարկություն կա,—հարցրեց Սիմոնյանը։

— Ես կարծում եմ հարցը սրանով էլ վերջացնենք,—կամաց, միայն Սիմոնյանին ասաց Դանիելյանը։

— Մենք դեմ չենք,—պատասխանեց Սիմոնյանը և նիստը փակ հայտարարեց։

Դրսում մութ էր։ Լուսինը դեռ դուրս չէր եկել, աստղերի լույսն էլ այնքան աղոտ էր, որ մարդկանց չէր կարելի տարբերել իրարից։ Ժողովից հետո, բակում, Խաչատուր Մեխակյանը բռնեց իր կողքից քայլող մեկի թևից։

— Ցանելու եկան, հնձելով հետ կգնան։

— Ո՞ւմ հետ ես,—դժկամորեն հարցրեց նա, որի թևից բռնել էր Մեխակյանը։ Մեխակյանը կարծում էր, թե դա մարուտցի է։ Բայց նրա ձայնը լսելուն պես իմացավ, որ սխալված է։ Դա Քարաշենի գյուղսովետի նախագահ՝ Հայկ Միքայելյանն էր։

— Դո՞ւ ես, ընկեր Հայկ,—շփոթվեց Մեխակյանը,—կարծեցի, թե մեր Ռուբենն ես։ Ուզում էի ասել, թե էդ խեղճ քարաշենցինները մթնով ոնց պետք է վերադառնան. ավելի լավ է գիշերը մնան մեզ մոտ, առավոտն էլի կգնան։

— Ոչինչ, մի կերպ կգնաք, մի անհանգստացեք,—վիրավորված պատասխանեց Միքայելյանը, որ արդեն հասկացել էր Մեխակյանի միտքը։

Մեխակյանը լուռ անհետացավ մթության մեջ, ինքն էլ անհարմար զգալով ասած խոսքի համար…

Ժողովից հետո Սարիբեկյանը գնաց դեպի քրոջ տունը։ Մորուտ գալիս մայրը պատվիրել էր անպայման տեսնել Վարդուշին և իմանալ, թե ինչպես է առողջությունը։ Սարիբեկյանն ինքն էլ էր ուզում տեսնել նրան։ Վերջին անգամ, երբ եղավ նրանց տանը, քույրը նիհարել էր, խիստ գունատվել։ Սուրենն այն ժամանակ չհարցրեց նրա գունատության պատճառը, մտքերը ցրիվ էին։ Սակայն հետո դրա համար կշտամբում էր իրեն։ Փողոցում ընկերներից բաժանվելիս Սիմոնյանը բռնեց նրա թևից։

— Մի փախչիր․ գիտեմ, ուզում ես գնալ Վարդուշին տեսնելու։ Բայց հիմա բոլորս պետք է գնանք մեր տուն։

— Շնորհակա՛լ եմ,— զուսպ ասաց Սարիբեկյանը,— ես գիշերը չեմ մնալու այստեղ։ Պետք է վերադառնամ։

— Մենք էլ չենք կարողանալու գալ․ գյուղում գործ ունենք,— ավելացրեց Միսակ Դանիելյանը։

— Ոչ մի գործ։ Ես ձեզ երկար չեմ պահի։ Հաց կուտենք, հետո կգնաք։

Սիմոնյանը նախ քան ժողովի գալը կնոջը պատվիրել էր սեղան պատրաստել։ Բայց քարաշենցիները կտրականապես հրաժարվեցին գնալ նրա մոտ։ Եվ նա մի քանի կոլխոզնիկների հետ մինչև գյուղի դուռը քարաշենցիներին ուղեկցելուց հետո մենակ վերադարձավ տուն։

Զարուհին տանը դեռևս շարունակում էր իր պատրաստությունները։

— Իզուր նեղություն մի քաշի, քարաշենցիները գնացին։

— Գնացի՞ն։ Բոլո՞րն էլ։

— Միայն Սարիբեկյանը մնաց։

— Դե գոնե նրան բերեիր։

Սիմոնյանը լռեց։ Նա մոտեցավ սեղանին, վերցրեց մի կտոր թթու դրած վարունգ, հենց ոտի վրա կանգնած սկսեց ուտել։ Կինը աչքերի տակով հետևում էր ամուսնուն։ Տեսնելով, որ անպատասխան մնաց իր հարցը, Զարուհին ասաց․

— Ինչու չես խոսում։

— Ի՞նչ խոսեմ։

— Ինչո՞ւ Սուրենին չհրավիրեցիր։
— Շա՞տ ես ուզում տեսնել նրան։
— Շատ։
— Դու գնա ինքդ հրավիրիր։
— Բա որ գա՞։
— Ավելի լավ, կնստենք, գինի կխմենք։

Զարուհին զննող հայացքով նայեց ամուսնուն։ Սիմոնյանն այս անգամ էլ վ՛րցրեց մի կտոր պանիր և անտարբերությամբ սկսեց ուտել։

— Սուրեն։
— Ի՞նչ է։
— Դու ինձ բոլորովին չես սիրում...

Ամուսինը շրջվեց և զարմացած նայեց կնոջը։

—Ինչո՞ւ ես այդպես կարծում։
— Չես սիրում և ուրիշ ոչինչ։
— Այդ ինչպե՞ս իմացար հանկարծ։
— Որովհետև չես խանդում։
— Իսկ ո՞ւմ պետք է խանդեմ։
— Սարիբեկյանին։

Սիմոնյանը մեղմ քմծիծաղ տվեց, հացի պատառը ձեռքին մոտեցավ կնոջը, քնքշությամբ ապտակեց այտին։

— Ես ինչո՞ւ պետք է խանդեմ Սարիբեկյանին, խելոք։
— Որովհետև նա ինձ սիրում է։
— Իսկ դու նրան չես սիրում։
— Որտեղի՞ց գիտես։
— Գիտեմ։ Այ, աչքերդ են ասում։
— Ճիշտ չէ. ես նրան սիրում եմ։
— Եվ շատ էլ լավ ես անում։ Նա լավ տղա է, ես էլ եմ սիրում նրան։

Կինը կանգ առավ։ Նա ուշադրությամբ նայեց ամուսնուն և չհասկացավ՝ կատակ էր անում նա, թե լուրջ էր ասում։

— Ինչ է, ծաղրում ես։
— Ամենայն լրջությամբ եմ ասում,— հաստատեց ամու-

սինը,—Սարիբեկյանն անկեղծ տղա է, աշխատասեր։ Եթե նա քեզ սիրում է, դա հանցանք չէ։

Զարուհին լսեց, ուշադրությամբ նայեց ամուսնուն և հանկարծ փարվեց նրան։

— Որքա՜ն լավն ես դու, Ռուբեն,—նրան իր գրկի մեջ առած շշնջաց կինը,—որքան անկեղծ ես և մեծահոգի... Ես միայն քեզ եմ սիրում...

Սիմոնյանն ազատվելով կնոջ գրկից, երկու ձեռքով բարձրացրեց նրա գլուխը, համբուրեց ճակատն ու աչքերը։

— Դու էլ ես լավը, Զարուհի...

Նրանք երկար մնացին գրկախառնված։ Հետո ամուսինը բաց թողեց կնոջը, դարձյալ մոտեցավ սեղանին։

— Եկ միասին գինի խմենք։

— Խմենք,—ոգևորությամբ ասաց կինը։

Սիմոնյանը վերցրեց գրաֆինը, գինի լցրեց, լիքը բաժակը մեկնեց կնոջը։ Զարուհին վերցրեց բաժակը, մի պահ կանգ առավ, նայեց ամուսնուն։ Սիմոնյանը զգաց, որ նա ինչ որ ասել է ուզում։

— Դե, ասա...

— Գիտե՞ս ինչ, Ռուբեն,—էլի մի քիչ մտածելուց հետո, մեծ դժվարությամբ սկսեց կինը,—գնա և Սարիբեկյանին կանչիր այստեղ։

— Ի՞նչ,—կարծես թե լավ չլսելով կնոջ ասածը, հարցրեց Սիմոնյանը։

— Ես ուզում եմ քո ներկայությամբ խոսել նրա հետ։

— Ի՞նչ պետք է խոսես։

— Ինչ որ կլսես։

Սիմոնյանը ցած դրեց ձեռքի բաժակը, տարվեց մտքերով։

— Հարկավոր չի, ոչ մի բան չի հարկավոր խոսել,—հետո վճռականորեն ասաց ամուսինը։

— Ուրեմն չե՞ս ուզում կանչել։

— Չէ, ոչ թե չեմ ուզում կանչել, այլ չեմ ուզում լսել այն, ինչ դու ես ուզում ասել նրան։

— Իսկ դու չգիտես, թե ինչ պետք է խոսեմ։

— Գիտեմ, ներթադրում եմ։

— Զգիտես,—համառեց կինը,—խնդրում եմ, գնա և կանչիր։

— Լավ, որ այդքան ուզում ես, ինքդ գնա կանչիր։ Ես հրավիրեցի, չեկավ։ Դու հրավիրես, գուցե գա։

— Հո չե՞ս նեղանա,

— Ինչե՞ր ես խոսում, ինչո՞ւ պետք է նեղանամ։

Կինը ցած դրեց ձեռքին բռնած բաժակը, մնացքսե շալը գցեց ուսերին, տնից դուրս ելավ։

Սիմոնյանը մի քիչ մենակ նստեց սեղանի մոտ, հետո վեր կացավ, գնաց մյուս սենյակը, մոտեցավ երեխայի մահճակալին, ուղղեց վերմակը, կռացավ, կաթոզին համբուրեց մանկան ճակատը։ Համբուրից երեխան թափահարեց գլուխը, շրջվեց մյուս կողին։ Հայրը սուսիկ-փուսիկ, ոտների ծայրին դուրս ելավ սենյակից, գնաց պատշգամբ, վերցրեց մի աթոռ, մոտեցրեց ճաղաշարքին, նստեց, ծնոտը հենելով չոր տախտակներին։

Աշնանային զով երեկո էր։ Հեռու գետաբերանից գալիս էր մեղմ քամին, խրար տալիս գիսից պատշգամբի ներսը թեքված ծառերի դեղին տերևները։ Տերևները մեղմիկ սվսվում էին ու կարծես թե ասում.

— Ուշշացա՜վ, ուշշացա՜վ...

— Ինչո՞ւ այսքան ուշացավ Զարուհին,—ինքն իրեն, ծնոտը տախտակներին հենած, ասաց Սիմոնյանը։

Գետաբերանից եկող քամին ավելի ուժեղացավ, պատշգամբի վրա թեքված ծառերի բարակ ճյուղիկները կպան իրար։

— Չեկկա՜վ, չեկկա՜վ...

— Չեկավ,—ինքն իրեն կրկնեց Սիմոնյանը և հանկարծ, մտքում, ինքնաբերաբար առկայծեց,—չլինի՞ թե...

Նա իր խսկ մտքից ցնցվեց և չուզեց մտածել շարունակությունը։ Գլուխը բարձրացրեց պատվանդանից, ուղիղ նստեց։

— Չլինի՞ թե կանացի խորամանկություն էր, խաբեց,—

նստած տեղը մտածեց շարունակությունը, որից թվաց, թե մարմնով նախ մի ցուրտ հոսանք անցավ, ապա տաքացավ այդ հոսանքը, սկսեց եռալ ներսում, այրել սիրտը…

— Հիմարություն է,—լսելի ձայնով ասաց նա, խաղաղվեց, գլուխն էլի դրեց թախտակների վրա, քիչ հետո գետաբերանից փչող զով քամու հետ եկավ նինջը, փակեց նրա աչքերը…

Նա աչքերը մեկ էլ բաց արեց Զարուհու ձայնից։

— Ռուբեն, ինչու ես այստեղ քնել։

— Եկա՛ր,—գլուխը բարձրացնելով հարցրեց ամուսինը,— բա ինչո՞ւ այսքան ուշացար։

— Զեկավ։ Նստած խոսում էինք,—կարճ պատասխանեց կինը և ամուսնու թևից բռնելով ներս տարավ։

7.

Մտրուտից Սարիբեկյանը դուրս եկավ վաղ առավոտյան։ Որքան էլ քույրն ու փեսան խնդրեցին սպասել, նախաճաշել, նա չսպասեց։

Երկինքն ամպամած էր։ Թվում էր, թե ուր որ է անձրև պիտի գա։ Սարիբեկյանն արագացրեց քայլերը՝ շուտ տեղ հասնելու, անձրևի տակ չընկնելու համար։ Բայց նա մի քիչ գնալուց հետո փչեց ուժեղ քամի, ամպերը պատռվեցին, տեղ-տեղ պարզվեց երկինքը։ Երբ հասել էր գյուղի ջաղացին, արևն արդեն դուրս էր եկել, գոլորշիանում էր խոտերի վրա նստած ցողը։

Ջաղացի մոտից անցնելիս նա մտածեց ներս գնալ, տեսնել Սաղաթել ապորը, բայց մեկ էլ փոխեց միտքը։

— Նրա մոտ գնացողը շուտ չի ազատվի,—ինքն իրեն ասաց Սարիբեկյանը, քայլերն արագացրեց, որ անցնի, բայց այդ ժամանակ խորը հորանջելով ջաղացից դուրս եկավ ծերունին և իսկույն տեսավ նրան։

— Էդ ի՞նչ է, ախպերացու, էլ չես երևում։

— Աշխատանքի ժամանակ է, Սաղաթել ապեր, գլուխներս խառն է։

— Հա՛, բա էդ որտեղի՞ց ես գալիս։

— Մորուտից։

— Էլի Մորուտի՞ց...

Սարիբեկյանն ակամայից ժպտաց։ Նա հասկացավ ծերունու ակնարկը և մոտեցավ նրան ամեն ինչ պատմելու։

— Մենա՞կ ես։

— Հիմա էլ ջաղացպանը մենակ կլինի։ Մի տես որքան մարդ կա։

Սարիբեկյանը ներս մտավ։ Ջաղացում, իրոք, նստելու տեղ չկար։ Բոլորն էլ կանայք էին։ Ոմանք նստել էին հացահատիկով լի քսակների վրա, ոմանք էլ նստելու տեղ չգտնելով, հենց կանգնել էին ոտի վրա, խոսում էին, վիճում, ոմանք թել էին մանում, գուլպա գործում։ Կային և հորանջողներ։ Ամբողջ գիշերը մնալով այդտեղ, չէին քնել, չէին հանգստացել, խոնջությունից կախել էին իրենց ալրաթաթախ հոնքերը, նիրհել ցորենով լի քսակների վրա։

— Լավ, ինչո՞ւ ես սրանց էսպես տանջում,—կանանց ցույց տալով ասաց Սարիբեկյանը։

— Ես եմ սրանց տանջում։ Սրանք են ինձ տանջում,— անկեղծորեն ըմբոստացավ ծերունին,—և ասա ինչո՞ւ համար. հաց չունե՞ն տանը, ալյուր չունե՞ն։ Ով մտնես տները, երկու տարվա ալյուր կճարվի։ Բայց աչքները ծակ է, չեն կշտանում. վախենում են հարևանն իրենցից շատ ունենա։

— Թող ունենան, Սաղաթել ապեր, բավական է, որքան պակասություն են տեսել, թող աղան ապրեն։

— Թող ապրեն, հը, ես չե՞մ ուզում, թող քուն ու հանգիստ կորցնեն, ամբարները լցնեն։

Սարիբեկյանը էլ նայանց ջաղացում։

— Գնում ե՞ս,—հարցրեց Սաղաթել ապերը։

— Բա ի՞նչ անեմ։

— Ոչինչ, գնա,—ինքն էլ ջաղացից դուրս գալով ասաց ծերունին և ձեռքը մեկնեց նրան,—գնա, բայց էսօր բան չասացիր։

Սարիբեկյանը հասկացավ նրան և չթողեց ավելորդ հարց տալու։

— Վերջացավ, Սաղաթել ապեր։

— Ինչպե՞ս վերջացավ։

Սարիբեկյանը բռնեց նրա թևից, մոտեցրեց առվի վրա կռացած ուռենուն, մեջքը հենեց նրա բնին, պատմեց իր և Զարուհու իրիկվա զրույցը։

Իրիկունը, երբ Զարուհին եկավ նրա մոտ, նա քրոջ և փեսայի հետ ընթրում էր։

— Իսկ ես եկա քեզ մեր տուն հրավիրելու,— բարևելով ասաց Զարուհին։

— Շնորհակալ եմ, ամուսինդ հրավիրեց,— իսկույն ոտքի կանգնելով ասաց Սարիբեկյանը և սեղմեց Զարուհու ձեռքը։

— Իսկ ինչու չեկար։ Վախենում էիր քեզ բռնենք, էլ բաց չթողնենք։

— Եթե այդպես մտածեի, անպայման կգայի։ Բայց գիտեի, որ կհյուրասիրեք և բաց կթողնեք, դրա համար էլ չեկա։

— Ի՞նչ ես ուզում դրանով ասել։

— Պարզ է. ուզում եմ ասել, որ ով հարկավոր է, նա էլ ձեր տանն է։

— Չես սխալվում.

— Ես երբեք չեմ սխալվում։

— Ճիշտ չէ. ես գիտեմ, որ մի հարցում դու սխալվել ես։

Սարիբեկյանը չպատասխանեց։ Նա լռեց և վշտաբեկ նայեց Զարուհուն։

Որքա՜ն սառն ու անտարբեր էր նա։ Մի՞թե միշտ էլ այդպես է եղել, մի՞թե նա — Սարիբեկյանը խաբված է եղել։ Մի՞թե ամեն ինչ Զարուհու կողմից եղել է կատակ ու ծաղր։

Որքան Սարիբեկյանը երկար էր նայում նրան, այնքան ավելի էր զգում այդ սառնությունը, անտարբերությունը, այնքան ավելի հեռու և օտար էր թվում Զարուհին, նույնիսկ խիստ ու զայրացած։

— Չի՞ լինի, որ ասես, թե ինչ հարցում եմ ես սխալվել,— վերջապես հարցրեց Սարիբեկյանը։

— Ինչու՞ չէ, հենց այդ ասելու համար եմ եկել այստեղ։

— Իզուր, միայն այդ ասելու համար կարիք չկար այստեղ գալու։

— Դե լավ, վերջ տվեք կռվին,— միջամտեց Վարդուշի ամուսինը։

— Կռի՞վ, ի՞նչ կռիվ։ Մենք կռվելու ոչինչ չունենք։ Այդպես չէ՞, Սուրեն։

Իր անունը լսելով, Սարիբեկյանը ցնցվեց։ Նա բարձրացրեց գլուխը, նայեց Զարուհուն։ Նա միանգամից փոխվել էր. էլի ժպտալիս նայում էր Սարիբեկյանին և սպասում իր հարցի պատասխանին։

— Որքա՜ն հարազատ է, ջերմ՝ այդ ժպիտը, և որքան օտար ու հեռավոր,— անցավ Սարիբեկյանի մտքով։

— Դու նեղանու՞մ ես։

— Չէ, չեմ նեղանում, զայրանում եմ։

— Ինձ վրա՞։ Ինչո՞ւ, ես քեզ ինչ եմ արել։ Եթե նեղանալու լինի, ես պետք է նեղանամ քեզնից։

— Իսկ դու ինչո՞ւ պետք է նեղանաս ինձնից։

— Ինչո՞ւ... որովհետև քո անմտածված քայլով կարող էիր ինձ անվանարկել, գժտություն գցել մեր ընտանիքում։

— Էլի՞ ինչ։

— Կարծում ես դա քի՞չ է։ Լավ է, որ Ռուբենը ողջամիտ մարդ է, նշանակություն չտվեց խոսակցություններին։ Թե չէ, ի՞նչ կստացվեր...

— Ի՞նչ կստացվեր,— տխրահեծ բացականչեց Սարիբեկյանը և լռեց։ Ի՞նչ կստացվեր։ Ինքը Սուրենն էլ չգիտեր, թե ինչ կստացվեր։ Նա այդ մասին մի անգամ չէ, որ մտածել էր, բայց երբեք հարցի պատասխանը չէր գտել։ Ամեն անգամ, երբ փորձում էր մտածել իր բռնած գործի հետևանքների մասին, միտքը կաշկանդվում էր, աչքերը մթագնում էին, չէր կարողանում տեսնել։ Ահա այդ պահին էլ նա կուզեր ասել, թե ինչ կստացվեր, կուզեր պատճառա-

թանել իր հետապնդումները, բայց դարձյալ ոչինչ չէր գտնում ասելու։

— Լավ, հիմա դու ինձ մեղադրելու համա՞ր ես եկել այստեղ,— ավելի հարմար ոչինչ չգտնելով ասաց նա։

— Ոչ, քեզ մեղադրելու ոչ մի միտք չունեմ,— հանգիստ պատասխանեց Զարուհին,— միայն բացատրվելու համար եմ եկել։

— Եթե ուրիշ մխիթարիչ բան չունեիր ասելու, էլ ինչո՞ւ եկար։

— Նայած թե ինչպես կհասկանաս ինձ։ Ես կարծում եմ, որ մխիթարիչ շատ բան կարող եմ ասել քեզ։

Սարիբեկյանը թեթևակի շրջվեց. հայացքը հառեց պատից կախած մեծ լուսանկարին։ Զարուհին զգաց, որ նա ուզում է լսել իրեն և ձեռքը մտերմաբար դնելով նրա ուսին, ասաց.

— Սուրեն ջան, դու ինձ չես սիրել և չես էլ սիրում։ Սպասիր, մի հակաճառիր։ Այն, ինչ եղել է քեզնում դեպի ինձ, դա սեր չի։ Իսկական սերն այն է, երբ մարդ մոռանում է իրեն, մտածում միայն նրա մասին, ամեն ինչ զոհաբերում նրան, ում սիրում է։ Իսկ դու իմ մասին բոլորովին չէիր մտածում։ Դու միայն քո մասին էիր մտածում, ուզում էիր, որ լինի այն, ինչ քեզ համար հաճելի է։ Դա սեր չէ, դա եսասիրություն է։

— Հետո։

— Հետո այն, որ եթե դու ինձ խորը, անկեղծորեն սիրելու լինեիր, մի անգամ քեզ հարց կտայիր. ինչ կմտածեն գյուղում նրա մասին. չէ՞ն ասի, թե որքան ապերախտ կին է նա. թողեց ամուսնուն, որին հավատարիմ լինելու խոսք էր տվել, թողեց տուն ու տեղ, թողեց ..

— Հետո, հետո,— անհամբերությամբ բացականչեց Սարիբեկյանը։

— Մի շտապիր, ես բոլորը կասեմ։ Հետո այն, որ բոլորն էլ կպախարակեին ինձ, ոչ ոք չէր ուզի երեսիս նայել, հետս խոսել։ Թուցե այս բոլորը քեզ համար ոչ մի նշանա-

կություն չունեն, գուցե կասես, որ կարիք չկա անձնական հարցերը լուծելիս ուրիշի կարծիքով առաջնորդվել։

— Իմ փոխարեն դու մի խոսիր, քո խոսքն ասա։

— Ես իմ խոսքն ասացի։ Մի՞թե ճիշտ չեմ ասում։

— Ես ասելիք չունեմ։

— Շնորհակալ եմ. կնշանակի համաձայն ես ինձ հետ։ Այդպես չէ։

Սարիբեկյանը ոչինչ չպատասխանեց։ Զարուհին զգում էր, որ նա վրդովված է, խոցված, կարող է հանկարծ պոռթկալ, գուցե և վիրավորական խոսքեր ասել, դրա համար էլ շտապեց կանխել նրան.

— Ես, իհարկե, քեզ չեմ մեղադրում, Սուրեն ջան, դու լավ տղա ես և լավ ընկեր։ Այդպիսի ընկերներ էլ մենք կմնանք շարունակ։ Միայն խնդրում եմ, հասկացիր ինձ, հաշվի առ իմ պատիվը, իմ ամուսնու պատիվը։ Չէ՞ որ նա էլ տղամարդ է, ականջին հասնող խոսակցությունները կարող են նրան էլ վրդովել, անտեղի դժգոհության տեղիք տալ...

Բույրը լուռ ոտքի ելավ, սենյակից դուրս եկավ։ Ամուսինը տեսնելով նրա աչքերի արտասուքները, ետևից կանչեց.

— Վարդուշ, Վարդուշ,— և չսպասելով պատասխանի, ինքն էլ գնաց նրա ետևից։

— Արդեն ուշ է, ես էլ գնամ,— ոտքի կանգնելով ասաց Զարուհին։

Սուրենը ոչինչ չասաց։

— Նեղանո՞ւմ ես ինձանից։

— Չէ, ինչո՞ւ պետք է նեղանամ քեզնից։ Ես միայն ինձնից եմ նեղանում, իմ հիմար բնավորությունից...

— Եվ լավ ես արել, շատ լավ,— Սարիբեկյանին ուշադրությամբ լսելուց հետո ասաց Ջաղացպանը,— բնավորությունդ, ախպերացու, շատ էլ գովելի չի, ես քեզ էն գլխից եմ ասել դա։

Սաղաթել ապերը գուցե էլի ինչ-որ ասեր, եթե այդ

ժամանակ չտեսներ, որ մի փոքրիկ կապույտ ձեռքին մոտենում է իր աղջիկը — Նաթելը։

Նաթելը նախաճաշ էր բերում հոր համար։ Ամեն անգամ, երբ հայրը երեկոները չէր գնում տուն, տրակտորները լույսը բացվելուն պես, Նաթելն էր նրա համար ուտելիք բերում։ Որքան էլ հայրը բարկանում էր, ստիպում, որ նա չգա ջաղաց, բայց աղջիկն այնուամենայնիվ իր ուզածն էր անում։

— Մի կտոր հացի համար գործդ թողնում ես, գալիս էստեղ, — ասում էր հայրը, — բա դա անխելք բան է։

Սակայն Նաթելը գիտեր, որ հորը մտահոգողն աղջկա աշխատանքները չեն։ Նա ուղղակի չէր ուզում, որ աղջիկը նեղություն կրի, ոտով գա ջաղացը։

Հոգատար և սիրող հայր էր Սաղաթել ապերը։ Նա վաղուց ի վեր մոռացած իրեն, ապրում էր միայն աղջկա համար։ Նա կարծում էր, որ առանց Նաթելի ինքը մեկ օր չի կարող ապրել։ Եվ իրոք, եթե մեկ օր չէր տեսնում Նաթելին, այդ օրը ծերունին բունը կորցրած թռչունի նման դադար չէր առնում։

Երեք տարի առաջ գյուղական տասնամյա դպրոցն ավարտելուց հետո Նաթելը գնացել էր շրջանային կենտրոնի ֆելդշերական կուրսերում սովորելու։ Այդ ժամանակ չէր լինի մի շաբաթ, որ ծերունին չգնար այնտեղ, չտեսներ աղջկան։

Ֆելդշերական կուրսերն ավարտելուց հետո որոշել էին Նաթելին ուղարկել իրենց գյուղում աշխատելու։

Եվ ահա երկրորդ տարին էր, որ նա աշխատում էր Բարաշենում։ Համեստ էր ու խելոք։ Ոչ ոք չէր դժգոհում նրանից։ Ամեն տեսակի հիվանդության դեպքում գյուղում նրա օգնությանն էին դիմում։ Այդտեղ և՛ վիրաբույժ էր նա, և՛ ներքին հիվանդությունների բժիշկ, և՛ ատամնաբույժ։ Գիտեր, որ շատ բան է պակասում իրեն այդ աշխատանքների համար։ Եվ այդ պակասությունները լրացնում էր գրքերի օգնությամբ։ [illegible]րան աշխատանքից ազատ ժամերին կարելի էր տեսնել միայն գրքերի մեջ պրպտումներ կա-

տարելիս: Քարաշենում գրքերն էին միայն նրա օգնականները և ուսուցիչները:

— Էդ ո՞նց է, տուն գալու, հաց ուտելու ժամանակ չես ունենում, իսկ սրա-նրա հետ կանգնում, ժամերով զրույց ես անում,— մոտենալով հորը, ասաց Եսթերը:

Եթե Սարիբեկյանն այդտեղ չլիներ, ծերունին դարձյալ պետք է կռվեր աղջկա հետ, կշտամբեր, թե ինչու է եկել նա: Բայց այս անգամ ասաց:

— Զրույց կա, որ ուտելուց էլ է լավ, քնելուց էլ, ախպերացու, դու ցույց տուր, տեսնեմ բերածդ ինչ է:

— Քո սիրած բանը:

— Էլի տապակած լոբի՞: Ախպեր, կրակ չնկնինք, որ մի անգամ գովեցինք քո տապակած լոբին: Փորումս հո բոստան չես ցանելու:

— Բա ի՞նչ, կուզեիր, որ տապակած ճո՞ւտ բերեի:

— Ճուտը վատ չէր լինի, Սուրենի հետ միասին կուտեինք:

— Եթե իմանայի, որ Սուրենն այստեղ է...

Եսթերը խոսքը չավարտած, կանգ առավ: Սարիբեկյանը նայեց նրան և աղջիկը շփոթվեց: Նա անմիջապես զգաց, որ անզգույշ արտահայտվեց, մատնեց իրեն, ամաչեց և արևածագին ծաղկի վրա նստած ցողի պես քրտինքի վճիտ կաթիլները փայլփլեցին նրա ճակատին:

— Լավ, ինչ բերել ես, այն էլ կուտենք,— փորձառու աչքով նկատելով աղջկա շփոթմունքը, ասաց Սաղաթել ապերը, աղջկա ձեռքից վերցրեց կապոցը, գնաց դեպի ջաղացը:

Եսթերն ու Սարիբեկյանը մնացին մենակ:

Ոչ Եսթերն էր նայում Սուրենին, ոչ էլ Սուրենը՝ նրան: Երկուսն էլ գլխահակ, կարծես թե ինչ-որ կիսատ մնացած մի զրույցի վերսկսելուն էին սպասում: Բայց զրույցը չէր վերսկսվում և շարունակվում էր ճնշող լռությունը: Այդ լռությունը խանգարում էին միայն ջաղացից լսվող չախչախի անհամաչափ չխկչխկոցները, առվի վճիտ ջրերի կար-

կանչյունը, մեկ էլ ճղնատարած ուռենիների մեղմիկ սոսափյունը։ Լավ է, որ դա էլ լավում էր, թե չէ անհանգիստ ապրումներից կարող էր Եսթերի շունչը կտրել։ Ի՞նչ կասեին մարդիկ, ինչո՞ւ էին կանգնել, ի՞նչ էին խոսում։ Իսկ նա էլ—Սուրենը, ինչո՞ւ չէր խոսում, ինչո՞ւ էր լռում։ Այ, կարծես թե նա ուզում է ինչ-որ ասել. շրթունքները շարժվում են, բայց ինչո՞ւ չի խոսում, ինչո՞ւ է ձգձգում։ Ամաչո՞ւմ է։ Բայց ինչո՞ւ է ամաչում. չէ՞ որ Եսթերն՝ ինքն է ուզում, որ նա խոսի, ասի, ինչ կա սրտում։ Նա չի նեղանա, ինչ էլ ասի Սուրենը, միայն թե շուտ ասի, չտանջի իրեն այդպես, թե չէ հենց հիմա մեկն ու մեկը դուրս կգա ջաղացից, նա էլ չի կարող խոսել, ասելիքը կհետաձգի և մեկ էլ կլինի՞, արդյոք, հարմար առիթ...

Իսկ նա լռում է, նրա փոխարեն խոսում են միայն սըվսվուն ուռենիները, մեկ էլ՝ առուն...

— Դե գնանք էլի,—վերջապես շշնջաց Եսթերը, տեսնելով, որ Սարիբեկյանը չի ուզում խոսել։

— Ո՞ւր գնանք։

— Չե՞ս ուզում հայրիկի հետ նախաճաշել։

Սարիբեկյանը չպատասխանեց։ Մտքերը նրան հանգիստ չէին տալիս։ Երեկ երեկոյան հրաժեշտ տալիս Զարուհին ասել էր.

— Մի հուսահատվիր, մի լավ աղջիկ կգտնես, հետը կամուսնանաս և կմոռանաս ինձ։

— Իսկ որտե՞ղ կգտնեմ քեզ նման լավ աղջիկ։

— Հենց ձեր գյուղում։

— Մեր գյուղում կա՞ այդպիսին։

— Կա, լավ նայիր, կտեսնես։

— Նա կսիրի՞ ինձ։

— Կսիրի։

— Դու այդ որտեղի՞ց գիտես։

— Գիտեմ, ինքն է ասել...

Երեկոյան Սարիբեկյանն այդ բոլորը կատակի տեղ ընդունեց։ Իսկ այժմ...

«Ինքն է ասել»,—մտքում կրկնեց նա և սկսեց ուշադրությամբ նայել Նաթելլին։

Իրոք, գուցե Նաթելլն այդ մասին խոսել է Զարուհու հետ։ Չէ՞ որ նրանք մտերիմ աղջիկներ են և հաճախ հանդիպում են իրար։ Եվ որքան էլ նման են իրար։ Ահա կարծես թե հենց ինքը Զարուհին լինի Սարիբեկյանի հանդեպ կանգնած, նույնքան գեղեցիկ, նույնքան կրակոտ ու վառվռուն աչքերով, բայց ավելի ջահել, ինչպես որ Զարուհին էր դպրոցում սովորելիս։ Բայց Զարուհին չարաճճի էր, համարձակ։ Իսկ Նաթելլն ամոթխած է, մեղմ, ավելի զուսպ…

— Նաթել, վերջերս դու Զարուհուն տեսե՞լ ես…

Նաթելը հանկարծակիի եկավ։ Ինչի մասին էր մտածում ինքը և ինչ հարց ավեց նրան։ Նա բարձրացրեց գլուխը, խիստ նայեց Սարիբեկյանին, բայց ոչինչ չասաց։ Նա գիտեր Զարուհու և նրա փոխհարաբերությունների մասին, գիտեր նաև նրանց շուրջը եղած բոլոր խոսակցությունները։ Սակայն կարևորություն չէր տալիս այդ խոսակցություններին, կարծում էր, թե ամեն ինչ արդեն վերջացել է։ Բայց մի՞թե հիմա էլ Սուրենը նրա մասին էր մտածում։

Սարիբեկյանն զգաց, որ Նաթելն այդպիսի հարցի չէր սպասում, զգաց, որ իր հարցը տհաճ տպավորություն թողեց Նաթելի վրա։

— Ինչ է, զարմանում ես, որ այդպիսի հարց եմ տալիս քեզ,—իր հարցի տպավորությունը մեղմելու համար ասաց Սարիբեկյանը։

— Չեմ զարմանում. բայց ինչու ես հարցնում։

— Ուզում եմ իմանալ, թե դուք ինչ եք խոսել իմ մասին։

— Քո մասին։ Քո մասին մենք ոչինչ էլ չենք խոսել։

— Չասաց։

— Իսկ ի՞նչ պետք է խոսեինք։

— Ուզում եմ, որ ինքդ ասես։

— Ես ասելիք չունեմ։

Սարիբեկյանն էլ նոր հարց չտվեց։ Մի տեսակ հուսախաբություն էր դա, թե՞ թախիծ, պատեց նրան, նա մռայլվեց, գլուխը կախեց, աչքերը հառեց առվի կչկչան ջրերին, որոնք վերցրին, տարան իրենց հետ նրա մտքերը՝ ով գիտե որտեղ ցրելու համար...

Նաթերը մի քիչ էլ լուռ նայեց Սարիբեկյանին, ապա կտրուկ ետ շրջվեց, գնաց ջաղացը, նրան թողնելով մենակ, ուռենու տակ մտամոլոր կանգնած։

8.

Հաքավից փչող ցուրտ քամին ուժգնորեն խփեց Միսակ Դանիելյանի նորաշեն տան պատուհանին, բաց արեց, իր հետ այգիներից բերած դեղին տերևները միանգամից լցրեց սենյակը։ Կոլխոզի նախագահը վեր կացավ, ծածկեց լուսամուտը, պիջակը գցեց ուսերին, տնից դուրս եկավ։

Դրսում, քամու հետ եկած տերևներն անհամար ճնճղուկների պես իրար խառնված՝ ճախրում էին օդի մեջ, պտույտ-պտույտ գալիս, գնում թափվում բակերը, ցամաքած առուները, զարկվում պատերին, կուտակվում զարուփոսերում։

Ակումբի մոտից անցնելիս Դանիելյանը նկատեց ճանապարհի եզրին բուսած տերևաթափ վարդի թփից կախված լրագրի մի կտոր, որի վրա պատկերված էր երիտասարդ բանվորների մի խումբ։ Նախագահը կռացավ, ուզեց վերցնել լրագրի կտորը, նայել լուսանկարին, բայց քամին նրա ձեռքից խլեց թուղթը, գալարապտույտ վեր բարձրացրեց, ծածանեց օդի մեջ։ Դանիելյանը կռացած դիրքից ուղղվելիս պիջակի թեքը ետ ծալվեց, կախվեց ուսից, և քամու ուժգին հոսանքը թևատակից անցնելով հասավ մարմնին, սարսռեցրեց։

— Սկսվեց,— հավանաբար ցուրտը նկատի ունենալով ինքն իրեն ասաց նախագահը և քայլերն ուղղեց դեպի կոլխոզի գրասենյակը։

Այնտեղ, գրասենյակի առաջ, ձեռքերը կանթած կանգնել էր գյուղսովետի քարտուղար Սիրանուշ Բալունցը—կոլխոզի

հաշվետարի կինը։ Նա նախագահին տեսնելուն պես ձեռքը տարավ դեպի քամուց գզգզված մազերը, շտկեց, մի քանի քայլ առաջ եկավ և մինչև բերանը բաց կաներ, Դանիելյանը կանխեց նրան.

— Աղբը է պակաս, թե մազը։

— Աղս էլ է պակաս, մազս էլ,—համարձակ պատասխանեց կինն ու ավելացրեց,—երկու խնդիրք ունեմ։

— Առաջինը։

— Առաջինն այն է, որ Գեղեճնի պրոտեզը կոտրվել է։

— Ի՞նչն է կոտրվել,—նրան լավ չլսելով վախեցած հարցրեց Դանիելյանը։

— Էն փայտի ոտն էլի։

— Հա, պրոտեզը։ Տհաճ բան է կատարվել։ Հիմա ի՞նչ պետք է անենք։

— Պետք է թույլ տաք, որ մի քանի օրով գնա Բաքու։

— Չէ՞ր կարելի, որ առանց պրոտեզը կոտրելու գնար Բաքու։

— Էն խաչը վկա՝ կոտրվել է,—անմիջապես հասկանալով նախագահի ակնարկը, վրա բերեց Սիրանուշը,—չես հավատում. գնամ բերեմ։

— Հավատում եմ, մի բեր։ Երկրորդ խնդիրդ ասա։

— Երկրորդ խնդիրս էլ այն է, որ Գեղեճնը խնդրում է մի երկու շիշ օղի բաց թողնեք։

— Դա ինչի՞ համար է։

— Ուզում է եղբոր համար տանել։

— Իսկ ինչու՞ չի ինքն ասում այդ մասին։

— Ինքն ամաչում է։

— Բա ինչու՞ չես դու ամաչում։

— Որովհետև ես եմ ուզում նվեր ուղարկել տեգորս համար։

— Բա ասում ես Գեղեճնն է խնդրում։

— Դէ մեկ չի՞, Գեղեճնը՝ կամ ես։

— Մեկ չի, իհարկե մեկ չի։ Եթե Գեղեճնը խնդրեր,

կարելի էր տալ, իսկ քեզ... Մի ասա տեսնեմ, երեկ ինչու ես վիրավորել Սրբուհուն։

Սիրանուշը մեղապարտի պես գլուխը կախեց, խոսք չգտավ ասելու։

Սրբուհու երկու տղան անհետ կորել էին պատերազմի առաջին իսկ օրերից։ Պատերազմը վերջացել էր, շատերն արդեն տուն էին վերադարձել, բայց մայրը հույսը դեռ չէր կտրում զավակներից։ Շարունակ աղոթք էր անում, սուրբ գնում, մոմ վառում, մատաղ անում, հուսալով, որ այդ բոլորը կփրկեն նրա զավակներին, օտար երկրներում կխնամեն նրանց ու կվերադարձնեն իրեն։ Մեկ օր առաջ նա դարձյալ մատաղ էր արել, մի կտոր խաշած միս լավաշի մեջ փաթաթած բերել Սիրանուշին, բայց նա մերժել էր մատաղը, չէր վերցրել։ Պառավը խիստ վիրավորվել էր, դուրս գնացել նրա մոտից, լաց եղել, համարելով, որ անընդունելի եղավ իր մատաղը։ Լուրը հասել էր նաև Սիսակ Դանիելյանին։

— Հը, ինչու չես խոսում, ասա տեսնեմ ինչու ես վիրավորել պառավին,— իր հարցը կրկնեց Դանիելյանը, տեսնելով, որ Սիրանուշը շարունակում է լուռ մնալ։

— Բա ի՞նչ անեի, ես կոմունիստ եղողս մատաղ ընդունեի, էն էլ գյուղսովետի գրասենյակում։

— Ի՞նչ անենք, կոմունիստ լինելդ ձեռքիցդ կխլեի՞ն։

— Չեին խլի։ Բայց ես մատաղի-բանի չեմ հավատում։

— Մի հավատա. քեզ ո՞վ է ասում, որ հավատաս։ Բայց նա պառավ կին է, հավատում է։ Երկու առյուծի պես տղա է կորցրել. սիրտը մորմոքում է...

— Իմ սիրտն էլ է մորմոքում, բայց դրա համար ես իմ հավատը հո չպիտի փոխեմ։

— Էհ, դու ոչինչ չես հասկանում։ Գնա, օղլի-բան չկա,— չգիտես լո՞ւրջ, թե կատակով ասաց Դանիելյանը և ուզեց հեռանալ, բայց Սիրանուշը բռնեց նրա թևից։

— Լավ, մյուս անգամ էլ չեմ անի։

— Մյուս անգամ Սրբուհին սկի չի էլ գա քեզ մոտ։

— Իսկ օղլի՞ն,— իսկույն հարցը փոխեց Սիրանուշը։

— Հիմա գնա Սարիբեկյանին ասա, թող շուտով գա ճաշեղ, օղու մասին հետո կխոսենք։

— Դե չմոռանաք,—ասաց Սիրանուշն ու հեռացավ։

Դանիելյանը հենվեց պատշգամբի ճաղաշարքին, գլուխը կախեց։ Հեռվից նայողին կթվար, թե նա կամ հիվանդ է, կամ սաստիկ հոգնած։ Նրա վարդի նման կարմիր գույնից ոչինչ չէր մնացել. գունատվել էր, աչքերի տակերն ուռել էին, դեմքը կնճռոտել էր։ Վերջին երկու ամսվա լարված աշխատանքները նրան սաստիկ հոգնեցրել էին։ Ամեն օր վաղ արշալույսից մինչև ուշ երեկո լինում էր դաշտերում, մի հողամասից ձիով կամ ոտով գնում մի այլ հողամաս, լինում հնձվորների մոտ, անասնապահների մոտ, ստուգում աշխատանքները և խիստ զայրանում էր, վրդովվում ու բորբոքվում, տեսնելով, որ գործն այնպես չի գնում, ինչպես ինքն էր ցանկանում։

Դանիելյանը բնավորությամբ հանգիստ էր ու խաղաղ։ Բայց վերջերս անսպասելիորեն դառել էր դյուրագրգիռ, անհանգիստ։ Առաջ կոլխոզնիկների աշխատանքներում եղած առանձին մանր թերություններն աշխատում էր անուշադրության մատնել, չէր ուզում ամեն առիթով կշտամբել մարդկանց, նկատողություն անել, վախենալով, որ նրանք կընտելանան նկատողություններին, հետո լուրջ դիտողությունները էլ սովորական կշտամբանք կհամարեն։ Իսկ այժմ ոչինչ չէր կարողանում անուշադրության մատնել, անմիջապես վեճի էր բռնվում, զայրանում, կռվում, տուն գալուց հետո էլ զղջում էր, կշտամբում իրեն, այդքան շուտ բռնկվելու համար։

Առաջ նա երբեք թույլ չէր տալիս, որ ամեն մանր հարցի առթիվ ժողով հրավիրեն, երկար ճառերով ձգձգեն ժողովները։ Այժմ ինքն էր սկսել ամեն երեկո ժողովներ հրավիրել։ Աշխատանքներից հետո հավաքում էր կոլխոզի վարչության անդամներին, քննության դնում որևէ հարց և հարկադրում բոլորին, որ անպայման խոսեն, քննվող հարցի նկատմամբ իրենց կարծիքը հայտնեն։ Եվ վայ է, եթե մեկն ու մեկը

հրաժարվում էր խոսելուց։ Նա անմիջապես ոտքի էր կանգնում, զայրագին բացականչում.

— Բավական է, որքան հոսանքը տարավ մեզ։ Հիմա էլ ձեր կարծիքն ասեք, տեսնենք ինչ եք մտածում։ Եթե խոսելու և աշխատելու ցանկություն չունեք, գնանք մորուտցիներին խնդրենք, որ մեր հոգսն էլ քաշեն...

Վերջերս Մորուտը նրան հանգիստ չէր տալիս։ Մանավանդ այնտեղ կայաց․ծ ժողովից հետո երբեք չէր մոռանում իրենց պարտությունը, վերադարձը՝ գիշերով, երբ կոլխոզի վարչության անդամները քայլում էին դագաղի ետևից գնացող սգվորների նման տխուր ու գլխահակ և ոչ մեկի լեզուն չէր շարժվում մի խոսք ասելու...

... Վառամ սարի գագաթին, խավարի մեջ ճայթեց կայծակն ու շեշտակի զարկեց սարալանջի վրա փռված անտառին։ Կայծակի լույսը հասավ գյուղին, փայլատակեց և էլի իսկույն անհետացավ։ Կոլխոզի վարչության գրասենյակի դուռը ճռռաց և մեկը լուռ դուրս եկավ այնտեղից։

— Ո՞վ է,—գլուխը ճաղաշարքի վրայից բարձրացնելով հարցրեց Դանիելյանը։

— Ես եմ։

Սարիբեկյանն էր։ Քիչ առաջ նա կոլխոզի վարչության գրասենյակն էր եկել նախագահի հետ խոսելու, բայց նրան չգտնելով այնտեղ, նստել էր դիվանի վրա և ննջել։ Կայծակի ճայթյունից արթնանալով՝ գրասենյակից դուրս եկավ պատշգամբ և այնտեղ հանդիպեց Դանիելյանին։

— Իսկ ես Սիրանուշին ուղարկեցի քո ետևից,—ասաց Դանիելյանը, ներս գնաց, գրպանից հանեց լուցկին, վառեց ճրագը։ Նա դեռ սեղանի մոտ չնստած, հևասպառ մտավ Սիրանուշը։

— Ընկեր Դանիելյան, գնացի տեսա Սուրենը տան չի,— կարկուտի նման վրա տվեց նա և տեսնելով, որ Սարիբեկյանը նստած է լուսամուտի վրա, իսկույն ավելացրեց,—լավ, հիմա ի՞նչ եք ասում ինձ։

— Գնա, էգուց կխոսենք։

— Համաձայն եք։

— Ասացի էգուց կխոսենք։

Սիրանուշի ոտները չէին շարժվում։ Նա մի քանի րոպե լուռ սպասեց, բայց զգալով, որ նախագահից էլ նոր խոսք չի լսելու, դուրս գնաց։

— Ցրտերն ընկան,— Սիրանուշը գնալուց հետո ասաց Դանիելյանը։

— Դրա համար եմ եկել։ Երեկ մորուտցիներն իրենց քոչը փոխադրեցին։

— Հարկավոր է այս գիշեր պատրաստել սայլերը։ Վաղ առավոտյան դուք էլ գնացեք փոխադրելու։

Սարիբեկյանը ոչինչ չասաց։ Նա նստած տեղից վեր կացավ, երեսն ընդհուպ մոտեցրեց լուսամուտի ապակիներին, խավարի մեջ նայելով, կարծես թե միայն իր համար, կամաց շշնջաց.

— Ասելու են մեր օրինակին են հետևում։

Դանիելյանը չարձագանքեց։

Առաջներում, երբ նրա մոտ խոսում էին նախանձի մասին, նա լսում էր անուշադրությամբ և համարում դա իր սրտին միանգամայն խորթ և օտար զգացում։ Այժմ նա կարծես թե փոխվել էր էապես։ Մորուտի մասին խոսք լինելիս չէր կարողանում լսել անտարբերությամբ, առանց հուզվելու։ Նա զգում էր, որ արդեն իր սրտում էլ է սկսում բույն դնել նախանձը։

— Դե հիմա ինչ ուզում են, թող ասեն,— ոտքի կանգնելով ասաց Դանիելյանը, ձեռքերը շալվարի գրպանում դրած սկսեց շրջել գրասենյակում և ապա բավականին ուշ ավելացրեց,— մենք մեր անասունները թողնենք սարում, ցրտի ու անձրևների տակ, որպեսզի ուրիշները չասեն, թե հետևում ենք մորուտցիների օրինակի՞ն։

Սարիբեկյանը չհակաճառեց։ Նա համաձայն էր նախագահի հետ։ Չորս օր առաջ ինքն էր ասել, որ ցրտերն ընկնում են, հարկավոր է սարից քոչել։ Նա միաժամանակ ասել էր, որ չպետք է բավարարվել եղած կերով։ Իրենց

հարած խոտը կարող էր հազիվ բավականացնել մինչև գարուն։ Մինչ դեռ նա ուզում էր, որ կերը շատ լինի, հյութալի, սննդարար, որ անասունները գարնանամուտին առատ սնվեն։ Այլապես կնիհարեին կովերը, դա կանդրադառնար նրանց կաթնատվության վրա, վտիտ կլինեին հորթերը։ Նա պահանջում էր, որ ինչ գնով էլ ուզում է լինի կրկնապատկել սիլոսը, մի քանի տոննա կտավհատի քուսպ ձեռք բերել հատկապես լծկանների համար։ Այդտեղ նա կրկնեց իր առաջարկությունները և ավելացրեց.

— Հարկավոր է մտածել նաև ջրի մասին։

Քարաշենի ձմեռային ֆերմաներից ջուրը շատ հեռու էր գտնվում։ Անասունները ջրելու համար հարկավոր էր լինում նրանց քարքարոտ ճանապարհներով քշել մի քանի կիլոմետր, տանել մինչև գետը։ Իսկ գետը ձմռան ցրտերին պատում էր սառցե հաստ շերտերով, ջուրը չէր երևում։ Որպեսզի անասունները ջուր խմեին, պետք է ջարդվեր սառույցը, տեղ բաց արվեր. Մի փոքրիկ տեղ բաց արվելուն պես անասունները հրում էին իրար, խանգարում, և նրանցից շատերը հաճախ ծարավ էին վերադառնում գոմերը։

Քարաշենցիներն իրենց ֆերմայի անասունները ձմռանն օրական միայն երկու անգամ էին ջուր տանում — առավոտյան և կեսօրից հետո։ Մի անգամ վարչության նիստում հովիվներից մեկն առաջարկեց անասունները ջրել օրական երեք անգամ, որպեսզի նրանք ախորժակով ուտեն, չնիհարեն։ Բոլորն էլ գիտեին, որ հովիվը ճիշտ ու խելացի բան է ասում։ Բայց հրաժարվեցին նրա առաջարկությունն ընդունելուց, որովհետև դա շատ ժամանակ կխլեր, անասուններն օրվա կեսից ավելին միայն ջրի ճանապարհին կգտնվեին։

Այժմ, Մորուտից վերադառնալուց հետո, Սարիբեկյանի միտքը շարունակ զբաղեցնում էր ջրի հարցը։

— Ե՛վ ջրի և կերի հարցը շատ կարճ ժամանակում և հիմնովին չլուծենք, մենք ոչ մորուտցիներին կարող ենք հասնել, ոչ էլ ահա սրան,— այդ ասելով Սարիբեկյանը ծոցագրպանից դուրս բերեց մի թուղթ, դրեց սեղանի վրա։

Թղթի վրա սև մատիտով գրած թվանշաններն իրար շփվելուց կիսով չափ ջնջվել էին, խառնվել իրար։ Նախագահը վերցրեց Սարիբեկյանի մեկնած թուղթը, աչքի անցկացրեց թվանշանները։

Այնտեղ գրված էր Ս. Ա. Հ.—5000 կգ. կամ 230 կգ.
Լ. Շ.—4500 կգ. կամ 205 կգ.
Ա. Կ. Դ. Շ.—3500 կգ. կամ 160 կգ.
Ս. Ա. Մ.—2500 կգ. կամ 114 կգ.

Սարիբեկյանի գրածին անտեղյակ մարդը կկարծեր, թե գործ ունի ինչ-որ մի խրթին հանելուկի հետ, որը լուծելու համար և՛ ժամանակ է պետք, և՛ հանելուկներ լուծելու հմտություն։ Սակայն Դանիելյանի համար դա ոչ հանելուկ էր, ոչ էլ գաղտնիք։ Նա անգիր գիտեր այդ թվերը։ Անասնաբուծության զարգացման և մթերատվության բարձրացման համար կոլխոզնիկներին և սովխոզների աշխատողներին պարգևատրելու մասին Սովետական Միության Գերագույն Սովետի հրամանագիրը կարդալուն պես ինքը— Դանիելյանն էլ էր իր ծոցագրպանում արտագրել այդ թվանշանները, բայց ոչ այնքան հակիրճ, ինչպես Սարիբեկյանը։ Նրա մոտ նույն այդ թվերն արտահայտվել էին այսպես.

Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի կոչում է շնորհվում նրան, ով տարեկան մեկ կովից միջին հաշվով ստանում է 5000 կիլոգրամ կաթ կամ 230 կիլոգրամ յուղ։ Լենինի շքանշանով պարգևատրվում է, նա ով տարեկան մի կովից միջին հաշվով ստանում է 4500 կիլոգրամ կաթ կամ 205 կիլոգրամ յուղ։ Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով պարգևատրվում է նա, ով տարեկան մի կովից միջին հաշվով ստանում է 3500 կիլոգրամ կաթ կամ 160 կիլոգրամ յուղ։ «Աշխատանքային արիության համար» մեդալով պարգևատրվում է նա, ով տարեկան մեկ կովից միջին հաշվով ստանում է 2500 կիլոգրամ կաթ կամ 114 կիլոգրամ յուղ։

Դանիելյանի համար որքան էլ ծանոթ էին այդ թվանշանները, բայց այնուամենայնիվ նա երկար ժամանակ հայացքը չէր հեռացնում նրանցից։ Նրանք, սև մատիտով

գրած այդ թվանշանները, կարծես թե ինչ-որ մոգական ուժով ձգում էին Դանիելյանին, հրապուրում, չէին թող-նում տեղից շարժվելու։

— Ես կուզենայի, որ Ջրի հարցը մոտ օրերս դրվի վար-չության նիստում,— տեսնելով, որ սպասածից ավելի է լռում նախագահը, ասաց Սարիբեկյանը։

— Ի՞նչ ես կարծում, մրուտցիները կարո՞ղ են...,— գլուխը բարձրացնելով սկսեց Դանիելյանը, բայց չավարտեց խոսքը։ Սարիբեկյանն զգաց, որ նախագահի միտքն այլ խնդրով է տարված, չի լսել իր հարցը։

— Ինձ հիմա մրուտցիները չեն հետաքրքրում։ Մեզ ի՞նչ կարող են անել նրանք։ Դու մեր մասին մտածիր։

— Ինչո՞ւ պետք է մտածեմ մեր մասին։

Սարիբեկյանը հանկարծ փռթկացրեց և սկսեց բարձրա-ձայն ծիծաղել։ Հազվագյուտ դեպքում էր նա այդպես բարձ-րաձայն, լեզաթափ ծիծաղում։ Ուրիշները որևէ սրամտու-թյան վրա քահ-քահ ծիծաղելիս, նա միայն թեթևակի ժպտում էր։ Իսկ այժմ Դանիելյանի ցրված հարցերից չէր կարողանում զսպել իրեն։

— Ինչո՞ւ ես ծիծաղում,— զարմացած դիմեց նրան Դանիելյանը։

— Բա ի՞նչ անեմ, որ չծիծաղեմ։ Ասում ես ինչո՞ւ պետք է մտածեմ մեր մասին։ Մտածելու բան չկա՞։

— Ի՞նչ կա որ։

Եվ Սարիբեկյանը նորից սկսեց Ջրի պատմությունը։

Բարաշենի ֆերմաներից մոտ չորս կիլոմետր բարձր, Բազազ սարի ետևից, բարակ մի գետակ էր հոսում։ Գետակն անցնում էր կիրճերի միջով, հասնում մինչև մի ժայռի գլուխ, այնտեղից գահավիժելով խառնվում ներքևից հոսող հորդահոս գետի Ջրերին։ Եթե գետակի Ջուրը ժայռի գլխից թեքվեր, կարելի էր առվի միջով բերել, անցկացնել սարա-լանջով, հասցնել մինչև ֆերմաները։

— Երկու օր է ես այնտեղից տուն չեմ գալիս,— վերջում ավելացրեց Սարիբեկյանը,— քայլերով չափել եմ ժայռի

գլխից մինչև ֆերմաները, նայել եմ ամեն մի քար, ամեն մի փոս։ Դժվար ոչինչ չկա։ Մեր ուժերով կարող ենք այդ գործը գլուխ բերել։

Դանիելյանի գլխից արդեն չքացել էին Մարութի հետ կապված մտքերը։ Նա ուշադրությամբ լսում էր Սարիբեկյանին և խելքի մոտիկ բան էր համարում նրա ասածը։

— Հետաքրքիր է. թող էգուց ես էլ մի տեսնեմ,— ասաց Դանիելյանը,— իսկ հիմա դու գնա, տես, որ առավոտը շուտ սայլերը պատրաստ լինեն։

Սարիբեկյանը սեղանի վրայից վերցրեց սև մատիտով գրած իր թուղթը, ծալեց, դրեց ծոցագրպանում և գրասենյակից դուրս եկավ։

Գյուղից ներքև եղանակը պարզել էր։ Տեղ-տեղ արդեն երևում էին աստղերը։ Իսկ վերևում, սարի գագաթին, դեռևս մնում էին թանձր, խավար ամպերը, որոնց տակից մերթ ընդ մերթ փայլատակում էր հրաշեկ կայծակը, շեշտակի խփում ժայռերին, դարձյալ անհետանում, կորչում խավարում, անտառների մեջ։

9.

Սաղաթել ապոր տունը գտնվում էր գյուղի վերին ծայրամասում, այգիների մեջ։ Դա երկհարկանի, կղմինդրածածկ մի շենք էր, որ Ջաղացպանը կառուցել էր պատերազմից մի քանի տարի առաջ, իրենց հին, պապենական մարագի տեղում։

Տունն ամբողջովին թաղված էր բազմամյա պտղատու ծառերի արանքում։ Օտար մարդն այնտեղից անցնելիս կկարծեր, թե դա կամ որևէ հարուստի հնուց մնացած ամառանոցն էր, կամ էլ ինչ-որ առողջապահական մի վայր։ Տան չորս կողմից պատած բարձր ցանկապատը հնարավորություն չէր տալիս տեսնելու բակում գեղեցիկ շարքով տնկած վարդի թփերը, սալորի, ծիրանի, սերկևիլի տունկերը, նեղ ածուներում ցանած ծաղիկները, որ ամեն գարնան ծաղկում էին, բուրմունքով լցնում շրջապատը։ Տան դրսից,

ցանկապատի մուտքի առաջ տնկված միակ ծառը՝ ուռենին էր։

Մի քանի տարի առաջ, երբ այդտեղ դեռ ոչ տուն կար և ոչ էլ ցանկապատ, Սաղաթել ապերը Ջաղացից գալիս իր հետ մի բարակ ճյուղ էր բերել, տնկել առվի ափին։ Տունկն արմատ էր գցել, մեծացել, մեծ ծառ դառել, ճյուղերն արձակել առվի վրա։ Տան մուտքը բացված էր ուռենու մոտից, իսկ ծառի տակ դրված էր փայտե նստարան։ Ամեն երեկո, եթե գործից շուտ էր տուն գալիս, ծերունին մի բաժակ թեյ էր վերցնում, նստում ուռենու տակ ու երկար խորհում աշխարհի չար ու բարի գործերի մասին։

Շաբաթ երեկոյան, մութն ընկնելուց հետո, Սուրեն Սարիբեկյանը գնաց դեպի Սաղաթել ապոր տունը, մի քանի րոպե լուռ կանգնեց ուռենու տակ, ապա անվճռականորեն ծեծեց ցանկապատի դուռը։

Երկու օր շարունակ սաստիկ ցավում էր Սարիբեկյանի ատամը, բայց նա ուշադրություն չէր դարձնում դրան, գնում էր աշխատանքի, կարծելով, որ աշխատանքի ընթացքում կմոռանա ցավը և հետո ամեն ինչ կանցնի։ Բայց այդ երեկոյան այլևս չկարողացավ դիմանալ։ Մի քանի անգամ օղի առավ բերանը, պահեց ատամի տակ, մայրն աղ տաքացրեց, դրեց այտին, սակայն դրանցից և ոչ մեկն էլ չօգնեց։

— Էս չար պատիժը հենց հիմա պետք է գար,— ինքն իրեն ասաց Սարիբեկյանը,— բա ես էգուց ինչպես պետք է աշխատեմ։

Վաղը Բաղաղ սարի առվի կառուցման վճռական օրն էր։ Մոտ մի ամիս առաջ կոլխոզի վարչությունը որոշել էր սարի գետակի ջուրն առվով հասցնել մինչև ֆերմաները։ Շրջանային կենտրոնից մասնագետ էր եկել, նայել, հավանություն տվել կոլխոզի վարչության որոշմանը, գծագրել, թե որտեղից պետք է անցնի առուն և ինչպես կառուցվի այն ու կոլխոզնիկներն սկսել էին աշխատանքը։ Ամեն օր կոլխոզնիկներից քսան-երեսուն հոգի աշխատում էին առվի

կառուցման վրա։ Վճռել էր շտապ կերպով ավարտել այն, քանի դեռ խիստ ցրտերը չէին ընկել, գետինը չէր սառել ու չէր պատել ձյունը։

Աշխատանքների հիմնական մասն արդեն կատարվել էր։ Մնում էր միայն մի քանի հարյուր մետր տարածություն, որ պետք է փորվեր ժայռի մեջ և ապա պատնեշ կանգնեցվեր գետակի առաջ, որից հետո ջուրը կհոսեր նոր առվով մինչև փերմաները։ Այդ կիրակի ամբողջ գյուղով պետք է աշխատանքի դուրս գային և վերջացնեին առուն։

Սուրեն Սարիբեկյանն այդ օրերին քուն ու դադար չուներ։ Նա ամեն օր աշխատանքի էր գնում բոլորից առաջ, բոլորից ուշ վերադառնում։ Բարաշենցիները զարմանում էին, թե ինչպես էր նա կարողանում այդքան աշխատել։ Իրեն գցում էր գործի ամենադժվարին տեղը, լինգով ջարդում էր ահագին քարերը, դուրս տանում, օգնության հասնում նրանց, ովքեր ետ էին մնում։

— Աշխատիր, Սուրեն, աշխատիր, շուտով գնալու եմ Բաքու, արձանդ սարքել տամ, բերեմ դնեմ էս ժայռի գլխին, տակին էլ գրեմ—հիմնադիրն ու կառուցողը Բաղդ ապի,— մեկ օր, աշխատանքի ժամանակ, կատակեց Սարիբեկյանի ընկերներից մեկը, որը երկար ժամանակ, չարչարվելով մի քարի վրա, չէր կարողացել տեղից շարժել այն և լինգը թողնելով քարի տակ, քրտնաթոր մի կողմ էր քաշվել։

— Դու շատ բարի ես,— պատասխանեց Սարիբեկյանը,— բայց զարմանում եմ, թե ինչու ես լինգով եկել այստեղ։ Ավելի լավ կլիներ բուրդ վերցնեիր և նստեիր տատիդ ճախարակի մոտ...

Կոլխոզնիկները ծիծաղեցին Սարիբեկյանի սրամիտ պատասխանից։ Բայց նա միանգամայն անտարբեր ձևանալով, մոտեցավ իր ընկերոջ շարժած քարին, վերցրեց լինգը, մի քանի անգամ խփեց քարին, շրջեց այն, դուրս բերեց տեղից։

— Ջահել լինեի, Սուրեն, երազումս քեզ կտեսնեի,— Սարիբեկյանը քարը դուրս բերելուց հետո ասաց Սոֆի քեռակինը, որը տղամարդկանցից պակաս ծանր աշխատանք-

ներ չէր կատարում այդ օրերին,—սպասիր, տուն վերջացնենք, մեղրը վրան քառասուն ձվից ձվաձեղ պիտի տամ քեզ...

Եվ ահա, եկել էր առվի ավարտման վճռական օրը, Սարիբեկյանը չպետք է կարողանար մասնակցել աշխատանքներին։ Ատամնացավից նա գունատվել էր, թուլացել։ Երկար ժամանակ տատանվում էր—գնա՞լ, արդյոք, քաշե՞լ ատամը։ Գուցե դրանից դրությունն ավելի վատանար։ Ավելի լա՛վ չէր լինի սպասել մինչև վաղը։ Բայց չէր կարողանում։ Թվում էր, թե գանգը ցրիվ է գալիս, աչքերը սևանում էին։ Ու բավականին ուշ, մութն ընկած, լուռ վեր կացավ, գնաց դեպի Ջաղացպանի տունը։

Ցանկապատի դուռը բաց արեց Նաթերը։ Նա ըստ երևույթին ուրիշ մարդու էր սպասում։ Առանց գլուխը բարձրացնելու, մի քայլ հետ քաշվեց, որ եկողը ներս մտնի, բայց Սարիբեկյանը տեղից չշարժվեց։ Այդ ժամանակ Նաթերը բարձրացրեց գլուխը, նայեց Սարիբեկյանին, մթության մեջ իսկույն ճանաչեց նրան և այլայլվեց։

Մի պահ երկուսն էլ խոսք չգտան ասելու։ Տիրեց ծանր ու ճնշող լռություն։

— Մեզ մո՞տ ես գալիս,—մռայլ հարցրեց աղջիկը։

— Եթե ուրիշ տեղ գնալու լինեի, էլ ինչու՞ էի ձեր դուռը ծեծում,—պատասխանեց Սարիբեկյանը, ուզեց ավելացնել, թե ատամը ցավում է, դրա համար է եկել, բայց հանկարծ զգաց, որ ատամի ցավը կտրեց։ Մի վայրկյանում այնպիսի հանգստություն իջավ վրան, որ կարծեց, թե մինչ այդ նա երազի մեջ էր եղել, արթնացել էր ու երազի հետ չքացել էր ամեն ինչ...

— Ինչի՞ համար ես եկել,—խիստ հարցրեց Նաթերը։

— Ինչի համա՞ր,—զարմացավ Սարիբեկյանը,—գուցե չէ՞ կարելի։

— Ինձնի՞ց ես հարցնում։

— Էլ ումի՞ց հարցնեմ։

— Նրանից, ում մոտ որ եկել ես...

— Չեմ հասկանում,—տարակուսանքով ասաց Սարիբեկյանը,—եթե չես ուզում, կարող եմ վերադառնալ։

— Այդ քո գործն է։

Սարիբեկյանը շվարեց։ Նա Նաթերից երբեք չէր սպասի այդպիսի վերաբերմունք։ Խիստ վիրավորված՝ ուզեց շրջվել, հետ գնալ, բայց անհարմար զգաց։

— Ո՞վ կա տանը,—հուզված հարցրեց Սարիբեկյանը։

— Ում մոտ որ եկել ես, տանն է...

Սարիբեկյանն առաջ անցավ, սանդուղքներով բարձրացավ երկրորդ հարկը, առանց սենյակի դուռը ծեծելու ներս մտավ և զարմացած կանգ առավ շեմքում։ Սենյակում Սաղաթել ապոր և նրա կնոջ՝ Հեղնար աքոր հետ սեղանի մոտ նստել էին Մորուտի կոլխոզի նախագահ՝ Ռուբեն Սիմոնյանն ու կինը՝ Զարուհին։

Կարծես թե մի ծանր երկաթով հարվածեցին Սարիբեկյանի գլխին։ Նա շփոթվեց, լեզուն փակվեց և մոլորված երեխայի պես մնաց կանգնած։

— Ախպերացու, էս ո՞ր խաչիցն է,—շեմքում նրան տեսնելուն պես հարցրեց ջաղացպանը։

— Վաղը կիրակնօրյակ է հայտարարված. բոլորը դուրս են գալու առվի աշխատանքներին.—ինքն էլ չիմանալով, թե ինչպես հիշեց Սարիբեկյանը և ավելացրեց,—եկա հայտնելու, որ դու էլ...

— Ես գիտեմ,—անմիջապես ընդհատեց ծերունին,—առավոտից շուտ եմ գալու, էդ մասին մի մտածիր։

— Դե չուշանաս. վաղը պետք է վերջացնենք առուն,—ասաց Սարիբեկյանը, բարի գիշեր մաղթեց, շրջվեց, որ գնա, բայց Սաղաթել ապերը կանգնեցրեց նրան։

— Սպասիր, ո՞ւր ես գնում։ Զայ խմենք, հետո կգնաս։

— Չէ, ժամանակ չկա, բոլորին պետք է հայտնենք։

— Մի վախենա, բոլորն էլ գիտեն, իրենք գնալու են,—Սաղաթել ապերը վեր կացավ. մոտեցավ Սարիբեկյանին, բռնեց թևից ու մոտեցրեց սեղանին։

— Որ ասում եմ նստիր, ուրեմն նստիր,—էր մոտ մի

աթոռ ցույց տալով, բարեհոգաբար ասաց ծերունին,—Հազարից մեկ եկել ես մեր տուն, ուզում ես առանց նստելու հետ դառնալ։

Սարիբեկյանը հարկադրաբար նստեց, բայց կարծես թե տակից սուր ասեղներով ծակում էին, տեղում դադար չէր անում։ Միտքն էլ մի բան չէր գալիս, որ ասի։ Մյուսներն էլ չէին խոսում։ Ի՞նչ էին մտածում։ Չէ՞ին մեղադրում նրան, չէ՞ին ասում, թե ինչու է եկել այդպես ուշ գիշերով։ Հավատո՞ւմ էին նրա ասածին, չէ՞ին ասում, թե դա պատրվակ է Զարուհուն տեսնելու համար։

Քրտինքը հետզհետե պատում էր նրա ճակատը։ Ձեռքը տարավ գրպանը, ուզեց դուրս բերել թաշկինակը, սրբել քրտինքը, բայց հիշեց, որ թաշկինակը մաքուր չի։ Ձեռքով սրբեց ճակատը և մնաց լուռ։

— Ի՞նչ կա, ի՜նչ չկա, Սուրեն, գործերդ ինչպե՞ս են գնում,—հենց այնպես, մի բան ասած լինելու համար խոսեց Սիմոնյանը։

— Ոչինչ, վատ չեն։

— Բայց դուք հրաշալի գործ եք սկսել։

— Առվի մասին ե՞ս ասում։

— Հա, մենք էլ ենք այդպիսի մի ծրագիր քաշել, բայց դուք առաջ ընկաք։

— Հո չի կարելի, որ ամեն բանում դուք առաջ լինեք․ մի գործում էլ մենք առաջ լինենք էլի։

— Շատ ուրախ եմ, առաջ եղեք․ ո՞վ չի ուզում, որ առաջ լինեք։ Մենք որոշել էինք այս կիրակի ամբողջ կոլխոզով գալ, աշխատել ձեզ հետ։ Բայց իմանալով, որ ձեր ուժերով վաղն արդեն վերջացնում եք, փոխեցինք մեր որոշումը։

— Իսկ երբ մենք սկսենք մեր առվի աշխատանքները, իրենք իրենց որոշումը չեն փոխի, կգան և կօգնեն մեզ,— ասաց Զարուհին, որ մինչ այդ միանգամայն լուռ լսում էր նրանց խոսակցությունը,— այդպես չէ՞, Սուրեն։

— Ի՞նչ ասեմ, դուք դեռ չեք սկսել աշխատանքները, մենք էլ որոշում չենք հանել,— պատասխանեց Սարիբեկյանը,— երբ կսկսեք աշխատանքները, այն ժամանակ կտեսնենք։

— Բայց, իսկապես, դուք ինչ հարվածային թափով սկսեցիք գործը, զարմանալի է։

— Մենք այսպես ենք, ախպերացու,— Սարիբեկյանի փոխարեն պատասխանեց Սաղաթել ապերը,— մի բան որ սկսեցինք, իսկույն կկատարենք։

— Իսկ կերի հարցը ինչ է այժմ,— լուրջ հետաքրքրվեց Սիմոնյանը։

— Կարծես թե վատ չէ։ Կոշտ անասնակերը բավական է։

— Իսկ սիլոսը։

— Սիլոս...

Սարիբեկյանը կանգ առավ, սկսեց մտածել։

— Գուցե գաղտնի՞ք է,— կատակեց Սիմոնյանը։

— Ի՞նչ գաղտնիք, մեզնից հո չե՞ք խլելու, կարող եմ ասել։

Եվ ֆերմայի վարիչը ծոցագրպանից դուրս բերեց փոքրիկ հուշատետրը, բաց արեց մի էջ, մեկնեց Սիմոնյանին։ Ըստ իր սովորության՝ Սարիբեկյանն այնտեղ գրել էր միայն տառեր ու թվեր և Սիմոնյանը դրանցից ոչինչ չհասկացավ։

— Քո գրածից գլուխս բան չի մտնում, ինքդ ասա, որքա՞ն սիլոս եք պատրաստել։

— Չորս հոր։

— Ինչքա՞ն ժամանակ կբավականացնի։

— Մինչև տարվա վերջը, եթե մեկ կովին տալու լինենք երկու տոննա։

— Երկու տոննա,— զարմացավ Սիմոնյանը,— այդքան սիլոսը որտեղի՞ց եք պատրաստել։

— Դա շա՛տ է,— մեջ ընկավ Ջաղացպանը,— էս վերջերը էլ կարտոֆիլի և կաղամբի տերև չմնաց, բոլորը հավաքեցին ու լցրին էդ հորերը։

— Լավ է, շատ լավ։ Իսկ քաշող անասունների համար որքա՞ն սիլոս եք նկատի ունեցել,— լուրջ հետաքրքրությամբ հարցրեց Սիմոնյանը։

— Քաշող անասուններին երևի մի քիչ պակաս կտանք։ Նրանց համար կոմհատի քուսպ ենք գնել։ Դա ավելի ուժեղ է։ Կովերին որքան կարելի է շատ հյութալի սնունդ պետք է տալ, որ հորթերը պարարտ լինեն և...

— Այդ գիտեմ,— ընդհատեց Սիմոնյանը և տարվեց ինչ որ մտքերով։ Մի պահ մտածելուց հետո միայն ավելացրեց,— լավ եք նախապատրաստվել։ Մենք այդքան կեր երբեք չենք ունեցել...

— Դե ես գնամ, Սաղաթել ապեր,— հանկարծ ոտքի կանգնելով ասաց Սարիբեկյանը։

— Բա չասացի՞ մի բաժակ չայ խմիր, հետո։

— Շնորհակալ եմ, արդեն ուշ է,— պատասխանեց նա, գլխարկը ձեռքին բռնած, շփոթված ու շտապ դուրս եկավ։ Եսթերն ուղեկցեց նրան մինչև ցանկապատի դուռը։

— Կարծելու եք, թե եկել էի Զարուհուն տեսնելու, չէ՞,— դռան առաջ ետ շրջվելով ասաց Սարիբեկյանը։

Եսթերը ոչինչ չասաց։

— Ազնիվ խոսք, ես չգիտեի, որ նա էստեղ է։

— Զգիտեի՞ր, բա ինչո՞ւ էիր եկել։

Սարիբեկյանը ոչինչ չասաց։ Նա մի պահ լուռ սպասեց ու շտապ հեռացավ։ Բարի գիշեր էլ չմաղթեց աղջկան։ Այնքան էր շփոթված նա, որ չէր կարողանում նույնիսկ նայել, թե որտեղ է դնում ոտը։ Մերթ քարի էր դիպչում, մերթ ցեխի մեջ ընկնում և մի գլուխ շտապում տուն այնպես, որ կարծես թե հետապնդում էին իրեն, կրնկակոխ հետևում, և ուր որ է պետք է բռնեին, ասեին, թե ինչո՞ւ արեցիր, ինչո՞ւ չասացիր ճշմարտությունը։

— Հը, ի՞նչ եղավ,— Սուրենը տուն մտնելուն պես հարցրեց մայրը։

— Ոչինչ, մի քիչ դեղ դրավ ատամիս,— ասեց նա։

— Հիմա չի՞ ցավում։

— Չէ։

— Ջուրը թևթև է, երկար լինի կյանքը։

Տղան չարձագանքեց։ Լուռ մոտեցավ անկողնին, սկսեց շորերը հանել, կարծելով, թե մոր ասելիքն արդեն վերջացավ։

— Քնում ես,—հարցրեց մայրը։

— Բա ի՞նչ անեմ։

Մայրը մոտեցավ, կանգնեց որդու մոտ։

— Ասում եմ՝ լավ աղջիկ է էդ Նաթերը։ Հը՞։

— Ի՞նչ անեմ, որ լավ է։

— Մեկի հետը չե՞ս խոսել։

— Խոսել եմ։

— Ի՞նչ է ասում։

— Ինչի՞ մասին։

Մայրը լռեց։ Միթե՞ Սուրենը չի հասկանում, թե ինչի մասին է խոսքը։ Ինչո՞ւ է խուսափում հարցին ուղղակի պատասխանելուց։ Գուցե ուզում է, որ մայրը խոսի, ամեն ինչ պարզ ասի։ Գուցե ամաչո՞ւմ է։ Բայց ի՞նչ ամաչելու բան կա. վաղ թե ուշ՝ պետք է ամուսնանա չէ՞։

— Դե խոսիր է, ինչո՞ւ ես լռում։

— Ի՞նչ խոսեմ, մայր,—վերմակի տակից արձագանքեց որդին։

— Ասում եմ էդ Նաթերը հալալ կաթնակեր աղջիկ է։

— Ես էլ գիտեմ։

— Բա ինչու չե՞ս խոսում հետը։

— Ի՞նչ խոսեմ ախր։

— Համբերությունից մի հանիր, ես քեզ համար երեխա չեմ էստեղ. ինձ Խըրսըբաանենց Սաթենիկ կասեն. վերմակը կվերցնեմ, վրայիցդ դեն կշպրտեմ...

— Դե շպրտիր, հը, շպրտիր, տեսնեմ ճնց ես շպրտում,— այդ ասելով, որդին նստեց տեղը, ճարպկորեն բռնեց մոր պարանոցից, ձգեց իրեն, վերմակը գցեց նրա գլխին ու պառկեցրեց իր անկողնում,—դե խոսիր, հը, սա տեսնեմ ի՞նչ ես ուզում ինձնից։

— Քեզ երեխայի տեղ մի դնի, շատ լավ ես իմանում, թե ինչ եմ ասում։

— Ասենք թե իմանում եմ. հետո՞։ Բա որ նա չհամաձայնի։

— Ո՞նց թե չհամաձայնի. քեզնից լավ տղայի է գնալու։

— Դա իրենից պետք է հարցնել։

— Ես կհարցնեմ, միայն թե դու համաձայնիր։

— Չէ, չէ, դու մի խառնվիր,— ձեռքը մոր բերանին դնելով ասաց որդին,— չլինեմ, չիմանամ, որ այդ մասին խոսք խոսես։ Բավական է, էլի ամբողջ գյուղի բերանը կնկնի։

— Հա, տեսնում եմ, զգուշ ես դառել,— խայթեց մայրն ու որդու անկողնից դուրս գնալով, մոտեցավ իր անկողնին,— բայց տես, երեք օր քեզ ժամանակ։

Որդին չպատասխանեց։ Կրկին վերմակը քաշեց գլխին ու լռեց։ Բայց այդ ժամանակ նրա աչքերին քո՞ւն կգար...

10.

Միսակ Դանիելյանին թվում էր, թե գյուղում ամենադժվարինը, անլուծելին՝ աշխատող ուժերի խնդիրն է։ Ամեն անգամ, երբ խոսք էր լինում այս կամ այն աշխատանքն սկսելու մասին, նա ամենից առաջ հարց էր տալիս, թե ինչ ուժերով պետք է սկսենք այդ աշխատանքը։ Բարաշենում շատ ցանկություններ էին մնացել չիրականացված աշխատող ուժերի քչության պատճառով։ Կոլխոզի նախագահը նստում էր, մեկ առ մեկ հաշվում իրենց ուժերը և հանգում այն եզրակացության, որ քիչ են իրենց ուժերն այդպիսի ցանկությունն իրականացնելու համար։

Այժմ նա Բաղաղ գետակի ափին կանգնած՝ նայում էր ամբողջ ափի երկարությամբ աշխատող տասնյակ խմբերին և չէր հասկանում, թե ո՞րտեղից հայտնվեցին այդ խմբերը, ո՞վքեր էին նրանք։ Դեռ երեկ երեկոյան, երբ մտքում հաշվում էր, թե քանի մարդ կարող էր գործի դուրս գալ, կարծում էր, թե նրանց թիվը հարյուր հիսունից չի անցնի։ Իսկ

այժմ... Էլ ծեր ու պատանի, կին ու աղջիկ չէր մնացել գյուղում։ Բոլորն էլ բահ ու քլունգով դուրս էին եկել աշխատանքի։

— Իսկապես, ճիշտ է ասված, թե գեղը կանգնի՝ գերան կկոտրի,— անցավ Դանիելյանի մտքով և նույն ժամանակ աչքովն ընկավ իր կինը, որ գյուղսովետի քարտուղար Սիրանուշ Բալունցի հետ ժայռի տակ հսկայական մի քար բռնած, ուզում էին բարձրացնել, դնել Սաղաթել ապոր մեջքին։ Կանայք ճիգ էին անում, ծռմռվում, բայց քարը չէին կարողանում բարձրացնել։

— Ախպերացու, մի քար բարձրացնելու համար որ էսքան չարչարվենք, մեր առուն սկի հնգամյակի վերջում էլ չենք պրծնի, դե ուժ արեք է,— լուրջ դժգոհում էր Ջաղացպանը։

Սակայն կանանց ուժը չէր պատում։ Սիրանուշը համեմատաբար ուժեղ էր, կարողանում էր իր կողմից քարը բարձրացնել։ Բայց Դանիելյանի կնոջ կողմից այն չէր շարժվում։ Կինը վատ էր, նիհար։ Նրա դեմքին նայողը կզգար, թե ինչպիսի քայքայիչ հետք էր թողել մալարիան նրա մարմնի վրա։

Երեկ, երեկոյան, երբ Դանիելյանը տանը խոսում էր կիրակնօրյակի մասին, կինն ասել էր, որ ինքն էլ է գնալու աշխատանքի։

— Չհամարձակվես, դա քո բանը չի,— ասել էր ամուսինը։

— Իմ բանն է թե չէ, բայց ես պետք է գնամ աշխատանքի,— պատասխանել էր կինը,— թե չէ բոլորն էլ կասեն կոլխոզի նախագահը մեզ բանեցնում է, իսկ իր կինը խանումի պես նստել է տանը։

— Ոչինչ էլ չեն ասի. դու իզուր տեղից ուրիշների հասցեին բամբասանքներ մի հորինի. գիտեն, որ դու հիվանդ ես։

— Ես հիվանդ չեմ և պետք է գնամ,— համառել էր կինը, և առավոտյան, ամուսինը տնից դուրս գալուց հետո, ինքն էլ էր վերցրել մի քլունգ ու եկել այնտեղ։

— Լավ, ես քեզ չասացի՞, որ տնից դուրս չգաս,—մոտենալով կնոջն ասաց Դանիելյանը։

— Փոխանակ խրատելու, լավ կլինի, որ աշխատես,—պատասխանեց կինը,—մի բռնի էս քարը, դնենք Սաղաթելի ապոր մեջքին։

— Դե որ եկել ես, ինքդ բարձրացրու, ես իմ աշխատանքն ունեմ,—ակամա դժգոհությամբ պատասխանեց ամուսինը և գնաց դեպի գետաբերանի պատնեշը։ Պատնեշի կառուցումն օրվա աշխատանքի ամենադժվարին մասն էր։ Դրա համար էլ այնտեղ էին հավաքվել բոլոր ուժեղ տղամարդիկ, որոնք մինչև սրունքները մերկ՝ մտել էին ջրի մեջ, կրում էին գետափին դիզած ծանր քարերը, շարում ջրի առաջ, պատ կանգնեցնում։ Այդ տղամարդկանց մեջ բացակայում էր միայն Սուրեն Սարիբեկյանը։ Նա գետափից ծանր մի քար բարձրացնելիս վայր էր ընկել, քարը կպել էր ձախ ձեռքի ցուցամատին, մատը ջարդել և արյունը կանգ չէր առնում։

Եսթերը Սարիբեկյանին մի կողմ քաշած, ուզում էր փաթաթել մատը, իսկ նրան այդ րոպեին ուրիշ բան էր հետաքրքրում։

— Եսթեր ջան, խնդրում եմ, ասա, երեկ իմ գնալուց հետո իմ մասին ի՞նչ էիք խոսում։

— Մատդ դես տուր. հիմա հարց ու փորձի ժամանակ չի։

— Մինչև չասես, թույլ չեմ տա, որ կապես։

— Դե թույլ չես տալիս, մի թույլ տուր. դու ես տուժելու։

— Թող ես տուժեմ, միայն թե ասա, ի՞նչ էիք խոսում իմ մասին։

— Ասում էինք այդ տղան գի՞ժ է, թե խելոք. ուշ գիշերով ի՞նչու էր եկել։

— Հետո՞։

— Հետո թող մատդ կապեմ։

— Մատս հետո էլ կկապես, հիմա ասա, էլի ի՞նչ էիք ասում։

— Այդ քո գործը չի…

Սարիբեկյանը հուսահատորեն թափահարեց ձեռքը, ուզեց հեռանալ։

— Գժություն մի անի, թող մոտդ կալեմ,— խակույն բռնելով նրան՝ ասաց աղջիկը։

— Իմ գժությունը դու հալա չես տեսել. եթե համբերությունից հանես, ավելի գժություն կանեմ։

— Ի՞նչ կանես։

— Ինչ կանե՜մ։

Սարիբեկյանը կանգ առավ, երազանքով նայեց աղջկան։

— Հը,— կարծես թե ցանկանալով ինչ-որ մի վճռական բան լսել նրանից, ասաց Եսթերը։

— Կբռնեմ ու... կհամբուրեմ քեզ...

Եսթերի աչքերը չռվեցին։ Այդպիսի խոսք նա չէր սպասում։ Անմիջապես ինչ-որ մի հոսանք անցավ նրա մարմնով, դեմքը շառագունեց։ Սարիբեկյանը նայեց նրա այլայլված դեմքին ու սիրտն ահ ընկավ։

— Վիրավորվե՞ց,— անցավ Սարիբեկյանի մտքով։

Եվ նա խորապես զղջացած գլուխը կախեց։

— Գիժ ես, իսկական գիժ,— Սարիբեկյանի ընկճվածությունը տեսնելով, զուսպ քնքշությամբ ասաց Եսթերը։

— Այ, տեսնո՞ւմ ես, որ ասում եմ...

— Ախր սուտ ես ասում, սուտ...

— Ես երբեք սուտ չեմ խոսում։

— Ինչպե՞ս չես սուտ խոսում, ես գիտեմ չէ՞, որ սուտ ես խոսում։

— Ինչի՞ց ես ենթադրում։

— Հենց նրանից, որ դու ուրիշին ես սիրում...

— Կշտամբո՞ւմ ես։

— Ե՞ս։ Ի՞նչ իրավունքով։ Բայց բեր, բեր մոտդ փաթաթեմ։ Տեսնո՞ւմ ես, մեզ են նայում.

— Ինչքան ուզում են, թող նայեն, գողություն չենք անում,— ասաց Սարիբեկյանը, ձեռքը մեկնեց Եսթերին և երբ նա սկսել էր փաթաթել, կամաց, շշնջոցով շարունակեց,— դու լավն ես է, լավը, շատ լավը։ Ինչքա՜ն լավն ես...

— Ստախոս, ստախոս,— նույնպես շշնջոցով պատասխանեց աղջիկը և խրտնած եղնիկի պես շտապ փախավ նրանից։

Աղջիկը հեռանալուց հետո Սարիբեկյանը երկար նայեց նրա ետևից և ինքն էլ շրջվելով գնաց դեպի գետը։

Հսկա քարերից կանգնեցված պատնեշն արդեն պատրաստ էր։ Ջուրն ուռճացել էր, լիճ կազմել։ Կոլխոզնիկներն աշխատում էին ջրի փոքրիկ անցքի վրա։ Մի քանի քար ևս, և ջուրն ամբողջովին կանգ կառներ ու կփոխեր հունը։ Սարիբեկյանն առանց հապաղելու մոտեցավ անցքին։

— Ճամբա տվեք, եկավ,— զգուշացրին մի քանի հոգի հսկայական մի քար գլորելով դեպի անցքը։

Քարը գլորվելով ընկավ լճի մեջ։ Լճափին մինչև սրունքները մերկ կոլխոզնիկներն իսկույն ջուր մտան, լինգերով շրջեցին քարը, մոտեցրին անցքին։ Ջուրն ամբողջովին փակվեց, կանգ առավ։ Կանգ առան և ջրի շուրջը խմբվածները։ Մի պահ տիրեց ընդհանուր լռություն։ Բոլորն էլ հուզված, սրտատրոփ նայում էին պատնեշի առաջ ծավալվող, ուռճացող լճին։

Միսակ Դանիելյանը լճափին կանգնած պատրաստվում էր ճառ ասելու։ Նա դեռ երեկվանից էր մտածել, թե ինչ խոսքերով շնորհավորի կոլխոզնիկներին՝ նրանց անձնուրաց աշխատանքի համար։ Նա մի քանի քայլ էլ առավ, ծոցագրպանից դուրս բերեց հուշատետրը, ձեռքը բարձրացրեց՝ կոլխոզնիկների ուշադրությունն իր վրա հրավիրելու համար, բայց նույն րոպեին գյուղսովետի քարտուղար Սիրանուշ Բալունցը, որ կանգնել էր առվի պռունգին, ցնծագին բացականչեց․

— Գնաց, գնաց...

Լճի մոտ էլ ոչ ոք չմնաց․ բոլորն էլ իսկույն ետ շրջվեցին, մոտեցան առվին։ Միսակ Դանիելյանն էլ հուշատետրը ծալեց, դրեց ծոցագրպանում, գնաց մյուսների հետ։ Ջուրը լցվել էր առվի մեջ և ուժգին հոսանքով առաջ էր գնում։ Կոլխոզնիկները ծափ ու աղաղակով առաջ էին վազում

ջրին համընթաց։ Հասնելով ժայռին, որտեղից ջուրը պետք է թափվեր, լցվեր ներքևի առուն ու գնար դեպի ֆերմայի գոմերը, կոլխոզնիկները կանգ առան։ Այնտեղից էլ չէր կարելի առաջ գնալ։ Հարկավոր էր պտույտ կատարել, անցնել սարի վրայով, նեղ արահետով ցածրանալ ժայռի տակ։ Իսկ դա ահագին ժամանակ կխլեր։ Մինչև դուրս գային արահետը, ջուրն արդեն հասած կլիներ գոմերին։ Եվ նրանք հենց ժայռի գլխից սկսեցին դիտել ջրի հոսանքը, որ վերջալույսի շողերից փայլփլում էր ծիածանի գույներով, ցոլքերը ցրում լեռնալանջի դեղնատերև թփերի, ցրտից կոշտացած խոտերի ու լերկ քարերի վրա։

Բարաշենցիները ջրի հոսանքով տարված, չէին տեսնում, որ մեկը գոմերից քիչ հեռու, փոքրիկ բլրի վրա կանգնած, օդի մեջ ոգևորությամբ թափահարում է գլխարկը։

— Այն ո՞վ է,— իր սրատես աչքերով բլրի վրա կանգնած մարդուն տեսնելով, բացականչեց Սիրանուշ Բալունցը։

— Ընկեր Ապրեսյանն է, շրջկոմի քարտուղարը,— ուշադրությամբ նայելով, ճանաչեց Միսակ Դանիելյանը,— բայց ո՞վ է ասել նրան, ինչպե՞ս է մինակ ճանապարհը գտել։

11.

Մայրը սենյակի անկյունում կանգնած, հոնքի տակից ուշադրությամբ նայում էր գլուխը սեղանին հակած որդուն, ուզում էր իմանալ, թե ինչի մասին է մտածում նա այդպես կենտրոնացած, ինչ է գրում նա, բայց իմանալ չէր կարողանում։

Մոր սիրտը մղկտում էր։ Եվ ո՞ր մայրը չի մղկտալ, տեսնելով իր որդու մտահոգությունը, մտքի լարվածությունը, հոգեկան անհանգստությունը։

Մայր... Կա՞ աշխարհում մի բան, որ իր խորությամբ չափվի քո սրտի հետ, ունենա քո սրտի զգայնությունը, քնքշությունը, ջերմությունը։ Դու ամենազգաց ես, մայրական սիրտ, այն, ինչ անհնար է հասկանալ մտքով, դու հաս-

կանում ես քո նուրբ թելերով, այն, ինչ անկարելի է բացատրել լեզվով, դու բացատրում ես քո ջերմ բաբախումներով։

Հապա ինչու էր անհանգստանում Սաթենիկ մայրիկի սիրտը, էլի ի՞նչ վտանգ էր գուշակում նա իր որդու համար։ Չէ՞ որ ամեն վտանգ արդեն անցել էր, այլևս ոչինչ, ոչինչ չէր սպառնում նրա որդուն։ Ի՞նչն էր տեղի տալիս Սաթենիկ մայրիկին անհանգստանալու։ Որդու մտազբաղությունը։ Բայց չէ՞ որ դրա պատճառը միանգամայն այլ էր։

Երեկ, երեկոյան, ձմեռային ֆերմաներից տուն գալիս, նա մտածեց նամակ գրել Բաշիրովին։ Գրել, որ այս տարի լավ են նախապատրաստվել ձմռանը, հիմնովին վճռել են անասունների համար կերի և ջրի հարցը, գրել, որ այլևս վտանգ չկա անասունների ձմեռումը հաջող անցկացնելու համար։ Գրել ամեն ինչ իրենց աշխատանքների մասին և ուրախացնել նրան։ Չէ՞ որ նրանց—ղեկավարներին էլ հարկավոր է ուրախություն։ Ամեն օր, վաղ առավոտից մինչև կես գիշեր, լծված աշխատանքի մեջ մոռացած իրենց անձնական կյանքը, ապրում են հազարավոր, միլիոնավոր պարզ, հասարակ մարդկանց հոգսերով։ Եվ կուրախանան նրանք միայն այն ժամանակ, երբ լսեն այդ հասարակ մարդկանց հաջողությունը։

Իսկ իրենք—քարաշենցիներն այս տարի արդեն հաջողություններ ունեն։ Հաղթահարեցին անցյալ տարվա դժվարությունները ու հող պատրաստեցին հաջորդ տարվա նվաճումների համար։

Ո՞վ գիտե, նա—Բաշիրովը, գուցե դեռևս հիշում է իրենց հանդիպումը Խաչ աղբյուրի մոտ, զրույցը՝ Սարիբեկյանի հետ։ Գուցե նա դեռևս մտածում է քարաշենցիների մասին և կարծում է, թե հենց այնպես էլ անհաջող դրության մեջ են գտնվում Քարաշենի ֆերմայի աշխատանքները։ Ինչու չգրել այդ մասին, ինչու չուրախացնել նրան։

Եվ ահա, այդ օրը, կեսօրից հետո, Սարիբեկյանը նստել էր սեղանի մոտ, թուղթ ու գրիչ վերցրել, գրում էր, ջնջում,

բայց վերջացնել չէր կարողանում։ Ուզում էր շատ բան ասել, բայց կարճ գրել, իմանալով, որ Բաշիրովը ժամանակ չի ունենա երկար նամակ կարդալու։ Իսկ կարճ գրել չէր կարողանում. զգում էր, որ խոսքը շատ է ստացվում, միտքն անորոշ։ Եվ գրածը մեկ էլ ջնջում էր, նորից սկսում, ու այսպես անվերջ։

Հետո, երբ մութն արդեն ընկել էր, հանկարծ միտքը կասկած ընկավ. Արժե՞ գրել այդ նամակը։ Դուց դեռ վաղ է։ Սպասել մինչև գարուն, վերջացնել պետական բոլոր մթերումները, այն ժամանակ առա ավելի վստահորեն ասել այն, ինչ ցանկանում էր։

Այստեղ նա գրիչը ցած դրեց, սեղանի վրա դրած թղթերը մի քիչ գեն հրեց, գլուխն առավ ափերի մեջ, սկսեց մտածել։

— Էդ ի՞նչ ես մտածում ախր էդքան,— զգույշ մոտենալով նրան, հարցրեց մայրը։

— Ոչինչ, ի՞նչ է որ։

— Էսօր տեսա Հեղնարին։

— Հա՞,— գլուխը բարձրացնելով հարցրեց Սուրենը։

— Տեսա, բա...

— Ի՞նչ ասացիր։

— Ասացի՝ Եսթերը լավ աղջիկ է։

— Միայն դա՞։

— Չէ։ Ասացի ինչքա՞ն չես մարդու տալիս նրան։

— Ինքն ի՞նչ ասաց։

— Ասում է մի լավ տղան ուղեց, որ չավեցինք։

— Հետո՞։

— Հետո ասացի Սուրենն ինչո՞վ է վատ։

Որդին վեր ցատկեց տեղում, խստ նայեց մորը։ Մայրը շփոթվեց, ցնցվեց, նրա ուսերից սահեց շալը, վայր ընկավ։

— Ես քեզ խնդրել է՞ի այդպիսի բան անելու։

— Չէիր խնդրել, բա դա ի՞նչ խնդրելու բան է։

— Դե որ ինքդ ասել ես, գնա ինքդ էլ ամուսնացիր Հեղնարի աղջկա հետ,— ասելով, որդին մոտեցավ պատից

կախած զինվորական շինելին, հագավ, պատրաստվեց դուրս գնալ։

— Էդ ծեր. գժությունդ էլի բռնե՞ց։

— Գժության հարց չկա. քեզ ու քեզ գործեր ես բռնում, կարծես թե ես էստեղ խնձորի տերև լինեմ։

— Գիտե՞ս ինչ, ինձ ձեռք մի առնի, ինձ Խըրսըբաաննենց Սաթենիկ կասեն, ինչ որ ասացի, էնպես էլ պետք է լինի։

— Դե թող լինի,— ասաց որդին և սենյակից դուրս եկավ, մորը թողնելով տարակուսանքի մեջ։

Դրսում խավար էր։ Մշուշը եկել էր, լցրել գյուղը։ Էլ ոչինչ, ոչինչ չէր երևում — ոչ ծառ, ոչ տուն, ոչ քար, ոչ գետին։ Ձայն ու ծպտուն էլ չէր լսվում։ Կար միայն ողջ բնությունը համակած մի շունչ — խոնավության խոր շունչը...

Սարիբեկյանը դրսում մի քանի րոպե կանգնեց անվճռական, մտածեց, թե ուր գնալ։ Ուշ էր, կոլխոզի վարչության գրասենյակում երևի մարդ չէր լինի։ Ընկերների մոտ էլ չուզեց գնալ։ Զգնա՞լ արդյոք, ջաղացպանի մոտ, տեսնել Նաթերին, բացատրվել հետը վերջնականապես։

Այդտեղ նրա մարմնով մի սարսուռ անցավ։ Նա բարձրացրեց շինելի օձիքը, ձեռքերը դրեց գրպանում, կուչ եկավ, բայց տեղից չշարժվեց։

— Էլ ի՞նչ ես կանգնել, եթե մի տեղ ես գնալու, գնա էլի...

Մայրն էր։ Որդու դուրս գալուց հետո իսկույն շալը գցել էր գլխին, լուռ հետևել, թե ուր է գնում նա։ Վճռել էր չխոսել, բայց տեսնելով, որ նա երկար ժամանակ տեղից չի շարժվում, չհամբերեց։

— Ուզում ես՝ միասին գնանք։

— Ո՞ւր գնանք միասին։

— Դու իմանում ես որտեղ, իզուր մի հարցնի։

— Անհարմար է, ես մենակ կգնամ,— մեղմացավ որդին,— դու հետ դառ։

— Բայց, լավ իմացիր...

— Գիտեմ, գիտեմ, քեզ Խըրսըբաաննենց Սաթենիկ կա-

սեն,—կատակեց Սուրենը,—ցուրտ է, հետ դառ, չսպասես էստեղ։

Մայրը հետ դառավ, իսկ որդին քայլերն ուղղեց դեպի Ջաղացպանի տունը։

Դրսից երևում էր ճրագի լույսը։ Ուրեմն տանն էին ու չէին քնել։ Ցանկապատի դուռը բաց էր. առանց ծեծելու ներս մտավ, բարձրացավ սանդուխքներով, կանգնեց միջանցքում։

— Չէ, ախպերացու, գինին աստվածային ջուր է, օղին՝ սատանի. ինձ համար գինի ածի...

Սաղաթել ապերն էր։ Ո՞ւմ հետ էր խոսում։ Գուցե հյուրե՞ր կային։

Սարիբեկյանի մտքով անցավ՝ լուռ հետ դառնալ, գնալ տուն։ Բայց հենց այդ ժամանակ դուռը ճռռաց, սենյակից դուրս եկավ Նսթերը։

— Նսթեր,—զգույշ կանչեց Սարիբեկյանը։

— Ա՜հ,—ճչաց աղջիկը. վախից ձեռքի ափսեն վայր գցելով։

— Ես եմ, մի վախեցիր,—ասելով Սարիբեկյանը մոտեցավ, բարձրացրեց վայր ընկած ափսեն, տվեց Նսթերին։

— Ի՞նչ էիր անում այստեղ։

— Ձեզ մոտ եմ եկել կարելի՞ է։

Նսթերը մի պահ լուռ նայեց նրան, հետո կտրուկ շրջվեց, ափսեն ձեռքին ցածրացավ սանդուխքներով, գնաց մառանը, Սարիբեկյանին թողնելով շվարած կանգնած։

— Էդ ո՞վ է,—միջանցքից լսվող ձայների վրա սենյակից դուրս գալով հարցրեց Հեղնար մոքիրը։

— Ես եմ, Սուրենը։

— Բա էլ ինչու ես կանգնել էդտեղ, ներս եկ։

Սարիբեկյանը հետևեց նրան, ներս գնաց, սակայն այդտեղ նրան սպասում էր մի նոր անակնկալ։ Սեղանի մոտ դարձյալ նստած էին՝ Սաղաթել ապերը, Ռուբեն Սիմոնյանը և Զարուհին։

Ընդամենը երկու անգամ էր նա լինում այդտեղ,

երկու անգամ էլ անսպասելիորեն հանդիպում էր նույն մարդկանց։ Կարծես թե անտեսանելի մի ձեռք տարբեր տեղերից բերում, միացնում էր նրանց ճանապարհները։ Ինչ հզոր ձեռք էր դա, որ չէր տեսնում Սարիբեկյանը։

Առաջին անգամ, երբ նա այդտեղ հանդիպեց Սիմոնյանին և Զարուհուն, ասաց, որ դա պատահականություն էր, ինքը չգիտեր նրանց այդտեղ գտնվելու մասին, և Նաթերը հավատաց։ Իսկ այս անգամ ինչ պետք է ասի։ Դարձյալ չգիտեր, դարձյալ պատահականություն էր։ Ո՞վ կհավատար։ Նաթերը հո միամիտ երեխա չէր։

— Այս ինչ է, դուք միշտ այստե՞ղ եք լինում,— իր շփոթմունքը հազիվ թաքցնելով ասաց Սարիբեկյանը։

— Ով, մե՞նք, թե՞ դու,— ծիծաղելով հարցրեց Զարուհին,— մենք էլ երկրորդ անգամն ենք գալիս։

— Առաջին անգամ, որ տեսար, գնում էին Բաքու, հիմա էլ Բաքվից են գալիս,— բացատրեց Սաղաթել ապերը,— բա, ախպերացու։ Նոր տարվա համար դես-դեն գնելու էին գնացել։

— Նստիր, նստիր, Սուրեն,— իր մոտ մի աթոռ առաջարկելով ասաց Սիմոնյանը,— Սաղաթել ապերը հինգ տարի պահած գինի է բաց արել. լավ ժամանակին ես եկել։

— Ես գինի խմելու համար չեմ եկել։

— Քեզ չեն հարցնում, թե ինչի համար ես եկել, նստիր, հետո կասես գալուդ պատճառը,— ասաց Զարուհին, վեր կացավ, բռնեց Սարիբեկյանի թևից, նստեցրեց իր և ամուսնու արանքում։

Սիմոնյանը գինի լցրեց բաժակները, մեկ բաժակ մեկնեց Սարիբեկյանին և ուզեց խոսել, բայց Սարիբեկյանն իսկույն բռնելով նրա թևից, արգելեց։

— Սպասիր, թող ես իմ խոսքն ասեմ, հետո։

Ապա առնելով բաժակը, ոտքի կանգնեց ու սկսեց.

— Թե որքան դուր կգա ձեզ, չգիտեմ, բայց ես ուզում եմ պարզ խոսել։

Այդտեղ մի պահ կանգ առավ, սկսեց մտածել։ Ձեռքը

դողդողաց, բաժակի պռունգներից թափվեց մուգ գինին, ներկեց սփռոցը։ Զարուհին խկույն մի բուռ աղ վերցրեց, լցրեց թափված գինու վրա, հայացքը հառեց նրան։ Իսկ նա հապաղում էր, չէր խոսում։ Սաղաթել ապոր սիրտն ահ ընկավ։ Չլինի՞ տհաճ բան ասի։ Խիստ է, տաքարյուն. հանկարծ չվիրավորի՞ Ռուբենին։

Որքան հապաղում էր Սարիբեկյանը, այնքան ավելանում էր ծերունու անհանգստությունը։ Հուզմունքից նրա մարմինն էլ մի դող ընկավ, ցնցեց նրան։

— Դե խոսքդ ասի,— անհանգիստ բացականչեց ծերունին։

— Մի վռազի, Սաղաթել ապեր,— ասաց Սիմոնյանը,— թող մարդը մտածի։

— Ասենք մտածելու էլ բան չկա։ Ես պետք է ասեմ այն, ինչ վճռված է։

Դատարկ ափսեն ձեռքին, շեմքում երևաց Նաթերը։ Ճրագի լույսի տակ երևում էր, թե որքան հուզված էր նա ու գունատ։

— Վճռված է,— հայացքը Նաթերին հառած շարունակեց Սարիբեկյանը,— հունվարի մեկին մենք ամուսնանում ենք...

— Մենք՝ այդ ովքե՞ր են,— անմիջապես հարցրեց Սիմոնյանը։

— Ես և Նաթերը...

Սաղաթել ապերը նստած տեղը հետ գնաց և խորը շունչ քաշեց։ Նրա մարմնից անմիջապես անցավ անհանգիստ դողոցը։

— Այսինքն, ախպերացու, ինչ թե վճռված է։ Դա ո՞վ է վճռել։

— Մենք, երկուսով։

— Ճիշտ չէ,— շեմքից մի քանի քայլ առաջ գալով, հայտարարեց Նաթերը,— մենք այդպիսի բան չենք վճռել։

— Դա կարևոր չէ, չեք վճռել, կվճռեք,— խկույն վրա բերեց Զարուհին,— առայժմ թող ծնողները ասեն իրենց վճիռը։

— Կարևորն ո՞ւմ վճիռն է։

— Լուր, Եսթեր, քո վճիռն ինձ հայտնի է։

— Քեզ որտեղի՞ց է հայտնի,—Զարուհուն նայելով հարցրեց Սարիբեկյանը,—այդ մասին դուք խոսել ե՞ք իրար հետ։

— Խոսել ենք,—հաստատեց Զարուհին։

— Իսկ դու ինձանից թաքցնում էիր. հիշո՞ւմ ես, ջաղացի մոտ, Եսթեր...

Եսթերը լուռ դուրս փախավ սենյակից։

— Ախպերացու, բանից դուրս է գալիս, որ դուք արդեն իրար խոսք եք տվել, խոսք առել...

— Իսկ դուք դեմ ե՞ք, ի՞նչ է,—խոսեց Սիմոնյանը։

— Դե մեր դեմ լինելը կամ չլինելն ինչ նշանակություն ունի։ Հը՞, Հայրապետի աղջիկ, դու ի՞նչ կասես։

— Հեղնար մորքիրը դեմ չի. այդ ես գիտեմ,—նրա փոխարեն պատասխանեց Զարուհին,—իսկ իմ կողմից ես կարող եմ շնորհավորել։

— Ըստ երևույթին Զարուհին հարսանիքում պարելու ցանկություն ունի,—կատակեց ամուսինը,—ուրեմն ես էլ կարող եմ շնորհավորել։

Սարիբեկյանը ոտքի կանգնեց։

— Էդ ո՞ւր, ախպերացու։

— Մայրիկս տանը սրտատրոփ ինձ է սպասում. գնամ, հայտնեմ ձեր համաձայնությունը, որ հանգստանա...

— Ուրեմն հունվարի մեկի՞ն,- հարցրեց Սիմոնյանը։

— Այո, երկու շաբթից հետո,—պատասխանեց Սարիբեկյանն ու սենյակից դուրս եկավ։

Դրսի սանդուղքների վրա, մթության մեջ լուռ կանգնել էր Եսթերը։ Սարիբեկյանն այնտեղից ցածրանալիս, նա բռնեց թևից։

— Գնո՞ւմ ես։

— Հա, մինչև դուռը եկ ինձ հետ։

Աղջիկը հնազանդվեց։ Իջան սանդուղքներից, դուրս եկան փողոց։

Մշուշը գյուղից քաշվել, հեռացել էր, բայց երկինքն ամպամած էր։ Սկսել էր ձյունը—առաջին ձյունը Բարա-

շնչում։ Գետինը թաց էր. եկած ձյունը չէր նստում, հալում էր՝ հողին կպչելուն պես։ Միայն ծառերի ճյուղերն էին ճերմակել ձյան թեթև փաթիլներից։

Ուռենու տակ չոր էր։ Սարիբեկյանը բռնեց Նաթերի ձեռքից, մոտեցրեց ծառին։ Բայց խոսք չէր գտնում խոսելու։ Լուռ էին։

— Դե խոսիր,—հարկադրեց աղջիկը։

— Ի՞նչ խոսեմ։

— Ինչո՞ւ միանգամից այդպես արեցիր, գիժ, գիժ...

Եվ անսպասելի կերպով նա բռնեց Սուրենի ձեռքերից, գլուխը դրեց նրա կրծքին, հեկեկաց...

— Լա՞ց ես լինում, Նաթեր։

— Բա ի՞նչ անեմ։

— Ուրեմն դժգո՞հ ես։

Պատասխանելու փոխարեն Նաթերն ավելի ուժգնորեն սկսեց հեկեկալ։

— Դե խոսիր, դժգո՞հ ես։

— Չէ, դժգոհ չեմ...

— Բա ինչո՞ւ ես լաց լինում։

— Հենց այնպես... վախենում եմ...

— Ինչի՞ց ես վախենում։

— Քեզնից...

— Ինձնի՞ց։ Ինչո՞ւ, ես մարդասպա՞ն եմ։

— Չէ, մարդասպան չես, բայց...

— Բայց ի՞նչ։

— Ուրիշին չե՞ս սիրի...

Սարիբեկյանը լռեց, քնքշալիր բռնեց աղջկա գլուխը, ամուր, ամուր սեղմեց կրծքին։ Այդտեղ նա մեջքով հետ գնաց, կպավ ուռենու բնին, ծառն իրար եկավ. ճյուղերի վրա նստած նոր եկած ձյունը թափվեց նրա կրծքին, Նաթերի գլխին։ Նա Նաթերի գլխից ձեռքով թափ տվեց ձյունը։

— Ցուրտ է, չե՞ս մրսի։

— Չէ, ես չեմ մրսի, ինձ համար տաք է, դու խոսիր։

— Ի՞նչ խոսեմ, ի՞նչ ես պահանջում, ասա։

— Ուրիշին չե՞ս սիրի...

— Չէ, Եսթեր, ես խոստանում եմ. .

Նա խոսքը չվերջացրեց։ Ակամայից հիշեց Ծաղ աղբյուրը, իր հանդիպումը Բաշիրովի հետ։ Այնտեղ էլ ուզեց ինչ-որ խոստում տալ, բայց Բաշիրովն արգելեց.

— Ինչ կարիք կա խոստում տալու. ժողով-բան հո չի...

— Բա ինչու՞ ես լռում,—հարցրեց Եսթերը,—ասա, ի՞նչ ես խոստանում։

— Ախր ժողով-բան հո չի, Եսթեր ջան, ի՞նչ խոսք տամ։ Կապրենք և կտեսնես։ Կտեսնես, որ միայն քեզ եմ սիրում, քեզ, քեզ...

— Իսկ Զարուհի՞ն...

— Զարուհի՞ն։ Խանդու՞մ ես։

— Չեմ խանդում. վախենում եմ... Դու նրան սիրում ես, նա գեղեցիկ է...

— Նա գեղեցիկ է...,—երազանքով ասաց Սարիբեկյանը, լռեց և հանկարծ կարծես թե նրա աչքերի առաջից ստվերացած անցավ Զարուհին՝ ճերմակ քողի մեջ փաթաթված, օդի մեջ հավերժահարսի պես ուրախ ճախրելով... Ապա անցավ ստվերը, փոխվեց պատկերը, մեկ էլ երևաց նա իր կերպարանքով, ամուսնու հետ միևնույն սեղանի շուրջը նստած։

— Նա գեղեցիկ է, ճիշտ է, – բավականին լուռ խորհելուց հետո ասաց Սարիբեկյանը,—բայց դու ավելի գեղեցիկ ես։ Նա հեռու է ինձնից, ինչպես երազն իրականությունից։ Նա երազ էր, էլ չկա, չի կրկնվի։ Իսկ դու ինձ մոտ ես, ինձ հետ, լսո՞ւմ ես, Եսթեր։

— Լսում եմ։

— Դե վերադարձիր, ցուրտ է, կմրսես։ Եվ մի վախեցիր, մի վախեցիր, դու լավն ես ախր լավը, շատ լավը...

— Ախ, գիժ, գիժ,—քնքշանքով շշնջաց Եսթերը՝ գլուխն ավելի գգվելով Սարիբեկյանի կրծքին։ Սարիբեկյանը բարձրացրեց նրա գլուխը, կարոտով նայեց աչքերին և առաջին անգամ կյանքում համբուրեց նա այդտեղ—ուսենու տակ։

ՑԱՆԿ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Էջ

Յափնջի 7
Արձագանք 13
Ծիրանի ծառ 21
Հավատարմություն 27
Կանանց աղբյուրը 36
Ջավակը 45
Խոստում 51
Վարդ Մելիքի գաղտնիքը 57

ՎԻՊԱԿՆԵՐ

Վերադարձ 77
Ուռենու տակ 168

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅ... ՆԵՐԻ
Փ. Ի. Դ. ՄԵՆՏ...
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

Պատ. խմբագիր՝ Հ. Ամիրխանյան

Տեխ. խմբագիր՝ Հ. Թորոսյան

Подписано к печати 18/XI 1948 г. Печ. листов 17,25.
Изд. л. 17. Кол. знаков в 1 печ. листе 39424.
ФГ 12456. Заказ № 801. Тираж 5000.

Управление по делам полиграфии и издательств при Совете
Министров Азербайджанской ССР.
Типография „Красный Восток".
Баку, ул. Ази Асланова, 80.

0

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220027244

9 ռու.

10117

A II
A 27244

МАРКАР ДАВТЯН

КӘНДИМИЗ

(әрмәни дилиндә)

Бакы * АЗӘРНӘШР * 1948